իրեն հրամայեց կապել կալմին: Երբ Ազիտեար լսում է Նաշկա-
պարիկների ձայնը, ձգտում է զեպի ափ, սակայն ուղեկիցները
նրան էլ ափի չի տմար են կապում: Աշնայն, Ազիտեարին հաջորդ-
վում է և՛ լսել Նաշկապարիկների ձայնը, և՛ անցնել նրանց կղզու
մասով:

Մի առի Ազիտեար նավը պետք է անցներ երկու սարսափելի
հրեշներին՝ Սկիլլայի և Քարիբդիսի միջև: Սկիլլան իր մասով լու-
գացող նավերի վրայից բռնում էր լավագույն ծովազնույններին:
Քարիբդիսն էլ իր հեռաձուլ շաշափուկներով բռնում և ստում
էր բոլոր իր մասով լուգացույններին: Քանի որ չէր կարող խուսա-
փել այդ հրեշներից, Ազիտեար քնարեց երկու շարիքներից փոքրա-
գույնը՝ Սկիլլային: Քեկուզ նա լավեց ուղեկիցներից 6 մարդու
համենայն զեպս մնացածները սուց մնացին: Քարիբդիսից ոչ ոչ
չէր փրկվում:

Մի անգամ էլ փոխարիկը շարդ ու փշուր է անում Ազիտեար
նավը և նրան գրկում ուղեկիցներից: Երկար արկածներից նա
Ազիտեար շինում է լաստ և նորից սկսում է լուգալ: Քառչ Պոսելլո-
նը՝ ծովերի աստվածը, որը կրկնույ Պոլիփեմին կարացնելու
համար հետապնդում էր Ազիտեարին (Պոլիփեմը Պոսելլոնի սրբի
է եղել), շարդ ու փշուր է անում նրա լաստը: Միայն շնորհի
ծովերի աստվածուհիներից մեկի սգնաթլունց, Ազիտեարին հաջոր-
վում է լուգալ մինչև իրեն անհայտ մի կղզի և փրկվել: Այ-

կղզում սպրում էին ստաուպելական փետուրայի լծուս ծովազնու-
ները: Այդ ծովազնույն սրբա Ակիլինոսը և սրբաշակին Արիտեար
սիրով ընդունեցին Ազիտեարին, նրան ռոփրեցին ստաու պարզեհե-
ն և սրատաուտեցին նավ նրան նաշխենիք հանապարհելու նամար:

Մինչդեռ Ազիտեար կավում էր Տրոյայի պատերի առի, իսկ
Նետո հանապարհուրում, նրա կնոջ՝ Պեկելայի մաս են գա-
լիս բազմաթիվ փետուրներ: Նրանք կարծում էին, որ Ազիտեար
սպիտ երբեք չի վերադառնու: Քառչ Պեկելային նախաում էր եր
ամառնու փերապարձին և մերժում բոլոր փետուրներին: Ազիտեար
սպում՝ Տեկեմալը, որը Ազիտեար Եփակից մեկնելու մասնուն
զեպս փոքր էր եղել, գարձել էր սեկույ, ծովափով իջի մի սրատուն
կախիձով և գազանի տանրաթյամբ էր դրում նա նաշխենական
սանր կերտում անոց փետուրների խրտխձանքը: Քառչ Նա
չատերի գեմ միաշնակ սլինչ չէր կարող անել: Մի անգամ լու-
մեկնում է հորը փնարելու, բայց սլինչ չիմանարով, ես է վերա-
գտնում: Ազիտեար խմանում է, թե ինչ է կատարվում իր ստաու
Երա նամար էլ Աթենա ստավածու լու խորհարում, ստաում է սա-
ար նաշխենից ոչ թե իր խեղական սեպով, այլ թափուտակուն սա-
րատի կերպարանքով: Նրա սանր Նեկ սուց մամունակ փետուր
ները կերտում են մեջ էին: Նրանք ամենուն սաար ու ծառակե
էին ենթարկում նրան, մարապիանի առի գնելով Ազիտեար գուրս
երկրորդը որը Ապոլլոնին տան էր, և Պեկելային փետուրներին
ստաշարկում է Նեակայ խաղը: Նա ըերում է Ազիտեար սանր
և ստում, փետուրներից նա, ով կարացանու յարել աղեկը, չ
սրան անցկացնել է՞ սպակներից, կլինի իր ամառներ: Փետուր
ները մեկը մլուսը նեակից փորձ են անում յարել աղեկը: Քառչ
նրանցից ոչ ոք չի կարողանում յարել: Այդ մամունակ Ազիտեար
որը զեո մարապիանի կերպարանքում էր, խնդրում է թույլ սալ
իր սան էլ փոշ ձելու: Փետուրները նրամարդում են թույլ սալ
բայց Տեկեմալը, որին Ազիտեար հաշունել էր իր ով լինելը, սալիս է
նրան աղեկը, և Ազիտեար հեշտաթլամբ անց է կացնում 12 սպակ-
ներից: Դրանից անմիջապես հետո Ազիտեար Տեկեմալի և երկու
սարսկների սգնաթլամբ կատարում է բոլոր փետուրներին:
Դրանից նետո նա Պեկելային նաշխում է իր ով լինելը: Պե-
կելային զեվար էր նախաուլ, որ այդ չին ցնոսափնետույ
ծածկվածն իր ամառինն է: Քառչ վերջ ի վերջո հանաշում է նրան
իսկ Աթենան՝ Ազիտեար նախաուսորը վերադարձնում է նրան յաե-
կին երխասարց կերպարանքը:

Ողբակախի ժամանման և փեսացուների սպանութեան լուրը որպէս կերպով տարածվում է ամբողջ Իթակեում: Սպանվածների բաշեկամները կույր մեջ են մտնում Ողբակախի և նրա ընտանիքի մեջ: Աթենալի օգնութեամբ հաղթող է դուրս գալիս Ողբակախը: Եւստի Սթենան շուտով նրան հաշտեցնում է իթակեցիների հետ և սրանք ընտրից Ողբակախին ճանաչում են իրենց արքա: Այս է «Ողբակախան»-ի սյուժեն:

«Ողբակախան»-ը, ինչպէս և «Ելիական»-ը, բաղկացած է 24 երգից. նրանց միջև կան շատ նման դժեր, բայց կան և էական տարբերություններ: «Ելիական»-ը նկարագրում է հատարակութեան ավելի հին վիճակը, քան «Ողբակախան»-ը: «Ելիական»-ը նվիրված է կոսմոսներին, և սյուժե է հերոսների մասին, իսկ «Ողբակախան»-ը ցույց է տալիս խաղաղ ժամանակը և առատ է հեքիաթային զեպքերով: Իրա համար էլ այն ավելի քան գունեղ է ու բազմազան: «Ելիական»-ը ու «Ողբակախան»-ը հանդիսանում են գեղարվեստական պրահանութեան մեծագույն երկ և պատմական անդնտհատելի հիստորիան:

Որպէս պատմական հիշատակարաններ դրանց նշանակութեամբ բարձրացալ վերջին ժամանակներս, հեթիթական գրիքը վերծանելուց հետո Հեթիթական ազգուսակները մեզ մի քանի տեղեկութուններ են տալիս «Ամեյազիլներին» տիրութեան մասին: Փոքր Ասիայում: Գիտնականները ի դեմս նրա տեսնում են այն պետութեանը, որը տառաջացել է Փոքր Ասիայում տրոյացիների նվաճումների հետևանքով: Հեթիթական ազգուսակների արվիվ Տրոյական պատերազմի ուսումնասիրութեամբ դրազվել են գիտնականներ Ֆորբերը և Կրեյմերը: Նրանք հիթիթական փաստաթղթերում գտնում են հունական Աթրիի և էթեոկլեսի անունները: Ռեպեա «Աթրեացիներին» վերագրում են ավելի վաղ ժամանակներ, քան Տրոյական պատերազմը, այնուամենայնիվ Հեթիթական ազգուսակների որոշ ավայներ կարող են կապվիլ Տրոյական պատերազմի և Հոմերոսյան պոեմների ժամանակաշրջանի մեջ: «Ելիական»-ի և «Ողբակախան»-ի հեքիաթային նկարագրութեանը առաջնահարգ բացահայտվում է զեպի Փոքր Ասիա նույնների առայտագուցման հետ կապված պատմական սյուժեն:

**ՀԻՐԱՍԻԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆԵՐՁԱՆԻ ՀՈՒՆԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒ-
ԲՅՈՒՆԸ**

Աստվածների և հերոսների մասին հույները պիտանական առայթները, ինչպէս և Հոմերոսյան էպոսի տեղեկութունները

մեզ համար պատմական մեծ հետաքրքրութուն են ներկայացնում: Կասկած չկա, որ դիցաբանական նյութը շափազանց յուրահատուկ է և պատմաբանը դրանից պետք է օգտվի շատ զգուշ: Այնուամենայնիվ պատմաբանը ուսումնասիրութեան համապատասխան մեթոդների կիրառման շնորհիվ կարող է նաև բացահայտել դիցաբանական ծածկոցով պատած պատմական իրականութունը: Այդ հատկապես վերաբերում է Հոմերոսյան էպոսի տեղեկութուններին: Իրանց քննադատաբար վերաբերվելու դեպքում մենք կարող ենք դադարաբար կազմել հունական այդ ժամանակվա առաջնորդներին, իշխանութեան, ժողովրդի գրութեան, տնտեսութեան, սպարազինութեան, տեխնիկայի և նիստուկացի մասին, «Ելիական»-ն ու «Ողբակախան»-ը այդ տեսակետից մեզ քիչ նյութեր չեն տալիս:

Հոմերոսյան պոեմների տեքստերն ուսումնասիրող պատմական գիտութունը և ֆիլոլոգիան հանգել են այն եզրակացութեան, որ այդ պոեմները կազմվել են երկար ժամանակաշրջանի ընթացքում, ձևակերպվել են սկզբնական տեքստերի վրա հետագա ավելացումները, նախնական մշակումները և վերամշակումները:

Հոմերոսյան պոեմների վաղ ժամանակվա մասերը Հունաստանը նկարագրում են դեռ տոհմատիրական կարգերի գրութեամբ. որն արդեն սկսել էր քայքայվել: Մարդկանց մի մեծ խումբ, որը կապված է եղել արյունակցական կապերով և համաձայն հունական պատկերացումների առաջացել է մեկ նահապետից, կազմել է տոհմ: Տոհմի գլուխը կանգնած է եղել ավագը, որը կոչվել է գերոնտ: Նա կառավարել է տոհմի ամբողջ ունեցվածքը, դատել տոհմականներին, առաջնորդել է պատերազմներում և որպես լեզնդար տոհմապետի սերնդի, վայելել է հարգանք: Յուրաքանչյուր տոհմի անդամները պարտավոր են եղել միմյանց օգնել և պաշտպանել: Մի քանի տոհմեր միացած են եղել ֆրատրիայով (կղերայութեամբ): Այդ դաշինքն այնպես ամուր չի եղել, ինչպէս ներտոհմայինը: Բայց ֆրատրիաներն ունեցել են ընդհանուր կրօնական դավանանք, ինչպէս և պարտավոր են եղել պաշտպանել իրենց տեղամեններին: Մի շարք տոհմական ֆրատրիաների միավորումը կազմել է ֆիլա կամ ցեղ:

Այսպէս, օրինակ, Աթիկայի բնակչութունը բաժանվել է չորս ֆիլաների: Յուրաքանչյուր ֆիլան կազմված է եղել երեք ֆրատրիայից, յուրաքանչյուր ֆրատրիայի մեջ մտել է 30 տոհմ: Նախնադարյան-համայնական կարգերի քայքայումը տոհմերը սկսել են

մտածաւովի մեծ հողագործ ընտանիքներէ: Այդ անտեսութիւնները միավորովի են գլխաւորապէս կառուցուած մեջ. հետագայում կոշտ վերով դնուին:

Սակայն միշտ կլինէր արդյոք հոմերոսյան հասարակութիւններ կամ, լայն առումով, հերոսական ժամանակաշրջանի Հունաստանը անվանել միայն տոհմատիրական պետութեան ժամանակաշրջան: Այլ, չի կարելի Հունաստանի կարգերի հերոսական շրջանի հարցի մասին դեռևս XIX դարի կեսերին բուրժուական գիտութեան մեջ ձևակերպովի են երկու հակադիր տեսակետներ: Թուրքական գիտնականների մի խումբը (Վիլհելմ, Լաֆալե և ուրիշներ) համերայն Հունաստանում ընդունել են իր հիմքում համայնական սեփականութեան ունեցող համայնական կարգը: Մյուս խումբը (է. Մեյլեր, Պելլման և ուրիշները) բացասել է համայնական կարգը և սոցիալական կյանքի հիմքում նախապատուութեանը տվել է մեծ ընտանիքին, անային շամայնքին, որի հողը ամենահնազույն ժամանակներից ամառովի է սրբաւ մասնավոր սեփականութեան իրավանքը:

Էնգելսը Չնագոյն Հունաստանի գնահատման բոլոր այդ ծաւրահեղութիւններին կործանիչ հարված հասցրեց: «Ընտանիքի, մասնավոր սեփականութեան և պետութեան ծագումը» աշխատութեան մեջ Էնգելսն այդ ժամանակաշրջանը բնութագրել է դիակրիտիկական դիրքերից սրբաւ անցման շրջան տոհմային հարաբերութիւններէ՝ դեպի պետութեան: Այդ դարաշրջանի հասարակարգում նոր որակների կուտակումը, փոփոխութիւնների դիակրիտիկական պրոցեսը, նոր կարգերի սաղմավորումը և «տաղմական դիմոկրատիայի» շրջանակներում պետականութեան սաղմերի առաջացումը, — այս բոլորը Էնգելսի մտա եղել են գլխավորը հերոսական Հունաստանի հասարակական հարաբերութիւնները գնահատելու:

Այսպէս, Էնգելսը դիտել է հենց սկզբում հունական տոհմի մասնակցում իրակեզների տոհմին և ասում է, որ այդ մեկի և մյուսի միջև «...ընկնում են զարգացման գրեթէ երկու մեծ ժամանակաշրջան, սրանցով հերոսական դարաշրջանի հուններն իրակեզներից առաջ են»¹:

Մի ուրիշ տեղ Էնգելսն ուղղակի պատմ է. «հերոսական

¹ Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականութեան և պետութեան ծագումը, հայ. հրատ., էջ 116, 1932 թ.:

արաշրջանում Հունաստանը պատմութեան մեջ հանդես է դալիս որդին դասերի բաժանված...»²:

Այդպիսով, Էնգելսը հերոսական Հունաստանի գնահատման մեջ անց է կացնում նոր ժամանակաշրջանի ծագման միտքը հին տոհմական կարգի համեմատութեամբ, անցման էպոխայի սկզբնական մասին նրա ստորհամարար կազմակերպովող դասակարգային հասարակութեան քաղաքական կապերի հանուկ ձևով: «Ջորահրամանատարը, խորհուրդը, ժողովրդական ժողովը կազմում են այն տոհմային հասարակութեան մարմինները, որ զարգանալով ազգական դիմոկրատիայի է վերածվել Ռազմական, որովհետև պատերազմի և պատերազմի կազմակերպումը յարմար են այժմ ժողովրդի կյանքի կանոնավոր ֆունկցիաները...»³ Այսպէս չէ, որ նոր ամրացրած քաղաքների շուրջն ահռելի պարսպներ են քաշվում. նրանց իրամենները տոհմական հասարակարգի դերեզմաններն են. իսկ նրանց սշտարակներն արդեն ներս են քրպում քաղաքակրթութեան մեջ: Եվ միևնույն բանն էլ տեղի է տեղում հասարակութեան ներսում»⁴:

Տոհմական կարգերից ազգական դիմոկրատիայի տաղանքման մասին շատ մանրամասն գրել է Մարքսը: Մարքսի գրական այդ ժառանգութեանը հիմնադի կերպով օգտագործել է Էնգելսը՝ համեմատաբար վերջերս հրատարակված Կ. Մարքսի «Մտայնապետական արդյունաբերութեան նախորդող ձևերի մասին» ձեռագրում շարադրված է հենց այն նյութը, որն Էնգելսի համար երկուս է եղել «ազգական դիմոկրատիա»-ի հասկացողութեան համար, որի հենց անունը Էնգելսը փոխ է անում Մարքսից, ինչպես այդ երևում է Մարքսի աշխատանքին վերաբերող Էնգելսի մատնանշումից:

Ինչպե՞ս էր պատկերացնում Մարքսը համայնքի դարգացման տեսնական այդ պրոցեսը, որը նախնապարան համայնքի տրոհման հետեանքով բերում է դեպի հողի մասնավոր սեփականութեան կազմակերպումը, մշտական պատերազմները, այն է համայնքի սպայարար այդ հողի համար և «ազգական դիմոկրատիա»-ի առաջ րացումը, որը հանգիստանում է տոհմային կարգերից դեպի առաջին գաղապարային հասարակութեան՝ պետութեան անցնելու յուշ:

² Ֆ. Էնգելս, Անտի Դյուրինգ, հայ. հրատ., էջ 220, 1932 թ.:

³ Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականութեան և պետութեան ծագումը, հայ. հրատ., էջ 100, 1932 թ.:

բահատուկ քաղաքական ձևը: Կ. Մարքսի վերոհիշյալ ձեռագիրը պատասխանում է այդ հարցին¹:

Արևելյան և անտիկ համայնքների պայմաններում, նրա բարձրագույն անդամը հանդիսանում է որոշ հողամասի տերը, որովհետև յուրաքանչյուր առանձին վերջրած մարդ հանդիսանում է կոլեկտիվի² համայնքի անդամը: Բայց այդ համայնքը ոչ թե նախնական է, այլ դյուդակիան (գեմանները Հունաստանում), էրնելով մասնավոր հողատեր և գրանով իսկ ստեղծելով իր համայնքի անդամների մասնավոր սեփականությունը նախադրյալներ, այդ համայնքն իր հետագա զարգացման ընթացքում հանդիպում է արգելիցների, որոնք կան նույնպիսի այլ համայնքներում ևս: Այդ համայնքները Ե...կամ արդեն առաջուց գրավել են հողերը կամ անհանգստացնում են համայնքին իրենից գրաված հողերում: Երա համար էլ պատերազմը, — ասում է Մարքսը, — հանդիսանում է այն կարևոր ընդհանուր խնդիրը, այն մեծ ընդհանուր աշխատանքը, որը պահանջվում է կամ այն բանի համար, որպեսզի գրավեն գոյություն ունեցող պայմանները, այն բանի համար, որպեսզի այդ գրավածը պահպանեն և հավերժացնեն: Ահա թե ինչու ընտանիքներից կազմված համայնքը, առաջին շրջանում կազմակերպված է ռազմական ձևով, ինչպես ռազմական և զորային կազմակերպություն, և այդպիսի կազմակերպությունը հանդիսանում է նրա գոյություն պայմաններից մեկը որպես սեփականատեր²:

Այդպես է Մարքսի կողմից բացահայտված տոհմական հարաբերությունների տրոհումը հայտարարող, հողի, հարստանալու համար տոհմերի միմյանց դեմ պայքարի մեջ լինելու, — մի խոսքով այն սեփականության համար, որի առաջացմանը զուգակցվում է տոհմի տրոհման պրոցեսը: Մագած պատերազմները, հետևապես և ռազմական ու զինվորական կազմակերպությունը նախադրյալներ են ստեղծում քաղաքական այն կազմակերպության համար, որին մարքսիզմի կլասիկներն անվանել են ռազմական դեմոկրատիա³ և կիրառել են հերոսական ժամանակաշրջանի Հունաստանի նկատմամբ:

Ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանի սոցիալական հարաբերությունների կոնկրետ պատկերը կարելի է սահմանել հոմերոսյան էպոսի ավյալների հիման վրա:

¹ См. „Пролетарская революция“ № 3, стр. 151—153, Госполитиздат, 1939

² Նույն տեղում:

Ըստ «Վիպական»-ի և «Ոգիսական»-ի համայնքի, լեզամներն սկզբում հողը տիրել են բոլորը միասին, բայց առիճանաբար համայնական հողերից սեպտին առանձնացնել հողաբաժին առանձին մարդկանց համար: Ամենից շատ հող ունեցել են ցեղերի գլուխը կանոնաձ իշխանները կամ թագավորիկները: Նրանք կազմել են րասիլաններ: Այդ թագավորիկները համայնքից ստանում էին հատուկ հողակտորներ: Նրանց զուգադները ևս համայնքից հատուկ հողակտորներ էին ստանում, բացի այդ, նրանք պատերազմի ժամանակ մեծ ավար էին խլում, որը բաժանվում էր բարիքների և զուգադների միջև: Միայն հասարակ ռազմիկները ոչինչ չէին ստանում: Հասարակ զինվոր Թիրսիզնը աշակուս է ստում բարիքների մասին, «Ձեր մտքում միշտ սեփական շահն է, իսկ ռազմիկները ձեր փութարենն առնչվելով ստանում են հարվածներ ու վերքեր»: Հողի և գրաված ավարի բաժանման ժամանակ բարիքների միջև առաջանում էին բուխումներ (Ագամեմոնոսի և Աքիլլեսի դժուրբյունը դերի հարձի համար, պայքարը Սթակի կղզում): Հոմերոսյան Հունաստանում սկսում են երևան զուլ սոցիալական շերտաւորումները, շահերի բախումը:

Բարիքը առտիճանաբար ամենախոշոր հողատերն և ստրկատերն է դառնում: Նրա տրամադրությունն սակ են ռազմիկների զուգադներ (ΧΡΥΣΑΥΑ) և ռազմաթիվ ռարուկներ: Նա ունի շատ հող և հարստություն: Փեմիկների արքա Ակիլլեսը, որի մասին պատմվում է «Ոգիսական»-ում, ունեցել է պղնձից, արծաթից և ոսկուց կերտած հիանալի պալատ: Գալատին կից գտնվել է փարթամ պարտեզ, իսկ նրա հետևում իմպոսի սյուրի: Ակիլլեսի կազմվածքում եղել են առատ հաց, պինի, բանջարեղեն և մրգեր: Զուգակ ստրկաճիկները պատարտուկ են հագուստ, գորգեր և սփռոցներ: Հարստությունը նրան չէր դիջում և Ոգիսեսը: Նրա անտեսության մեջ եղել է 50 ստրկուճի, ձևոքի ջրադրացում աշխատել են 12 ստրկուճիներ:

Այս պրոցեսին զուգընթաց է գնում փոխանակությունը, երևում է փողը: Ահապի կասրները, որպես շուկայական արժեքաչափ, երևան են գալիս հոմերոսյան էպոսում: Առևտուրը նույնպես նորոտացնում է արխատկրասներին: Բացի այդ, ինչպես լնդունված էր, դերի վերջրածներին էլ պարձնում էին սարուկներ: Այս նախամտերը հնարավորություն էր ապիս լայնացնելու արտադրությունը: Քիչ-քիչ արխատկրատները հափշտակում էին ավելի ու ավելի հողեր, իսկ հասարակ ժողովրդին՝ դեմոսին վիճակ-

ված էր թավարարովել փոքր հողակտորներով ևր հողակտորը մշակելու համար չունենալով թավարար միջոցներ, դեմոսն սկսեց աստիճանաբար կորցնել այդ հողերն էլ և Բայց ստրուկ էին դարձնում ոչ միայն աղամագրիներին. եթե մանր հողատերը սարսուղով սրել բան էր վերջնում արիստոկրատից և հետո չէր կարողանում վերագրվել պարտքը, նա, երբեմն նույնիսկ ամբողջ ընտանիքով, ստրուկ էր դառնում արիստոկրատին:

Աստիճանաբար հասարակությունը բաժանվում է ստրուկների և ստրկատերերի: Միայն մի բան էր դեռ պակասում. այնպիսի մի հիմնարկություն, որն առանձին անհատների նոր ձեռք բերած հարցասությունները ո՛չ միայն ապահովեր տոհմական հասարակարգի կոմունիստական տրագիցիաների դեմ, որը ո՛չ միայն սրբազորներ առաջ այնքան քիչ դնահատված մասնավոր սեփականությունը և այս սրբազորմամբ հայտարարել ամեն մի մարդկային հասարակության բարձրագույն նպատակը, — այլև... որը հավերժացներ ոչ միայն հասարակության նոր սկզբով լաժանումը գասակարգերի, այլև հաստատել ունենալ դասակարգի իրավունքը՝ շահագործելու շտեններին, ինչպես և առաջինների տիրապետությունը վերջինների վերաբերմամբ:

Սվ այնպիսի հիմնարկությունը երևան եկավ Հորինվեց պետությունը՝ «Ռեզումարան դեմոկրատիայի» ինստիտուտների՝ բախիլեաների (հետագայում տիրանի իշխանությունը), ավագների խորհուրդը, հանրաժողովը, գուրազը աստիճանաբար դառնում են պետական ֆունկցիա ունեցող հաստատություն, այսինքն՝ պետական հաստատություն:

ՄԳ ՊԱԼԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄԸ

Այնպիսով, պետությունն առաջացավ հաստատելու ստրկատերերի տիրակալությունը շքավորների և ստրուկների վրա: Զինվորական գուրազը և դատարանը պաշտպանում էին ստրկատիրական դասակարգի, ավագանու իշխանությունը:

Այդ ժամանակվա առաջացող պետության առաջ երկու խնդիր կար՝ ստրուկներին պահել հնազանդ միճակում, լայնացնել պետությունը և պաշտպանել այն արտաքին թշնամիներից. բայց գլխավոր խնդիրն էր՝ դեկավորել ստրուկներին և նրանց պահել:

1 Յ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 142—143, Հայտնահրատ, Երևան, 1948 թ.:

իսկառար հպատակության մեջ: Գրա համար էլ կազմավորվող պետությունը ստրկատիրական էր:

Հունաստանում ստրկությունը աստիճանաբար ուժեղանում էր: Տոհմային կարգը վերջնականապես քայքայվեց: Հունաստանի շատ տեղերում ծագել և աճել են ստրկատիրական պետություններ: Հունական պետությունները մեծ չին եղել: Նրանք սովորաբար տիրել են քաղաքը՝ մերձակա հողերով, Հույները իրենց քաղաքները շինում էին մեծ մասամբ ծովեզրերից ոչ հեռու, որտեղ պատաստում էին նավահանգիստներ: Սովորաբար նավահանգիստներին մոտիկ ապրում էին վաճառականներն ու ծովայինները: Այստեղ էլ կատարվում էր անգործության սարանքների առևտուրը: Քաղաքային բնակչությունն ունեցել է իր ամբողջությունը, ակրոպոլիսը, կամ կրեմլը, որը ծառայել է քաղաքը պաշտպանելու համար: Բողաքի լայնացման հետ միասին այդ ամբողջության շարքը հրեան էին դալին նոր բնակություն, որը կոչվում էր «հերքին քաղաք», իսկ սոսըվանը՝ «վերին քաղաք»: Այդպիսի աճող քաղաքը համայնական հողերով, որոնց վրա եղել են գյուղական բնակելի ավաններ, կազմել էր քաղաք պետությունը, կամ հունարեն՝ պոլիսը: Այդպիսի պոլիսների կազմավորման և նրանց ոչ մեծ չափերի բնույթը կապված են հունական համայնքների զարգացման, դրանք որպես ձեքնարույն միավորների գաղվելու, ինչպես նաև համայնքի սերրին և արտաքին կյանքի կազմակերպության անկախության նամար պայքար մղելու հետ:

Այսպես առաջացան Հունաստանում առաջին իոռոր քաղաք պետությունները՝ Միկենիան, Տիրինթոսը, Կորինթոսը, Արգոսը, Ակուրտան, Աթենքը: Պոլիսի գլուխը կանգնած էր բախիլեքը, որը միոժամանակ ռազմական առաջնորդի էր, բարձրագույն դատավորը և պերագույն քուրմը: Նրա արժանապատվության նշանն էր դալիոստը: Ուստի և բախիլեան կոչում էին գայիստեակիր (СКИΠΕΤΡΑՊՈՍՏՈՒ): Բախիլեան ստանում էր պատերազմի ժամանակ հափշտակում տվորի մեծ և լավագույն մասը: Առաջվա պես համայնքի հողերից նրան բաժին էր առանձնացված ամենախոռոր հողատիրեր: Ենթույթներում նրան հատկացվում էր պատվավոր տեղը և տրվում ամենահամեմղ պատառը: Բոլոր կարևորագույն գործերում բալիստները խորհրդակցում էին անվանի բնտանիքների դեկավորների հետ: Գրանք ավագանիներն էին, որոնք կազմում էին խորհուրդ կամ բուլե: Հրամանների, որոշումների և վճիռների կատարման, ինչպես և պետական կարևորագույն հարցերը բնու-

թյան անհետ համար դումարվում էր բոլոր հասակավոր տղա-
մարդկանց ժողովրդական ժողով: Այդ ժողովը կոչվում էր ազգա:
Այս կամ այն հարցի մասին իր կարծիքը ժողովն արտահայտում էր
«այո» կամ «ոչ» բացառանշտություններով: Պոլիսում դատավորու-
թյունը տեղի էր ունենում փողոցում: Դատավորները ավագանիներն
էին: Նրանք ըստ էին մեղադրյալին, և ապա, ղեկավարվելով սո-
վորույթով, կայացնում էին իրենց վճիռը քննված դործի վերա-
բերյալ:

Թագավորի շուրջը համախմբվում էր ունեւոր դատավորների
և հարուստ հողատերերի ավագանին և գուպազը: Աստիճանաբար
նրանց ձեռքն էր հավաքվում մեծ հարստությունը և խոշոր հո-
ղակտորները: Հասարակ ժողովուրդը, կամ դեմոսը, սկսում է պայ-
քարել ավագանու դեմ իր իրավունքների համար: Պետականու-
թյան ձևավորումը կարևոր մոմենտ էր դարձել հին հույների
պատմության մեջ: Այն արագացնում էր տոհմային կարգերի
քայքայումը, նպաստում դասակարգային հասարակության
անտեսական, քաղաքական և կուլտուրական աճմանը, արտադրու-
թյան վերելքին, հարստության կուտակմանը, տեխնիկայի զար-
գացմանը և այլն:

Ստրկատիրական հասարակության զարգացման պատմական
պրոցեսը անխուսափելի և առաջադեմ փուլ էր մարդկային հա-
սարակության պատմության մեջ: «Հենց իրենց ստրուկների հա-
ճար,—ասում է էնգելսը,—այդ մի առաջադիմություն էր¹, քանի
որ առաջ ռազմագերիներին սպանում էին, իսկ այժմ, ինչպես
ընդունված էր օգտագործվում էին արտադրության մեջ որպես
ստրուկներ: Նախնադարյան համայնական կարգերի հետ համե-
մատած ստրկատիրական հասարակության և պետության առա-
ջացումը անկասկած նշանակում էր մի քաջ առաջ:

ՀՈՒՆԱԿԱՆ ԿՐՈՆԸ

Հունական վաղ ժամանակաշրջանի պատմությունը մեզ հա-
մար հետաքրքիր է նաև այն պատճառով, որ այդ ժամանակ ձևա-
վորվեց հին հույների առաջին դիցաբանական, տիեզերաբանա-
կան և կրոնական պատկերացումները, դառնալով միջոց նրանց
դիցաբանական մտածողությանը և կրոնական պատկերացումնե-

րին, որը հատուկ է իրենց զարգացման առաջին էտապի վրա
գտնվող ժողովուրդներին, արտացոլելով կյանքի փոփոխության
ամբողջ բարդ կամպլեքսը, շրջափելով ինչպես անհատի անձնա-
վորությունը, նույնպես և ամբողջ հասարակությունը: Հունական
կուլտուրան ստեղծվել է այն ժամանակ, երբ մարդիկ դեռևս շատ
քիչ բան գիտեին իրենց դիտած երևույթների պատճառների մա-
սին, անկարող էին պայքարել բնության դեմ: Զարմանալի չէ,
որ հույները այդ բոլոր երևույթները բացատրում էին որպես ինչ-
որ աստվածային ուժերի գործողություն:

Այդ արտահայտվել է հունական կրոնի մեջ: Արևի ծագման
և առաջացման մասին իրենց հայացքները հույներն արտահայտել
են բազմաթիվ ֆանտաստիկ հեքիաթներում, կամ ստաստիկներում:
Ըստ այդ առասպելների սկզբում հողը, ջուրը և օդն առանձին-
առանձին գոյություն չեն ունեցել: Դրանք բոլորը եղել են քաո-
սային վիճակում: Հետագայում այդ քաոսից բաժանվել են՝
Փեա (երկիր) աստվածուհին՝ և Ուրանոս (երկինք) աստվա-
ծը: Հետագայում դիցաստրությունը (θεογονια) հետևյալ ձևն է
ստանում: Փեայից և Ուրանոսից ծնվել են հզոր տիտանները:
Ուրանոսը վախենալով, որ չլինի թե իր երեխաներն իրենից խլեն
իր իշխանությունը, տիտաններին բանտարկում է ստորերկրյա խոր
անդունդում: Սակայն նրանցից մեկին՝ Կրոնոսին հաջողվում է
տիտաններին ազատել: Կրոնոսն ազատված տիտանների օգնու-
թյամբ հորից խլում է իշխանությունը և ինքն է թագավորում
երկրի վրա: Կատաղի կռիվներից հետո այս աստծուն փոխարի-
նում է նրա կրտսեր որդին՝ Զևսը: Զևսը և իրեն շրջապատող
աստվածներն ըստ ավանդության ապրում էին Օլիմպոս լեռան
վրա (Թեսալիայում):

Դրա համար էլ հույները նրանց անվանում էին օլիմպոսցի-
ներ: Հաղթանակից հետո Զևսը երկրի վրա իշխանությունը բա-
ժանեց իր համախոհների միջև, նա ինքը համարվում էր որստի
և կոյժակի գերագույն աստվածը: Նրա կինը՝ Հերան դարձավ
երկրի տիրուհին: Իր եղբորը՝ Պոսեյդոնի և Զևսը հատկացրեց
ծովի տիրապետությունը, իսկ փոքր եղբորը՝ Հադեսին ստոր-
երկրյա թագավորությունը: Ապոլոնը դարձավ լույսի և բա-
նաստեղծության աստվածը: Նրա իշխանության տակ էին գտնվում
Ս մոտաներ՝ արվեստի և գիտության հովանավորուհիները, որոնց
մեջ էր պատմության մուսան՝ Կլիոն: Կրակի և զարբնության
արվեստի աստվածն էր կաղ Հեփեստոսը, ղեղիցկության աստվա-

1 Տ. էնգելս, «Անաի Դյուրինգ», հույ. նրատ, էջ 235, 1932 թ.:

միտքը (Հեսիտոս, Օփիդիոս) փորձել են ոչլ կերպ բացատրել մարդկային ազեանների առաջացումը: Այսպես, պատմում էին, որ սկրզբում, զեռես Զևսից առաջ, երբ թագավորել է Կրոնոսը, բոլոր մարդիկ եղել են երջանիկ: Այդ եղել է սակի դարը: Բայց առաիճանարախաղաղությունը խախտվում է մարդկանց մեջ: Մարդիկ սկսում են նախանձել միմյանց: Հաճախ առաջանում են վեճեր և երկպառակություններ: Վրա է հասնում պղնձի դարը: Մարդիկ սովորում են կոփել պղնձյա զենքեր և կատաղի կոփվեերում բնաշնչում են միմյանց: Վերջապես, սկսվեց ամենավատ դարը՝ երկարի դարը երբ ուղղեն երկրի վրա շմնաց ճշմարտությունն ու արդարությունը: Մարդիկ խարամ, կոպտում, սպանում էին միմյանց:

Չես չած մարդկային կյանքում անարդարությունների և պաշարի բացատրությունում եղած պրիմիտիվիզմին և պարզամտությունը, այդ վերսիալում առկա է պատմականության կամ մարդկության կյանքում էպոխաները հետզհետե հերթավտխելու տարրը:

Մարդու ծագման և նրա նախնական դարգացման վերաբերյալ թեմաների առասպելական սյուժեները տարածված են եղել գանաղան վերսիաներով և տարբեր կերպով մշակվել են էսքիլոսի հունական պոեթիկություններում, Հոմերոսի և Հեսիոդոսի երկերում, Ապոլոնիոսի դիցարանական պատմություններում, խոուշ ժամանակներում հունական բանաստեղծների երկերում: Հունական առասպելաբանությունն իրենից ներկայացնում է զեդարձեցատական կերպարներով մարմնավորված ասուլթների ժողովածու մարդու համարձակ, թեև միամիտ (նալիվ) նախամատումների մասին բույսաբանության արշալույսին, նրա ձրդատումների մասին՝ բացատրելու պաշարը կյանքի, մարդկային բախտավերության համար, որի մասին երազանքը առասպելները մեզ համար դարձնում են այնքան հրապուրիչ: Առասպելական սյուժեներն առաջ էին գալիս ժողովրդական իմաստության հիմքի վրա, բնզհանրական կերպարներով նրանք տիպիկական շատ բան էին սրտում մարդկային կյանքից և հետո մշակման են ենթարկվել զեդարձեացատական գրականության հետագա դարդրուման ընթացքում: Վաղ հունական կուլտուրայի ուսումնասիրության գործում հունական առասպելաբանությունը ներկայացնում է մեծ հետաքրքրություն, որպես բնության և հասարակության մասին հայտերի փիլիսոփայական մտածողության հետագա դարգացման համար երման կետ:

ՍՏԲԿԱՏԻՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ
ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

W8

ԳԱՂՈՒԹԱՅՈՒՄԸ VIII—VI ԳԱՐԵՐՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՍԵ

Հին Հունաստանի պատմության մեջ նկատվում են մի քանի հիմնական պերիոդներ:

Կրետե-միկենյան կուլտուրան հին Հունաստանի պատմության մեկնակետն է: Միջերկրական ծովի երկրների կուլտուրայի զարգացման մեջ բաախ լայն առումով կրետե-միկենյան կուլտուրան հին արևելյան հասարակությունների և հենց մայր Հունաստանի միջև որոշ շափով հանդիսանում է մի անցման օղակ:

Հին Հունաստանի պատմության երկրորդ փուլը մեր առաջ բացահայտվում է ուլոպես կոչված «հոմերոսյան հասարակությունն» ուսումնասիրելու: Տոհմ-համայնական հարաբերությունների քաշքաշումը և էնգելսի կոլմից «աղմական զեմսկրատիայի» ձևով նշված պետականության ձևավորման սկիզբը՝ «աճա թե մենք ինչին կարող ենք հետևել» «հոմերոսյան դարաշըրջանի» պատմական հուշարձաններով: Այդ շրջանի հուշարձանների թիվը ավելի և ավելի է շտատնում (Բյոթրոֆիլոզի պեղումները և այլն), և հունական պետականության, պոլիսների աջացումը էլ ավելի պետք է բեեոի պատմության-հետախույզների ուշադրությունը:

ՍԵ - ՆԻՅԻ

Այս շրջանին հաջորդող հունական պատմության ժամանակաշրջանը պատմագիտության մեջ ընդունված է կոչել Հունաստանի արխաիկ շրջան (VIII—VI դարերը մ. թ. ա.): Այս շրջանը կապված է եղել Բալկանյան թերակղզու տերիտորիայի վրա հույների վերջին տարագողթի և գաղութային այն շարժման հետ,

որը հասցնել է Միջերկրական ծովի արևելքում և արևմուտքում հունական դազուլթների կազմակերպմանը: Հունաստանի արևալի շրջանը նմանապես կապված է կլասիկ շրջանում գլխավոր դե- խադացու հունական երկու հիմնական ու խոշոր պետություն- ների՝ Ալգարտայի և Արեների առաջացման հետ: 7

Հունական ցեղերի շարժման ու Բալկանյան թերակղզու տե- րիտորիայի վրա նրանց տարագողթի և այն հետագա դազուլթաց- ման շարժման կապակցությամբ, որը հանդես էր գալիս Միջերկրածովյան ու Մերձսևծովյան շրջաններում հունական բազմաթիվ դազուլ- թների առաջացմանը, —անհրաժեշտ է նշել միզբացիայի պրոբլեմ- հին մշխտրհում: Հաճախ պատմական գրականության մեջ մեն- հանդիպում էինք բնակչության շարժումները բացասելու փորձերը Բալկանյան թերակղզու տերիտորիայում, հին Հունաստանում, ինչ- պես, օրինակ, դորիական նվաճումները Պելոպոնեսում և Կրետես- կամ հետագայի դազուլթացման շարժումները VIII—VI դարերում (մ. թ. ա.): Սակայն դրան հակառակ են պատմական փաստերը և հունական հասարակության դարգացման միզբացիայի ոչ պե- կաս նշանակությունը: Ահա թե ինչու առանց այդ միզբացիայի այսինքն՝ Բալկանյան թերակղզու տերիտորիայի վրա և նրա նա- ժաններից դուրս էթնիկական մասսաների շարժումն ուսում- նասիրելու չի կարելի հասկանալ հին Հունաստանի պատմությունը VIII—VI դարերում (մ. թ. ա.):

Այսպես, օրինակ, խորը ուսումնասիրության կարիք է դրո- VIII—VI դարերի «մեծ դազուլթացման» պատճառների հարցը Ռոպես դազուլթացման պատճառներ առաջ էին քաշվում փոխա- նակության, առևտրի դարգացումը, ցեղերի միջև գոյություն- ունեցած զանազան կապերը, պատերազմները և այլն: Գողթ- թացման այդ պրոցեսին ուղեկցած ամենապատահական երե- ժույթները հաստատվում էին որպես այդ դազուլթացման պատ- ճառներ: Սակայն այդ բոլոր երևույթները չեն կարող ճանաչվի- րպես հիմնական ֆակտորներ, որոնք հանդես են հետագա դազուլթացման դարգացմանը:

✓ Գազուլթացման հիմնական պատճառների թվին պետք է դա- սել նախ, և առաջ ստրկատիրության դարգացման հետ կապվա- տոհմային համայնքների քայքայումը, որը հանդիսացավ ցեղեր- սկավոզ տեղաշարժման նշանակալից սոցիալական պայմանը: Հի- տոհմատիրական կարգերի տրոհումը, սոցիալական տարաշերտ- վորման պրոցեսը և ազատների հողազրկման աճը, — մի խոտբով, ա-

տագրողական ուժերի աճումը և պետությունների առաջացումը պատմական այդ դարաշրջանում ուղեկցված ողջ պատճառներն էլ հենց առաջացրին էթնիկական մասսաների շարժումները և, իհար- կե, այնպիսի երևույթները, ինչպիսի փոխանակությունը, առևտրի դարգացումը՝ բոլոր սրանք միայն ուղեկցել են այն հիմնական սոցիալական փոփոխություններին, սրանք հանդես են դանա- գան ցեղերի շարժմանը:

VIII—VI դ. դ. դազուլթացման մյուս պատճառը այն է, որ սոցիալ-տնտեսական դարգացման այն աստիճանի վրա, որպիսին այդրի է Հունաստանն այդ շրջանում, հասարակության հետագա պրոցեսները դեռ չէր կարող իրականանալ անտեսական կյանքի նշանակալից ինտենսիֆիկացիայի ուղղությամբ: Ստրկական աշ- խատանքի, ստրկատիրական հասարակության արտադրության ցածր տեխնիկայի պայմաններում անտեսության դարգացումը ըն- լիանում էր գլխավորապես նոր հողեր ձեռք բերելու, դազուլթների և առևտրական ավանների կազմավորման ուղղությամբ, այսինքն՝ դարգացման էքստենսիվ ուղիով: 7

Մարքը հին Հունաստանի վերաբերմամբ սրպես դազուլթաց- ման պատճառ առաջադրում է հենց արտադրողական ուժերի ցածր մակարդակի փաստը, որը թույլ չէր տալիս անտեսության խոր դարգացումը, այլ այն ուղղում էր առևտրի, նոր հողեր ձեռք բերելու և նրանց չորացնելու բնագավառը բնագործակելու գծով:

VIII—VI դարերի հունական մեծ դազուլթացման մեջ մեծ գեթ են կատարել Փոքր Ասիայի քաղաքներից գլխավորապես Միլետը, մայր ցամաքային Հունաստանից՝ Մեգարան և Կորնթոսը, կղզինե- րից՝ Էվբեյան: Այդ կղզու ամենախոշոր քաղաքներից մեկը՝ Քաղ- կիզոնը Միջերկրական ծովի զանազան կետերում առևտրական ավանների կազմակերպման և դազուլթացման դարգացման գործում նշանակալից տեղ է գրավել:

Հյուսիս-արևելյան ուղղությամբ դազուլթացման շարժումն ան- ցել է Հելեսպոնտոսի, Պրոպոնդիոսի (Մարմար ծով) և Էվբոսիան (Աև ծով) Պոնտոսի ափերով, իսկ արևմտյան ուղղությամբ ամենից առաջ Իտալիայում և Սիցիլիայում. հարավային ուղղությամբ՝ Միջ- երկրական ծովի հարավային ափերով:

Հյուսիս-արևելքում, Հելեսպոնտոսի, Պրոպոնդիոսի և Էվբ- սիան Պոնտոսի ափերին գտնվող շրջանների տարազազ թման պրոցեսում առաջացած քաղաքներից պետք է նշել Արիդոսը՝ Հե- լեսպոնտոսում, Կիզիկը՝ Պրոպոնդիոսում: Այդ նույն ժամանակ (VII

դար) Թրակիական Բոսֆորի ասիական ափին հիմնվել է Քաղկեդոնը: Բոսֆորի եվրոպական ափին է եղել Բյուզանդիա գաղութը: Յոնիացիները (միլեթացիները) հաստատվել են Սև ծով հարավային և ասիական ափերին, և նրանց հենակետերի թվումն զանգում Սինոպ գաղութը: Սև ծովի արևմտյան թրակիական ափին, կարևորագույն գաղութներն են եղել Օդեսսը, Թոմին, Իստեր (Դանուբից հարավ), իսկ Բուզի գետաբերանում՝ Օլբիան. Ղրիմում հույները հիմնադրել են գաղութների ամբողջ ցանց՝ Խերսոնեսը (Մոսսուսպոլի մոտ) հիմնադրվել է V դարի կեսին, կիմերիական (Կերչի նեղուց) Բոսֆորի երկու ափերին՝ Թեոդոսիա Պանտիկապեյոնը և Ֆանագորիան ու այնուհետև հյուսիս արևելքում Դոնի գետաբերանում Տանախը: Վերջին գաղութը Մերձսև ծովյան հյուսիսում եղած հունական ամենածալքամասային բնակավայրն է:

Հյուսիսային պոնտական այդ հունական բնակավայրերը և այնպիսի գաղութներ էին, սրանք խաղում էին առևտրական ախարների, առևտրական կենտրոնների դեր, կապելով մայր Հունաստանը այն ժամանակվա «բարբարոսային» ծայրամասեր հետ, այսինքն սկյութացիներով բնակված հսկայական մարջ հեռավայրերի՝ ~~այսինքն~~ ժամանակակից սերբիտորիայի հարավում բնակված ցեղերի հետ առևտուրը աչքի բնկնող տեղ է գրվել Հունաստանի էկոնոմիկայի զարգացման մեջ: Օլբիայի և Պանտիկապեյոնի, Խերսոնեսի և Ֆանագորիայի միջոցով սկյութացիներից ձևաք էին բերվում այնպիսի բաներ, ինչպես, օրինակ՝ հացահատիկ, բուրգ, ձուկ, մետաղներ, ինչպես նաև սարուկներ: Ինքնաբերական սկյութացիները հույներից ստանում էին հունական առևտուրների դանդաղան արտադրություններ, գինի և յուղ:

Միևնուրեքսական հսկա ծայրամասի՝ Սկյութիայի և Հունաստանի միջև առևտրական կապերի զարգացման այդ պրոցեսը մազդեցություն է ունեցել ոչ միայն հին Հունաստանի ստրկատիրական էկոնոմիկայի զարգացման և ամբապնդման վրա, այլև ազդ է իրեն իսկ Սկյութիայի սոցիալական զարգացման վրա, որտեղ այդ ժամանակ նկատվում էր առհմական հարաբերությունների քայքայումը, պետականության ծնունդը, ցեղային միավորումների հանդես գալը սկյութացիների թագավորների գլխավորության սրանք ոչ միայն բնգոտել էին հունական կուլտուրան, այլև նրան հակադրել շարժում այն վերափոխել էին բոս իրենց, պատմական

միջավայրի, և, թերևս, նույնիսկ իրենց իսկ ազդեցությունն են ունեցել Հունաստանի, հատկապես հունական արվեստի վրա:

Ռուսական դիտության կողմից պեղված և հատկապես մեր սովետական դիտության կողմից ուշադրությամբ ուսումնասիրված ՄՍՄՄ-ի հարավի հնագիտական հուշարձանները վկայում են հունասկյութական առևտրի ինտենսիվ զարգացման մասին: Սկյութական գերդժանոցների պեղումները, հին սկյութական կապիկ հուշարձանները մեզ ցույց են տալիս, թե որքան ուժեղ է եղել հույների ազդեցությունը սկյութացիների վրա և միևնույն ժամանակ, թե ինչպես սկյութացիները պաշտպանել են սեփական ինքնատիպ կուլտուրան, որը իր արտահայտությունն է դրել արվեստի հուշարձաններում: Սովետական պատմական դիտության ամենահետաքրքիր խնդիրներից մեկն է հանդիսանում Մերձսևծովյան հյուսիսում առաջին պետական միավորումների ձևավորվելու արշալույսին հունական և սկյութական կուլտուրաների համակցությունն ուսումնասիրությունը: Այս հարցի առթիվ, բացի հնագիտական հուշարձաններից, պատմաբանն ունի նաև մեծ քանակությամբ պատկան աղբյուրներ: Հույները մեզ թողել են Սկյութիայի, սկյութացիների կյանքի ու կենցաղի, ինչպես Կյուրոսի ու Դարեհի պարսկական բռնապետության դեմ հանուն իրենց անկախության նրանց ընդհարումների մանրամասն ու հետաքրքիր նկարագրությունները:

Վերջին հույների գաղութացման ալիքի մյուս հակադիր կետը հանդիսանում է Միջերկրական ծովի արևմուտքը՝ Սիցիլիան, Իտալիան, Հարավային Գալլիան և Իսպանիան: Այդ երկրներում հունական բնակչությունը վաղ է սկսել կազմավորվել, որը պակաս դեր չի խաղացել, քան գաղութներն արևելքում: Սիցիլիայի գաղութներից անհրաժեշտ է հիշատակել Մեսսինիան, Սիրակուզան, Ագրականդը: Սիցիլիայի արևմտյան մասում հունական գաղութացման ալիքը հանդիպեց Կարթագենից եկող ուրիշ ալիքի: Արևմտյան Սիցիլիան դեռ շատ վաղուց հրապուրում էր կարթագենացիներին, զրա համար էլ այստեղ կազմակերպվել էր կարթագենական բնակավայրեր: Ահա թե ինչու Սիցիլիան հետագայում որոշ շափով եղել է հույների և կարթագենացիների դժուրությունների պատճառ:

Հարավային Իտալիայում հիմնադրվել են այնպիսի գաղութներ, ինչպիսիք են Տարենտը, Սիբարիսը, Կրոտոնը: Հունական այս բնակավայրերը միայն առևտրական գաղութներ չէին: Նրանց

պատմական դերն ավելի մեծ է Հետագայում նրանք դարձան խոստովանող հուշարարացի վրա հունական ազդեցության երակետը Այսպես կոչված «մեծ Հունաստանը» կա նշանակալից շարժով ծառայել է հունական հուշարարացի նվաճումները խաղաղական պետության ցեղերին հաղորդելու կամուրջը:

Ե Հունական գաղութացման ալիքը ուղղվել է նաև Իտալիայի նեոս գեպի արևմուտքը, Մոսավորապես VII դարի կեսերի (մ. թ. ա.) Փոկիայից սերվողները հարավային Ֆրանսիայում հիմնեցին Մասիլիային (ժամանակակից Մարսելը): Այդ քաղաքը ժողովրդների մտադրությունների շարժումը հետագայում ասորածին Իտալիայի ամբողջ արևելյան ափերով Իսպանիայում առաջացածի շարք գաղութներ, որոնցից հիշատակման արժանի են հմպոբիոնը, Հեմերոսկոպիոնը, Մայնական: Իսպանիայի արևմտյան ափերին հունական հուշարարացի մնացորդները բացահայտվել են XIX դարի վերջին և XX դարի սկզբին կատարված նագիստիան պեղումների հետևանքով և ներկայումս հունդիսանում են անգլիան իրեթական բնակչության վրա հունական ազդեցության ուղիների ուսումնասիրության առարկան, որը այդ ազդեցությունը շարժի վերամշակման է ենթարկել, պահպանելով իր անզակա մտախմբերը արվեստում, ճարտարապետության մեջ և այլն:

ՓՈՐՐԱՄԻԱԱՆ ԴԱՂՈՒԹՆԵՐԻ ԿՈՒՍՈՒՐԱՆ

Հունական գաղութներն ուսումնասիրելիս հատուկ ուշադրություն առարկա են Փոքր Ասիայի ափերի գաղութները, նրանց ծագումը, դարձումը, պատմության և արվեստի հուշարձանները: Հունական փոքրասիական գաղութների, հայտնի դիտարկությունն առաջին հուշարարական Յոնիս մարդ անունով, հասարակական կատարվածքի ուսումնասիրման այժմյան դրությամբ ծագում են շուրջադմազան հարցեր: XX դարի սկզբին հեթիթական կուլտուրայի գանազան փոքրասիական հայտնաբերելն, ինչպես և պեղումների հետևանքով շարունակվող նոր և նոր հուշարձանների հայտնաբերումը Ֆրիգիայում, Լիդիայում և Կապադովկիայում մեր առաջին մեծ հարց են դիտվում կղեր է արդյոք հին Յոնիան, այսինքն՝ հիմնական փոքրասիական գաղութները, հունական կուլտուրայի վրա: 1909 թվին պրոֆ. Հոգգարտը Լոնդոնում կարդացած

շարք պատմաբանություններում, փորձում էր նոր ձևով խոսել յոնիական կուլտուրայի, ծագման և բնույթի մասին¹:

Յոնիայի և Արևելքի հետ ունեցած նրա փոխհարաբերության այս նոր յուրատեսակ դրույթը այն է, որ Հոգգարտը ձգտում է հնագիտական հուշարձանների ուսումնասիրության միջոցով հաստատել Յոնիայի վրա ավելի արևելյան, քան թե հունական և փյունիկյան ազդեցության հետքերը:

Պատմական պատմության մեջ Յոնիայի կուլտուրայի բնույթի մասին եղել են շատ ամենատարբեր, բայց սակավ ապացուցելի տեսություններ: Այսպես, օրինակ, առաջներում հաստատվում էր, որ հունական կուլտուրայի վրա բացառիկ ազդեցություն է ունեցել փյունիկյան և առհասարակ սեմական ժողովուրդների ընդհանուր կուլտուրան: Ըստ մյուս կարծիքի Յոնիան կուլտուրական տեսակետից իրենից ներկայացրել է Բաղկանյան թերակղզու հունական երկրների նրա վրա թողած ինտենսիվ ազդեցության արդյունք:

Պրոֆ. Հոգգարտը թույլացնում է առաջին տեսակետը, սեմիտական կուլտուրային տալով միայն հունական և Արևելքի, հատկապես Միջագետքի հարուստ և ուժեղ կուլտուրայի միջև միջնորդային օղակի նշանակություն: Ինչ վերաբերում է Յոնիայի Բաղկանյան Հունաստանի ազդեցության վերաբերյալ տեսությանը, սպա նա այն համարում է վերացական, անիրական, քանի որ պատմականորեն ավելի ճիշտ կլիներ պնդել հակառակը, — որ հունական մայրցամաքային Հունաստանի վրա ազդել է ավելի, քան վերջինս փոքր ասիական քաղաքների: Հունաստանի վաղ շրջանի պատմության համար այդ պետք է համարել ճիշտ:

Ելնելով դրանից, և հասկապես Փոքր Ասիայում և Միջագետքի հայտնաբերած հայտնաբերած իրեղեն հուշարձաններից, կարելի է եզրակացնել, որ Միլետի, Էֆեսոսի, Փոկիի, Հայիկանասի հուշարձանով մեզ չավ ծանոթ և այնքան բնորոշ յոնական կուլտուրան ձևավորվել է արևելյան կուլտուրայի ուժեղ ազդեցությամբ:

Այս համարձակվում եմ կարծիք հայտնել, — հայտարարում է պրոֆ. Հոգգարտը, — որ եղած վկայությունների բաղանդ որոշակիորեն ավելի շուտ հակված է վաղ յոնական քաղաքականության վրա փոքրասիական ազդեցության կողմը: Այն կապերը, որոնք գոյություն են ունեցել Փոքրասիայի և վաղմի Յոնիայի միջև, հավա-

¹ Работа Хоггарта называется «Юния и Восток». Эта работа в 1914 г. была переведена на русский язык.

նաբար, պահպանվել են ոչ թե ուղղակի հարաբերության ճանապարհով, այլ ներքին կապի մյուս օղակի միջոցով, այսինքն՝ Լիզիական այն պետության միջոցով, որի տերիտորիայի մեծ տարածության վրա երկրի ներքին մասից զեպի Յոնիա անցնում են երկու ճանապարհներ»:

«Մենք հանդիստ կերպով կարող ենք ենթադրել, — կարգում ենք այնուհետև, — որ վերին լիզիական հովիտներում գոյություն է ունեցել համեմատաբար բարձր զարգացած քաղաքակրթություն դեռևս մինչև այդպիսին երևան գալը առափնյա քաղաքներում: Հավանաբար Լիզիան գոյություն է ունեցել այն ժամանակ, երբ ասիական Հունաստանը դեռևս չի եղել»:

Պրոֆ. Հոգգարտի այս խոսքերը գրելուց անցել է 30 տարի: Այդ ժամանակամիջոցում գիտությունը հարուստացել է Փոքր Ասիայի մեծ քանակությամբ հուշարձաններով, որոնք հաստատում են պրոֆ. Հոգգարտի հիպոթեզի կարգով արտահայտած տեսությունը, և այժմ այն դարձնում գրեթե ընդհանուրի կողմից ընդունելի փաստ:

Այս հարցի հետագա հետազոտությունը մեծ մասամբ պետք է լույս ափսի հին Հունաստանի դուրս անտիկ կուլտուրայի առաջացման և ձևավորման վրա: Բայց այժմ արդեն պարզ է, որ հավել թե կարելի լինի Յոնիայի նշանակությունը, որպես մայրցամաքային Հունաստանի վրա Արևելքի ազդեցություն հաղորդող նյութից հենց հույների Արևելքի հետ անմիջական շփումն էր, որ նպաստեց Յոնիայի ձևավորմանը, որպես կուլտուր-քաղաքական օջախի: Յոնյան հուշակված է եղել իր փիլիսոփաներով, իմաստուններով, որ սկիզբ են դրել հունական բնափիլիսոփայության զարգացմանը: Նա գտնվում էր Արևելքի ազդեցության տակ: Նա անմիջականորեն երես առ երես հանդիպեց արևելյան կուլտուրային և ապա այն հաղորդեց արդեն հունական յուրահատուկ վերամշակմամբ մայր ցամաքային Հունաստանին, որտեղ այն իր հետագա զարգացումը ստացավ:

ՏԻՐԱՆԻԱՅԻ ԱՌՍՋԱՅՈՒՄԸ ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հունական քաղաք-պետությունների առաջացմանը և քաղաքական ձևավորմանը ուղեկցել է նրանց ներքին սոցիալական ստապայթարը: VII—VI դարերում (մ. թ. ա.) ռեպուբլիկոն շարժումներ և տեղի ունեցել փոքրասիական քաղաքներում՝ Միլետում՝ Էփեսոսում,

Մոս, Կոլոսոնում, Էփեսյան ծովի Լեսբոս, Քիոս, Սամոս կղզիներում, մայր ցամաքային Հունաստանի Մեգարա, Կորնթոս, Աթենք քաղաքներում և Մեծ Հունաստանում՝ Տարենթում, Կրատոսում, Ռոյպես և Սիրակուզայում:

Այդ քաղաք-պետությունների սոցիալական պայթարն ուսումնասիրելիս աչքի է ընկնում այն հանդամանքը, որ պետության ձևավորումն այստեղ անցել է տիրանիայի աստիճաններով:

Որն է տիրանիայի (բռնապետության) բնորոշ հատկանիշը: Նրա առաջին հատկանիշն է բռնակալությունը, մի մարդու կողմից պետական իշխանության բռնի գավթումը: Տոհմատիրական կարգի քայքայման ժամանակ, տոհմային արիստոկրատիայի դեմ կողմից պայքարի պրոցեսում հաճախ ժողովրդական առաջնորդի անվան տակ առաջ էին նետվում այսպես կոչված բռնապետները (тираны): Սովորաբար նրանք արիստոկրատական ծագում ունեին, բայց պայքարում էին վերջիններիս դեմ քաղաքական տիրապետության, առևտրի և արհեստների զարգացման համար: Երկրորդ հատկանիշն արիստոկրատիայի դեմ մղվող այդ պայքարում տիրանները ձգտում էին որպես սոցիալական հենարան օգտագործել զեպիստին: Մի քանի տիրաններ իրենց շրջապատում էին իմաստուն քաղաքականների շրախմբերով և շանում էին նմանվել հին թատիկորեններին:

Տիրանների քաղաքականությունը, որքան հաշտնի է հունական քաղաքների պատմությունից, եղել է հակասական: Ժողովրդի նա միասին դուրս գալով տոհմային արիստոկրատիայի դեմ, տիրանները միաժամանակ ձգտում էին հարթել դասակարգային հասարակությունները, դրանք սքոլելով ավելորդ շքեղության, ստրկատիրների տնտեսության մեջ շահագործվող ավելի թիվով ստրուկներ և հիլոս: դեմ դանազան օրենքներ հրատարակելու միջոցով: Հենց այդ հիման վրա տիրանները դաշն էին կնքում ժողովրդի հետ: Սակայն, դուրս գալով տոհմային արիստոկրատիայի դեմ, տիրաններն իրենց քաղաքականությունը կառուցում էին ստրկատիրական այն արարքությունների զարգացման վրա, որոնք վերջ ի վերջս իրենց պետությամբ նորից ընկնում էին ընշազուրկ խավերի՝ դեմոսիայի: Հետևաբար, տիրանները չէին կարող որևէ կերպ հեռուդաստերեն պաշտպանել դեմոսի շահերը:

Տիրանների հենց այդ հակասական քաղաքականության մեջ էլ տնտեսալից չափով թաքնված է բռնապետության, որպես հունաստանի պատմություն —

կան պոլիսները քաղաքական ձևի անկախունության պատճառով մի մոմենտը նշել է Արխատոսելը դեռևս V դրքում, «Политика» տրակտատում: Սակայն տիրանիան մի շարք կոնկրետ դեպքերում մեծ դեր է խաղացել տոհմային ավագանու տիրատուության ոչնչացման գործում և նպաստել է դասակարգային սարակուսության հետագա ձևավորմանն ու ստրկատիրական պետության ամրապնդմանը: Մի շարք հին հունական քաղաքների գրգռման մեջ տիրանիան եղել է պատմական անխուսափելի էություն է, նրա նշանակությունը եղել է սարբեր:

Տիրանիայի ժամանակ եղել են դեմոկրատական որոշ նշաններ: Այն հանգամանքը, որ բռնապետները հաճախ սովորություն իրավունքները կողմֆիկացիայի են ենթարկել, ասում է մասին, որ ժողովրդական մասսաների ելույթի հետեանքով բանները հարկադրված են եղել զիջումներ կատարել և հրատարակել տիրապետող դասակարգի համար որոշ շրջանակներ սահմանող գրավոր օրենքները, որը հատկապես կարևոր է, տիրան ամրապնդում էին նոր ստրկատիրական կարգերի հիմքերը, քաղաքական միջոցառումներով նախադրյալներ են ստեղծում ղրովրդական մասսաների ելույթի համար: §

Ամենից առաջ տիրանիան առաջացել է Փոքր Ասիայի էգեյան ծովի կղզիներում: Հայտնի է, որ VII դարի վերջին (մ. թ. ա.) Միլետում կառավարել է տիրան Թրասիբուլը: Մեկ սեղ է տեղեկություններ Սամոս կղզու տիրանի՝ Պոլիկրատի սին (VI դ. մ. թ. ա.): Պոլիկրատի և նրա կառավարման մասին մենք բավականաչափ մանրամասն տեղեկություններ ունենում ենք, որ Պոլիկրատը անց է կացրել ծրագրված ներքին արտաքին քաղաքականություն ի վնաս արխատոկրատիայի հերի, ձգտել է սահմանափակել արխատոկրատիայի և լայն ժողովրդի իրավունքները: Պոլիկրատը հովանավորել է առևտարհասանների զարգացումը: Պոլիկրատի հզորությունը Սամոս կղզում այնքան նշանակալից է եղել, որ նա սկսել է սպառնալ հանդիսանալ անգամ Պոլիկրատի ոչ վաղեմի բարեկամ պարսիկների նկատմամբ: Պարսից կուսակալ Օրոյտը որոշվել էր տալ Սամոսի առաջխաղացմանն ու աճմանը: Հայտնի պարսից այդ կուսակալը Պոլիկրատին հրապուրել է դեպի և հրամայել է նրան այնտեղ խաչել: Պոլիկրատի տերությունը հիմնադրի մահից հետո թուլացավ և շուտով Սամոսն պարսիկների կախման տակ:

Տիրանիան առավելագույն հաստատուն է եղել բուն Հունաստանում՝ Կորնթոսում, Միկոնոսում և Միդերիոսում: Հունական տեղեկությունները հատկապես մանրամասն պատմում են մեկ VIII դարում (մ. թ. ա.) տիրանիայի զարգացման մասին Կորնթոսում: Տիրան Պերիանդրի օրոք Կորնթոսը հասավ մինչ այդ շտեմնված անտեսական բարեկեցության, փայլի և արտաքին բարձունքների, բայց որում այդ տիրանը պատմության մեջ է մտել ոչ միայն որպես շատ նրբամիտ քաղաքագետ, այլ որպես գիտության և արվեստի հովանավորող: Պերիանդրի տիրապետության ժամանակ Հունաստանի նշանավոր մարդկանցից շատերը այցելել են Կորնթոս կամ ծաղկման շրջանում: Ստրկատերերի և առևտրի ներկայացուցիչների վերջնականապես իշխանության գլուխ անցնելը, նրանց հաղթանակը հին տոհմական արխատոկրատիայի դեմ և տիրանիայի ձևով իշխանություն հաստատելը, որը ստրկատիրական քաղաքականության զարգացման համար ուղի հարթեց՝ ամենից լավ կարող է ցույց տրվել Կորնթոս քաղաքում վաղ հունական տիրանների պատմությամբ:

Այսպիսով, տոհմատիրական արխատոկրատիայի տիրապետության տապալումից հետո տիրանների, որպես հունական քաղաքականության նշանակություններում քաղաքական իշխանության սկզբնական ձևերից մեկի, պատմական նշանակությունն այն է, որ տիրանիան հանդիսանում էր հունական պետությունների ստեղծման ուղիներից մեկը: Տիրանների միջոցառումները քայքայում էին առաջադիմության զարգացմանը խանգարող տոհմային հիմնարկների հին սովորություններն ու պաշտամունքների հիմքերը: Նրանք նպաստում էին ստրկության, առևտրի, հողատիրության զարգացմանը և դրանով իսկ բարձրացնում արտադրողական ուժերի աճը և ժողովրդական մասսաների միջին խավերի՝ գյուղական և քաղաքային դեմոկրատիայի նշանակությունը:

Հունաստանի պատմությունն ուսումնասիրելիս առաջին պլանի վրա են հանդես գալիս երկու խոշոր պետություններ՝ Սպարտան և Աթենքը: Հունաստանի հետագա ողջ պատմությունը այսպես կոչված կլասիկ ժամանակաշրջանում կապված է այս երկու պետությունների բարձրացման հետ իրենց զարգացմամբ, քաղաքական աճմամբ և, վերջապես, միջազգային ասպարեզում իրար բախվելով:

ՍՊԱՐՏԱ

Սպարտա պետությունն առաջացել է Պելոպոնեսի հարավարևելքում գտնվող Լակոնիա մարզում: Նա դրավում էր Էվրոտաս

գետի հովիտն ու մի շարք լեռնավայրեր: Կախոնիայի լեռները
բուստ են եղել մարմարով և երկաթով: Նրանց լանջերը ծածկվե-
լին խիտ անտառներով, որտեղ կային բազմաթիվ վայրի այծե-
վարազներ, արջեր և տարբեր տեսակի սրսեր: Էվրոտաս գետի հ-
վիտը շատ հարմար է եղել գյուղատնտեսությանը զբաղվելու հ-
մար: Նրա հողերը բերրի էին և համարյա բոլոր կողմից լեռները
պաշտպանված: Մարզի կենտրոնում, Էվրոտասի ափին գտնվում
Սպարտա քաղաքը: Մերձակա մի շարք գյուղական համայնքներ
միավորումից հետո այդ քաղաքը դարձավ Կախոնիայի կենտրո-
նը: Այդ քաղաքի անունով էլ պետությունը կոչվեց Սպարտական, կ-
պարզապես Սպարտա:

Ըստ հունական ավանդության հայտնի է, որ այդ երկրի շե-
նական բնակչությունը կազմված է եղել դորական նվաճողների
հետևորդներից: Նրանք եկել են Էվրոտասի հովիտը, նվաճել ա-
տեղ գտնվող աքայացիներին և ստրկացրել նրանց: Ստրկացվե-
լիս ժողովուրդը միշտ ելնում էր իր կեղեքիչների դեմ: Սպարտայում
անընդհատ տեղի է ունեցել ինչպես բացահայտ, նույնպես և խ-
պաչքար:

Սպարտական պետության կազմավորման չմասին կա և
ուրիշ բացատրություն: Այսպես, հին մարդիկ գտնում էին, որ
սպարտական պետական կազմավորման սկիզբը դրել է Լիկուրգոսը:
Այս տեղեկությունները մեզ տալիս է Պլուտարքոսը Լիկուրգոս
կենսագրության մեջ: Պլուտարքոսն ասում է, որ Լիկուրգոսը հր-
տարակել է մի շարք օրենքներ, որոնք ամրապնդել են Սպարտա
պետական կարգերը, կարգավորել են պետական հիմնարկները
վերջնականապես ձևավորել են նրա քաղաքական կարգը: Հետո
գալով Լիկուրգոսը անտիկ տրադիցիայում հայտնի է որպես
սպարտական առաջին օրենսդիր: Սակայն Սպարտական պետ-
ության առաջացումը հունական սկզբնաղբյուրներում պարզ
պատկերված: Ավելի հավանական են հետևյալ տվյալները:

Սպարտայի քաղաքական կարգերի հաստատման մասի
անտիկ ավանդությունը պատմում է հետևյալը: Սպարտայի
ղլուխը կանգնած են եղել երկու քաղաք: Պատերազմի ժամ-
նակ նրանք ունեցել են անսահմանափակ իշխանություն, խ-
խաղաղ ժամանակ թագավորները պարտավոր էին բոլոր գործ-
րում խնդրել ավագների խորհրդի համաձայնությունը, որը կո-
վել է գերուսիա: Գերուսիան բաղկացած էր 30 անդամից: Բայ-
երկու թագավորից, նրա մեջ էին մտնում 28 ծերունիներ, որո-

նվաճումներ կատարելու: Ամբողջ Կախոնիայի մարզին տիրապե-
տելուց հետո Սպարտան VIII դարում մ. թ. ա. պատերազմ սկսեց
Մեսսիոնիայի դեմ: Չնայած, որ մեսսիոնացիները երկար ու համառ
պաշտպանում էին իրենց անկախությունը, այնուամենայնիվ
սպարտացիները հաղթեցին նրանց և հպատակեցրած ամբողջ
բնակչությունը դարձրին հելոտներ: Մեսսիոնացիների մի մասը՝
լյանկանալով ստրուկ դառնալ, հեռացավ իր հայրենիքից: Մես-
սիոնիայից հետո նվաճեցին և ուրիշ մարզեր: Պելոպոնեսի մնացած
բոլոր պետությունները, հզորացած Սպարտայի ուժն զգալով,
ձգտում էին նրա հեռ դաշնակցելու: VI դարում՝ մ. թ. ա. տ-
սիլանաբար կազմակերպվեց Պելոպոնեսյան միությունը՝ Սպար-
տայի ղեկավարությամբ: Պելոպոնեսյան գրեթե բոլոր երկրները
մտան այդ միության մեջ: Պելոպոնեսյան միությունը նպատակ
էր դրել իր միավորած պետություններում պաշտպանել արի-
ստոկրատական կարգը և միացյալ ուժերով պայքարել ղեմտիրա-
տական շարժումների դեմ: Այդ միությունում Սպարտան բացա-
ռիկ զեր էր խաղում: Նա ղեկավարում էր ներքին և արտաքին
գործերը. նման դրությունը ապահովում էր ըստ էության Սպար-
տայի հեղեմոնիան Պելոպոնեսյան միությունը բոլոր մյուս պե-
տությունների վրա:

Իր հեղեմոնիայի շնորհիվ Սպարտան հայտնի դարձավ Պելո-
պոնեսի սահմաններից դուրս ևս: Սպարտական արիստոկրատիան
ամբողջ Հունաստանում ծառայել է որպես հին կարգերի պա-
վար: Գեմոսի (ժողովրդի) դեմ մղած պայքարում օգնություն ստա-
վար: Գեմոսի (ժողովրդի) դեմ մղած պայքարում օգնություն ստա-
նալու համար՝ սպարտական արիստոկրատիային էին դիմում հու-
նական մյուս պետությունների արիստոկրատները: V դարում
մ. թ. ա. հունական գործերում Սպարտայի ազդեցությունը սկսեց
նվազել: Այդ ժամանակ աչքի էր ընկել մի նր՝ Աթենական պե-
տությունը, որին աստիճանաբար անցավ հունական պետություն-
ների գլխավոր զերը:

130
110 ԱՌԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:
Աթենական պետությունն առաջացել է Ատտիկայում պատ-
մա-աշխարհագրական մի փոքր այլ պայմաններում, քան Սպար-
տան: Ատտիկա թերակղզին գտնվում է Միջին Հունաստանի հա-
րավ-արևելյան մասում և շատ է դուրս ցցված դեպի ծովը: Բեռ-
տիայից նա բաժանված էր լեռնաշղթայով, Պելոպոնեսից՝ Կորին-
թոսյան պարանոցով, իսկ մյուս կողմերից ողողվում էր ծովից:

Ատտիկայի ամենը իրստ կտրուված են և ունեն խոր, խաղաղ ու ծովագնացության համար հարմար նավահանգիստներ: Իրանցից դիստորն էր Պիրեայ: Ատտիկայի ընդերքը հարուստ էր հանածոներով: Լեճները, հառակապես Պենդելիկոնեյան, Լարուստ էին մարմարի լավագույն տեսակներով: Լավիոնեյան լեռներում կար շատ արծաթ և այնտեղ շատ վաղ ժամանակներից հանքեր էին մշակում: Աթենական դաշտավայրերի հողերը հարմար էին հողագործության, գլխավորապես այգեկործության համար: Լեոնային վայրերում բնակչությունն զբաղվում էր անասնապահությամբ, ծովահնյա շրջաններում՝ առևտրով և արհեստով:

Ստտիկայում ապրում էին յոնիացիները՝ Նրանց համայնքների մեջ վաղ ժամանակից իր նշանակությամբ աչքի ընկավ աթենական համայնքը, նա գտնվում էր ծովից ոչ հեռու, ունեւր լավ նավահանգիստ և մյուս համայնքներից տարբերվում էր իր անատիկ ակրոպոլիսով (միջնաբերդով): Աթենական համայնքի ուժեղացման գուպընթաց Ատտիկայի մյուս բոլոր համայնքները կամ հպատակվեցին նրան, կամ նրանցից մի քանիսը պայմանապահ հիման վրա կամավոր կերպով ձուլվեցին նրա հետ:

Ատտիկայի միավորումն Աթենքի իշխանությանն տակ և պետության կազմակերպումն ավանդությունը վերագրում է Աթենքի արքա Թեսեսին: Մի շարք դարերի ընթացքում Ատտիկայում իշխանությունը պատկանելիս է եղել աթենական բասիլեաներին: դրանցից վերջինը, ըստ ավանդության, եղել է Կոլոթազոսը: Սակայն Թեսեսի ռեֆորմը և նրա գերը շարք է գերագահատել, իրականում այն եղել է պետություն կազմակերպելու առաջին փորձը: Աթենական միության ցեղերի կարգերը իրենց բնույթով մոտ են եղել Հունիերոսի նկարագրությանը: նրա գլուխը կանգնած է եղել թագավոր բասիլեոսը, որն ապրել է ակրոպոլիսում: Նա հանգիստանում էր գերագույն կառավարող, քուրմ, դատավար և աթենական զորքի պետ: Պետությունը կառավարելու գործում նրան օգնում էր ավագանուց կազմված խորհուրդը: Խորհրդի ներսերը տեղի էին ունենում մի ժառոտ բլրի վրա, որը նվիրված էր պատերազմի աստված Արեոնին: Այստեղից էլ ծագել է այդ խորհրդի արեոպագոս անունը: Աթենական պետության վաղ ժամանակաշրջանում բասիլեոսի կողքին արեոպագոսը իշխանության գլխավոր մարմինն էր հանդիսանում: Առասպելական արքա Թեսեսի գործունեության սոցիալական նշանակության մասին բավականաչափ մանրամասն խոսում է Էնգելսն իր «Բնական»

մասնավոր սեփականության և պետության ծագումը՝ աշխատանքում: Այդ սեֆորմի բնույթը վիչայում է առհմային կարգերի բայրայման և Ատտիկայում պետություն կազմակերպելու առաջին բայրերի մասին:

Սկզբում բնակչությունը բաժանվում էր երկու շրմանակա խմբերի՝ Էվպատրիդեև (տրիտոսկրատիա) և պեմոս (նատարակ ժողովուրդ): Ավելի ուշ Էվպատրիդեերը սկսեցին իրենց միջին թնտրել գոխապես՝ պղծեմարհու: Ատտիկանորար մյուս գործերը էլ սկսեցին բասիլեոսից անցնել նոր, բարձր պաշտանեական անձնավորությունների՝ առհմառեևի (կառավարիչների) ձեռք: Բասիլեոսն մնացին միայն քրմական պարտականությունները: Չեռագայում բասիլեոսի իշխանությունը բոլորովին վերացվեա: Բրմիքին էլ սկսեցին թնտրել: Այդ բոլոր պաշտանները գրավում էին Էվպատրիդեերը: Ժողովրդական մասսաները (պեմոս) մնում էին իրավագործի վիճակում և պետության կառավարման գործում մասնակցություն չէին ունենում, միայն երբեմն գումարվում էր ժողովրդական ժողով, որտեղ հայտարարվում էին իշխանության գորշումները: Էվպատրիդեերի տիրապետության շրմերը եղել է խոշոր հողատիրությունը և համայնական կարգերի մնացուկները:

Ստտիկայում բազմաթիվ մանր հողատերեր էին ապրում: Նրանք իրենց ինքնուրույն անտեսությունն էին վարում ժողովրդական աստիճանում: Քանի աճում էր բնակչությունը, հողամասերն ասիլի ու ասիլի էին մասնատվում և մանրանում: Նոր հողամասեր ձեռք բերել չբավորներն ի վիճակի չէին: Նման պայմաններում նրանք ստիպված էին լինում Էվպատրիդեերից պարտք վերցնել: Էվպատրիդեերը գյուղացիներին հոծարությունը որոշ գումարով կապարով հող էին տալիս կամ փոխառություն հողի համար: Զեռու նրանք պարտապանի հողամասում դնում էին քար, որի վրա նշվում էր պարտքի գումարը և վճարման ժամկետը: Կար ժամանակ, որ Ատտիկայում գրեթե գյուղացիների բոլոր հողերը ծածկված էր սյգպիսի պարտաբարերով: Սահմանված ժամկետին պարտքը չվճարող գյուղացու հողը գտնում էր Էվպատրիդե սեփականությունը: Իսկ գյուղացիները հաճախ ի վիճակի չէին լինում պարտքը վճարելու, և նրանց հողն անցնում էր խոշոր հողատերերի ձեռքը: Սթեն պարտքը հողամասի արժեքից բարձր էր լինում, պարտապանն ստիպված էր պարտքի մնացորդը Էվպատրիդեին հատուկել, աշխատանքով: Այսպիսով նա գտնում էր Էվպատրիդե ստրուկը: Երբեմն պարտքը մարելու նամար գյուղացին ստիպված էր լինու:

ինքն իրեն և իր երեխաներին վաճառել ստրկության նույնիսկ երկրից դուրս Այս բոլորը ուղեկցել է գյուղացիների հողազրկման և նրանց ստրկացման պրոցեսին, այսինքն՝ պարտային ստրկացման մեծամասնը: «Քեզող դրամական անտեսությունը, իբրև քաջքայի մտնուաշուր ներխուժում է գյուղական համայնքների բնակատնտեսության վրա հիմնված հնամենի ավանդական գոյության ներքո»¹:

Աթենական դեմոսը դժգոհ էր այդպիսի գրովությունից և նույնիսկ ժողովարարներից: Այդ իր արտահայտությունը գտավ պետական հեղաշրջում կատարելու Քիլոնի փորձի մեջ, որը սակայն չհաջողվեց (VII դար մ. թ. ա.): Աթենական դեմոսը հետագայ պայքարի ընթացքում պահանջեց գրավոր օրենքների կազմումը (Քիլոնը այդ Աթենքում գրավոր օրենքներ չկային: Դատում էին դեպի սահմանափակ կարգերի սովորություններով: Էվպատրիդները, սրանց՝ ձեռքին էր գատարանը, օգտվում էին դրանից: Միշտ դատը անում էին հարուստների՝ ավագանու և արխատկրատների օգտին: Ժողովրդի ճնշման տակ Էվպատրիդները ստիպվա եղան զիջումներ անել և 621 թվ. մ. թ. ա.) նրանք արքունիներից մեկին՝ Դրակոնին հանձնարարեցին գրավոր օրենքներ կազմել:

Դրակոնի սահմանած օրենքները շափազանց խիստ էին անանձնապես դաժան էին սեփականության դեմ կատարած հանցադրժությունների պատիժները: Նույնիսկ մանր գողության համար մահապատիժ էր սահմանված: Հետագայում Դրակոնի օրենքներն օրինակ էին բերվում որպես դաժանության նմուշ, այնպես որ ամեն մի նոր խիստ օրենք անվանում էին «դրակոնյան»:

Այսպիսով թեև օրենքներ գրի առնվեցին, բայց դրանք չբարելավեցին դեմոսի գրովությունը: Նրանք պաշտպանեցին միայն ստրկատիրական սեփականությունը և պատիժներ սահմանեցին այդ սեփականության խախտման համար: Այդ պատճառով դեմոսի խուժովությունները չէին կարող դադարել: Ժողովուրդը շարունակ դուրս էր գալիս Էվպատրիդների դեմ և պահանջում էր նրան տալ ևս քաղաքական իրավունքներ: Էվպատրիդներն ստիպված էին նոր զիջումներ անել, որի հետևանքը հանդիսացան Սոլոնի, Կլիսթենեսի օրենսդրությունները և մյուս քաղաքական ռեֆորմները: Այդ ռեֆորմների շնորհիվ Աթենքի քաղաքական կարգերը Հունաստանի

մյուս պետությունների համեմատությամբ ընդունում է ստրկատիրական պետության ստաիլի դարձուցում ավարտման ձևը: Աթենքի պետության առաջացումը տիպիկական է, որովհետև այդպիսի այդ պրոցեսը գնաց աստիճապես պարզ ձևով, պետության դարձուցում էին այստեղ առաջանում է անմիջապես առհմական կարգերից այդ պրոցեսի էական մանրամասնությունները մեկ հայտնի է:

ՍՈՒՆՔ, ՊԻՍԻՍՏՐՍԻ ԵՎ ԿԼԻՍԹԵՆԵՍԻ ԻՆՏՈՐՄԵՆՏԻ ԱՌԵՎՈՒՄԸ

594 թվին մ. թ. ա. Սոլոնն Աթենքում ընտրվեց առաջին արքունու, նրան հանձնարարվեց ժողովրդի և արխատկրատիայի միջև հարաբերության հաստատելու: Այդ մասնակ մասը նպատակների գրովությունը խիստ ծանր էր: Գարտաքարերի թիվը գնալով շարունակ ավելանում էր: Աթենական քաղաքացիներից շատերը հետաքրքրված հեռանում էին իրենց հայրենիքից կամ վաճառվում ստրկության: Նման գրովության մեջ տալու համար Սոլոնը սրտեկ սեռ լայնին բնույթ կրող մի շարք միջոցներ ձեռք անեց: Սոլոնի սեռ լայնին միջոցառումներից առաջինը «պարտեկի վերացումն է (սեյսախանջա)»: Սոլոնը հրամայեց դաշուների հանել պարտեկաբերը, վերացրեց պարտեկի վճարումը և սրտեկից ստրկացրեց Գարտեկը: Գնաց գրովում նպատակներ վերադարձվեցին իրեն սեռ լայնին տեղերին: Օտար երկրներ ստրկության վաճառված բնակիչների մի մասը ետ գնվեց պետական փողով:

Այդ բոլոր միջոցառումներն օղջված էին նպատակ ստրկատիրատիայի դեմ, և ինչպես նա շատ բանով ստեղծեց, բայց նաև մասի ապստամբությունից վախենալով ստեղծված էր հետագա շրջաններ անելու: Էվպատրիդները հույս անելին, որ նրանք կարող են վերականգնել իրենց գրովությունը և վերադարձնել չին կարգերը:

Սոլոնը քաղաքացիներին կարգերի բաժանեց նոր սկզբունքով: Նրանց եկամուտներին համեմատելով Սահմանեց չորս նման կարգ: Առաջին կարգին էին պատկանում այն բոլոր քաղաքացիները, որոնք իրենց հողերից ստանում էին ամսվազը 500 մեդիան (շափ) գարի կամ համապատասխան չափով ձեթ կամ գինի: Մարդկանց այդ բարձրագույն և ամենահարուստ կարգը կոչվում էր «ճինեպ-հարյուրամեդիաներ»:

Քնակչության երկրորդ կարգի մեջ էին մտնում բոլոր նրանք, որոնք իրենց հողերից ստանում են ամսվազի 300 մեդիան: Նրանք կոչվում են «ճեձյալներ»: Երրորդ հասն էր պահելու միջոցներ ունեցող

¹ Յ. Էնգելս, Հունաստանի, մասնավոր սեփականության, պետության ծագումը հույ, հրատ. էջ 184, 1939 թ.

և ծառայում էին հեծելազորում: Առաջին երկու դասակարգերը ծառայում էին հեծելազորում և պարտավոր էին իրենց հետ տանել այնտեղ իրենց լավ ձիերն ու սպաղազինությունը: Բացի այդ, առաջին դասակարգը մասնակցում էր պետական այլ պարհակներ կատարելու, նավատորմի շինարարության, հանդեսների, թատրոնների, ժողովրդական թափորների կազմակերպմանը և այլն:

Նորորդ կարգը ծառայում էր հետևակում, նրանք սպառազինված էին ծանր զենքերով (զրահ, վահան, դաշույն, սաղավարտ, սուր, տեղ): Սուրը երրորդ կարգի մեջ մտցրեց այն քաղաքացիներին, որոնց եկամուտը 200 մեդիմնից պակաս չէր: Նրանք կոչվում էին «զեզիսներ», որովհետև նրանք հնարավորություն ունեին եղևի լծասարք ձեռք բերելու (զեզոս՝ լծասարք):

Վերջապես, չորրորդ կարգին էին պատկանում բոլոր նրանք, ովքեր ավելի քիչ եկամուտ ունեին և ովքեր բնավ հող չունեին: Կրանք քեռներ էին, որոնք ծառայում էին թեթևազեն հետևակում:

Քննակության մնացած մասը բաղկացած էր մետեյկներից, այսինքն՝ այն օտարերկրացիներից, որոնք Աթենքում զբաղվում էին սուկտորով, արհեստով և ստրուկներից: Ստրուկները ոչ մի իրավունք չունեին:

Քաղաքացիներին ըստ ունեցվածքային ցենզի բաժանմանը համապատասխան բաշխում էին պետական ու զինվորական պաշտոնները: Այսպես, բարձրագույն պետական պաշտոնները տրվում էին միայն առաջին, ամենահարուստ կարգին: Նրա կազմից էին ընտրվում արքունիները և լրացվում արեոպագոսը:

Առաջին երեք կարգերից ընտրվում էին նաև Սուլոնի ստեղծած չորս հարյուրի խորհրդի անդամները: Սուլոնի հաշվով՝ արեոպագոսն ու չորս հարյուրի խորհուրդը պետք է պետությունը պաշտպանեին հեղաշրջումներից: Չորրորդ կարգին՝ թեթևերին՝ իրավունք էր տրվում մասնակցելու միայն ժողովրդական ժողովին և երգիչայների դատարանին: Փաստորեն նրանք ոչինչ շատցան, թեև երբեք ոչ մի պետական պաշտոնի ընտրվել չէին կարող, իսկ երգիչայների դատարանին մասնակցելու համար մարդ պետք է ազատ ժամանակ ունենար, որպիսին չքավորները չունեին: Նրանք էին Աթենքում Սուլոնի կատարած պետական վերափոխումները:

Սուլոնի օրենսդրության նշանակությունը չի կարելի գերազանցատել: Էնգելսի կարծիքով «Սուլոնը... բաց արեց այսպես կոչված

քաղաքական սեռայությունների շարքը և այն էլ՝ ներխուժելով սեփականություն հարաբերությունների մեջ»¹:

Մի արիշ տեղ էնգելսն ասում է, որ առաջին անգամ ասինական կոնստիտուցիայի մեջ մտցված է եղել «...մի բոլորովին նոր տարր է մտցվում, այն է՝ մասնավոր սեփականությունը: Իրենց տիրած հողամասերի մեծության շափով են որոշվում պետության քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, և որ շափով անկող դասակարգերն ազդեցություն են ձեռք բերում, այդ շափով դուրս են մղվում հին արյունակցական խմբերը: Տոհմական հասարակարգը մի նոր պարտություն էլ կրեց»²:

Այսպիսով, Սուլոնի օրենսդրության նշանակությունն ըստ Էնգելսի այն է, որ նրանք խախտեցին էվպատրիզների իշխանությունը, վճռական հարված հասցրին տոհմային կարգերին և որպես կոնստիտուցիայի հիմք սահմանեցին մասնավոր սեփականությունը: Սուլոնի օրենսդրության հանդիսացան որպես հունական քաղաքական առավել տիպիկական հեղափոխություններից մեկի, ասինական պետության ձևավորման, հետևաբար, և ամբապնդման կարևորագույն ֆակտոր: Բացի այդ, Սուլոնն իր օրենսդրությամբ հասարակ հարթից ստրկատիրական կարգերի հետագա զարգացման համար: Այս ամենը վկայում են Սուլոնի օրենսդրության պատմական մեծ նշանակության մասին:

Չի կարելի, սակայն, չնշել, որ Սուլոնի օրենսդրության հետևանքով ստեղծվեցին բնույթի չին եղել: Սուլոնը մինչև վերջը դատասան շտեմով էվպատրիզների հետ: Նա ամբապնդեց միայն միջին ստրկատիրների դրությունը: Նա իր օրենսդրությամբ չկարողացավ բավարարել: Ինքը Սուլոնն իր շափածու էվպատրիզներում ասում էր, թե նա չի ցանկացել վշտացնել ոչ էվպատրիզներին, ոչ էլ դեմոսին: Արիստոտելը անցկացրած օրենսդրության մասին Սուլոնի բերանով հետևյալ դատողությունն է անում. «Այժմ դառն կերպով կհիասթափվեն բոլոր նրանք, ովքեր մեծ հույս էին դրել հարուստների հողերը հափշտակելու վրա, իմ հաշիվով չի որ հայրենի հողում ազգայինների ու հարուստների բաժինը հավասար լինի»³:

¹ Տ Էնգելս, «Հունաստանի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 161, Նրևոն, 1940 թ.

² Նույն տեղում, էջ 143:

³ Аристотель, Афинская политика, 12.

Դրա համար էլ Սուլտնից դժգոհ էին թե՛ մեկ և թե՛ մյուսները։ Էվպատրիզները դժգոհում էին, որովհետև Սուլտնը բարձրացրեց ասևորականների, արհեստավորների և մանր հողային սեփականատերերի նշանակությունը։ Իսկ աթենական դեմոսը դժգոհ էր Սուլտնից նրա համար, որ ոչ հողային սեփականության և ոչ էլ իրավունքների գծով աթենական քաղաքացիների հավասարեցումը չկատարվեց։ Եվ իրոք, հին պարաքերի վերացումից չբավորների դրուժյունը քիչ բարելավվեց։ Առաջվա նման նա այլ եղբ չունեցրան նոր պարտքեր անելը։ Դրա համար էլ Սուլտնի ռեֆորմներից չնտմ ժողովրդական հուզումները ոչ միայն չդադարեցին, այլ ընդհակառակը, էլ ավելի սաստկացան։ Դրա հետևանքով առաջացավ Պիսիստրատների տիրանիան։ Այսպիսով Աթենքը ևս զերծ չմնաց տիրանիայից, որպես իշխանության քաղաքական ձևի, որը, սակայն, երկարատև չեղավ և այստեղ։

Ժողովրդական հուզումների և դժգոհությունների ժամատակարարանում աչքի ընկավ Սուլտնի ազգական Պիսիստրատը։ Նա չենվում էր Սուլտնի ռեֆորմներից դժգոհ Ատտիկայի լինամատակեր բնակչության (գիսիլիացիների) վրա։ Պիսիստրատը կարողացավ ձևաք բերել ժողովրդական մասսաների վստահությունը, կրակոս հռոտել ասելով Էվպատրիզների դեմ։ Օգտվելով դրանից 560 թ. մ. թ. ա. նա իշխանությունն իր ձեռքն առավ և սկսեց Աթենքում կառավարել միանձնորեն՝ հաստատելով տիրանիան։

Պիսիստրատը դեմոսի օգտին մի շարք միջոցառումներ կիրառեց։ Այդպես, կենտրոն գյուղացիների շահերից՝ նա աշխատում էր բարձրացնել հողագործությունը։ Խոշոր Էվպատրիզներից բռնագրավված հողերը բաժանում էր սակավահող հողագործներին։ Նա պետական վարկավորում մտցրեց ամենակարիքավոր հողագործներին օգնելու համար. ընդարձակեց գյուղական համայնքների՝ գեմերի իրավունքները և նրանց համար հատուկ գյուղական դատավորներ նշանակեց։ Առևտրականների և արհեստավորների օգտին էլ Պիսիստրատը զարկ տվեց նավաշինությանը։ Նրա օրոք հիմք դրվեց Աթենքի ծովային հզորությունը։ Պիսիստրատը առևտրական կապեր հաստատեց Էգեյան ծովի բազմաթիվ պետությունների հետ. հաճախ նա սրանց հետ ռազմական դաշինք էր կնքում։ Նրա օրոք սկսեց արագ զարգանալ արհեստը, բացվեցին բազմաթիվ արհեստանոցներ, որտեղ ավելի լայնորեն կիրառվում էր ստրուկների աշխատանքը։ Պիսիստրատն անցկացրեց կուլտուրական լայն միջոցառումների քաղաքականություն։ Նա առաջինն սկսեց Աթենքի

ձեռագույն տաճարի (Աթենաս-Պալատի), ճանապարհների և ջրմուղների կառուցումը։ Նա առատաձեռն օժանդակում էր բանաստեղծներին և նկարիչներին։ Նրա կարգադրությամբ Աթենքում ղրկանվեցին և մշակվեցին «Բլիսկան»-ն և «Ուրիսկան»-ը։

Պիսիստրատի մասին մեզ պատմական տեղեկություններ է սուղել Արիստոտելը իր «Աթենական պոլիտիկա»-յի մեջ, որտեղ նա Պիսիստրատի մասին բարձր կարծիք է արտահայտում։ «Աթենագիրները, — ասում է Արիստոտելը, — այն ժամանակ ապրել են ինչպես Կրոնոսյան թագավորության ժամանակ»։ Պիսիստրատը քիչ բան չի արել աթենական հասարակության համար, այնուամենայնիվ Արիստոտելը իրենալականացրել է աթենական այդ գործչին։ Պիսիստրատի միջոցառումները խախտեցին հին տոհմային արիստոկրատիայի իշխանությունը։ Նրա տեղը գրավելու էին ելևում առևտրականները, արհեստավորները և ունեոր գյուղացիները։ Այս ձևին ամրապնդեցին Աթենքում ստրկատիրական կարգերը։ Պիսիստրատը գյուղացիների դրուժյան մեջ արժատական փոփոխություններ չմտցրեց։ Նրանք խիստ տուժեցին տիրանի մտցրած բերքի տասանորդ հարկից։ Պատմական բանահյուսությունը հաղորդում է, որ Ատտիկայով ճանապարհորդելու ժամանակ Պիսիստրատը գիտնում է քարքարոտ հողամասը մշակող գյուղացուն հարցնելով, թե նրան ինչ է տալիս իր դժվարին աշխատանքը։ Գյուղացին պատասխանում է. «Հոգս ու տանջանք, բայց այդ հոգս ու ցավից դատ Պիսիստրատը պահանջում է նաև տասանորդը։ Այլ կերպ էլ չի կարող լինել, քանի որ Պիսիստրատի տիրանիան հիմնականում պայտպանում էր ստրկատերերի շահերը։ Պիսիստրատը մեռավ 187 թվին մ. թ. ա., կառավարումը հանձնելով իր որդիներին՝ Միսիասին և Հիպարեոսին։ VI դարի վերջերում Աթենքի արտաքին քաղաքականության ասպարեզում անհաջողությունների և օժեղությունից սոցիալական պայքարի նոր պայմաններում տիրանիան ժողովրդականություն չէր վայելում, որով և բացատրվում է նրա հետագա փլուզումը։ Բացի այդ, Հիպիասն ու Հիպարքոսը չհետևեցին իրենց հոր ճկուն քաղաքականությանը, նրանք քիչ էին հաշվի տանում ժողովրդին և ճնշում էին նրան։ Տիրանիան վերստեղծվեց և զարձակ դաժան միանձնյա իշխանություն։ Տիրանիայի այսպիսի շքերտումը պահպանվեց ընդմիջատ հետագա բոլոր ժամանակներում։ Աթենքում տիրող բռնությունների և կամայականությունների պայմաններում ժողովուրդը հուզվեց և ապստամբեց։ Հիպարքոսը

սարանվեց, իսկ Հիպիասը հետագայում արքայվեց Աթենքից: Տիրանիան ընկավ:

Որպեսզի իրենց մոտ այլևս հնարավոր չլինի տիրանիա հաստատել, ավթենացիներն ընդունեցին մի օրենք, որն ասում էր. «Մի որ ապստամբի տիրան գառնալու նպատակով, իր ամբողջ տոհմով կզրկվի քաղաքացիական իրավունքներից»: Բացի այդ, ավթենացիները որոշեցին մշակել նոր օրենքներ, որոնք պետք է ընդլայնեին ժողովրդի իրավունքները, սահմանափակեին էվպորիտներին և ընդմիջտ վերջ տալին տիրանիային: Այդ նոր օրենքների մշակումը հանձնարարվեց դեմոկրատական պարտիայի ղեկավար Կլիսթենեսին:

Էնգելսը բարձր գնահատական է տվել Կլիսթենեսի՝ որպես «...տոհմական հասարակարգի վերջին մնացորդները»¹:

Կլիսթենեսը սկսեց նրանով, որ չորս ֆիլայի փոխարեն Ատտիկայում հաստատեց տասը նոր ֆիլա, այն էլ ոչ թե ըստ տոհմային, որը եղել էր զրանից առաջ, այլ տերիտորյալ հատկանիշի: Տոհմային արխատկրատիան այդ ֆիլաներում շատ ուժեղ էր: Բոլոր պաշտոնների համար ընտրում էին միայն տոհմական արխատկրատիայի ներկայացուցիչներին: Կլիսթենեսը ֆիլաների ռեֆորմով ջախջախեց արխատկրատիայի այդ հին բնիքը: Այժմ ֆիլաները կազմվում էին ոչ թե տոհմերից, այլ առանձին մարզերից և համայնքներից՝ դեմաներից: Յուրաքանչյուր ֆիլայի մեջ մըտնում էին անվանի ու ոչ անվանի ստրկատերերը և մանր գյուղացիները տարբեր տոհմերից: Այդ ռեֆորմով Կլիսթենեսը կարծես թե իրար «խառնեց» բոլոր քաղաքացիներին և բոլորին միանման իրավունքներ տվեց: Յուրաքանչյուր քաղաքացի կարող էր ընտրվել Կլիսթենեսի հիմնադրած հինգ հարյուրի խորհրդում, առաջվա չորս հարյուրի խորհրդի փոխարեն: Հինգ հարյուրի խորհուրդն այժմ այլ կերպ էր կազմակերպված: Խորհուրդն իր կազմից առանձնացրեց 10 հոգի պրիտաններ, կամ կոմիտեներ, որոնք կազմվում էին տվյալ ֆիլայի 50 անդամ-պրիտաններից: Պրիտանները տարվա ընթացքում հերթով կառավարում էին պետության ընթացիկ գործերը Կլիսթենեսի ռեֆորմը հանգեց այն բանին, որ հինգ հարյուրի խորհրդում ներկայացրված էր յուրաքանչյուր ֆիլա: Այսպիսով

որոշացվեց տվյալականների և ոչ տվյալականների տրադիցիոն բաժանումը:

Կլիսթենեսի մյուս կարևոր ռեֆորմը օստրակիզմի, կամ «խեցիկների դատարանը» մտցնելն էր: Այդպիսի դատարան հիմնվեց նրա համար, որ ապագայում տիրանիա չթուլլատորվի: Այդ դատարանով յուրաքանչյուր քաղաքացի, որը կասկածվում էր ժողովրդի և պետության դեմ դավադրության մեջ, 10 տարով արտաքսվում էր Աթենքից: Դատը տեղի էր ունենում հետևյալ կերպ: Ամեն տարի գարնանը ժողովրդական ժողովը որոշում էր, թե հարկավոր չէ արդյոք քաղաքացիներից որևէ մեկի նկատմամբ կիրառել օստրակիզմ: Եթե ժողովն «այո» էր ասում, ապա դատ անելու համար հրավիրվում էր երկրորդ ժողովը: Յուրաքանչյուր քաղաքացի այդ ժամանակ կավել խեցու (օստրակոն) վրա գրում էր այն մարդու անունը, ով նրա կարծիքով վտանգավոր էր պետության համար: Այստեղ, իհարկե, տարբեր անձանց անուններ էին լինում: Արտաքսվում էր նա, ում դեմ ձայների մեծամասնություն էր լինում: Տասը տարուց հետո նա կարող էր նորից վերադառնալ հայրենիք և ստանալ այն բոլոր իրավունքները, որ ունեցել էր արտաքսվելուց առաջ: Հունաստանի պատմությունից մեզ հայտնի են մի շարք նման արտաքսումներ: Վերջապես, Կլիսթենեսի շատ կարևոր ձեռնարկումներից մեկն էլ 10 ստրաեգների կոլեգիայի կազմակերպումն էր, որը համապատասխանում էր 10 ֆիլաներին: Կոլեգիան վարում էր ռազմական գործերը և երկրի պաշտպանության հարցը: Հետագայում այդ կոլեգիայի և հատկապես տառջին ստրատեգի իշխանությունն ընդարձակվեց և նրանց իրավասության մեջ մտավ պետության կառավարման գծով մի շարք քաղաքացիական գործեր: Այդ կոլեգիայի հիմնադրմամբ սահմանափակվեցին հինավուրց հիմնարկության՝ արքունատի և արքունիների իշխանության ֆունկցիաները: Այս ռեֆորմով էլ հարված հասցվեց հին արխատկրատիային:

Այսպիսով Սոլոնի և Կլիսթենեսի VI դարի ամբողջ ընթացքում անցկացրած ռեֆորմների հետևանքով կործանիչ հարված հասցվեց տոհմային կարգերի մնացորդներին Աթենական պետության մեջ: Պետությունն աստիճանաբար արխատկրատականից դարձավ դեմոկրատական:

Այժմ բոլոր քաղաքացիներին իրավունք էր տրվում այս կամ այն շափով մասնակցելու պետության կառավարմանը: Բայց այդ դեմոկրատիան սուրկատիրական էր: Այնտեղ քաղաքացիան իրա-

¹ Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Կուսկրատ. էջ 198, Երևան, 1932 թ.:

վունքներից օգտվում էին միայն Աթենքի ազատ քաղաքացիները՝ նրանք մեծ մասամբ ստրկատերեր էին՝ խոշոր ու մանր: Այնինչ ստրուկները, այսինքն Ատտիկայի բնակչությանը կեսը, ոչ մի իրավունք չունեին: Նույնիսկ այն քաղաքացին, որի ծնողներից միայն մեկն էր եղել անազատ, քաղաքացիական իրավունք չէր ստանում: Աթենքում ապրող, բայց ոչ տեղացի հույներն էլ իրավունքներից չէին օգտվում: Երկրի կառավարմանը մասնակցելու չէր թույլատրվում նաև կանանց: Այսպիսով, Աթենքում ստրկատիրական դեմոկրատիայի ժամանակ իրավունքներից օգտվում էր բնակչության միայն փոքրամասնությունը: Ստրկատիրական դեմոկրատիան պայման է եղել Աթենական պետության հետագա զարգացման համար: Սոլոնի և Կլիսթենեսի ռեֆորմների նշանակությունը էնգելսը գնահատում է այսպես:

«Պետության ծագումն աթենացիների մեջ պետության կազմակերպման առանձնապես տիպիկական մի օրինակ է ընդհանրապես, սրովհետև այն մի կողմից առաջ է գալիս բոլորովին ինքնուրույնարար, առանց ներքին և արտաքին բռնության միջամտության,— Պիսիստրատի ուզուրպացիան ոչ մի հետք չթողեց իր կարևորագույն կողմերից,— մյուս կողմից՝ որովհետև այդ զորինակը ձևի այնպիսի մի բարձր զարգացում ունեցող պետություն, ինչպիսին դեմոկրատական ռեսպուբլիկան է, անմիջականապես ծագել է ապիտոհմական հասարակությունից: Վերջապես, որովհետև մենք բավականաչափ ծանոթ ենք նրա ծագման բոլոր էական մանրամասնություններին»¹:

Այդպիսին էր, հիմնականում, ծնունդ առնող ստրկատիրական դեմոկրատիայի բնույթը: Հետագա դասակարգային պայքարի պայմաններում Աթենքում այդ դեմոկրատիան իր ծաղկման հասնում էր Պերիկլեսի էպոխայում:

¹ Տ. էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», հայ. հրատ. էջ 142, նրեան, 1932 թ.:

ՀՈՒՆԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԱՅԵՆԱԿԱՆ ԾՈՎԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

ԱՆՏԻԿ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Սպարտայի և Աթենքի քաղաքական կարգերի ամրապնդումը (անգեյս սարկուսթյան ուժեղացմանը և ստրկատիրական հարաբերությունների սֆերայի ընդարձակմանը): Հունական պետությունը, որը ձևավորվեց տոհմային համայնքի տրոհման, դալուսացման և ստրկության զարգացման, սաղմական ընդհարումների հետևանքով, էնգելսի կլասիկ բնորոշմամբ, իրենից ներկայացնում էր ստրկատերերի պետություն՝ ստրուկներին ճնշելու և սանձահարկու համար: Ռասակարգերի հակադրությունը, որի վրա հիմնված էին հասարակական և քաղաքական հաստատությունները, այլևս ազնվականության ու հասարակ ժողովրդի հակադրությունը չէր, այլ ստրուկների ու աղատների, օրենքի պաշտպանությունը ներքո գտնվողների ու լիիրավ քաղաքացիների հակադրությունն էր¹: Սոցիալական հարաբերությունների նմա բնույթ այն խոր փոփոխությունների արտահայտությունն էր, որոնք տեղի էին ունեցել անտիկ էկոնոմիկայում:

Անտիկ էկոնոմիկայի բնույթի վերաբերյալ բուրժուական պատմագրության մեջ երկար ժամանակ կարծիքների պայքար էր տեղի ունենում: Հին պետությունների անտիկ էկոնոմիկայի քաղաքական կարգերի վերաբերյալ Կարլ Բյուխների գլխավորած մի շարք զարգացրեց բավականին տարածված մի տեսություն: Կարլ Բյուխերը (XIX դ. վերջ և XX դարի սկզբին) իր աշխատություններում հաստատում էր, որ անտիկ էկոնոմիկայի հիմքը կազ-

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. I, стр. 97.

մում էր ստրկութունը: Գրա հետ միասին նա գրեց անտիկ աշխարհի դասակարգային պայքարի վերաբերյալ հատուկ մանորաֆիլա նվիրված ստրուկների 143—129 թվերի մ. թ. ա. սպորտամբուժյունների մասին:

Բյուխերը պնդում էր այն դրույթը, թե «...կլասիկ հին ժողովուրդները, իրենց գերակշռող տնտեսաձևերի հիման վրա», պատկանում են «բնական տնտեսությանը», հատկապես ընդգծելով, որ «այդ ձևի լիակատար զարգացման համար նրանք պարտական էին ստրկությանը»¹:

Հեղինակն իր շատ աշխատությունների մեջ ձգտել է այդ դրույթը զարգացնել, ամեն տեղ ապացուցելով, որ անտիկ աշխարհի էկոնոմիկայի հիմքը հանդիսացել է ստրկութունը, որ աշխատանքի և արտադրության ստրկական ձևը անտիկությանը տվել է սպեցիֆիկ բնույթ: Ի դեպ Բյուխերն այդ դատողությունը նորություն չէր համարում. «ես չեմ կարծել հայտարարում է նա, — դրույթով ինչ որ նոր բան ստեղծել»²:

«...Օլիգուսական տնտեսությունը... որի հաստատումը ևս գոյություն ունեցող անտիկական պայմանների իմ կատարած հետազոտություններում, առհասարակ վերաբերելու են նախ հույներին, չնայած անտիկական փոխանակության բազմաթիվ առանձնակիքներին»³:

Գիտնական էդուարդ Մեյերի հետ բանավեճի մասնակցի Բյուխերը գրեց հետաքրքիր աշխատություն հատկապես հունական տնտեսական կյանքի սոցիալական բնույթի մասին, որի մեջ նա է՛լ ավելի զարգացրեց իր դրույթները և նոր վիճաբանություն մեջ մտավ անտիկ Հունաստանի ստրկատիրական բնույթը միանգամայն անհիմն կերպով բացասած մի շարք գիտնականների հետ: Բյուխերն ընդգծեց հունական էկոնոմիկայում ստրկության և ստրկական արտադրության տնտեսարար կշիռը:

Բյուխերը հիմնականում ընդունեց Ռոզբերտուսի թեորիան և վերջինիս հետ բաժանեց նրա պատմական սխալները և խոտորումները: Բյուխերի տնտեսական թեորիայի արատն այն էր, որ նա հին Հունաստանի տնտեսությունը իջեցնում էր մինչև փակ «տնային (օլիգուսական) ձևի» մակարդակը և այդ մակարդակը բա-

ցատրում էր փոխանակության ցածր աստիճանով: Բյուխերը թեորիան հատում էր առևտրի, փոխանակության, դրամական հարաբերությունների և արհեստների զարգացումը: Հունական հարաբերությունների պատկերը նա նկարեց ստատիկ կերպով, չբացահայտելով արտադրության անտիկ եղանակի հիման վրա կազմավորված դեպի առավել զարգացած հարաբերությունները ձգող անտիկ էկոնոմիկայի զարգացման ու առաջ շարժման էկեմենտները: Կարճ ասած, Բյուխերի թեորիան հիմնված էր փոխանակման ձևերի պատմության վրա, հակառակ Մարքսի, որը հասարակության զարգացման իր թեորիան կառուցել էր արտադրանքային կառուցման և դրանցից յուրաքանչյուրի վերլուծության հիման վրա:

Ի հակակշիռ անտիկ ժամանակվա ստրկության նշանակության վերաբերյալ Բյուխերի կոնցեպցիայի հանդես եկավ բուրժուական պատմաբանների մի այլ դպրոցի ներկայացուցիչը՝ էդուարդ Մեյերը, որն այդ հարցի առթիվ զարգացրեց այլ տեսություն:

Էդուարդ Մեյերը բացասում էր ստրկությունը որպես անտիկ հասարակության էկոնոմիկայի բազա, և խեղաթյուրում էր նրա կոնցեպցիան: Անտիկ աշխարհի ստրկությունը, Մեյերի կարծիքով, գրեթե ոչնչով չի տարբերվում վարձու աշխատանքից:

«Ստրկի համար, — ասում է է. Մեյերը, — հաշտության և ճարտկության դեպքում ճանապարհը բաց է դեպի ազատությունը և հարատևությունը, նրա երեխաների համար (իսկ հաճախ նաև նրա համար)՝ դեպի պետության և հասարակության մեջ՝ բարձր դիրք գրավելը»¹:

Բացի ցինիզմից, այլ կերպ չի կարելի դնահատել այս խոսքերը, քանի որ դրանք արտահայտվում են գիտնականի բերանով, որը հիանալի կերպով գիտեր ստրուկների ողբերգական դրությունն անտիկ աշխարհում: Միայն իր դրույթներից ելնելով՝ հնում ստրկության դերի մասին Մեյերը կարող էր առաջ բաշել հեղձ-գիտական դրույթներ այն մասին, թե անտիկ հասարակության մեջ ստրկության հարցը երբեք գոյություն չի ունեցել և «ստրուկների նշանակալից ազատամբություններ երբեք տեղի չեն ունեցել»:

¹ К. Бюхер. Очерки экономической истории Греции, стр. 18, Л. 1924.
² Там же.
³ Там же, стр. 22.

¹ Мейер, Экономическое развитие древнего мира, стр. 108. Изд. 1923 г.

Մեյերի պատմական կոնցեպցիայի մեջ ստրկությունը որպես անտիկ էկոնոմիկայի բազա ոչ միայն ուղղակի քողարկվել է այլ ներկայացվել է վարձու աշխատանքի հարաբերությունների ձևով: Միանգամայն ակնհայտ է, որ է. Մեյերի պատմա-փիլիսոփայական ամբողջ կոնցեպցիան, իր սուր ծայրով զուղված է Քյուլենբերի դեմ, կապիտալիստական արդիականությունը հարակցեց հին աշխարհի ստրկատիրական հարաբերությունների կապիտալիզմը առաջ էր քաշվում որպես հավիտենական կատեգորիա, որի արտահայտությունները Մեյերը փնտրում է դեռևս խորը հնություն մեջ: Այդպիսով նա ջնջում է տարբերություն ստրկական և վարձու աշխատանքի ձևերի միջև:

Այսպիսով Մեյերը զարգացրեց XIX դարի վերջին և XX դարի սկզբին պատմագրության մեջ իշխող մոդեռնիզատորները (Քելսոն, Պեյմանի և ուրիշների) ողջ դպրոցի հայացքները, ստրկալայացուցիչները ձգտել են ստրկատիրական հասարակությունը հավասարեցնել կապիտալիստական հասարակության հարաբերությունների մակարդակին, անտիկ հասարակությունը նմանեցնելով կապիտալիստականին: Բուրժուական պատմագրության նման դրույթներին հակահարված հասցրին մարքսիզմ հիմնադիրները:

Մարքսիզմի կլասիկներն այլ գնահատական են տվել ստրկատիրական հասարակությանը: Նրանց կարծիքները կարելի է գտնել շատ աշխատություններում և հատկապես «Կապիտալ»-ում (հ. I, II և III) և «Լեյտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագման» մեջ: Այս աշխատությունները այդ հարցի հետազոտման դիալեկտիկական մեթոդի օրինակ են ծառայում: Մարքսն էնպես իրենց աշխատություններում սպառնչ կերպով բնութագրել են անտիկ ստրկատիրական հասարակությունն ու հին պետությունների քաղաքական կարգերը:

«Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացում», «Ռիտեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» (գլ. IV, բաժին 2) արված է շարժանց հակիրձ և միաժամանակ իր պարզ լոռնություն բացառիկ այն բնութագրերը, թե իրենից ինչ էր ներկայացնում առաջին դասակարգային հասարակությունը:

Որո՞նք են, ուրեմն, անտիկ հասարակության ստրկատիրական էկոնոմիկայի հիմնական գծերը:

Հին հունական քաղաք-պետություններից Աթենքը տարբեր

վում էր նրանով, որ իր պատմության ամենասկզբնական շրջանից աչքի ընկավ առևտրի իր խոշոր շափերով, գաղութների հետ ունեցած կապերով և պետական ստրկատիրացով և ստրկատիրական հարաբերությունների զարգացմամբ: Աթենացիներն ընդարձակեցին առևտրական կապերը Արևելքի և «բարբարոսական» (ոչ հունական) հողավոր երկրների հետ: Թե որքան ընդարձակ են եղել այդ կապերը, երևում է այն փաստից, որ աթենական արհեստի մի շարք առարկաներ հայտնաբերվել են ՍՍՌՄ-ի հարավում գտնվող սկյուրիական դամբարանաբլուրներում: Առևտրի, ստրկատիրական տնտեսության և ստրկական աշխատանք կիրառող արհեստների զարգացման դորժում մեծ դեր են խաղում պատերազմները, կողմնակցությունները, ծովահենային ասպատակությունները, սրոնք մղվում էին ստրկատերերի և վաճառականների օգտին հողեր, զանազան հարստություններ, նույնիսկ ստրուկներ հափշտակելու համար: Առանց այս մոմենտը հաշվի առնելու դժվար է հասկանալ Աթենքի ստրկատիրական էկոնոմիկան:

Պատերազմի այդ դերը դասակարգային հասարակության զարգացման իր առաջին աստիճանում, ինչպես ցույց տրվեց վերվում, բավականաչափ լրիվ կերպով նշված է Մարքսի «Կապիտալիստական արտադրության նախորդող ձևերի մասին» ձեռագիր աշխատության մեջ:

Դասակարգային տարրեր հասարակություններում, այդ թվում և հին հասարակություններում, պատերազմի սոցիալական գերի ուսումնասիրությունը՝ մարքսիստ-պատմաբանի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Դեռևս Լենինը հաճախ մատնացուցց է արել «յուրաքանչյուր առանձին վերցրած պատերազմի պատմական ուսումնասիրությունը անհրաժեշտությունը (Մարքսի դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից)»¹: Հին աշխարհի պայմաններում պատերազմը հակայական դեր է կատարել տնտեսական կյանքում, թեպետ պատերազմն ինքը հանդիսանում է միայն արտատնտեսական հարկադրանքի դորժոն: Այդ դրույթները իր նշանակությունը պահպանում է ստրկատիրական հասարակության ամբողջ պատմության և ոչ թե նրա առանձին ժամանակաշրջանի համար: Մարքսը նշում է նույնպես պատերազմի, որպես բանվորական ուժի՝ ստրկատիրական հասարակության համար ստրուկներ մատակարարողի նշանակությունը: «Հենց ստրկա-

¹ Ленин, Соч., т. XVIII, стр. 193.

շուկան, — գրում է Մարքսը, — ինքը յուր աշխատույժ — ապրանք առաջարկվող մասսան միշտ ստանում է պատերազմի, ծովային նույնիսկ և այլ միջոցներով, և այս հափշտակությունը յուր հեթանոսական կատարվում է ոչ թե շրջանառության մի պրոցեսի միջոցով, և ուղղակի ֆիզիկական բռնություններով աշխատույժը բնորոշ կերպով յուրացնելով»¹:

Մարքսի այդ դրույթները պետք է առանձնացնել, քանի որ դրանք հատուկ նշանակություն ունեն հունա-պարսկական պրոստրազմների առաջացման և անտիկ էկոնոմիկայի պայմաններում նրանց դերը հասկանալու համար:

Վերը բերված Մարքսի խոսքերը հիանալի կերպով հաստատվում են հին պատմության բազմաթիվ փաստերով: Իրենք անուշաշխարհի գրողները հիանալի կերպով հաշվի են առել պատերազմների ամբողջ նշանակությունը, որպես դասակարգային հասարակության պլանաչափ գոյություն կենսական անհրաժեշտ պայման սրին սնունդ տվող նյութ հանդիսացել է պատերազմի հափշտակած բանվորական ուժը: Բավական է բերել թեև հափշտակած բանվորական ուժը, որ պատերազմը, կողոպտալը, որ Արիստոտելի վկայությունը, որ պատերազմը, կողոպտալը, որ (ավարի իմաստով) դնելով իրար կողքի մի ձարքի, պատերազմ կամ ռազմական արվեստը համարում է որպես «սեփականություն ձեռք բերելու բնական միջոց»: Արիստոտելը հատկապես ընդգծել է ռազմական արվեստի այն մասը, որի առարկան որսն էր և ուսալ պետք է ինչպես վայրի կենդանիներին, նույնպես և մարդկանց, — ասում է Արիստոտելը, — որոնք բնությունից կանխորոշված են ենթարկվելու, բայց չեն ցանկանում ենթարկվել պիսի պատերազմը, իր բնույթով, արդարացի է»²: Դժվար չէ նույնիսկ, որ անտիկ աշխարհի մեծ գիտնականը այդ «որս»-ի անկատարի է ունեցել ոչ այլ ինչ, քան ստրկացման համար մտրահափշտակելու ավարտման կամ կողոպտման սխտեմը:

Պատերազմները նպաստել են նաև առևտրի զարգացման և Ծառ կողոպտուների, ծովահենության ասպատակությունների և ստրկաբազմների մղվել են ինչպես հարստության, նույնպես և ստրկների հափշտակելու նպատակով: Հին գրողների տեղեկություններից մեզ հայտնի է, թե ինչպես է տեղի ունեցել ստրուկների արտուրը: Շուկաներում և տոնավաճառներում մյուս ապրանքները

հետ միասին երևում էին նաև ստրուկները: Տղամարդկանց, կանանց և երեխաներին բերում էին շուկա և վաճառում ինչպես ամեն մի այլ ապրանք: Գնորդները նրանց գննում էին բոլոր կողմերից և ընտրում ամենաառողջներին, ամենազեղչեցիկներին և ամենաուժեղներին. սակարկում էին, ասես թե խոսքը ոչ թե մարդկանց, այլ իրերի էր վերաբերվում: Հունական օրենքներով ստրուկը մարդ էր համարվում: Ստրուկները ոչ մի իրավունք չունեին, և օրենքն էլ նրանց չէր պաշտպանում: Տերը կարող էր ստրուկի հետ վարվել, ինչպես ցանկանար: Նա կարող էր նրանց պատժել, ծեծել, անգամ սպանել: Իրենց տերերից փախչող ստրուկների միակ ապաստարանը եղել են հունական մի շարք տաճարներ: Բայց այդպիսից էլ ստրուկները, հաճախ, նորից ընկնում էին տիրոջ ճանկը: Հույն ստրկատերերը արհամարհանքով էին վարվում ստրուկների հետ, նրանց համարելով ծուլ և տխմար էակներ: Գեոստ Հոմերոսն իր «Ոդիսական»-ում գրել է,

«Ստրուկը անփութ է. եթե տերը նրան խոստ հրամանով հարկազրկույթ նա հոժարեղամ չի աշխատի տիրոջ համար, մարդու համար վշտալի ստրուկության ճակատագիրը Ձեռք բնորոշով, սարկի մեջ ոչնչացնում է լավագույն արեւթյան կեն մասը»:

Ստրուկների աշխատանքը կիրառվում էր ինչպես գյուղատնտեսության մեջ, նույնպես և արհեստներում: Արհեստանոցներում, տրպես կոչված «երգաստերները» պատրաստվում էին գրասեր, թրեր և նետեր, մշակվում էր կաշի և այլն: Իրենց արհեստների շինվածքներով ամբողջ Հունաստանում համբավ էին ձեռք բերել հունական մի շարք քաղաքներ: Այսպես, օրինակ, Թերեայում պատրաստվում էին անվակառքեր, Արգոսում՝ վահաններ, Միլետում՝ ծաղկավոր գործվածքներ, Աթենքում՝ խեցեպորժական անոթներ, Կորնթոսում՝ բրոնզյա շինվածքներ: Խոշոր էրգաստերներն ունեցել են 50-ից 100 ստրուկներ: Սակայն այդպիսի մեծ էրգաստերներ քիչ են եղել: Գերակշռում էին մանր արհեստանոցները, ուր եղել են 15—20 ստրուկներ: Ստրուկների մեծ թիվ է օգտագործվել լեռնագործության մեջ՝ հանքերում և քարահանքերում: Ատտիկայի մի շարք հանքերում (օրինակ՝ Լավրիոնում արծաթի հանքերում, Պեմոնելկոնի մարմարի հանքերում) ստրուկների թիվը հասել է մի քանի հազարի:

Հունաստանի գյուղատնտեսության մեջ ստրուկների աշխատանքը

¹ Կ. Մարքս, «Կապիտալ», հայ. հրատ. 5, II, էջ 447:
² Արիստոտել, Բոլիտիկա, I, 3, 8—12, ք. 22. Իզդ. 1911

¹ «О дисселя». Песнь XVII, стих 320—325. Изд. 1935 г.

տանքն ալիկի քիչ էր կիրառվում, քան արհեստներում: Ստրուկնեան օգտագործվել են, գլխավորապես, մերձքաղաքային տնտեսություններում, ուղմշակել են բանջարիղեն, և մեծ պլանտացիաներում, որ աճեցրել են խաղող, ձիթապտուղ և մրգեր: Բացի մասնատիրական ստրուկներից, պետական սպասարկության մեջ էլ եղել են հասարակական ստրուկներ: Նրանք զբաղված են եղել քաղաքային աշխատանքներում և կատարել են աստիճանավորի, վերակադրի, ստտիկանի, գրագրի պարտականություն: Ստրուկությունն սկսեց այնքան տարածվել և ամրանալ, որ յուրաքանչյուր ազատ քաղաքացուն միջին հաշվով ընկնում էր մեկ ստրուկ, իսկ յուրաքանչյուր ազատ հասակավոր տղամարդուն միջին հաշվով մի քանի ստրուկ: Մարկոսիայի զարգացումը հասցրեց հասարակության երկու հատկությի լուրջների՝ ազատների և ստրուկների, սեփականատերերի և ընչազուրկների վերջնական բաժանմանը:

Հունաստանի տնտեսության զարգացման այդպիսի ընթացքը կարող չհասցնել այն քաղաքական հետևանքներին, սրանց հետևողով մ է եղել սոցիալական և ռազմա-քաղաքական ամբողջ նստազու պատմությունը:

Պետության հետագա զարգացումը անխուճափելիորեն կապված է եղել ստրկատիրական սեփականության պահպանման, զարգացման, ստրուկների տիրապետության և ստրկության հետագա ընդարձակման հետ: Սակայն ստեղծված այդ կարգերը պատանելու և հավերժացնելու համար որոշ դեր պետք է կատարել պատերազմը, որն օգնեց Մարքսի արտահայտությամբ հափշտակելու «գոյության օրեկտիվ պայմաններ» անտիկ էկոնոմիկա զարգացման համար: Այդ տեսակետից էլ պետք է դիտել պատմական անտիկ աշխարհում, մասնավորապես հունա-պարսկական պատերազմները: Ե՛վ Հունաստանի, և՛ պարսիկների համար այդ պատերազմները եղել են ստրկատիրական հարաբերության ներքին հետագա զարգացման համար մղվող պայքարի արտահայտություն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԵՎԱՆՔԸ ԳԵՊԻ ՍԿՅՈՒԹԻՒՆ

Արևմտյան պարսկական տերությունը կազմավորվեց գարուն մ. թ. ա. Գարեհ I Աշտասայի ժամանակ (521—486 մ. թ. ա.) և նվաճումների շնորհիվ զարձակ ընդարձակ միասնություն, տարածվելով Հնդկաստանից մինչև Էգեյան ծովը և Կարիան սահմաններից մինչև Նեղոսի հովիտը:

Եր կենդանական կազմով Պարսկաստանը եղել է արտակարգ խաչաբեղա և բազմացեղ, նրա կազմի մեջ մտած զարգացած ասորիք մակարդակի ժողովուրդներով իրենց տարբեր շահերով: Միայն արքայի ռազմական ուժն էր, որ ժողովուրդներին համախմբում էր այդ հսկայական բնապետության մեջ: Պարսկական ժողովուրդության ղեկավարն իրեն անվանում էր «աշխարհի չորս կողմերի արքա»: Նա իրեն համարում էր Ահարամազդի՝ պարսիկների պետության, աստվածության, կյանքի արարչի և կյանքի երկնատիրներից շնորհովի որդին: Արքան իրեն շրջապատել էր «չորս խորհրդով» — ինչպես և պալատական ազնվականներով, բարձր կարգավիճակներով, բազմաթիվ աստիճանավորներով, և զինվորական աշխարհագրի աստվածությունով: Այդ մի բազմաթիվ բնատիրական էր, որի միջոցով արքան իրականացնում էր իր բնական միասնության իշխանությունը:

Պարսկական արքայի նարտությունները շարժվում էին Մեծ Երանը դոչացել էին հարկերից, սրանք գանձվում էին բնամիկրոսոց և փողով: Հարստությունից, որպիսին փրցվում էին մարգարեությունից, պաշտի բնագրավումներից և այլն: Բնակչության համար բաշքայիչ է եղել հատկապես, կապալավարձային սխտեմանը և՛ հարկերի ու տուրքերի գանձման վարձակարկությունը: Հատկապես իշխանություններին հանձնելը, սրանք իրենց իրավունքներն ի շահ էին դրժմադրում և իրենց շարաշահումները գործրել էին սրժմա սխտ:

Պարսկաստանը խաչաբեղա պատկեր էր ներկայացնում իր միայն էթնիկական, այլև տնտեսական տեսակետից, որը նրա իրական էր: Պարսկաստանի տնտեսապես ամենազարգացած և բնակչուն էին Պարսից ծոցի և Միջերկրական ծովի մասնավորում քաղաքները՝ հին Արևելքի նավահանգստային և առևտրական կետերը: Լիդիայի նվաճումը մացրեց Պարսկական պետության կազմի մեջ ծովափնյա հունական քաղաքներ, ույզ բանամիկացրեց պարսիկների դիրքերը Միջերկրական ծովի Արևելքում: Այդ քաղաքների առևտրական և ստրկատիրական արխատկրատիան արտկցում էր պարսիկների իշխանությունը: Իսկ ընակչության հրժեհական մասը, որը գանձվում էր հարկերի և զանազան սյարձակների տերթի տակ, համախմբվում էր մեծ արքայի բնապետության շրջանում: Նրան շրջապատող արխատկրատիայի ղեկ՝ Պարսկական արքայի հսկայական բունակը ստակալի ուժ էր, որը ահարեկում էր բնակչությունը և միասնականության հարևան մյուս ժողովուրդներին: Պարսկական տերությունը ընդարձակվում էր բոլոր կողմերում:

Դարեհի էքսպանսիան տարածվեց արևմուտք, հյուսիս-արևմուտք, Բրազիլիայի կողմը և Բալկանյան թերակղզու մյուս մարզերը: Այդպիսով, ստրուկներ ձեռք բերելու ծարավը, արքայական դանձարանի հարստացումը, նոր պաշտոնների ստեղծումը, մեծ արքայի հեղինակության բարձրացման և կողոպուտի համար նոր մարզեր հայտնաբերելու ձգտումը, այս բոլորը արքային մղում էր դեպի էքսպանսիա:

Ներտնտեսական հարաբերությունների թուլության և ստրուկտիրական տնտեսության ոչ բավականաչափ բարձր մակարդակի պայմաններում արքան պարսկական բոլոր մարզերը մի ամբողջության մեջ միավորել և այդ բոլոր հողերը իր տիրապետության ներքին մար պահպանել կարող էր միայն ռազմական կազմակերպությունների օգնությամբ և դեպի զանազան երկրները կատարվող էքսպանսիայի շնորհիվ: Հարևան երկրների այդպիսի նվաճողական ստրկացման քաղաքականությունը Պարսկաստանին հասցրեց Սկյութիայի և ապա Հունաստանի հետ ընդհարմանը:

Ըստ հին գրողների սկյութացիները ՍՍՌՄ-ի տերիտորիայի հնագույն ժողովուրդն են: Սկյութիա կամ սկյութացիներ անուն էին կոչվում մեր երկրի ամբողջ բնակչությունը խորը հնությունից: Այդ էր ՍՍՌՄ հարավում բնակված բոլոր ցեղերի և ժողովուրդների հավաքական անունը: Մինչև պարսիկների հետ բարձր սկյութացիները հայտնի էին դեպի Առաջավոր Ասիա կողմը: Ներսիսը ներխուժումով, որի մասին պատմում է Հերոդոտոսը, առաջին անգամ վկայության նկատմամբ եղած անվստահությունն աչքի առնելով, կոչվեց հերքված է: Մի շարք տեղեկություններ այդ թվում էպիգրաֆիկ և հատկապես սովետական գիտնականները հնագիտական աշխատանքներն Անդրկովկասում, ասում են դեպի Առաջավոր Ասիա սկյութացիների շարժման մասին դեռևս չեն դարձրել վերջում մ. թ. ա. Պատմական հետաքրքրություն է ներկայացնում սկյութացիների պայքարը պարսիկների դեմ, վերջիններիս դեպի սկյութացիների երկիրն կատարած արշավանքի ժամանակ Առաջին նշանավոր ընդհարումը պատմաբանների նշմամբ երկրորդ սկյութական տերության և Կյուրոսի պարսկական տերության միջև: Որոշ հետաքրքրություն է ներկայացնում հին ժամանակների ժառանգական նվաճող Կյուրոսի արշավանքը, որպես նշանավոր պատմական իրադարձություններից մեկը, տեղի ունեցած մեր երկրի տիրապետության վրա խորը անցյալում: Այդ պատմական փաստը տարրերական է նախ և առաջ մեր երկրի բնակչության օտարացումը:

Սկյութացիների դեմ հերոսական պայքարի տեսակետից: Պարսկական Կյուրոս տիրակալը, հպատակեցնելով ողջ Արևելքը, ժողովրդից պատերազմով գնալ ասիական սկյութացիների (մասնավորապես) վրա: Սկյութական երկրում այդ ժամանակ կառավարում էր Տամիրիս թագուհին: Նա չվախեցավ պարսկական հրոսակների ներխուժումից. թեպետ նա հնարավորություն ուներ խանգարել Կյուրոսի անցումը Օակս գետից, բայց նա թույլ տվեց այդ անցումը, որովհետև նա դառնում էր, որ նրան հեշտ կլինի պայքարել իր համր դեմ իր թագավորության սահմաններում: Կյուրոսը միայն իր օրոհման կողմից կարողացավ ջախջախել սկյութացիների առաջին ջոկատը, և որ հատկապես Տամիրիսի համար վշտալի էր սկյութացիների սրտ միակ որդուն: «Բայց թագուհին,— ասում է Յուստինոսը, որ թողել է այդ դեպքի հիանալի նկարագիրը,— արքանը չհեղեղեց, այլ սկսեց փնտրել իր մխիթարությունը վրեժխնդության մեջ և նույնպիսի խարդավանանքով վարվեց մոտ անցյալի հաղթանակով հարբած թշնամիների հետ»:

Իրր թե կրած պարտության հետևանքով շինծու հուսալքումից փախուտի դիմելով, նա Կյուրոսին հրապուրեց դեպի կիրճը և ըստ ավանդության, այնտեղ լեռներում, գարան սարքելով, մոտ 300 հազար պարսիկներ կոտորեց: Պարսկական բոլոր ռազմիկների հետ միասին սպանվում է նաև պարսկական տիրակալ Կյուրոսը, ճակատամարտն այնքան արյունահեղ է եղել, որ պարսկական բանակից սուրհանդակն էլ կենդանի չի մնացել պարտության: Կյուրոսի մեղ հասցնելու համար: Յուստինոսի վկայությամբ սկյութացիների թագուհին հրամայում է Կյուրոսի կտրված գլուխը գցել արյունով լի պարկի մեջ, բացազանչելով. «Կշտացի արյունով, որին գու ծարավ էիր և որով դու երբեք չկշտացար»¹: Այսպես ձախուժեց դեպի ասիական Սկյութիա շարժվող պարսկական բռնապետության ստրկատիրական արշավանքը: Բայց պարսկական էքսպանսիայի ջանքերը սրանով չսահմանափակվեցին:



Թշնամիների դեմ սկյութացիների մղած պայքարի հետագա պատմության մեջ առավել նշանակություն ունի այն հակահարձակումը, որ նրանք տվին Դարեհ I Վշտասպին, որը այս անգամ դեպի Նվրոպական Սկյութիա կազմակերպեց նվաճողական երկրորդ

¹ Юстин. 1, 8.

² Юстин. 1, 8 и след.

արշավանքը (512 թ. մ. թ. ա.), այն ժամանակ, երբ առաջ պարսկա-
կան հարձակումները սկզբնապես վրա սահմանափակում էին
Արևելքով (Միջին Ասիա): Դարեհի արշավանքի ուսումնասիրու-
թյունը, հասկապես, ուսանելի է, քանի որ այստեղ արտահայտ-
վել է պատերազմի այն հատուկ ձևը, որը հունա-հռոմեական հե-
ղինականներն անվանել են «փոքր պատերազմ»: Սկզբնապես
պատերազմ մղելու հենց իրենց տակտիկայի համար հնում ստա-
ցել են «prologi»-ներ մականունը, որ պայմանափակված կա-
րելի է թարգմանել «փախուղներ»: Պորոյուն Պոմպոնիոսը, որ
Հորացիոսի մասին իր մեկնաբանություններում բացատրել է, թե
ինչպես պետք է հասկանալ այդ տերմինը: Նա ընդգծել է, որ
սկզբնապես հենց «փախուղ» էլ եղել է պայքարի ձև, որ
«սկզբնապես մարտնչում են փախուստով և»: Թե ինչպես
սկզբնապես պատերազմում կիրառում էին փախուստը, ամե-
նալավ կերպով ցույց է տալիս նրանց պայքարի օրինակը պար-
սից արքա Դարեհի հրոսակախմբերի դեմ: Հերոդոտի միջոցով
մեզ հասած լեգենդի համաձայն պարսից արքան, հավաքելով մոտ
700 հազար ռազմիկներ, անցնում է Խտրիան և ներխուժում
Սկյութիա: Պարսիկների դեմ մղած պայքարում սկյութական թա-
ղամուտների մեջ միասնություն չկար: Բայց սկյութական ցեղերի մեծ
մասը իրենց թագավորներ Իդանֆիրսի և Տաբակիսի գլխավո-
րությամբ վճռեց դիմադրել ներխուժած Դարեհին և նրա հակա-
յական բանակին: Սկյութական զորապետները զինվորական
խորհրդում վճռում են բաց դաշտում ճակատամարտի դուրս չգալ
Դարեհի բանակի դեմ, այլ պլանաչափ կերպով նահանջել: Այդ
վճիռն ընդունելով, սկյութացիները հաշվի են առել իրենց բանակի
փոքրաթիվ և ըստ երևույթին քիչ պատրաստ լինելը. պատերազմն
սկսվեց Սկյութիայի համար անսպասելի կերպով: Բացի այդ,
սկյութացիների նահանջի տակտիկան ըստ ավանդության նպա-
տակ է ունեցել Դարեհի բանակը ներխուժել տալ այն սկյութա-
ցիների տերիտորիան, որոնք հրաժարվել էին պատերազմողներին
աջակցել: Այսպիսով նրանք,—ասում է Հերոդոտը,—որոնք «կա-
մովին չէին ցանկացել պարսիկների դեմ պատերազմ մղել, պետք
է կռվին թեկուզ ակամայից»: Դրա համար էլ սկյութացիների
ուժերը մեծանում էին: Վերջապես, նահանջն ունեցել է այլ խնդիր
և՛ Դարեհի պարսկական բանակը ենթարկել սովի: Այդ նպա-
տակով սկյութական թագավորների խորհրդում վճիռ էր ընդունվել
թշնամու դեմ կիրառել «փոքր պատերազմի» ձևը, որն ըստ Հե-

րոդոտի նշանակում էր «նահանջել իրենց հոտերով, ճանապար-
հին պատրաստած ջրհորները, աղբյուրները լցնել, փակել և
ոչնչացնել ամբողջ բուսականությունը»: Այդ տակտիկան պատ-
մության մեջ առաջին անգամ կիրառվել է սկյութացիների կող-
մից, դրա համար էլ հետագայում կոչվել է «սկյութական»: Կա-
նանց և երեխաներին սալներով, անասունների հոտերը, այս բոլորը
ուղարկվեց դեպի հեռավոր հյուսիս, իսկ այն վայրերի բուսա-
կանությունը, որ նրանց ենթադրությամբ պետք է ներխուժեր
Դարեհը, անխնա ոչնչացվեց: Փոքրիկ ընդհարումներով
սկյութացիները Դարեհին հրապուրեցին դեպի երկրի խորքը:
«Սկյութացիները,—ասում է լեգենդը,—անցան Տանախ գետը,
իսկ նրանց հետքերով անմիջապես հետևում էին պարսիկները»: Լե-
գենդով Սկյութիայով և Սավրոմեաիայով, Դարեհն ամեն տեղ
տեսավ ամայացված: Հետագայում թշնամուն Դարեհը մուտք
գործեց կարծես թե անսպաս, և այն նրան խորը հուսահատեցրեց,
Պարսից արքան հարկադրվեց արշավանքը դադարեցնելու մասին
կարգադրություն անել: Այդ ժամանակ սկյութացիները այդ
երկրի հյուսիսից շրջանց կատարեցին, վերադարձան Սկյութիա
և անցան Դարեհի գործերի թիկունքը: Վերջինս ընկավ ծանր դու-
րան մեջ. նրան ոչինչ չէր մնում անելու, քան վերադառնալ
դեպի արևմուտք: Այսպիսով պարսից արքայի առաջին օպերա-
ցիան, սկյութացիների խորամանկության շնորհիվ լրիվ կերպով
տապալվեց, պարսիկները հարկադրված եղան ձեռնառնայն ետ
վերադառնալ:

Պարսիկների երկրորդ օպերացիան նպատակ ուներ հասնել
ետ վերադարձող սկյութացիներին, կռվի բռնվել նրանց հետ և
չարջախել նրանց: Արագ երթով Դարեհը նորից հասավ Սկյութ-
իայի սահմաններին և այստեղ նա հանդիպեց սկյութացիների երկու
թևատի: Նա սկսեց հետապնդել նրանց, իսկ սկյութացիները շա-
րունակ նահանջում էին և դուրսվում էին պարսիկներից մեկ օրվա
ճանապարհ տարածության վրա: Պարսից արքան կրկնակիս
հեղձում էր նրանց, իսկ սկյութացիները շարունակում էին, ըստ
իրենց վճռի, փախչել դեպի դաշինքից հրաժարվածների հողերը:
Այս բոլորը հյուսված էր Դարեհի ուժերը: Եվ քանի որ այդ դու-
րանը տեղեց երկար և ճանապարհի ծայրը չէր երևում,—ասում է
լեգենդը,—Դարեհը պատվիրակ է ուղարկում սկյութացիների
թագավոր Իդանֆիրսի մոտ հետևալ խոսքերով, «ինչու ես միշտ
փախս տալիս, այ խենթ, կարող ես թեկուզ երկուսից մեկը

ընտրել, եթե դու գտնում ես, որ կարող ես դիմադրել իմ զորքի կանդ առ, էլ մի տատանվիր և կռվիր, իսկ եթե դու քեզ զգում ես ինձնից թույլ, վերջ տուր փախչելուդ և հողն ու ջուրը ձեռքդ առու՝ բանակցությունների մեջ մտիր քո տիրոջ հետ»¹։

Բայց Դարեհի այդ փորձն էլ՝ դեսպանի և բանակցությունների միջոցով Սկյութիան վերցնել իր ձեռքը՝ անհաջողություն կրելու Սկյութացիների թագավոր Իդանֆիրսը մուսնետիկին ետ ուղարկելու հանդուգն պատասխանով։ Ըստ Հերոդոտի սկյութացիների թագավորը Դարեհին պատասխանել է հետևյալ խոսքերով։ «Ահա ինչպիսին եմ, պարսիկ. ես ոչ ոքի ահից մինչև այժմ չեմ փախչել քեզանից էլ չեմ փախչում, և այժմ ես խաղաղ ժամանակվա համեմատած ոչ մի նոր բան չեմ անում, թե ինչու ես չեմ շտապում ճակատամարտել քեզ հետ, այդ բացատրեմ քեզ։ Մենք որդաքներ չունենք, ծառազարդ դաշտեր չունենք, մենք ոչ մի երկիր չունենք ոչնչից. թե դրանք կգրավվեն կամ կամայնացվեն, ոչ համար էլ չենք շտապում կռվի բռնվել ձեզ հետ։ Եթե ձեզ ծայր հեղորեն անհրաժեշտ է արագացնել ճակատամարտը, այդ դեպքում ահա մեր նախնիների գերեզմանները, գտեք դրանք և փորձեք ձեզ քանդել, այն ժամանակ կիմանաք, կկռվենք դրանց համեմատած ձեզ հետ թե ոչ։ Ավելի շուտ մենք չենք կռվի, քանի որ մեզ ձեռք տու չէ։ Ինչ վերաբերում է կռվին, բավական է։ Ինչ տեղի է ունենում միայն Ձեռքի, իմ նախնիներին, և սկյութների թագավորի Գիստիային։ Հողի և ջրի տեղ ես քեզ ուղարկում եմ այնպիսի ընծաներ, որ արժան են քեզ, իսկ այն բանի համար, որ դու համարում ես մեր տերը, ես քեզ կհատուցեմ»²։

Այսպիսով Դարեհի դիվանագիտական մանևրը սկյութաթագավորի հետ համարձայնվելու և հարաբերությունների մեջ մտնելու մասին ոչ միայն վերջացավ անհաջողությամբ, այլ և սրբից նրանց առեւտրություն ու պայքարի կամքը։

Այդ բանակցություններից հետո գալիս է Դարեհի դեպքերի երրորդ և եզրափակիչ փուլը, որն ավարտվեց դեպի Սկյութիա պարսիկների արշավանքի լիակատար ձախողմամբ թափան թագավորները, — ասում է Հերոդոտը, — լցվեցին զարթոթով... վճռեցին այլևս պարսիկներին հետևից քարշ չտալ և արտիքի անցնելու մասին համաձայնություն հասնելու մեջ գցելը. — Ա. Ս.

¹ Геродот. IV, стр. 126—128. Изд. 1882 г.
² Там же.

անի դեպքում հարձակվել նրանց վրա»։ Այստեղ Հերոդոտը բացատրում է այն «փոքր պատերազմի» իմաստը, որպիսին հնարավոր է եղել սկյութացիների մոտ այն ժամանակվա պատմական զարգացման մակարդակում։ Հերոդոտն ասում է, որ սկյութացիները պարսիկների վրա հարձակվում էին ամեն անգամ «երբ Դարեհի պարսիկները հացի հետևից էին ընկնում»։

Իրենց հարվածների համար սկյութացիներն օգտագործում էին իրենց սրընթաց հեծելազորը։ «Ինչ վերաբերում է հեծելազորին, — ասում է Հերոդոտը, — ապա սկյութականը միշտ փախուստի էր մատնում պարսկականին, պարսկական հեծելազորը փախչում էին այնքան, մինչև հասնում էին հետևակին», որը անկողնի էր եղել, դրա համար էլ սկյութացիները խուսափում էին հեծելազորից և փախչում էին նրա հետ։ Հետաքրքրական է այն փաստը, որ սկյութացիներն այդպիսի հանկարծակի հեծելազորի հարձակումներ ձեռնարկում էին ոչ միայն ցերեկը, այլ, երբեք այդ նշում է Հերոդոտը, գիշերները։ Պարսիկներին հյուսիսայն պայքարի հետևանքով պարսկական բանակում նկատվում էր տուն վերադառնալու շարժումը։ Հերոդոտի վկայությամբ, սկյութացիները իմանալով այդ շարժման մասին, գործադրեցին խորամանկություն։ «Որպեսզի երկար պահել նրանց (պարսիկներին — Ա. Ս.) Սկյութիայում և հարկադրել այդ բոլոր ժամանակ ամեն ինչի կարիքի մեջ լինելը՝ նրանք մի քանի անգամ իրենց հոտերի մի մասը հովիվների հետ թողնում էին և քաշվում էին ուրիշ կետ. այդ ժամանակ պարսիկները հարձակվում էին, գրավում անասունները և նրանցից յուրաքանչյուրը հրձվում էր իր ձեռք բերած ավարով»¹։ Տեսնելով, որ պարսկական զորքը երկար ժամանակ չէր կարողանում պակասությունից և առանձին տեղերում արտիսկ ջրից հյուսիս էլ էին, սկյութացիները պարսից արքային ուղարկեցին «ընծա»՝ թուղուն, մուկ, դորտ և հինգ սլաք. պարսկական մոզերը երկար խորհրդածում են այդ ընծայի նշանաբանի մասին։ Այդ ժամանակ պարսկական ամենախիմաստուններից մեկը՝ Գոբրին այսպես է մեկնաբանում ընծաների իմաստը՝ «պարսիկներ, եթե դուք որպես թուղուններ չթուղեք դեպի երկիր, կամ որպես մկներ չթաքնվեք հողի մեջ, կամ որպես դորտ չլսալվեք լճերի մեջ, ապա չեք վերադառնա ետ և կընկնեք

¹ Геродот, IV, стр. 128—130. Изд. 1888 г.

այդ պարսիկների հարվածների տակ¹ Դարեհը հարկադրված էր համաձայնվել սկյութական ընծաների այդպիսի մեկնաբանման հետ: Եվ երբ Գոբրին առաջարկում է պարսից արքային անմիջապես թողնել Սկյութիան, Դարեհն ընդունում է Գոբրիի այդ խորհուրդը և գիշերը վրա հասնելուն պես շարժվում դեպի Պաշուպատան: Հսկայական բանակն ուժասպառ էր եղել, կորցրել էր 80 հազար ռազմիկներ և այժմ ձեռնունայն վերադառնում էր ետ: Վերադարձն էր հենց ոչ պակաս ծանր էր, որովհետև սկյութացիները կտրեցին Դարեհի նահանջի ուղին, մտաեցան Իստրիային և այնտեղ կանգնած յոներին հարկադրեցին այդ գետի վրայի կամուրջը քանդոտել: Սկյութիան նվաճելու Դարեհի պլանը տապալվեց:

Չի կարելի արևելյան դեսպտոնների ավելի անհաջող արշավանք նկարագրել, քան այդ եղել է Դարեհի արշավանքը սկյութացիների դեմ: Այդ պատերազմում սկյութացիներն իրենց ցույց տվին որպես «իրոքր պատերազմի» տակալիկան հաջողության կիրառող հմուտ ռազմիկներ:

Այսպես գունեղ, ուժեղ, սակայն արշավանքի ծավալի չափազանցումով է նկարագրվում պարսիկների պատերազմը սկյութացիների հետ Հերեդոտի հաղորդած լեզանդը:

Եվ, վերջապես, կարելի է մեջ բերել Յուստինոսի հետևյալ ճշմարտացի խոսքերը՝ «Սկյութացիների մասին սխրագործությունների պատմությունը, որոնք բավականաչափ մեծ ու կարևոր են եղել, պետք է սկսել նրանց առաջացման սկզբից» նրանց պատմության սկիզբը այնքան փառավոր է եղել, որքան նրանց տիրապետությունը և նրանց կանայք իրենց խիզախությունը պակաս չափով հռչակված չեն եղել²:

Այսպիսով, պարսիկներին չհաջողվեց հպատակեցնել սկյութներին: Պարսկական երկու բռնապետների ստրկատիրական արշավանքները կրախի են մատնվել: Դարեհի պարտությունից հետո պարսկական բանակի մի մասը արքայի հետ միասին անցավ Ասիա, մյուս մասը՝ Մեգարազի հրամանատարությամբ մնաց Եվրոպայում՝ Թրակիական ժողովում: Հետևապես, արքան Թրակիան իր անտառային և հանքային հարստություններով օկուպացնելու պլանից՝ չէր հանձնառվում: Բացի այդ, արքան ճիշտ էր

որոշում հույների, հատկապես Աթենքի որպես առևտրական կենտրոնի նշանակության աճումը, և չէր ուզում թույլ տալ Աթենական պետության ուժեղացումը: Դրա համար էլ պարսկական բռնապետությունը իր ուղադրությունը այժմ ուղղում էր դեպի Հունաստան: Մտադրված է նոր արշավանքի հարցը դեպի Հունաստան:

Մեգաբազն աստիճանաբար կատարում էր արքայի հանձնարարությունը: Թրակիան գրավվեց և մտցվեց պարսից թագավորության կազմի մեջ: Այսպիսով կաղմակերպվեց պարսկական նոր սատրապություն: Պարսկական արքայի իշխանությունը ճանաչեց նաև Թրակիայի սահմանակից Մակեդոնիան: Մեգաբազն այդ հաջողությունները փառամուլ արքային մղեցին դեպի Հունաստանի խորքերը շարժվելու ուղին:

Պարսիկների հարձակումը հույներին հարկադրեց ձեռնարկել իրենց զինված ուժերի կաղմակերպմանը, պատրաստվել հակահարվածի և պարսիկների հետ անմիջական ընդհարմանը: Բայց հունական քաղաք-պետությունները դեռևս թույլ էին, քանի, որ նրանց մեջ կար թշնամանք և ներքին պայքար, սրը թուլացնում էր հույների դիմադրության ուժը և, ընդհակառակը, հեշտացնում պարսկական էքսպանսիայի խնդիրը:

ՆՈՒՆԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՅՔԸ

Պարսկական տիրապետության ընդարձակվելը շոշափում էր ոչ միայն Բալկանյան Հունաստանի շահերը: Պարսկական էքսպանսիան կանխորոշում էր նաև Փոքր Ասիայի հունական պետությունների բախտը: Միլետի և փոքրասիական ափերի հետ անմիջական առևտուրը կրճատվում էր: Աստիճանաբար այն անցնում էր պարսիկներին հպատակ փյունիկյան վաճառականների ձեռքը: Եվ այս բոլորը հենց անմիջական կերպով շոշափում էր փոքրասիական քաղաքների նյութական շահերը, որոնք ամրապնդվել էին որպես ստրկատիրական պոլիսներ, և ամուր կապ էին հաստատել մայրցամաքային Հունաստանի քաղաք-պետությունների հետ, որոնցից Աթենքը դարձել էր ամենաուժեղ պետությունը: Պարսկական էքսպանսիայի դեմ էին կանգնել Հունաստանի ստրկատիրական պետությունները, դրա համար էլ պատերազմը Պարսկաստանի և Հունաստանի միջև հետո չէր:

Հունա-պարսկական պատերազմի համար տիիթ ծառայեց փոքրասիական հույների ապստամբությունը՝ 500 թ. մ. թ. առաջ: Կղզանշանը տվեց Միլետը, սրտեղ հակապարսկական շարժումը

¹ Геродот, VI, стр. 181—188. Изд. 1888 г.
² Юстин, II, стр. 1—2. Изд. 1811 г. VI, 1080—1083.

պիստովորում է տիրան Արիստոգորասը: Նա չէր կարող նույն
դեմը իր սեփական ուժերի վրա. Արիստոգորասը դիվանագիտական
միսիայով ուղևորվում է Սպարտա և Աթենք, որտեղից նա մտա-
դիր էր օգնություն ստանալ առաջիկա պատերազմի դեպքում:
Քայց Արիստոգորասի միսիան վերջանում է անհաջողությամբ:
Հունական ոչ բոլոր պետություններն էին, որ հասկանում էին
պարսկական էքսպանսիայի վտանգը: Սպարտացիները, հենվելով
տարածության հեռավորության վրա, բոլորովին հրաժարվեցին
Արիստոգորասին օժանդակելուց: Միայն աթենացիքն էին, որ
նախազգում էին պարսկական վտանգի նշանակությունը: Քայց
նրանք էլ միայն 20 նավ էին զինել ընդդեմ պարսիկների:

Սկզբում հույների հակապարսկական շարժումը գնում էր
հաջող: Ապստամբները ջախջախեցին պարսկական կայսրոսները:
Նրանց հաջողվեց հասնել մինչև իսկ լիգիական թագավորության
մայրաքաղաքին, Սարդային: Փոքրասիական հույների հաջողու-
թյունները դրանով էլ վերջացան: Իրենց ապստամբների մեջ իսկ
սկսեցին դժտությունները և տարաձայնությունները, մինչդեռ
պարսիկներն այդ ժամանակ աստիճանաբար ուժեր էին հավաքում
և դրանք աստիճանաբար մոտեցնում փոքրասիական ափերին:

Միլետի մոտերքում 494 թ. մ. թ. ա. երեաց փյունիկյան կա-
վատորմը բաղկացած 600 նավից: Այդ նավատորմի դեմ մղու-
ված բախման մեջ հունական նավերը պարտություն կրեցին, որն
էլ վճռեց ինչպես Միլետի՝ որպես ապստամբության կենտրոնի,
այնպես էլ պարսիկների դեմ հույների ամբողջ ապստամբության
ճակատադիրը: Միլետը հիմնահատակ ավերվեց, և դրանից հետո
յունիական բոլոր քաղաքները հպատակեցվեցին, կորցրին իրենց
ինքնուրույնությունը և մտցվեցին պարսկական տերության կազ-
մի մեջ:

Պարսկաստանը առաջ շարժվեց, նա գրավեց Քիոս, Լեսբոս
և Էփեսոս կղզիները: Սկսվեց հունական հողերի կողպուտը,
նրանց հարստությունների հափշտակումը. իրենք՝ հույները կամ
կատորվեցին, կամ գերի ընկան ու դարձան ստրուկներ: Պարսիկ-
ները զինեցին նոր պատժիչ արշավախմբեր և ուղարկեցին կլրո-
պական ափը՝ Քրակիա, Հույները փախում էին պարսիկների հե-
տապնդումից: Պարսիկներից փախչող հույների մեջ էր նաև արթե-
նացի Միլտիադեսը, Մարաթոնյան ապագա ճակատամարտի հե-
րոսը:

Որկու տարի հետո՝ 492 թ. մ. թ. ա. Դարեհի փեսա, զորա-

վար Մարդոնիոսի պիստովորությամբ պարսիկները նախաձեռնեցին
ազգական մեծ արշավախումբ, որը մեծ բանակով, նավատորմով
չարժվեց բալկանյան Հունաստանի վրա: Մարդոնիոսին հաջողվեց
անցնել Հելեսպոնտոսը, ուղևորվել Էգեյան ծովի Նեոսիալին
ափերը, հնադանգեցնել պարսիկների դեմ սպասամբում ցեղերին
և հպատակեցնել շատ քաղաքներ ու կղզիներ: Սակայն Աթենա
հրվանդանի մոտ պարսկական նավատորմն աղետի են-
թարկվեց: Կատալի փոխարկի հետևանքով Մարդոնիոսի նավա-
տորմը ցիրուցան եղավ, ըստ սրում անձնակազմից 20 հազար
հոգի խեղդվեց ծովում: Դրանով վերջացավ պարսիկների արշա-
վանքը: Ինքը՝ Մարդոնիոսը, որ վիրավարվել էր ճակատամարտերից
մեկում, ղեկավարում էր միայն ամբողջ Քրակիայի գրավման
յամաքային օպերացիաները: Քրակիան պետք է մնար սրպես Մե-
նակես կլրոպական մայր ցամաքում:

Այս անհաջողությունից հետո՝ Պարսկաստանը սկսեց պատ-
րաստվել նոր ազգական մեծ արշավանքի, որի նպատակն էր ամ-
բողջ Հունաստանի հպատակեցումը: Թագական այդ արշավանքին
նախորդում էին դիվանագիտական նախապատրաստական բա-
նակցությունները: Դարեհը հունական բոլոր քաղաքներին ուղար-
կեց դեսպանություն, պահանջելով «ջուր և հող»: Այդպիսին էր մեծ
սրբային անվերապահորեն անձնատուր լինելու և հպատակվելու
ֆորմուլան: Մակեդոնիայի, Թեսալիայի, Բեալիայի մի քանի,
պիստովորապես, արիստոկրատական համայնքներ ընդունեցին պար-
սից դեսպաններին և նրանց պահանջները բավարարեցին: Աթեն-
քում նրանց սպանեցին: Իսկ սպարտացիներն սպանեցին դեսպան-
ներին, ձգեցին ջրհորի մեջ սահելով «Գետք պլանեղ ձեզ համար
«ջուր և հող»:

Ի պատասխան պարսից արքայի վերաբերմամբ հույների այդ
չսոված հանդգնության 490 թվին կազմակերպվեց ծովային նոր ար-
շավանք դեպի Հունաստան: Այդ օպերացիայի ղեկավարությունը
Դարեհը հանձնեց հմուտ ծովագնաց զորավար Դաստիսին: Իսկ իր
ազգական Ատրենբուհին, որն աչքի էր ընկել Միլետի դեմ մղված
կռիվներում, Դարեհը վստահեց ցամաքային օպերացիաները:

Մշակվեց արշավանքի նոր պլան: Դեպի Աթենք արշավանքի
պարսկական պլանը նախատեսում էր Կիկլադյան կղզիներով զե-
պի ուղղափի Աթենք տանող ուղիղ ճանապարհը: Դաստիս Ատր-
ենբուհին անվատորմը հասնելով Էլբեայի Էրետրիա քաղաքը,
այն ավերեց և սպա դեսանտ խեցրեց Ատտիկայում և Մարա-

Յոնյան հարթութեան վրա: Այդ պլանի իրականացման գործում պարսից արքայի խորհրդատուներից մեկն էր Աթենքից արտաքսված Հիպիասը՝ Պիսիստրատի որդին:

Պարսկական զորքի Ատտիկա իջնելն ամենացիններին հանկարծակի բերեց: Տազնապ ու խուճապ էր տիրում ամենական մայրաքաղաքում: Սպարտական օգնությունը չէր հասել, իսկ ամենացինների սեփական ուժերը անբավարար էին: Աթենական ստրատեգների կոլեգիայում երկար ժամանակ չհաջողվեց գործողության միասնական պլան մշակել: Վերջ ի վերջո վեճերի և պայքարի հետևանքով հաղթանակեց Միլտիադեսի կարծիքը, որը պնդում էր անմիջապես հարձակվել Մաքսոնյան դաշտավայրում դասավորված պարսկական զորքերի վրա: Աթենացիները գլխավոր հրամանատարությունը հանձնեցին Միլտիադեսին: Հուլիաները, ժանրազինները, լայն տեղերով նոր զորահրամանատարի հետ միասին ուղևորվեցին դեպի պարսկական հեռուստ: Հետևալը պարսկական զորքի գլխավոր ուժը չէր: Նրանք գերազանց հեծելազոր ունեին: Բայց հենց հեծելազորն էլ Մարաթոնյան ճակատամարտի ժամանակ չէր կարող պահանջված չափով օգտագործվել: Հեծելազորի հիմնական մասը չհասավ ճակատամարտին, իսկ ավելի քան երկու ջոկատներին էլ տեղ չկար ծավալելու: Այդ բոլորի հետևանքով պարսիկները չկարողացան դիմանալ հույների սրընթաց գրոհին և փախուստի մատնվեցին: Պարսկական զորքերի միայն մի փոքր մասին հաջողվեց նստել նավերը և լողալ դեպի Ասիա: Մնացածները կամ ընկան ճակատամարտում, կամ խեղդվեցին ծովում: Աթոնա հրվանդանում կրած աղետին ավելացավ նորը՝ պարսիկների Մարաթոնյան ջախջախումը:

Միլտիադեսի հաջողություններին նշանակալից չափով նպաստեց այն հանգամանքը, որ նա հիանալի կերպով գիտեր մարտի դաշտի տեղագրությունը, կարողացավ միավորել հույներին և անգամ ստրուկներին ներգրավել բանակի մեջ, նրանց խոստանալով ազատություն: Մեծ նշանակություն ունեցավ հարվածի և սրընթաց գրոհի համար մոմենտի ընտրությունը, որի հետևանքով Միլտիադեսին հաջողվեց հաղթահարել քանակով գերազանցող պարսկական բանակին: Ճակատամարտի տեղում՝ Մարաթոնյան դաշտում հույները ի պատիվ Միլտիադեսի հայրենիքի համար ընկած մարտիկների հրաշքական գերեզմանի կողքին կանգնեցրին նրա մոնումենտալ արձանը: Մարաթոնյան ճակատամարտը փառաբանվել է հունական բանահյուսության մեջ: Նրանով պարծեցել են ամեն

անկան օտարմիկները, հունական քաղաքացիները: Այդ ճակատամարտի բուն սյուժեն գեղեցիկ կերպով մշակվել է հունական նկարիչների կողմից իրենց երկերում: Գեղանկարիչ Պելլեգնոտեսը Աթենքի գլխավոր հրապարակի կամարասրահներից մեկի վրա պատկերել է Մարաթոնյան ճակատամարտը: Այսպիսով հետագա սերունդների գիտակցության մեջ Մարաթոնյան հաղթանակը պրոյեկտվել է որպես հելլենների ազգային հաղթանակը արևելյան բնապետության և պարսկական միապետության ստրկացման սխալի դեմ:

Մարաթոնյան ճակատամարտից հետո ժամանակաշրջանը Աթենքի պատմության մեջ լի է պարտիաների կրքոտ քաղաքական պայքարով: Պարսկական բնապետության դեմ պայքարի պրոցեսում Աթենքում բարձրացավ և իր գործունեությունն ուժեղացրեց դեմոկրատական պարտիան: Այդ պարտիան (իհարկե այդ բառի անտիկ հասկացողությամբ) արտահայտում էր ծովային առևտրի հետ կապված առևտրա-արհեստագործների խմբերի շահերը: Այդ պարտիան արմատականորեն էր տրամադրված ու պատրաստ էր ել՝ մանր գյուղացիական տնտեսությունները, և՛ արհեստավորական տարրերին ստրկատիրական տնտեսության ոլորան ընդգրկելու հաշվին ընդարձակել ստրկատիրական հասարակության սոցիալական բազան: Այդ պարտիայի, որը կոչվում էր «ծովային» պարտիա, գլուխը կանգնեց 493—492 թվերի մ. թ. ա. արքոնտ Թեմիստոկլեսը: Պլուտարքոսը նրան նկարագրում է որպես արտասովոր անձնավորության՝ լայն մտահորիզոնով, մեծ վճռականությամբ և պատվասիրությամբ: Նրան այսպիսի բարձր գնահատական է տալիս նաև պատմաբան Թուկիդիդեսը. «Ամենակարճ խորհրդածությունից հետո Թեմիստոկլեսը եղել է ամենաարդար գաղափար ամեն մի սովյալ իրադրություն և բոլորից լավ է կուշակել ամենահեռավոր ապագայի իրադարձությունները»:

Թեմիստոկլեսն զգացել է, որ պարսից արքայի հզորությունը գեո չի ջախջախված, դրա համար էլ հունական երիտասարդ սեսպուրիկաները պետք է որ պատրաստվեն հետագա պայքարին: Նա ինքը երազում էր պարսիկներին էլ ավելի ուժեղ պարտության մատնել, քան այդ արել էր Միլտիադեսը: Թեմիստոկլեսը դեպի Միլտիադեսն ունեցած նախանձն արտահայտել է բացարձակ կերպով՝ «Թե՛՛, —ասել է նա,— Միլտիադեսի փառքը հանգիստ չի տալիս» (Պլուտարքոս):

Թեմիստոկլեսի դեմ դուրս եկավ չափավոր դեմոկրատական

պարտիայի ներկայացուցիչ, նույնպես Մարաթոնյան հակաստան
տի մասնակից Արխատիդեսը: Նրա պարտիան ներկայացնում
գլխավորապես գյուղական բնակչության այն խավերը, որոնք
խենում էին ծովային առևտրի ուժեղացումից: Պարտիաների
քաղաքական շատ հարցերի շուրջը ծագեցին հակասություններ:

Թեմիստոկլեսի և Արիստիդեսի միջև պայքար սկսվեց ամեն
առաջ Սթենքի առևտրական մրցակից էգինայի կղզու հետ մղված
պատերազմի համար նոր նավեր կառուցելու հարցի շուրջը: Աթենքի
այդ երկու առաջնորդների միջև այդ պայքարը սուր քաղաքական
բնույթ ընդունեց: Ժողովուրդը պաշտպանում էր Թեմիստոկլեսի
սին և Արիստիդեսին արտաքսեց Աթենքից 482 թվին մ. թ. ա. (ըստ
ստրաբոնի): Այժմ հաղթանակած Թեմիստոկլեսը հանդես եկավ
Աթենքի ծովային հզորության ուժեղացման և նոր նավատորմ կառուցելու
մեծ պլանով: Այդ ձեռնարկման ֆինանսական բազմապես
պետք է լիներ լավրիոնական հանքերից հանված արծաթի ելակա-
մուտը: Գանձարանը հարստացրած այդ եկամուտներով Թեմիստոկլեսը
կառուցեց 100 նոր նավ: Հունական մեծ՝ եռաշարք լավրիոներով
(տրիեմներ) նավերը շուտով շարք ընտան: Նավատորմի շինարարությունը
աթենական արհեստի համար և նրա տեխնիկայի համար քննություն
հանդիսացավ, որովհետև նոր նավերը շինված էին աթենական
վարպետների ուժերով անմիջականորեն աթենական նավաշինարաններում:
Մեծ քանակությամբ նավերից բաղկացած աթենական նավատորմի
սպառազինության ուժեղացումը Աթենքը վերածեց առաջնակարգ
ծովային տերության՝ էգեյան ծովում:

Պլուտարքոսը, որը հանգամանորեն նկարագրել է Թեմիստոկլեսի
հրաշագործությունները, պատմում է, որ «ծովային» պարտիայի գլուխը
աթեն կերպ հույների ներշնչել է սեր դեպի վազնացային զբաղմունքը,
դեպի անդրծովյան առևտրի զարգացումը: Շնորհիվ իր եռանդուն
գործունեության Թեմիստոկլեսը հասցանկացած նպատակին: «Ծովային»
պարտիայի ծրագիրը հարյուրյակով իրականացվում էր. Թեմիստոկլեսին հաջողվեց
իր ուժի-քաղաքացիներին նստեցնել նավերի վրա: Հետագայում
նայինքը նրան մեղադրում էին այն բանի համար, որ նա ճնշում
համաքաղաքացիներից խլեց տեղն ու զրահը և աթենացիների
դամեց նավերի նստարաններին և թիբրին»: Թեմիստոկլեսի
Պիրևաի նավահանգիստն իր շրջակա նավաշինարաններով ընդ-
ձակվեց և վերածվեց ռազմածովային բազայի: Թեմիստոկլեսի

համոզմունքն ամրապնդեց նրա դիրքը, ստեղծեց հեղինակու-
թյան «ծովային» պարտիայի համար և պարսիկների դեմ հույների
հասցր հաղթանակի պայմաններից մեկը հանդիսացավ:

Մարաթոնյան պարտությունից տասը տարի անց պարսիկները
դարձին հավաքած պատրաստ էին Հունաստանի վրա նոր ար-
շավանքի: Պարսկաստանի արքան այդ ժամանակ Քսերքսեսն էր
(485—465 թ.թ. մ. թ. ա.): Մի քանի տարվա ընթացքում Քսերքսեսը
հավաքեց մեծ բանակ: Պատրաստվելով ռազմական օպերացիաների,
նա կազմեց դեպի Հելլեսպոնտոս շարժման, նրա
պատրաստ էր այնուհետև դեպի Հունաստանի խորքերն արշավանալի
զորանի 480 թ. մ. թ. ա. Քսերքսեսն անցավ իր պլանի իրականացմանը:

Հերոդոտի մոտ բերված են Քսերքսեսի պարսկական բանակի
ստիպանցված թվերը: Միայն հետևալը Հերոդոտը հաշվում է 1700
պարսկալի զորքերի համար, որը հեծելազորի, ծովային անձնակազմի,
վարձու զորքերի և օժանդակ սարքավորման՝ գումակի հետ
մասին կազմել է 5283200 մարդ: Միայն նավատորմը, այդ
պատճառների ասելով, բաղկացած է եղել 1207 նավից: Ոչ մի
պատճառների հատկապես ռազմական արվեստի պատմաբան, իհարկ
այդ ժամանակի կարող այդ թվերը հավանական համարել: Բայց այն փաստ-
ագր, որ Հերոդոտը բերում է այդպիսի մեծ թվեր, վկայում է, որ
Քսերքսեսի բանակն այդ ժամանակ իսկապես ազդեցիկ է եղել:

Ավանդությունը հազորում է այն միջնադեպի մասին, որ տե-
ղի է ունեցել պարսիկների բանակի հետ Հիլլեսպոնտոսն անցնե-
լու: Այսպիսի փոթորիկը արգելել է անցումը: Գրանից զայրացած
արքան հրաման է տալիս ծովը մտրակահար անել և նրա մեջ ձգել
վեպացած շղթաներ, որը ծովային փոթորիկը զսպելու համար պետք
է ունենար մոզական նշանակություն:

Հերոդոտը բավական հանգամանորեն պատմում է այդ արշա-
վանքի մասնակցող զորքերի էթնիկական արտասովոր խաչ-
առարկետ կազմի մասին: Այստեղ եղել են և՛ պարսիկներ, և՛ ասո-
սիանացիներ, և՛ արաբներ, և՛ թրակիացիներ, և՛ հնդիկներ և շատ
այլ ամենաբազմազան ժողովուրդներ:

Սրբ Քսերքսեսը մտավ մայր ցամաքային Հունաստանի հողը,
Թեսալիան և Բեոտիան դեռևս կանգնած էին պարսիկների կող-
մի: Իսկ մի քանի քաղաքներ շեղոք էին մնացել (Արգոս): Այնու-

ամենայնիվ հույներն այժմ զգալիորեն ուժեղ էին, քան Մարտի
թոնյան կռուի ժամանակաշրջանում:

Հույներն ընդունել էին պայքարի հետևյալ պլանը՝ նրանց հե-
տևակալին զորքերը պետք է համակենտրոնային թերմոպիլյան
կիրճի մոտ, որտեղ կարելի էր ճանապարհը փակել հյուսիսից դե-
պի միջին Հունաստան: Հունական լավագույն զորքերը պետք է
պաշտպանեին այդ կիրճը և թույլ չտային պարսկական զորքերին
մուտք գործել այդտեղ, ինչ վերաբերում է նավատորմին, ապա-
սայն պետք է կանգնել Արտեմիսի հրվանդանի և Եվբեա կղզու մոտ:
Այդ պլանի իրականացումը չհաջողվեց: Թույլ էին տրվել մի շարք
սխալներ: Նախ սպարտացիները, որոնց հետևակը հռչակված էր
ամբողջ Հունաստանում, միավորված զորքերի փոխարեն ուղար-
կել էին ընդամենը միայն մի քանի հարյուր մարդ Լեոնիդաս թա-
գավորի գլխավորությամբ: Մյուս զորքերը, որը կանգնած էին թեր-
մոպոլի տակ, ցրվել էին: Լեոնիդասի փոքրաթիվ ջոկատը հերո-
սաբար պաշտպանեց թերմոպիլյան կիրճը, այնուամենայնիվ նա-
չկարողացավ դիմանալ պարսկական հրոսակախմբերի ճնշմանը:
Մի հույնի դավաճանություն հետևանքով, որը պարզիկներին առաջ-
նորդել էր սպարտացիների թիկունքը, Լեոնիդասի հերոսական ջո-
կատները չկարողացան հաջող դիմադրություն ցույց տալ շատ
բանով գերազանցող թշնամուն: Մի մարդու դավաճանությունը
ճակատագրական եղավ: Պարսիկների դեմ բռնված գոտեմարտում
թերմոպիլիան պաշտպանող մյուս երեք հարյուր սպարտացիների
հետ միասին հերոսաբար ընկավ Լեոնիդասը: Հետագայում թեր-
մոպիլյան ճակատամարտի տեղում հույները կանգնեցրին հուշար-
ձան քարի առյուծի տեսքով վրան գրված:

«Անցողը, լուր տար Լակեդեմոնի բոլոր քաղաքացիներին, որ
այստեղ մենք պակեկ ենք գերեզմանում, ազնվորեն հավատա-
րիմ մնալով օրենքին»:

Թերմոպիլյան այդ ճակատամարտի հետ միաժամանակ ծո-
վային ճակատամարտ է տեղի ունեցել Արտեմիսի մոտ: Կռիվը
տեղ է երկու օր: Բայց երբ հույները տեղեկանում են Լիոնիդասի
պարտության մասին, հունական նավատորմը զգուշության համար
եւ է լողում դեպի Մալամիս կղզին: Ճեղքելով թերմոպիլի արգե-
լակոցը, պարսկական բանակը շարժվում է Հունաստան և ամա-
լացնում Ատտիկան: Պարսիկները ներխուժեցին Աթենք, քար ու
քանդ արին և հրկիզեցին այն: Ատտիկայի և Աթենքի բնակիչներն
ստիպված եղան տեղափոխվել դեպի կղզիները (Մալամիս): Գրեթե

մի քանի միջին Հունաստանի երկրորդվեց պարսիկներին: Գրեթե
եր խիստ լարված էր Այնուամենայնիվ հույները գեռեա իրենց
նավատորմի վրա հույս ունեին: Բայց այդ ժամանակ սպարտացի-
ների և աթենացիների ազգամական սղաններում միաբանություն
կար: Սպարտական տեսակետը հանգում էր միայն Պելոպոնեսի
պաշտպանությանը, Բայց Թեմիստոկլեսը պահանջում էր պարս-
կական նավատորմին գլխավոր հարված հասցնելու համար բոլոր
ծովային ուժերը կենտրոնացնել Մալամիս կղզու մոտ: Այս անգամ
էլ աթենական ստրատեգ Թեմիստոկլեսի տեսակետը հաղթանա-
կեց: 480 թ. Սալամինի մոտ տեղի ունեցավ պարսկական և հունա-
կան նավատորմերի ծովային ճակատամարտը, որտեղ հույները
լիովին պարտության մատնեցին պարսիկներին: Հունական թեթի
նավերը հարձակվեցին պարսկական նավատորմի վրա, որը կազմ-
ված էր մեծ նավերից, որոնց համար նեղուցը շատ նեղ էր:
Նրանք չէին կարողանում օտերացիայի համար ծավալվել, խըր-
վում էին ծանծաղուտի մեջ, ստորջրյա քարերի գարնվել ով փշր-
վում էին, իրար էին զիպչում և ջրասույց լինում: Հունական ավելի
թեթև նավերը հաջողությամբ մտնեցին: Արեկոցան դեմ
ճակատամարտն ավարտվեց հույների լիակատար հաղթանակով:

Մալամիսյան ճակատամարտն իր նշանակությամբ հույների
անկախության համար մղվող պայքարում ավելի մեծ դեր է խաղա-
ցել, քան Մարտիոնյանը: Պարսիկների նկատմամբ ծովի վրա հույ-
ների ստաբամ այդ խոշոր հաղթանակը չէր կարող պատերազմի
թիվացքում շրջադարձային կետ չհանդիսանալ: Այդ հաղթանակը
Պետագա ազատության համար պայքարի կոչ դարձավ:

«Հառաջ Զեյլադայի սրդիք, փրկեցեք հայրենիքը, փրկեցեք ձեր
կանանց, ձեր երեխաներին, պապենական աստվածներին, տա-
ճարները, նախնիների գերեզմանները, կսիվը այժմ գնում է
ամեն ինչի համար»:

Այսպես է գնահատել աթենական դրամատուրգ՝ Սալամինյան
ճակատամարտի անմիջական մասնակից էսքիլոսը, որն այդ
ճակատամարտն անմահացրեց իր «Պարսիկները» դրամայում:

Մալամիսյան ճակատամարտից հետո այնուամենայնիվ պար-
սիկները չէին հրաժարվում Հունաստանը հպատակեցնելու իրենց
պլանից: Նրանք նոր օգնություն ստացան:

Հաջորդ՝ 479 թ. մ. թ. ա. Մարզոնիսը նորից ներխուժեց Ատ-
տիկա, ամալացրեց այն, անգամ գրավեց Աթենքը:

Աթենացիները, երկար բանակցութիւններէջ ճեռու աշար-
տացիներէց ստացան ուժեղ ջոկատ Պափսանիայի գործարամա-
նատարութեամբ Այդ ժամանակ Մարդոնիոսը վճռեց ճեռանայ
Ատտիկայից, բայց հետապնդվելով Եթէնացիներէ և սպարտացի-
ներէ լանակից, հարկադրված եղավ Քեովիտայում ընդունել ճա-
կատամարտը: Պլատեայում՝ 479 թ. ճակատամարտում պարտի-
ները նոր պարտութիւն կրեցին: Աթենացիները կոտում էին Արիս-
տիդեսի գլխավորութեամբ, որը Մալամինյան ճակատամարտի
նախօրյակին աքսորից վերադարձել էր Աթենք: Սպարտացիները
գեկաճարն էր Պափսանիայը: Պլատեայի մոտ տարած հաղթանակը
հուլներին մեծ ավարճ գանձ և հարստութիւն տվեց: Այդ ավարի մեծ
մասը հուլները նվիրեցին Գելոսյան Ապոլլոնին, Օլիմպիոսյան
Դիսին և ծովերի աստված Պոսեյդոնին: Մեծ ավար բաժանվեց նաև
ապոլլիներին, ըստ որում առյուծի ըստինը վերցրեց թագավոր
Պափսանիայը: Պլատեայի ճակատամարտը հուլներին համար ունե-
ցավ նույնպիսի ազատագրական նշանակութիւն, ինչպիսին ունե-
ցել էին Մալամինյանը և Մարաթոնյանը: Նոր հաղթանակը նշա-
նավորվեց նրանով, որ որոշվեց ամեն տարի ամբողջ Հունաստա-
նում տոնել ազատութեան (Էլեֆտերիայի) համահունչական տոնը:
Առաջին իսկ տոնին երդումով հաստատվեց պարսիկների դեմ պայ-
քարի համար ստեղծված համահունչական դաշինքը:

Հուլներին հետագա հարձակումն ավարտվեց Փոքր Ասիայում
Միկալէ հրվանդանի մոտ պարսիկների ծովային ուժերի լիակատար
ջախջախմամբ (479 թ.): Սպարտական թագավոր Լևոտիքսիդեսի և
աթենական ստրատեգ Քսանտիպի հրամանատարութեամբ հունա-
կան նավատորմը հարձակվեց Միկալէի մոտ կենտրոնացված
պարսկական նավատորմի մնացորդների վրա և ոչնչացրեց այն:
Դրանից ճեռու հուլները շարունակեցին հետապնդել պարսիկներին
Պիլոսոսի և Բյուզանդիոն քաղաքի մոտ, որը մնացել էր պարսիկնե-
րի ձեռքին: Այդ բոլոր օպերացիաներում իրեն բոլորովին կասկա-
ծելի պահեց Պափսանիայի թագավորը: Պարսից արքայի հետ նրա
ամենցած բանակցութիւններն իր վրա հրավիրեց Եթէնացիներին
աշարհարկութեամբ: Այդ հանգամանքը հարկադրեց սպարտացիներին
նրան կովի դաշտից (Փոքր Ասիայից) ետ կանչել: Պափսանիայը
ճեռու մեկազրկվեց դավաճանութեան նպատակով պարսկական թա-
գավորի հետ ունեցած կապի, անգամ իլլոտները ապստամբութեան
նորապատարաստելու մեջ, որի համար էլ գլխատվեց:

Աթենական ծովային նավատորմի աճող նշանակութիւնը
տարրից այն բանին, որ համահունչական նավատորմի և զորքերի
գեկաճարութիւնն անցավ Եթէնացիների ձեռքը: Այդ Աթենքի դեպի
Քեովմոնիայի անցման, արեւական ծովային դաշինքի ստեղծման
սկիզբն էր, որից հետագայում բարձրացավ Աթենական տերուրյու-
կը (արքե):

478 թ. պարսիկների դեմ պաշտպանական օպերացիայի նպա-
տակով հունական մի շարք քաղաքներ դաշինք կնքեցին: Դաշնա-
կիցների ժողովի տեղն ընտրվեց Գելոս կղզին, որա համար էլ
այդ դաշինքը կոչվեց Գելոսյան դաշինք (Գելոսյան սիմվալիա):

Այդ հունական պետութիւնների ֆեդերացիա էր, որի բոլոր
անդամները պարտավորվել էին դաշնակիցների նավատորմի սպա-
ստպիւնման համար մատակարարել որոշ թվով մարդիկ և նյութա-
կան միջոցներ: Համադաշնակցային գանձարանը գտնվում էր Գե-
լոս կղզու վրա Ապոլլոնի տաճարում: Հունական քաղաքների այդ
Գելոսացիայի մեջ բոլոր ունին միատեսակ իրավունքներ և բո-
լոր հարցերում հավասար ձայնի: Բայց իրատարին սկզբից ևեթ
այդ միութիւնում սկսեց վճակական դեր կատարել Աթենքը: Այդ
նպատակով ծովային հզորութեան արտահայտութիւնն էր, որոնց նա-
վատորմը այդ ժամանակ բաղկացած էր 300 արիերներից և այդ-
պիսով այն գերազանցում էր մյուս դաշնակիցների նավատորմին
միասին վերցրած:

Պարսիկների դեմ մղված պատերազմի ժամանակաշրջանում
Եթէնացիների դրսևորած տնտեսական, քաղաքական ու քաղաքա-
կան գերազանցութիւնը նրանց ձեռքը տվեց գերաշխանութիւնը
Գելոսյան միութիւնում: Իրադարձութիւնների հետագա ընթացքը
Գելոսյան միութիւնում իր հօգուտ Աթենքի: Աթենքն իր ծովային
ուժը կերպով փոխվում էր հօգուտ Աթենքի: Աթենքն իր ծովային
ուժը կերպով սկսեց ավարի և ստրուկների հափշտակման, Միջ-
երկրային ծովի արևելյան և արևմտյան երկրների հետ անդրծո-
ղային առևտրի ազդեցութեան ընդարձակման եռանդուն քաղաքակա-
ւութիւն վարել: Դաշնակիցների կողմից Գելոսյան գանձարանի
մուծումների ընդհանուր գումարը հասնում էր 360 ատտիկական
տաղանդի, որը Եթէնացիները բաշխում էին իրենց հայեցողու-
թեամբ գանազան նպատակների:

Այսպիսով Գելոսյան միութեան կազմակերպումով ամ-
բողջական Աթենքի միջազգային դրութիւնը և նրա ազդեցութիւնը

հունական պետությունների վրա: Քեմիստոկլեսի «Մովսիսի ծրագիրը» տվեց իր առաջին արդյունքները: Մովսիսն պարտիայի դեկավարը քաղաքականության մեջ հեռատես էր: Քեմիստոկլեսի անհրաժեշտ էր համարում Աթենքը որպես անկախ պետություն: Այն պետականորեն ամրացնել, քանի որ Սպարտայի հետ դաշինքը համարում էր ժամանակավոր: Իրա արդյունքն էր նավատորմի և տագա զարգացումը և Պիրոս նավահանգստի կառուցումը: Իր գործունեությամբ Քեմիստոկլեսը հենվում էր ստրկատիրական մոկրատիայի լայն շրջանների վրա: Ընդհակառակը, այդ քաղաքականությունը չէր համապատասխանում խոշոր հողատերերի շահերին, որոնք հակված էին դեպի Սպարտան ու իրենց հայրերին կարգերը: Հանձինս կոնսերվատորների պարտիայի, Քեմիստոկլեսի դեմ դուրս եկավ օպոզիցիան, որին պատկանում էին քաղաքացիական խոշոր հողատերերը: Քեմիստոկլեսի գործունեության շուրջը սրվեց պարտիաների պայքարը և բարձրացավ քաղաքական կամպանիա, որը վերջացավ ըստ օստրակիզմի: Քեմիստոկլեսի արաքստոսով 471 թ. մ. թ. ա.: Քեմիստոկլեսն ստիպված եղավ սկզբում փախչել Արգոն, հետո Փոքր Ասիա, որտեղ վերջացրեց իր կյանքը:

§

Աթենքի այդ ժամանակաշրջանի քաղաքական կյանքի ասպարեզ դուրս եկավ Մարաթոնի ճակատամարտում հաղթանակ տարած Միլտիադեսի որդի Կիմոնը: Կիմոնի արտաքին քաղաքականությունը Քեմիստոկլեսի քաղաքականությունից քիչ էր տարբերվում: Այն նույնպես խիստ կերպով հակապարսկական էր: Սակայն Սպարտայի նկատմամբ այդ քաղաքականությունը հակադիր էր Քեմիստոկլեսին, որովհետև Կիմոնը ձգտում էր հարթել Աթենքի Սպարտայի մրցակցությունը և այդպիսով ամրացնել նրանց միջխաղաղ հարաբերությունները: Կիմոնը մոռցնել էր պարսիկների դեմ հույների վարած սպառնալից ավարտմանը, նա մի քանի հաջող թանակներ էր շահել պարսիկների դեմ, որով և ամրապնդել աթենական սիմպիսիան: Ընդելով հունական այն պոլիսները, որոնք չէին ցանկանում ենթարկվել աթենական հեգեմոնիային: Կիմոնը պարսիկներին վռնդեց Թրակիական ծովափից, նա պարսիկների պարտության մատնեց Փոքր Ասիայի հարավային ծովափում Պարսիսի Սիլվիսիոսի և Կեոսի մոտ (468 թ.): Սիլվիսիոսի մոտ տարած հաղթանակը ճանապարհ բացեց հունական վաճառականների, գաղութական-ստրկավաճառների համար դեպի բոլոր կողմերը:

Կիմոնը եզեջան ծովի ափերը, որովհետև պարսիկները վերջնականապես ետ մղվեցին դեպի Փոքր Ասիա:

Աթենացիների ակտիվ քաղաքականությունը, նրանց եռանդուն գործունեությունը և, որ գլխավորն է, նրանց հեգեմոն դերը պետք է դժգոհություն առաջացնեին գելոսյան սիմպիսիայի մի քանի անգամների մեջ: Դելոսյան սիմպիսիայի կազմակերպումից մի առաջամեակ հետո՝ այդ դժգոհությունը մի քանի տեղ վերածվեց բացահայտ ապստամբության: Ամենից առաջ ապստամբություններ եղան Նակսոս և Թակսոս կղզիներում: Այդ ապստամբությունները Կիմոնը ճնշեց մեծ դժվարությամբ: Այնուհետև, ավելի ուշ, այդպիսի ապստամբություններ ծագեցին և այլ տեղերում և տեղի տեղիան նույնիսկ Պելոպոնեսյան պատերազմների ժամանակ:

Արտաքին քաղաքականության բնագավառում ունեցած հաջողությունների հետևանքով մյուս օտարախոսների համեմատությամբ Կիմոնը բարձրացավ և առաջ քաշվեց որպես գլխավոր առաջնորդ: Անտիկ պատմաբաններն իրականացրել են այդ գործընթացը: Պլուտարքոսը նկարագրելով Կիմոնի կյանքը, ուշադրություն է դարձրել այն քանի վրա, որ Կիմոնը ձգտել է շահել ժողովրդի աջակցությունը, իր վրա հրավիրել ընդհանուր ուշադրությունը: Ես փող է բաժանել, տոներ է սարքել, հասարակական կառույցումներ է կազմակերպել, իր կողմն է գրավել քաղաքացիների և օտարերկրացիների համակրանքը: Պլուտարքոսը Կիմոնի կյանքի նկարագրության մեջ նրան տալիս է հետևյալ դրույթը: «Նա հրամայում էր իր տանը ամեն օր պատրաստել ճաշ, թեպետ համեստ, բայց շատերին կերակրելու համար... Նրան ժիշտ ուղեկցում էին երկու կամ երեք լավ հագնված պատանիներ... Այդ նույն պատանիները, որոնց տրվում էր առատ մանր գրամ, հրապարակներում հանդիպելով վաշելու կարգի մարդկանց խորհրդից ելած աղքատների, կանգնում էին նրանց կողքին և լուռ ու մունջ նրանց ձեռքի մեջ դնում մի քանի կոպեկ»¹: Անտիկ ստրկատիրական պետությունների սոցիալական կյանքում հին գիմնագուների մեջ ժողովրդին դեպի իրենց կողմը դրավելու համար նման ձևերը եղակի չեն:

Մովսիսի դաշինքի նկատմամբ Կիմոնը վարել է վճռական քաղաքականություն: Նա ամրացրեց Աթենքը, բարձրացրեց նրա դիրքն առևտրի մեջ, բարձրացրեց նրա նշանակությունը միջհույն-

¹ Плутарх. Избранные биографии (Кимон), стр. 72. Изд. 1941.

նական հարաբերություններում: Այդ նույն Պատարբուն ասում է՝ «Աթենացիները չէին բաժանվում ծովից նրանք զինված էին, մայրում էին դաշնակիցների հաշվին և դարձան լավ ծովազնացիներ: Զինվորական ծառայությունից խուսափած դաշնակիցներն սկսեցին նրանցից վախենալ և քծնել նրանց: և այդպիսով աննկատ լիորեն նրանք դարձան աթենացիների հպատակներ ու սարույններ: Այդպես, Կիմոնը քաղեց իր նախորդի՝ Քեմիստոկլեսի՝ ծովային քաղաքականության պտուղները: Աթենքի համահունակն քաղաքականությունը հանգեցրեց Դելոսյան միությունում աթենական պետության իսկական գերիշխանությունը մյուս բոլորի վերաբերմամբ:

Բուռնովին ուրիշ, իր նախորդից տարբեր էր Կիմոնի ներքին քաղաքականությունը, որը կողմնորոշված էր դեպի սոցիալական այլ խավերը, քան Քեմիստոկլեսը: Կիմոնը պաշտպանում է արիստոկրատիայի շահերը, նրա համակրանքը հակված էր զեպոս Սպարտան և սպարտական կարգերը: Կիմոնի քաղաքականությունը բնութագրելիս պատմաբանները մեկ տեղում չեն որ նշել են նրա երկու հակադիր կողմերը՝ Աթենքի համահունակն քաղաքականությունը և սպարտական կարգերի, Սպարտայի կոնսերվատիվ մի, հետամնացության օրինակացիա:

Իսկ Սպարտան այդ ժամանակաշրջանում նույնպես համակերպով համահունակն քաղաքականության ղեկավարության էր ձգտում, բայց դրա համար նա չունի ոչ սոցիալական, ոչ քաղաքական նախադրյալներ: Սպարտայի հաճախ քայքայում էին հելոտների ապստամբությունները, որոնցից ամենաուժեղն էր 464 թ. մ. թ. ա. և հայտնի է որպես երրորդ մեասենական պատերազմ անունով: Սպարտան ստիպված նույնիսկ դիմել Աթենքի աջակցությանը և որը ստացավ: Կիմոնին իր ջոկատով գնաց Սպարտա հելոտներին ճնշելու: Համար Կիմոնի արշավանքը միանգամայն անհաջող է լինում: Բանն այն էր, որ Կիմոնի ջոկատի զինվորների համարանքը ստրկացված մեասենացիների կողմն էր, ուստի սպարտացիներն ստիպված եղան Կիմոնին իր ջոկատով ետ վերադարձնել: Այդ միջադեպը խայտառակ հետևանքներ թողեց ինչպես Սպարտայի, նույնպես և Աթենքի համար: Կիմոնի սպարտափրական քաղաքականության էվոլյուցիան նրան հասցրեց այն բանին, որ դրա համար նրան 461 թ. մ. թ. ա. ըստ օտարակից վարաքսեցիին Աթենքի Դրանից հետո աթենական քաղաքականության ղեկավարություն

գլուխը փաստորեն անցնում են էփիալտան ու Պերիկլեսը, որոնք աթենական ստրկատիրական դեմոկրատիան գարգացրին մինչև նրա ամենաբարձր գագաթը:

ԱՔԵՆՔԸ ՈՒ ՍՊԱՐՏԱՆ ՀՈՒՆԱ-ՊԱՐՍՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՅ
ՀԵՏՈ

Սպարտա ուղարկված Կիմոնի ջոկատի անհաջող միսիայի դեպքը սրեց Սպարտայի և Աթենքի հարաբերությունները: Քանի որ երկու հակառակորդների ուժերը ծագած հակասություններում մոտավորապես հավասար էին, դրա համար էլ բանը հասնում էր երկու պետությունների ռազմական ընդհարմանը: Սկզբում, Քեմիստոկլեսի մահից հետո սեղի ունեցած ճակատամարտում (457 թ. մ. թ. ա.) Աթենքը պարտություն կրեց: Սակայն շուտով այդ պարտությունից հետո Աթենքը կարողացավ ոտքի կանգնել և պարտության մասնել Սպարտայի հին գաշնակցին՝ էփիալտին և բեռլոտիական զորքերին: Այդ հաջողությունները չհարթեցին աթենացիների նախկին պարտության խայտառակությունը. ավելին, աթենական նավատորմը շուտով նոր անհաջողություններ կրեց: Հետագա, իրենց, ծավալով աննշան, իրադարձությունները շատ նոր բան մտցրին միջազգային իրադրության մեջ և անգամ ազդեցին ներքին քաղաքականության վրա:

Սգիպտոսում տեղական բնակչությունը ոտքի ելավ ընդդեմ Պարսկաստանի: Աթենացիները որոշեցին օգնել նրանց և այնտեղ ուղարկեցին իրենց նավատորմի լավագույն նավերը: 454 թ. մ. թ. ա. Նեղոսի դելտայում տեղի ունեցած ճակատամարտում հունական նավատորմը գրեթե ամբողջովին ոչնչացվեց: Հույներն ստիպված եղան նախազգուշական միջոցներ ձեռք առնել: Դաշնակցային գանձարանը Դելոսի տեղափոխեցին Աթենք: Այդ բանն առավել ևս բարձրացրեց Աթենքի նշանակությունը: Աթենական ծովային դաշինքն այժմ վերածվեց Աթենական ծովային տերություն, որովհետև գաշնակցային բոլոր միջոցների լիակատար տերն այժմ Աթենքը դարձավ: Կիմոնին թույլ տվին վերադառնալ սպարտից: Նա շուտով նշանակվեց հունական նավատորմի պետ: Էսկադրայի գլուխն անցած նա ուղևորվեց դեպի Կիպրոս: Մարտում ստացած վերքից մահը Կիմոնին խանդարեց ավարտել հունապարսկական պատերազմը: Զորահրամանատարի մահից հետո Կիպրոսի օպերացիան վերջացավ աթենացիների հաղթանակով և

պարսիկների վերջնական արտաքսումով: Այդ հաղթանակ տարին (449) համարվում է հունա-պարսկական պատերազմների վերջը:

Դրանից հետո սկսվեց խաղաղություն, որը պատմության մեջ հայտնի է «Կալիկյան խաղաղություն» անունով: Հաշտությունը կնքվեց պարսկական մայրաքաղաք Սուզում: Հունական հաղթանակի տրիումֆն արտահայտություն գտավ հաշտության պայմանագրի մեջ: Հույները հարկադրեցին պարսկական արքային հրաժարվել էգեյան ծովում, Հելլեպոնտոսում և Բոսֆորում հեզեմոնիայից և ստիպեցին նույնիսկ ճանաչել Փոքր Ասիայի քաղաքների անկախությունը: Ռազմական օպերացիաները էգեյան ծովում դադարեցին: Հույներն սկսեցին այդ ամբողջ ուլոններում իրենց տիրակալությունների վերականգնումը: Հետագայում, 445 թվ. մ. թ. ա. 30 տարով հաշտություն կնքվեց Սպարտայի և Աթենքի միջև: Խաղաղությունը վերականգնվեց ամբողջ արևելյան Միջերկրական ծովում: Այդ բոլորն ամրապնդեցին Աթենքի դիրքերը:

Այսպիսով հունա-պարսկական պատերազմների նշանակությունը այն է, որ հունական ստրկատիրական երիտասարդ ռեսպուբլիկաները կարողացան պաշտպանել իրենց ձեռնարկությունը Պարսկական էքսպանսիայի դեմ մղած պայքարում հույների ապահովեցին իրենց ինքնուրույն պատմական զարգացման հնարավորությունը: Դրանում մեծ դեր կատարեց Աթենական և Պելոպոնեսյան պետությունների միությունը: Նոր հունական պետությունն առաջացավ նույնիսկ Միջիլիայում: Այդ երեք քաղաքական օրգանիզմների ամրացումը, որոնց շուրջը համախմբվում էր այժմ հելլենական աշխարհը՝ այդպիսիքն ևն հունա-պարսկական պատերազմների կարևորագույն արդյունքները: Այդ պատերազմներում Պարսկաստանը չկարողացավ հաղթանակել այն պատճառով, որ նա գտնվում էր տնտեսական ավելի ցածր մակարդակի վրա: Նրա ստրկատիրական էկոնոմիկայի զարգացման աստիճանը անբավարար էր: Պարսկական միապետության մեջ մտնող ժողովուրդների մոտ նախնադարյան-համայնատիրական ուղեմեծները, իշխանության բռնապետական կազմակերպությունը, որը ստրկացրել էր այդ ժողովուրդներին, հին Հունաստանի աճող առաջավոր ստրկատիրական ռեսպուբլիկայի հետ հաջող պայքարի համար նախադրյալներ չստեղծեցին: Դրան պետք է ավելացնել նաև պարսկական տերության անկայունությունը, որը հետևանք էր այդ պետության ներսում հանապազուցական տեղի ունեցող ապստամբությունների: (Ապստամբությունը եզրապատում, շարժումները Փոքր Ասիայում և այլն): Քեպես հույները էությունա չկարողացան նախատեսել կերպով միավորել իրենց ժողովուրդներին, բայց անհավասարակշռությունը, սակայն պարսիկների հետ մղվող կատաղի կոնֆլիկտում հույներին հաջողվեց բարձրացնել իրենց ազդեցությունը նախապատեղիքով, սուղարվել ազատագրական պատերազմի և իրենց ազատության, իրենց օջախներին պաշտպանության խնդիրներով: Հին աշխարհի պատմարաններն ու պատմատուրգները իրենց կրկներում արտացոլել են հույների հերոսական պայքարը, երբ չարքանչյուր հույն, ելնելով պարսիկների դեմ, պաշտպանել է իր քաղաքները, իր հողը, ունեցվածքը և հայրենիքը: Հունա-պարսկական պատերազմների նշանակությունը Աթենքի զարգացման գործում հսկայական է: Մասնավորապես հունա-պարսկական պատերազմում հույների տարած հաղթանակն Աթենքին ընձեռնեց անտեսական մեծան և ստրկատիրական դեմոկրատիայի ծաղկման հնարավորություն:

Ստրկատիրական դեմոկրատիայի զարգացումն անսովորական պետք է նկատի ունենալ անտիկ էկոնոմիկայում ստրկության ծախվածան նշանակությունը: Այդ ժամանակվա պայմաններում ստրկության հետագա զարգացումը մեծ քայլ է եղել դեպի առաջ: Այսպիսին ևն եղել հունա-պարսկական պատերազմների հիմնական սոցիալ-տնտեսական հետևանքները:

Ստրկատիրական դեմոկրատիայի զարգացումն անսովորական պետք է նկատի ունենալ անտիկ էկոնոմիկայում ստրկության ծախվածան նշանակությունը: Այդ ժամանակվա պայմաններում ստրկության հետագա զարգացումը մեծ քայլ է եղել դեպի առաջ: Այսպիսին ևն եղել հունա-պարսկական պատերազմների հիմնական սոցիալ-տնտեսական հետևանքները:

287

ՍՏՐՎԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՄՈՎՐԱՏԻԱՆ ՊԵՐԻԿԼԵՍԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԵԼՈՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԱՔՆԵԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ինչո՞ւյն սիմախիայի դանձարանը Դելոս կղզուց Աթենք տեղափոխելուց հետո ինքը Դելոսյան սիմախիան այժմ վերածվեց Աթենական տերություն (արխե)։ Դաշնակիցների մուծումներն այժմ հասում էին զեպի Աթենք։ Աթենքն ինքնուրույն կերպով, իր հայեցողությամբ, տնօրինում էր դաշնակիցների այդ գաղձարանի բոլոր մուտքերը։ Դաշնակիցների առավել կարևորագույն գործերի քննադատները նույնպես կատարվում էր Աթենքում։ Դեռ ավելին, Աթենքը շնորհիվ միությունում ունեցած իր դիրքի, ինքն է այժմ ստեղծում նաև իր դաշնակիցներից ընդհանուր գանձարանը մուտքերի լավելուց։ Բացի դաշնակցային գանձարանը մուտք արվող մըշտական վճարումներից, միություն բոլոր անդամները պարտավոր էին վճարել սահն տեսակի տուրքեր, մուծել դատական ծախսեր, պանել-կերակրել աթենական կայազորները, վարձատրել աթենական աստիճանավորներին և այլն։ Աթենական տերության գանձարանը տեղափոխված էր քաղաքի Աթենա դիցուհու տաճարում՝ ակրոպոլիսում։ Այդ գանձարանը վարում էին հատուկ գանձապետներ։

Աթենական տերությունն ընդգրկում էր 200 տարրեր մեծությամբ քաղաք-պետություններ։ Պերիկլեսի օրոք այն հասավ իր հզորության գագաթնակետին։ Աթենքի զինված ուժերը կազմված էին մեծ նավատորմից, որի մեջ մանող նավերի թիվը հասնում էր մինչև 400 արիերի, ինչպես և ցամաքային բանակից, որի մեջ հաշվվում էր մուտավորապես 30 հազար մարդ։ Հունական մյուս պետությունների սպառազինությունների հետ համեմատած դա մի

անեղ ուժ էր։ Զինվորական ծառայությունն Աթենքում կիրառվում էր շատ խիստ կերպով։ Աթենացիների զինապարտությունն ամբողջովում էր սրբազան երգումով։ Աթենքի 18—60 տարեկան բոլոր քաղաքացիները մտնում էին քաղաքացի-ազգմիկների աշխարհազորի մեջ։ Ռազմական դերազանցությունը Աթենքի նամար գաշնակիցների նկատմամբ նրա հեգեմոնիայի և էպեյան ծովի բոլոր կետերում առևտրի մենաշնորհի պլուսավոր սլայմանն է եղել։ Աթենացիներն սկսել էին «արտակարգ բնություն» վերաբերվել զեպի դաշնակիցները՝ եզրակացնում է Արիստոտելը։

Դաշնակիցների նկատմամբ աթենացիների հարկային ճնշման ուժեղացումը եղավ այն պատճառներից մեկը, որը դաշնակիցների մեջ դժգոհություն առաջ բերեց զեպի իրենց բնապետը։ Դժգոհությունները Քուկիդիկեսի վկայությամբ արտահայտվել են տարրեր ձեռքով, դրանցից ամենակարևորներն էին՝ հարկ չվճարելը, որի հետևանքով անցին ապստղները, հապաղեցին նավերի մատակարարումը և զինվորական զանազան պարհակներից խուսափելը։ Բանը հասավ մինչև աթենական տերության գեմ սպառնալիցներ։ Դժգոհությունները երբեմն հանգեցնում էին գաշնակից բուրքների միությունից դուրս գալուն։

Աթենական մեծապետության գեմ ուղղված մեկ հայտնի ամենախոշոր ապստամբություններից է եղել Սամոս կղզու ապստամբությունը՝ 440 թ. մ. թ. ա.։ Այդ ապստամբությունը լայն ծավալ է հեղունել և վեր է ածվել իսկական պատերազմի։ Սկզբում, Սամոսը հանդարտեցնելու աթենական նավատորմի ժողովրդի փորձը անպաշտելի։ Այդ ժամանակ հարկադրված եղավ Սամոսի գեմ գուրս գալ Աթենքի պլուսավոր ստրատեգ Պերիկլեսը։ Միայն Աթենքի կողմից ձեռք առնված մի շարք վճարական միջոցառումներից հետո հնարավոր եղավ հանդարտեցնել անհնազանդ դաշնակիցին։ Սամոսի պլուսավոր քաղաքը վերցվեց կալով, պարտավածների նկատմամբ վարվեցին դաժանորեն։ Սամոսը պետք է վճարեր կոնտրիբյուցիա, ավերեր բերդի պատերը և հանձներ իր ամբողջ նավատորմը։ Հենց այդպիսի դատաստանի էլ արժանացավ Բյուզանդիոն քաղաքը, որը փորձել էր դուրս գալ ընդդեմ աթենական հեգեմոնիայի։

Ապստամբ դաշնակիցների նկատմամբ այդպիսի դաժան դատաստանը ցույց է տալիս, թե ինչպես է բարձրացած ծավալին տեղությունը՝ Աթենքը վերաբերվել էպեյան ծովի ավազանի յուրաքանչյուր անհնազանդ դաշնակիցին։ Աթենացիներն իրենք նամարում էին որպես արգելափակոց ընդդեմ «բարբարոսների» շար-

ժողովների (ուչ հուլյաների), որպես հունական ժողովրդների խակական կառավարողների, որա համար էլ նրանք քաճահաճորեն էին անօրինում արխիեպիսկոպոսները: Աթենական քաղաքացիներին արխիեպոսական միջոցներից տալիս էին փշրանքներ առանձին նպատակների ձևով, ձրի ճաշ, դրամ՝ թատրոնի տոմս գնելու համար և այլն:

Պլուտարքոսը Պերիկլեսի կենսագրության մեջ վկայում է այն մասին, որ ամբողջ այդ քաղաքականության մեջ ժողովուրդը միշտ պաշտպանել է աթենական կառավարիչներին: Աթենացիներն իրավունք էին տվել Պերիկլեսին քաղաքներից տուրք վերցնել, կցել նոր քաղաքներ, մի մասին զրկել ազատությունից, մյուսին քաճահաճորեն պարզևատրել, թուլատրել նրանց անցկացնել քարե պարիսպներ, որպեսզի դրանք հետագայում կործանել. խախտել հաշտության պայմանագրերը, մեծացնել պետական դանձարանը և հարստացնել քաղաքացիներին:

Աթենքն աճավոր ուժ էր ներկայացնում և իրենք, աթենացիներն այդ ուժն ուրիշ ժողովուրդների նկատմամբ ցույց տալուց չէին խուսափում: Հայտնի է, որ Պերիկլեսը 437 թվին կազմակերպեց արշավանք դեպի Սև ծովը, որի նպատակն էր ցուցադրել «աթենացիների խիզախությունը և անվհեհրությունը, որ նրանք կարող են ազատ լողալ բոլոր ծովերով, իրենց համարելով ծովերի տիրակալներ»: Հիրավի, հունա-պարսկական պատերազմներից հետո ամբողջ արևելյան Միջերկրական ծովում չկար նրա ուժին և հզորությանը հավասար մի երկիր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԱԹԵՆՔՈՒՄ

Պարսիկների հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո Աթենքի ներսում նորից եռաց քաղաքական կրքոտ պայքարը: Աթենքի այդ ժամանակվա քաղաքական կյանքում ասպարեզ դուրս եկան երկու պարտիաներ՝ արիստոկրատական և դեմոկրատական: Կիմոնի մահից հետո առաջին պարտիայի գլուխն էր անցել Քուկիդիդեսը (սրան չպետք է շփոթել պատմաբան Քուկիդիդիդեսի հետ): Քուկիդիդեսը ձգտում էր միավորել Աթենքի բոլոր պահպանողական ուժերը և նրանցից կազմել Աթենքը կառավարող Պերիկլեսի ղեկի ղեկ մի ուժեղ օպոզիցիա:

Քուկիդիդեսը, Պլուտարքոսի վկայությամբ, եղել է Պերիկլեսի ուժեղ և ականավոր հակառակորդը. Պլուտարքոսի բնութագրումից կարելի է եզրակացնել, որ Քուկիդիդեսը՝ Պերիկլեսի այդ գլխավոր

հակառակորդը եղել է արտասովոր, կազմակերպական մեծ ընդունակությունների տեր մարդ: Նա կարողացավ դիմադրել դեմոկրատական պարտիային, գլխավորել արիստոկրատիայի պարտիային հակադիր ուղղությունը և ձևակերպել նրա պահպանողական ձրությունները: «Հուստորական տրիբունի վրա, — ասում է Պլուտարքոսը, — Քուկիդիդեսը հավասարակշռություն էր ստեղծում պարտիաների միջև»: Եվ եթե այդ պայքարն ավարտվեց Քուկիդիդեսի պարտությամբ, ապա այդ բացատրվում է գլխավորապես նրանով, որ Քուկիդիդեսը չէր ընդունում այն պատմական ուժերը, որոնք ուղղություն էին տալիս ստրկատիրական դեմոկրատիայի լայն սպյալական բազայի ստեղծման գծով աթենական հասարակության զարգացմանը: Քուկիդիդեսը հրապուրվում էր հին պապենական կարգերի վերածնունդն ուստպիական նպատակներով, ստրկատիրական դեմոկրատիայի թշնամի էլեմենտների միավորմամբ: Այս բոլորը կանխորոշեցին Քուկիդիդեսի գլխավորած պահպանողական շարժումների բախտը:

Պերիկլեսի գլխավորած դեմոկրատական պարտիան ուներ հակադիր ծրագիր: Պերիկլեսը և դեմոկրատական պարտիան պրնցում էին Աթենքի ծովային ուժերի զարգացումը, իրենց երկրի սազմական և ստեղծական հզորացումը: Պերիկլեսն այդ ծրագիրը կարող էր իրականացնել պահպանողականների ղեկ մղած պայքարով և դեմոկրատական ուժերի վրա հենվելով: Ահա թե ինչու Պերիկլեսը և դեմոկրատական պարտիան իրենց առաջ խնդիր դրին՝ լայնացնել ժողովրդի իրավունքները, ավելացնել ստրկատիրական պետության սոցիալական բազիսը և ժողովրդին ներգրավել երկրի կառավարման մեջ: Աթենական հասարակության պահպանողական ուժերի ղեկ Պերիկլեսը պայքար էր տանում իր միակ համախոհ էփիլալեսի հետ միասին, որի գործունեությանը շատ բանում փայլ էր տալիս Պերիկլեսի քաղաքականությունը: Ըստ կուլյան էփիլալեսը ճանապարհ հարթեց Պերիկլեսի համար և ապահովեց նրա հաղթանակը:

Արիստոտելի գնահատմամբ էփիլալեսը պետական գործերում եղել է անկաշառ և արզարացի մարդ, որը այդ ժամանակվա համար անսովոր բան էր: Էփիլալեսը դեմոկրատիայի զարգացման գլխավոր արգելալից համարում էր արևոպագոսը, որը պետական հիմնարկների, օրենքների և քաղաքացիների միջև կարգ ու կանոնի վերահսկիչն էր: Արևոպագոսը եղել է բոլոր պահպանողական ուժերի ձրություն կենտրոնը. այն կազմված է եղել արիստոկրատ

տական ներկայացուցիչներին, որոնք իրենց առաջ խնդիր էին կրել պահպանել հին կարգերը:

Ստրուկատիրերն ինչպիսի էին սպարտայում ստրուկների փախուստի դեմ: Բացի գիվանագիտական կարգի սիջոցներից, ստրուկների փախուստը կանխելը և փոխած կամ ապստամբում ստրուկների դեմ պայքարելու գործում սերիջ միջոցներ էլ էին կիրառվում: Պետության ներսում, սրտեց շատ հաճախ էին տեղի տնկնում ստրուկների փախուստներ, փախած ստրուկների նշանաբերման գործը զրկված էր հարկ եկամտ բարձրության վրա: Անտիկ ազդյուններում հետաքրքիր տեղեկություններ կան փախած ստրուկների հետախուզության կազմակերպման մասին: Բացի րազաթի տեղական ադմինիստրացիայից, որը ներգրավվում էր հետախուզության գործում, կային նաև հետախուզիչների մասնավոր գրասենյակներ, որոնք ընդունում էին փախած ստրուկներ արհեստագործների վերաբերյալ բերում է հետևյալ նետաքրքիր սրինակը «...ասիր Գրոգոր, եթե թա ստրուկներից մեկն ու մեկը փախչի, դու միջոցներ ձեռք կառնես նրան և առ թեթևա: Երգվում են Ձևսով, որ սերիջներն էլ են խնդրում, սպարտայից լով, թե դրա համար կպարգևատրեմ: 2 շիկնական գործը շարունակում

1 Ф у к и д и д. IV, 118, 7.
2 Ф у к и д и д. IV, 23, 3.

յուրաքանչյուր բռնած ստրուկի համար վարձատրութիւնը հաս-
նում էր երեք պղնձյա տաղանդի:

Եթե ստրկատերերը ունեին հետախուզական լավ կազմակեր-
պութիւն փախստականներին որսալու համար, ապա փախստա-
կան ստրուկները որեւէ տեղ թաքնվելու հնարավորութիւնից զուրկ
էին: Ամեն տեղ նրանց սպառնում էր նախկին տերերին հանձնելու
Փախստականների միակ ժամանակավոր ապաստարանները հին
Հունաստանում եղել են տաճարները: Ստրուկի ապաստարանի
(ասիլիայի) իրավունքը հույների մոտ ձեւակերպված էր հետևյալ
ժողովրդական թեզիսում. «Գաղանն իր ապաստանն է գտնում
ժայռերի մեջ, ստրուկն՝ աստվածների զոհասեղանի վրա»: Բայց
միայն մի քանի տաճարներ իրավունք ունեին տեղ տալ փախստա-
կան ստրուկներին: Այդպիսիք էին Թեսեսի տաճարը Աթենքում,
Ապոլոնիինը՝ Դելֆիում, Հորդինայինը՝ Կրետեում և մի շարք
ուրիշներ: Ապաստարան գտած ստրուկին տաճարից բռնութեամբ
չէր կարելի ետ վերցնել, բայց սովը կամ քուրմի իշխանութիւնը
տաճարում դատաստան էին տեսնում ստրուկի հետ: Սովի պատ-
ճառով տաճարից հեռացած ստրուկին հեշտութեամբ որսում և
հանձնում էին նախկին տիրոջը: Վերջապես, տաճարի քուրմը առ-
հասարակ իրավունք ուներ կարգադրելու փախստականի ճակատ-
ագիրը՝ կարող էր նրան հանձնել տիրոջը, հրամայել ծախել նրան
նոր տիրոջ կամ պարզապես դուրս վտարել տաճարից և նրան
դնել իր նախկին տիրոջ մոտ ընկնելու սպառնալիքի տակ: Միայն
Հորտինական դատաստանագրքում (Կրետեում) կային սահմա-
նումներ, որոնք կարգավորում էին տաճարում գտնվող ստրուկի
եթե ոչ իրավունքները, ապա համենայն դեպս ձեւականորեն սահ-
մանափակում էին քուրմի կամայականութիւնները փախստա-
կան ստրուկների նկատմամբ:

Թեպետ ստրուկների պայքարի պասսիվ ձևերը բնորոշվում
էին փախուստով, սակայն դրանք մեծ նշանակութիւն են ունեցել
հին Հունաստանում դասակարգային պայքարի զարգացման գոր-
ծում: Դրանք պայքարել են ստրուկների տնտեսութիւնը, կազ-
մալուծել են ստրկատիրական համայնքի քաղաքական կյանքը,
իսկ պատերազմի ժամանակ այդ, այն էլ մասսայական բնութի
կրող փախուստները, սպառնացել են ստրկատիրական պետութեան
ամբողջ գոյութեանը: Այդ բանը լավ հայտնի է հատկապես Սպար-
տայի պատմութիւնից: Պատերազմի ժամանակ փախած ստրուկ-
ները հաճախ կազմել են քաղաքներ, նույնիսկ ամբողջ գաղութներ:

Այսպես, օրինակ, ըստ ավանդութեան Տարնետ քաղաքը կազմա-
վորել են Սպարտայից փախած հելոտները, իսկ էթես քաղաքը
Սամոս կղզուց փախած ստրուկները:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԱՊՍԱՄԲՐՈՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՒՈՒՅԹԸ

Իրենց ճնշողների դեմ ստրուկների պասսիվ, խուլ պայքարի
ձևերից բացահայտ պայքարին անցնելը բնորոշվում է ստրուկների
քացարձակ ապստամբութիւններով, որը, անկասկած, հանդիսա-
նում է շահագործողների դեմ պայքարի առավել գործնական ձև:
Ապստամբութիւններն սկսվեցին այնտեղ, ուր ստրուկների մեծ
կուտակում կար, ուր քաղաք-պետութիւնների տնտեսութեան մեջ
աշխատում էին մեծ քանակութեամբ ստրուկներ, քան ազատներ,
որտեղ ստրուկների միջև կար սերտ կապ: Այդպիսի քաղաք-պե-
տութիւններից էին Արգոսը, Մեգարան, Տիրինթը, Սպարտան,
Քիոս կղզին, Սիցիլիայի քաղաքները և այլն:

Հունաստանում ստրուկների ամենավաղ ելույթներից մեկը,
ձերոզոտի վկայութեամբ, եղել է Արգոսում 494 թ. մ. թ. ա. տեղի
ունեցած ապստամբութիւնը: Չնայած այդ ապստամբութեան վե-
րաբերյալ ձերոզոտի վկայութիւնը միակն է, այնուամենայնիվ այն
մեծ նշանակութիւն ունի Արգոսում տեղի ունեցած սոցիալական
պայքարն ուսումնասիրելու համար: Անտիկ աշխարհի տրադիցիան
մեզ տանում է դեպի Արգոսն ու սոցիալական պայքարի հետագա
ժամանակաշրջանը: 494 թ. արգոսական զորքերը Սպարտայից
պարտութիւն կրեցին: Օգտագործելով այդ հանգամանքը, ստրուկ-
ները դրավեցին դատարկված քաղաքը և այնտեղ կազմակերպեցին
իրենց կառավարութիւնը: «Արգոսն այն աստիճան ամայացավ,—
գրում է ձերոզոտը,—որ նրա ամբողջ գործերն անցան ստրուկների
իրավասութեան տակ. նրանք կառավարում և կարգադրութիւններ
էին անում, քանի դեռ չէին հասունացել զոհվածների որդիները:
Որք վերջիններս մեծացան, ստրուկներին արտաքսեցին և նորից
Արգոսի կառավարման գործը իրենց ձեռքը վերցրին: Արտաքսվե-
լուց հետո ստրուկները կռվով գրավեցին Տիրինթը. Սկզբում
ստրուկների և տերերի միջև համերաշխութիւն կար, բայց հետո
ստրուկներին հարեց ոմն գուշակող Կլեանդը՝ ծագումով Ֆիգի-
լիայից (գտնվում է Արկադիայում): Նա ստրուկներին համոզեց
հարձակվել տերերի վրա: Այստեղից նրանց մեջ ծագեց բավական

երկարաակ պատերազմ, որից միայն դժխարութեամբ հաղթանակը
զուրս եկան արգոսացիները¹։

Արգոսը եղել է Հունաստանի ստրկատիրական հին և զարգա-
ցած քաղաքներից մեկը։ Այդ քաղաքում հետագա ժամանակ
պատմության մեջ էլ սոցիալական պայքարը միշտ լարված է եղել։
Այդ ցույց է տալիս այսպես կոչված «սկիտալիսմոս»-ը, որը տե-
ղի է ունեցել ուշ՝ 371 թ. մ. թ. ա.։ «Սկիտալիսմոս» տեղով սովոր-
աբար հասկացվում է Արգոսի բնակչության ստորին խավերը
ապստամբությունն ընդդեմ ավաղանիների, օլիգարխիական պար-
տիայի և նրա առաջնորդների։

Այդ եղել է Քերեսի բարձրացման, Սպարտայի դեմ ելա-
միտնողուսի հաջող կամպանիայի և Պելոպոնեսյան միության կազ-
մալուծման ժամանակ։ Ենթահիվ էլ պամինոնզոսի հաջողություննե-
րի, որը պարտության մատնեց արխտոկրատական պարտիային,
հաջողվեց վճռել Սպարտայի համախոհներին և դեմոկրատական
կարգեր սահմանել Պելոպոնեսյան միության շատ քաղաքներում։
Դեմոկրատների ապստամբությունն տեղի ունեցավ նաև Կորնթո-
սում։ Ապստամբության փորձեր կղան նաև հարևան Ֆլիունտում։
Բայց իր թափով և ինտենսիվությամբ ամենաուժեղ սոցիալական
պայքարը Արգոսի «սկիտալիսմոսն» էր։

Այն ժամանակ Արգոսում կառավարում էին դեմոկրատները,
ժողովուրդը կասկածում էր, որ Արգոսի ավաղանիների օլիգարխիա-
կան պարտիան պատրաստում է պետական հեղաշրջում։ Սկսվեցին
օլիգարխիաների և նրանց հետ կապված տարրերի դաժան հետապն-
դումներ։ Պրա հետևանքով կարճ ժամանակվա ընթացքում մահա-
կի հարվածներով սպանվեց 1200 մարդ։ Պատմաբան Դիոդորոսը
հաղորդման համաձայն ամբողջ Հունաստանը հետևում էր դասա-
կարգային պայքարի այդ արյունալի իրադարձություններին։

Հետաքրքրական է Դիոդորոսի հաղորդած մի դեպք. տարած-
ված մատնությունների հետևանքով Արգոսի կառավարությունը
հաջածանցի էր ենթարկում ոչ միայն բոլոր անբարեհույս էլե-
մենտներին, այլև ոչ մի բանում մեղք չունեցողներին։ Մահապատ-
ժի էին ենթարկում առանց դատարանի և հետաքննության, ըստ
որում այդ այնքան մասսայական բնույթ էր կրում, որ Արգոսի
դեմոկրատական կառավարությունն անկամ վախեցավ այդ իրա-
դարձությունների ծավալից։ Համողվելով, որ մի շարք մասնու-

թյուններ անարգարացի են, կառավարությունը որոշեց ժողովուրդի
ճշմաններից ամբաստանվածներին պատշպանել, բայց ժողովուրդը
այդ մասին չէր էլ ուզում լսել։ Ժողովուրդն այս անգամ սկսեց
կասկածի ենթարկել հենց կառավարությանն իրեն, որը ժողովրդին
սուրի էր հանել ընդդեմ օլիգարխիայի. բոլոր կառավարողներին
սպանեցին։

Վերջացնելով այդ իրադարձության պատմությունը, Դիոդորոսը
շարախնդրեն ասում է, որ վրա հասավ դեմոկրատներից իրենց
կատարած պատիժների համար վրեժ լուծելու ժամանակը։

Սիցիլիայի հունական քաղաքներում ստրուկների ապստամ-
բության մասին մեզ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում
Պոլիենը։ Վերջինս, պատմելով Կորնթոսի դեմ Սելինուսա քաղաքի
(Սիցիլիայում) պայքարի մասին, կանգ է առնում 486—484 թ.
մ. թ. ա. տեղի ունեցած հետաքրքրական մի դեպքի վրա։ Զսնված
շատ սելինուսացիներ պատերազմից հետո մնացին առանց
իսկանի։ Այդ ժամանակ կրտսեր հրամանատարներից մեկը, Կիրոն
անունով, առաջարկեց տալ իրեն 300 փայտահատ ստրուկներ, որ-
պեսզի խարույկ պատրաստի զոհված ռազմիկների դիակները հր-
կիզելու համար։ Սելինուսացիները համաձայնվում են։ Ֆիրմեր
վերցնում է իրեն անհրաժեշտ ստրուկներին, զուրս գալիս քաղա-
քից և նրանց համոզում է ուշ երեկոյան հարձակվել քաղաքի վրա
և վերցնել այն։ «Ֆիրոնը,—ասում է Պոլիենը,—իրեն հետ վերցնե-
լով երիտասարդ և ուժեղ ստրուկներ, նրանց տալիս է անհրաժեշտ
զենքեր, զրավում է քաղաքը և դառնում սելինուսացիների տե-
րանը»։ Գժքախտարար, այդ փաստի մասին առավել մանրամասն
ճեղհնակավոր տեղեկություններ, քան Պոլիենինը, չկա, բայց
զրանք էլ շատ հետաքրքիր են, որովհետև տալիս են Սիցիլիայի
ստրուկների ապստամբության դեպքերից մեկի մասին տեղեկու-
թյուն։ Խոսելով Սիցիլիայի քաղաքներում տեղի ունեցած դասա-
կարգային պայքարի մասին, չի կարելի չհիշատակել նաև Սո-
փոսրատեսի զեկավարությամբ Սիրակուզայի ստրուկների նշա-
նավոր ապստամբությունը, 414 թ. մ. թ. ա. այդ ապստամբու-
թյան, ինչպես և զրանից շատ անաչ սոցիալական լարված
իրադարձության մասին, միաժամանակ տեղեկացնում են և՛ Պոլիե-
նը, և՛ Թուկիդիդեսը²։ Սոփոսրատեսի պլանավորած ստրուկների

¹ Геродот, т. II, VI, 82—84, стр. 101. Изд 1888.

² Полиен, Стратегемы I, 28.
См. Фукидид. IV, 58—65. Полиен, I, 48.

ապստամբութիւնը եղել է շատ նշանակալից, և սիրակուզական գորավարներից մեկը՝ Հերմոկրատը անգոր է եղել որևէ կերպ ճնշել այդ խռովութիւնը: Այդ ժամանակ Հերմոկրատը դիմում է խորամանկութեան, ստրուկների առաջնորդ Սոսիստրատեսի մոտ է ուղարկում իր համախոհին, որը կազմալուծում է ստրուկների համբարը: Դրա հետևանքով ապստամբութեան մոտավորապես 20 կազմակերպիչներ մատնվեցին, մյուսները բռնվեցին և միայն 300 ստրուկներ փախան աթենացիների կողմը, որոնք Սիրակուզան այդ ժամանակ պաշարել էին: 414 թ. մ. թ. ա. այդ ապստամբութիւնը հետաքրքիր է նրանով, որ այն տեղի է ունեցել Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ, երբ ստրուկներին ամենից հեշտ է եղել ընտրել մոմենտ իրենց կեղեքիչների դեմ մասսայական ելույթ ունենալու համար: Հետաքրքրական է նաև ստրուկների, որպէս պայքարի ձև, թշնամու կողմը փախչելու փաստը:

Թուն Հունաստանում ստրուկները ելույթները ամենից հաճախ կրկնվել են Սպարտայում, այդ որոշ շափով բացատրվում է նրանով, որ այնտեղ ստրկացման մեջ էին գտնվում հելոտների հպատակեցված բնակչության հսկայական մասսաներ, որոնք միշտ պատրաստ էին ապստամբելու իրենց այն անկախութիւնը վերականգնելու համար, որպիսին նրանք ունեին Մեսսենիան Սպարտայի կողմից հպատակեցնելուց առաջ: Հելոտները, —ասում է Արիստոտելը, — սպարտացիների դեմ խռովութիւններ էին կազմակերպում: Նրանք մշտապես պատրաստ էին և սպասում էին սպարտացիների որևէ անհաջողութեան, որպէսզի հարձակվեն նրանց վրա¹: Սպարտացիների և հելոտների միջև տեղի ունեցած սպիտակական լարված պայքարի մասին շատ հետաքրքիր տեղեկութիւններ են հաղորդում Թուկիդիդեսը, Քսենոֆոնը, Պլուտարքոսը և ուրիշները: Թուկիդիդեսի մոտ մենք հանդիպում ենք սպարտացիների դրութեան այսպիսի բնութագրմանը՝ «Նրանք զգացել էին բազմաթիվ հելոտների մոլեգնութեան սարսափը և միշտ էլ միտք պատրաստվում էին, որպէսզի յուրաքանչյուր պահ ելնեն ճնշել հելոտների ապստամբութեան հաճախ ծագող բռնկումները»²:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում Սպարտայում տեղի ունեցած ապստամբութիւններից մեր կարողութեամբ բերկուսը: Առաջինը 464 թվին մ. թ. ա., որը սովորաբար կոչվում է Մեսսենյան երրորդ պատերազմ:

Այս ապստամբութիւնը տեղի է մտա տաս տարի: Մեծ ջանքերից հետո Իտոմա լեռը զրաւվել է, հելոտները ջախջախվել են: Շատ մեսսենացիներ փախան. իրենց հայրենիքից հեռացածները բնակութիւն հաստատեցին աթենացիների կողմից նրանց տրամադրված Նավպակտ քաղաքում:

Որպէսզի վերջացնենք Սպարտայի ստրուկների ելույթների բնութագրութիւնը, կանգ առնենք հելոտների 425 թվի մ. թ. ա. մեկ ապստամբութեան վրա, որը տեղի է ունեցել Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ: Աթենական նավատորմի արշավունքը Դեմոսթենեսի ղլխավորութեամբ մոտենում է Պելոպոնեսի արևմտյան ափին գտնվող Պիլոս նավահանգստին: Այդ խմբաբազմ հելոտները սրոշում են հեռանալ Սպարտայից, բարձրացնում են ապստամբութիւն և անգամ իրենց ծառայութիւնն են ստաջարկում աթենացիներին: Հելոտներն ամաչացնում են ատվելու մարզերը, նորից ամբանում են Իտոմա սարի վրա և պատրաստվում միանալ աթենացիներին սպարտացիների դեմ մղվող պայքարում³: Կարող է պատահել, որ հելոտների այս ելույթն էր, որ վճռական դործոն գործավ այդ կամպանիայում աթենացիների հաղթութեան համար:

Հունաստանի պատմութիւնը մեզ բավական օրինակներ է տալիս ստրուկների և շրջավորութեան, կեղեքվողների ընդհանուր մասսայի համատեղ պայքարի վերաբերյալ: Այսպես, V դարում մ. թ. ա. Պլատոնյա քաղաքի պայքարող քաղաքական պարտիաները պայքարի մեջ ներդրակցեցին նաև ստրուկներին: Դիոգոր սիցիլիացու հաղորդումներից մենք իմանում ենք, որ այդ քաղաքի ստրուկները ապստամբել են դեմոկրատների հետ միասին և նրանց հետ Աթենք փախել սպարտացիների հետապնդումից: Այդպիսի երկվայթ էլ նկատում ենք նաև Կորկիրիա կղզու վրա 427 թ. մ. թ. ա. իրադարձութիւնների ժամանակ: Այդ ժամանակ այնտեղ տեղի էր անկնում կռիվ, երկու կողմերը, և արիստոկրատները և դեմոկրատները, սուբհանդակ են ուղարկում շրջակա դաշտերը, սրպէսզի, խոստանալով աղատութիւն, իրենց կողմը գրավեն ստրուկներին. դեմոկրատական պարտիային են հարում ստրուկների մեծ մասը:

Հունաստանի պատմութիւնից հայտնի է, որ ստրուկների գեղ պայքարը ստրկատերերից շատ ուժեր է խլել և նրանց պահել է միշտ լարված վիճակում: Ապստամբութիւնները կանխելու բազմազան միջոցներ են գործադրվել: Պլատոնը իր «Օրենքներում»

¹ Аристотел. Политика II, 6.
² Фукидид. VI, 80, 3.

³ См. Фукидид. IV, 56, 2., 41, 1—4.

խորհուրդ է տալիս միևնույն ազգից ստրուկներ շունենալ, բնարավորության դեպքում պահել տարբեր լեզուներով խոստրուկներ, որպեսզի նրանք չկարողանան միմյանց հետ համաձայնվել և Գալստամբել, բայց ոչ մի արգելք չկարողացավ կիրառել դասակարգային պայքարի զարգացումը. ստրուկների մշական ապստամբությունները առելով լիարժեք լին էին դեպի մեշուրք և պատրաստել էին, ինչպես հաղորդում է Քսենոփոնը, հելոսներ վերաբերմամբ, Վուրախուժյամբ խժռելու սպարտացիներին ներակ հում-հում» եթե միայն դրա առիթը լինի:

Ստրուկների այդ առելությունը չէին թաքցնում նաև մեշուրքները, որոնք Պլատոնի բերանով հայտարարում էին, որ ստրուկները այդ այնպիսի սեփականություն է, որին տիրանալը, անախորժություններ է պատճառում. «Ձե որ ստրուկները երբ բարեկամ չեն լինի իրենց տերերին» Դրա համար էլ ստրուկների պետությունը մշակեց մեշուրքների խոստամբություններ համ միջոցառումների մի ամբողջ սխտեմ:

«Հարուստներ և շքավորներ, շահագործողներ և շահագործողներ, լիիրավներ և իրավազուրկներ, դասակարգային դատ պայքար նրանց միջև,—այս է ստրուկատիրական չկարողների պակերը»¹:

Սկսած արիստոկրատական հասարակության և դասակարգային պետության առաջացումից անտիկ փոլիտոփանների և քաղաքացիների ուշադրությունը սխտեմատիկաբար դարձավ տարբեր դասակարգների սոցիալական ընդհարումների փաստի ուսումնասիրության վրա: Իր «Պոլիտիկա» տրակտատում Արիստոտելը զանազան ապստամբություններին և սոցիալական շարժումներին մի ամբողջ գիրք (հինգերորդ) է նվիրել: Սոցիալական պայքարի փաստերն իրենց արտացոլումն են գտել քաղաքական տարբեր թեորիաներում (Պլատոն, Արիստոտել և այլն) ըստ որում, ինչպես այդ երևում է Պլատոնի հայացքներից, հենց պայքարի և ապստամբությունների փաստը համարվել է շատ բնական և անզուրկինաչափ, բայց, իհարկե, պարսավելի երևույթ:

Հունաստանի ստրուկների բոլոր ապստամբությունները, որպես կանոն, պարտվել են: Այդ փաստը բացատրվում է նրանով որ ստրուկներն ու շքավորությունը ապստամբել են տարբերակներ, չպատկերացնելով բացի գոյություն ունեցող ստրուկատիր

կան կարգերից այլ կարգ: Սոցիալական պայքարում նրանք պարզ կերպով չէին գիտակցում, թե ինչպիսի նոր կարգեր պետք է ստեղծել:

Սոցիալական պայքարում պարզ նպատակի և հասարակության վերակառուցման որոշակի պլանի բացակայությունը եղել է հին Հունաստանի բոլոր քաղաքների ստրուկների ապստամբությունների պարտությունների գլխավոր պատճառներից մեկը: Բայց սոցիալական այդ բոլոր ելույթները քաղաքական մեծ նշանակություն են ունեցել հին աշխարհի ստրուկատիրական հասարակության բախտի համար: Հունական պետությունների զարգացումը, զանազան պատերազմների վախճանը, քաղաքականության ուղղությունը՝ այս բոլորը չի կարելի հասկանալ առանց այն սոցիալական պայքարի ուշադիր ուսումնասիրության, որն էլ ազգել է պատերազմի վրա, որտեղ է պետություն արտաքին և ներքին քաղաքականությունը և վերջին հաշվով կանխորշել է հին աշխարհի յուրաքանչյուր պետության գոյության պատմական պայմանները:

¹ Համեմատելով պատմության համառոտ գաղափարը, հայ. հրատ, 1948 էջ 171.

ԿԼԱՍԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ

ՀՈՒՅՆՆԵՐԻ ԳԻՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՍՋԱՑՈՒՄԸ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ
ԵՎ ԿՐՈՆԸ

Հին հույների կուլտուրական ժառանգությունը հարուստ է բազմազան: Դիցաբանության, լիրիկական պոեզիայի, ժողովրդական իսկական ֆոլկլորի ստեղծման բնագավառում հույները ավելի են գեղեցիկ նմուշներ, որով և նրանք աչքի են ընկնում հին աշխարհի մյուս ժողովուրդներից: Հույներն ստեղծեց են թատրոն, սրբաժառանգել են հեապա սերունդները: Ժամանակակից դրաման և կոմեդիան իր հիմքում ունեցել է հույների դրամատիկական երկերը: Հույները մեծ ժառանգություն են թողել ճարտարապետական, քանդակագործական, գեղանկարչական և արվեստի բառի լայն իմաստով հետաքրքրական հիշատակարաններ: Գրքիս սկզբում ասված է այն մասին, թե ինչ է արված եղել հունական փիլիսոփայության բնագավառում:

Հին հույները կարողացան ձևակերպել բնագիտության և իմացության հիմնական պրոբլեմները: Այժմ մեր առաջ խնդիր է զբոսնել՝ քննության առնել հունական կուլտուրայի, գիտության և արվեստի ծագման, ինչպես նաև հունական փիլիսոփաների հիմնական գաղափարների զարգացումը կոնկրետ փաստերի վրա: Վերջապես, հետագայում անհրաժեշտ է հատկապես կանգ առնել հույների մոտ պատմական գիտելիքների սկզբնավորման հարցերի հասարակագիտության սաղմերի վրա:

Հունական վաղ շրջանի կուլտուրան իր արտահայտությունն է գտել ամենից առաջ դիցաբանության մեջ: Առասպել կոչվում է ժողովրդական բանավոր ստեղծագործության այն ձևը, որի մեջ հին հույները պատմել են հեռավոր անցյալի մասին: Առասպելա-

կան կերպարներ ստեղծելու միջոցով հույները իրենց վերաբերմունքն են ցույց տվել դեպի բնությունն ու հասարակությունը: Հունական բոլոր առասպելները, զանազան ավանդույթներն ու բառիս լայն իմաստով ժողովրդական ստեղծագործություններն աստվածների, հերոսների մասին միասին վերցրած կոչվում են առասպելաբանություն (միֆոլոգիա): Դիցաբանության՝ աստվածների և հերոսների մասին գեղարվեստական ամենաբազմազան պատմումների այդ գանձարանի ուսումնասիրությունը գիտական հետախուզության խնդիրներից մեկն է: Հետազոտողը փորձում է դիցաբանական շերտերի տակից բացահայտել սեպը կյանքը:

Առասպելները հին հույների կյանքում եղել են փորձ ստեղծագործական ֆանտազիայի մեջ իմաստավորելու շրջապատի իրականությունը, ընդլայնելու բնության և հասարակության մասին իրենց պատկերացումները: Ուստի հին առասպելներում, նրանց հերոսները, աստվածների գեղարվեստական կերպարներում մեր առաջ կարծես պատկերանում են հնագույն ժամանակաշրջանի մարդկանց որպես յուրահատուկ պատմությունը: Մարքսն ասում է. «հին ժողովուրդները երևակայության, առասպելաբանության մեջ ապրել են իրենց նախապատմական ժամանակաշրջանը»:

Երբ մենք խոսում ենք հունական առասպելաբանության և առասպելների երևան գալու մասին, ապա մենք այն սովորաբար ժամանակագրական կարգով կապակցում ենք X—VIII դ. դ. մ. թ. ա. ժամանակաշրջանի հետ: Հենց այդ հեռավոր ժամանակաշրջանից են ծագում ամենալավ ավանդույթները, որոնք հետագայում մարտնավորվել են առասպելաբանական գեղարվեստական զրույցներում: Մի շարք գիտնականներ (Նիլսեն) հունական առասպելների ծագումը վերագրում են էլ ավելի հեռավոր՝ միկենյան ժամանակաշրջանին (XIV—XI դ. մ. թ. ա.):

Հունական առասպելաբանությունը մյուս ժողովուրդների առասպելաբանությունից տարբերվում է նրանով, որ նա բովանդակությամբ հարուստ է, սյուժեով բազմազան և, վերջապես, մտքով նավորված է գեղեցիկ գեղարվեստական փիլիսոփայությամբ, սրբաչքի է ընկնում ձևի մեծագույն պարզությամբ: Առասպելները եղել են այն սիրված ձևը, որի միջոցով իրենց ստեղծագործություններն են արտահայտել հունական բանաստեղծները, ողբերգուհիները, փիլիսոփաները և նույնիսկ նկարիչները, որոնք իրենց ներկրում մտաբն

նազորի ևն պիտավորապես հունական առասպելաբանությունից վերցրած սյուժեները: Դրա համար էլ շի կարելի զարմանալ, որ հունական առասպելները բանաստեղծների, ողբերգուների, փիլիսոփաների և նկարիչների գործերում հանդես են գալիս առասպելաբանական նույն սյուժեների տարբեր վարիանտների կրկնուլարբանական նույն սյուժեների վրա բազմաթիվ ազելացումների հե-
տևանքով առասպելները վերամշակվել են հանդամանորեն, դրա տեղանքով առասպելները նրանց ձևը խիստ տարբերվում է համար էլ ոչ ժամանակվա նրանց ձևը խիստ տարբերվում է սկզբնական տեսքից: Հունական առասպելներում հանդես են գասկզբնական տեսքից: Հունական ստասպելներում հանդես են գասկզբնական տեսքից: Հունական ստասպելներում հանդես են գասկզբնական տեսքից: Հունական ստասպելներում հանդես են գասկզբնական տեսքից:

Առասպելաբանության ուսումնասիրության հիման վրա, հետևապես, մենք կարող ենք պատկերացնել, թե ինչպես սոցիալական զանազան փոփոխությունների հետ միասին փոխվել են նաև հույների կոսմոգոնիական, սոցիալական ու կրոնական պատկերացումները: Առասպելների կողիֆիկացիան և նրանց կապը հունական կոսմոգոնիայի և թեոգոնիայի միասնական սիստեմում առաջին անգամ մեզ տալիս է Հեսիոդոսը: Այդ սիստեմի ձևավորումը համընկնում է մոտավորապես X—VIII դարերին մ. թ. ա.:

Մտածության առասպելաբանական ձևի շնորհիվ հին հույները կարծես թե ոգևշնչել են իրենց տեսանելի ողջ աշխարհը: Ոչ միայն աստվածները, ոչ միայն մարդիկ, որոնք հույների կողմից բարձրացվել են աստծու մակարդակին, այլև կենդանական աշխարհը, ողջ բնությունը լցված է եղել ոգիներով և հույների գիտակցության մեջ պատկերացվել է կենդանի կերպով: Հույները պաշտել են բուսականությունը (կաղնի, դափնի, ձիթենի, խազող), բնության զանազան ուժերը, անտառները, գետերը, ծովերը: Էնգելի արտահայտությամբ «Հելլադան՝ պանթեիզմի աշխարհ է նրա ողջ լանդշաֆտը զարդարվել է... հարմոնիայի շրջանակում... յուրաքանչյուր ինքնատարարություն իր հիանալի ամբողջացումով հավանել է մի առանձին աստծու, յուրաքանչյուր գետ պահանջել է իր հավերժահարաններին, յուրաքանչյուր պուրակ՝ իր ոգիները»¹:

Հույները չեն ունեցել քրմական ինքնամոլի կաստա: Նրանց կրոնը իր պաշտամունքի բնույթով տարբերվում էր արևելյան կրոններից, այստեղ տարբեր քաղաքական պայմանների ազդեցություն է եղել՝ հունական քաղաքների մեծ մասի դեմոկրատական կառուցվածքը և Հին Արևելքի պետությունների բանապետական սեփմը: Դեմոկրատական կարգերը իրենց կնիքն են դրել հունական կրոնական ծիսակատարությունների վրա, որին մասնակցում էին ըզոլորդական մասսաները: Աստվածների պատվին հույները գոտասեղան են կանգնեցրել, որի վրա ամբողջ ժողովրդի ներկայությամբ հրկիզում էին զոհը: Աստվածությունների պաշտամունքի ներքև ուղեկցվում էին ժողովրդական տանկրավ՝ խմբերգերով, պարով, օրհներգներով: Հետագայում հույները սկսեցին շինել տաճարներ, որոնք կրոնավորների իրավասության տակ են եղել, դանք իրենց դիրքով տարբերվել են արևելյան քրոմերից: Հունական տաճարներն ու սրբավայրերը համահունական ազգային միությունների կենտրոնի նշանակություն էին ձեռք բերել:

Օրինակ, կարելի է նշել Դոդոնում Զևսի սրբավայրը կամ Կելում Ապոլոնի տաճարը: Դելֆիի և Դոդոնի տաճարները հույնական կղզի պատգամախոսներով, զբբացներով և գուշակություններով: Օրինակ, սուրբ կաղնու սոսափյունով Դոդոնի գուշակողները արագուշակել են ապագան, զետակի քըջըցով մարդու բախոր: Դելֆում գուշակություն է կատարել հատուկ քրմուհի, որը կղզի է պիֆիա: Հողի ձեղքերից բարձրացած գոլորշուց ուշաթափություն հասնելով նա արտասանում էր անկապ-անկապ խոսքեր, որպիսիք կրոնավորները ձգտում էին բացատրել որպես արդարեություն: Ապոլոնի պաշտամունքը Դելֆում և դելֆյան աստվածախոսները հույների համար հանդիսացել են համընդհանուր միավորման կենտրոններ: Այդ կենտրոնը առաջ է եկել աստվադ և մեծ նշանակություն է ձեռք բերել զենես հունական կղզի տարագաղթի և զաղուժացման սկզբում՝ VIII դարում: Այդ հետևանքով առաջացան համահունական միություններ, այսինքն կոչված ամփիկլիտոններ, որոնք նպատակ ունեին այս կամ այն աստվածների պաշտպանությունը, տաճարների և հունական այլ աստվածների վայրերի հովանավորությունը: Հատուկ նշանակություն է ունեցել դելֆյան ամփիկլիտոնը, որը հետևանք էր Դոդոնի դելֆյան տաճարի կրոնական մեծ նշանակության և դելֆյան պատգամախոսների հեղինակության ուժի: Այդ ամփիկլիտոնները համագումարներ են հրավիրել, որտեղ պատգամավոր-

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. II, стр. 56.

ները են եկել քաղաքներից և քննության են առել ոչ միայն կրոնական կարգի, այլև արբիտրաժի հարցեր, պատերազմ վարելու կանոններ, պետութունների միջև փոխհարաբերությունների հարցեր և այլն: Այսպիսով, դեկիան ամփիկտիոնը շտապ միջազգային կենտրոնի նշանակություն ձեռք բերեց և ուժեղ ազդեցություն ունեցավ հունական պետութունների միջև դիվանագիտական հարաբերությունների վրա: Հունական առավել աչքի ընկնող տաճարները միաժամանակ եղել են համաժողովրդական տոների կազմակերպիչներ, որոնք պարբերաբար միավորում էին հելլենական աշխարհի զանազան ժողովուրդներին: Դեկիոն կազմակերպիչ էն այսպես կոչված պիֆիական տոնահանդեսներ, պիֆիական էին կոչվում այն պատճառով, որ նրանք նվիրված էին Ապոլոնին, որն ըստ հունական ավանդության հալթի է հրեշ Պիֆոնին: Այդ տոնահանդեսները ճորայցվում էին հունական լավագույն վարպետների երաժշտական մրցումներով, մարմնամարզական խաղերով և ասլետների վարժություններով: Հունաստանում հայտնի էին նաև Էնմեական տոնահանդեսները (Նեմեան գտնվում է Արգոլիդում), Զևսի պատվին այստեղ կազմակերպում էին ժողովրդական ամենատարբեր մրցություններ, որտեղ աչքի էին ընկնում Հունաստանի սպորտի լավագույն վարպետները, խաղերում և մրցություններում հաղթողները ձեռք էին բերում ամբողջ երկրում հայտնի հերոսի փառք: Եղել են իստմիական տոնախմբություններ ևս (Իստմիական պարանոցի վրա) Բայց ամենից շատ հռչակված էին օլիմպիական տոնահանդեսները, որոնք կատարվում էին Օլիմպում օլիմպիական պանթեոնի աստվածների գլխավոր Զևսի պատվին: Օլիմպիական մրցությունները հռչակված էին ամբողջ Հունաստանում և կազմված էին վազքի, զինվորական արշավի, ըմբշտամարտի բազմազան տեսակի մրցություններից, իսկ ուշ ժամանակներում կազմակերպում էին նաև երաժշտական և բանաստեղծական մրցություններ:

Օլիմպիական խաղերը կատարվել են ամառը և տևել են ամենապակասը 5 օր: Խաղերում հաղթանակողը հայտնի է դառնում ամբողջ Հունաստանում: Նա որպես հերոս տարբերանշան էր ստանում, նրան պսակում էին Հունաստանի համար բարձրագույն պարգևով՝ դափնյա կամ ձիթենու պսակով: Հերոսի հայրենիքում կանգնեցնում էին արձան, որը պարծանք էր ոչ միայն հաղթանակողի և նրա հարազատների, այլև այն համայնքի և քաղաքի, որտեղ ծնվել էր նա, մեծարում էին հերոսին և պարծենում

երանով: Հունական պոետ Պինդարը մեզ թողել է հին Հունաստանի պիֆիական, նեմեական, իստմիական և օլիմպիական խաղերի նորոններին նվիրված իր ներբողները և գովերդները:

Հերոդոտը հատկապես ընդգծում է օլիմպիական խաղերի նշանակությունը, որին մասնակցել են հունական աշխարհի պատմաբանները, գրողները, պոետները, որոնք իրենց պատիվ են համարել ելույթ ունենալ և արտասանել իրենց բանաստեղծությունները, իսկ հետոսները՝ իրենց ճառերը:

Օլիմպիական տոնահանդեսները, կամ օլիմպիադաները, Հունաստանի կուլտուրայի պատմության մեջ այլ նշանակություն են ունեցել: Ըստ օլիմպիադաների են սկսել կատարել թվագրության մասնակի հաշվառումը: Ըստ ավանդության օլիմպիադան վերագրվում է 776 թվին մ. թ. ա.: Յուրաքանչյուր չորս տարին մեկ օլիմպիադա էր լինում: Ըստ այդ օլիմպիադաների հաշվումները պաշտոնապես սկսեցին կատարել Ալ. Մակեդոնացու ժամանակաշրջանից:

Հունական կրոնի մեջ ամենից ուժեղ արտահայտվել է հավատը դեպի մարդը, հերոսության պաշտամունքը: Հույներն աստվածներին պատկերացրել են մարդու կերպարանքով և որպես այդպիսին պաշտել նրան: Աստվածների մասին այդպիսի պատկերացումը կղջվում է անտրոպոմորֆիզմ: Հոմերոսի և Հեսիոդոսի կոսմոսում արդեն փորձեր են արվում տալ աստվածների ծննդաբանությունը և օլիմպիական պանթեոնում նրանց դիրքին համապատասխան ֆունկցիաները: Եթե հույները աստվածներին պատկերացնում էին մարդկային կերպարանքով, ահա և այդ աստվածների ֆունկցիաներն էլ մոտիկ են եղել մարդկանց ֆունկցիաներին:

Հույները պաշտել են նաև երկնային լուսատուներին: Այդ պաշտամունքը հատկապես ճանաչվեց հունական փիլիսոփաների կողմից, որից կարելի է եզրակացնել որ հունական կրոնական աշխարհայացքը ձևավորվեց արևելյան աստղային պատկերացումների մեծ ազդեցության տակ, որոնք, սակայն, հունական գիտակցության մեջ բեկբեկվել էին յուրահատուկ ձևերում: «Հայտնոր երկնային մարմիններին, — ասում է Մարքսը, — դա պաշտամունք է, ընդունված հունական բոլոր փիլիսոփաների կողմից: Երկնային մարմինների սխտեմն առաջին նախվ և բնությամբ որոշված իրական բանականության եղելությունն է: Նույնպիսի դրություն է ընդունում և հույների ինքնագիտակցությունը հոգու բնագավառում: Դա հոգեկան արեգակնային սխտեմն է: Ուստի հունական

փրկիստփաները երկնային մարմիններում երկրպագում էին իրեն սեփական հոգուն՝¹։

ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հունական պոեզիայի և գրականության սկիզբը պետք է համարել Հեսիոդոսի և Հոմերոսի ժամանակաշրջանը։ Եղև ևն արդյոք Հոմերոսը և Հեսիոդոսը ժամանակակիցներ, ղփլար է ասել Գիտությունը հակված է Հեսիոդոսին հաշվելու ավելի ուշ ժամանակվա հեղինակ, քան Հոմերոսին, կամ նրան վերագրվող երկերը։ Այդ երկու հեղինակի երկերն էլ մինչև այժմ մնում են մեզ համար որպես գեղարվեստական վարպետության մեծագույն հուշարձաններ։ Եվ Հոմերոսը, և Հեսիոդոսը մեզ տալիս են հին հունական գեղարվեստական ստեղծագործության բարձր մակարդակից ույց տվող պոետական երկերի նմուշներ։ Իրենց ձևով և բովանդակությամբ մարդկանց և աստվածների հերոսությունը բացառապես հայտող այդ երկերը դասվում են էպոսի ժանրին։

Հունական գրական ստեղծագործության զարգացման հետագա էտապը լիրիկական պոեզիան է։ Հետհոմերոսյան ժամանակաշրջանի իրադարձությունները, որ կապված են սերտորեն համախմբված տոհմական հին համայնքի քայքայման, նրա ներստ շերտավորման և սոցիալական պայքարի սկզբնավորման հետ էին կարող շառաչացնել խորը փոփոխություններ և շարտահայտվել հույների լիրիկական-բանաստեղծական ստեղծագործությամբ։ Պոեզիան հանդիսանում էր արդեն բոլորովին ուրիշ՝ Հոմերոսից հետագա սոցիալական ժամանակաշրջանի մարդկան հոգեբանությունը։ Դրանք եղև ևն մարդիկ, բոլորովին այլ աստվածներով և անհատական այլ ձևերով։ Լիրիկական պոեզիայի սկիզբը համընկնում է VII-VI դդ. մ. թ. ա.։

Լիրիկական պոետների մեջ առաջին տեղը բռնում է Ալքայոսը որը ծնվել է Փարոս կղզում։ Ալքայոսի նշանակությունը՝ նա և առաջ այն է, որ նա լիրիկական պոեզիայի հիմքը գրել է Ալքայոսը մեզ տալիս է կենսական մեծ փորձով և ներքին հոգեկանությամբ բացառիկորեն հարուստ և բազմակողմանի անձնավորության օրինակը։ Ալքայոսին հաջողվել է անմիջականորեն և գեղարվեստական ձևի մեջ հաղորդել իր հույզերի ամրո

կնշնները։ Ալքայոսի ստեղծագործության մեջ շկա այն էպիկական հանդարտությունը, որպիսին մենք նկատում ենք Հոմերոսի մեջ։ Ալքայոսի գեղակալում է հասուն տեմպերամենար, զգայմունքների պոթիվումը, կամ նրա դանդաղ մարումը։ Պոետը կյանքի շատ արհամիջքներ է կրել, բայց այդ չի կարողացել մարել նրա ստեղծագործական վերելքը։ Իր աստվածներն ու զգացմունքները նա տալիս է հասուն ոտանավորների և գունեղ կերպարների մեջ։ Այդ զգացմունքների արտահայտման սեպիտակական ձևը անկասկած, դյութում է ընթերցողին։

Ալքայոսից հետո պետք է նշել լեսբոսական պոեզիայի ներկայացուցիչներ Ալկեոսին և Սապֆոյին։ Նրանց երգերի, օրհներգերի, ներբողների սյուժեն հանդիսացել է բնությունը, նրա սքանչելիքները, սերը, մանրությունը, ուրախ կյանքը։ Այդ պոետները գրված չեն շուշափում քաղաքական հարցեր, նրանք տոգորված են անհատական ազդեցությունով, անձնական զգացմունքներով։ Միաժամանակ նրանք ձգտում են այդ բոլոր սուբեկտիվ աստվածների մեջ որսալ ինչ որ ընդհանուրը, ինչ որ մարդկայինը, սրում և արտահայտվում է նրանց ստեղծագործությունների արժեքը, որոնք մինչև այժմ էլ կարողացվում են հաճույքով։

Սապֆոն, օրինակ, իր ստեղծագործությունների մեջ կարողացել է տալ հետագա դարերի համար հիմնական թեման՝ այդ կնոջ մասին է, նրա կրքերի, սիրո մասին, իր երեխաներին սիրող մոր մասին։ Սապֆոն դիմել է այլաբանությունների սրտը հիրավի գեղարվեստական են։ Ռիթմերում ներդրված զգայմունքները նուրբ են և անկեղծ։ Սակայն Սապֆոյի պոեզիայի մեջ ավելի իշխում է թախիծն ու մեղանխողիան։ Կյանքի հիասթափության մոտիվը կլանում է մնացած բոլորը՝ կայտառությունը, կամքի ուժը, ստեղծագործությունը, ակտիվ ավյունը։

VII-VI դարերում մ. թ. ա. լիրիկական պոեզիայի առաջացումը, իհարկե, կապված է սոցիալական նոր պայմանների հետ։ Ատրիատիական հարաբերությունների առաջացումը, նյութական հոգեբերից ազատ ստրկատիրական և հողատիրական արիստոկրատիայի դասակարգի ձևավորումը և նրա կուլտուրական շահերի ոլորտի ընդլայնումը՝ այս բոլորը հնարավորություն են տվել նոր հասարակական խավին ազատ ժամերին խորասուզվել սեփական, գերազանցապես անձնական ապրուստների մեջ։ Ուստի դարձանալի չէ, որ հետագայում առաջ են դալիս պալատական, իր յուրատեսակությամբ «կամերային» պոետներ։ Այդպիսին է եղև օրի-

¹ К. Маркс и К. Энгельс, Соч., т. I, стр. 60.

նակ, Անակրեոնը Թևոս քաղաքից (Փոքր Ասիա), որը ապրի Պոլիկրատ տիրանի պալատում, ապա անցել է Աթենք, որտեղ հետևապես ապրել է Թեսալիայում, վերջապես, վերադարձել է իր հայրը, Ռիտեղ մեռել է 85 տարեկան հասակում: Անակրեոնը սուսպու ստեղծագործություններին խորթ է քաղաքականությունները, կյանքի հոգսերը: Նրա ստեղծագործությունները են զոացմունքը, սիրո սյուժեները և անձնակազմությունները: Հունական վաղ շրջանի լիբիկական պոեզիան բնավորված է լի կարելի շնչել, որ նրա լեյտամոտիվը եղել է անտիկան: Ուշ ժամանակ, սակայն, սկսել են գերակշռել նոր պոեզիաներ: Պոետների սիմբոլներն սկսեցին իրենց մեջ պարունակել ժամանակակից կյանքի քաղաքական-փիլիսոփայական մոտիվները: Այսպես, օրինակ, Թեոգենիդեսի (VI դ. մ. թ. ա). էլեգիաները հնչում է արիստոկրատի ատելությունը դեպի դեմոսը, դեմոկրատիայի հաղթանակն ապրած մարդու խորը հոռետեսությունը: Հիշատակենք Պինդարոսին ևս, բանաստեղծ, որը գրել է ներքին և հաղթանակի երգեր նվիրված մրցություն մեջ հաղթողներին: VI դարի վերջում մ. թ. ա. նկատվում է լիբիկական պոեզիայի անկում, որն արտահայտում էր միաժամ արիստոկրատիայի ճաշակը: Գրա համար էլ հունական կուլտուրան զարգանում էր քիչ այլ, լայն ժողովրդական ուղղությամբ: Հունական կուլտուրայի հետագա զարգացումը ներհուսել է նախ և առաջ ստեղծագործության մեջ, որին վիճակված էր դառնալու ժամանակակից թատերական արվեստի զարգացման ելակետը:

ՀՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ, ԴՐԱՄԱՆ ԵՎ ԿՈՄԵԴԻԱՆ

Հունական թատրոնի ծագումը կապված է ժողովրդական տոնախմբությունների հետ և վերագրվում է VII—VI դ. մ. թ. խմբերգներից, ժողովրդական երգերից և աղոթքներից, որ հիմնավորապես նվիրված էին Դիոնիսի՝ գինու և ուրախության ստեղծու փառաբանմանը, առաջացավ հունական տրագեդիաները:

Տրագեդիա հայերեն բառացի թարգմանած նշանակում է «այծերգ»: Այժի մորթի հագած մարդիկ այդ տոնահանդեսում ժամանակ պատկերել են գինու և ուրախության ստեղծու ուղեկցիներին: Այդ ուղեկցիները կոչվել են սատիրալներ: Գինու և ուրախության ստեղծու ինչպես և հողի և պտղաբերության պատվով

Դեմետրայի պաշտամունքի մեջ պահպանվել են հետո անցյալի մնացորդները՝ աստվածների, երկրային բարիքների առաջ խոնարհվելը: Բայց ուշ ժամանակներում Դեմետրայի և Դիոնիսի պաշտամունքներն արդեն դառնում են պաշտոնական՝ դրվելով տոնակատարության որոշակի շրջանակի մեջ: Հայտնի է, որ Պիսիստրատի կառավարման շրջանում կառավարությունը իր վրա էր վերցրել գլուխներում և քաղաքներում «դիոնիսիաների» կամ Դիոնիսի և Դեմետրայի պատվին տոնահանդեսների կազմավորումը: Այդ կապակցությամբ էլ այդ պաշտամունքները դարձան պետական: Առաջ դրանք եղել են հասարակ խմբերգներ: Խումբը երգում էր դիթարամբոսներ, այն է փառաբանումներ, որոնք առանձնապես աչքի չէին ընկնում իրենց գեղարվեստական կատարմամբ: Դրանից հետո մի նշանակալից առաջադիմական քայլ հանդիսացավ այն, որ խմբից առանձնացվեց գործող անձը կամ դերակազմը: Դերակազմը (սկզբում դա եղել է մեներգիչ կամ «կորիտարը»: Դերակազմը (սկզբում դա եղել է մեներգիչ կամ «կորիտարը»), որոշ կազմակերպվածություն մտցրեց խմբերգների հենց տոնակատարության մեջ: Դերակազմը արտասանում էր Դիոնիսի կյանքի մասին և խոսակցության մեջ էր մտնում խմբի հետ: Այսպիսով, տոնակատարության բննացումը առաջացավ դիալոգը, այսինքն՝ այնպիսի խոսակցություն, որին մասնակցում էր, մի կողմից, դերակազմը, մյուս կողմից՝ խումբը: Այդ հանդիսացավ դրամատիկական ներկայացման հետագա զարգացման ելակետը:

Հունական կլասիկ ողբերգության ստեղծողը եղել է էսքիլոսը: Նա մտցրեց երկրորդ գործող անձը՝ դերասանը և դրանով իսկ աշխուժացրեց դրաման, ավելի դինամիկ, հետաքրքիր և դիտողների համար հրապուրիչ դարձրեց այն: Որպես հունական դրամայի հիմնադիր, ինչպես հաղորդում է բանահյուսությունը, էսքիլոսը դրամատիկական թատրոնի համար որոշ պայմաններ ևս ստեղծեց՝ դեկորացիաների, դիմակների գործադրում և այլն: Հունական թատրոնի պատմությունը, սովորաբար, սկսվում է էսքիլոսից:

Ժողովրդական ներկայացումների, նրանց լավագույն կազմակերպման, որոշ ռեգլամենտ մտցնելու և նրանց պետական հանդիսատեսարան դարձնելու համար սկսեցին կառուցել թատրոններ, որոնք կարող էին տեղավորել մի քանի տասնյակ հազար հանդիսատեսներ: Այսպես, Աթենքում Դիոնիսի պատվին կառուցվեց մի թատրոն, որի մեջ կարող էին տեղավորվել մոտ 30 հազար դիտողներ: Դա մի կառուցվածք էր, որ կիսաշրջանի ձև ուներ և

գտնվում էր ակրոպոլիսի լանջին: Թատրոնը բացօթյա էր, տանիք չուներ, Վերջին շարքերում դիտողների տեղերը փորված էին ուղղակի ժայռի մեջ, իսկ ներքևում դրանք պատրաստվում էին մարմարից ու փայտից: Աստիճան առ աստիճան իջնող և կիսաշրջակազմող այդ շարքերը ամֆիթատրոն անունն ստացան: Ամֆիթատրոնի առաջ կար մի բարձր, հարթ հրապարակ, որտեղ սկզբում հանդես էին գալիս դերակատարները և կանգնած էր լինում խումբը: Այդ օրհեստրան էր (այստեղից էլ մեր օրկեստր անունը): Օրքեստրայի հետևում, բարձր տեղում կար մի ուրիշ հրապարակ, որտեղ դասավորում էին դեկորացիաները՝ դա բեմն էր (հունարենը՝ «սկենն»): Հենց այստեղ էլ հանդես էին գալիս դերակատարները, իսկ խումբը մնում էր օրքեստրայում: Հունական ներկայումսներին կարող էին մասնակցել միայն տղամարդիկ: Ուստի կանանց դերերն էլ տղամարդիկ էին կատարում: Դերակատարները տրագեդիայում հանդես էին գալիս վառ գույնի երկար ու շքեղ հագուստով: Կոմեդիայում, որով պատկերվում էր սովորաբար մարդկանց կյանքը, դերակատարները խաղում էին հասարակ հագուստներով: Ելույթների համար հագնում էին մեծ վառ գույնի թուղ դիմակներ, որոնք ունեին աչքի զարնող դիմագծեր և լայն բաց արած բերան. դա արվում էր դերասանի դեմքի արտահայտությունը ընդգծելու և ձայնը ուժեղացնելու համար: Բացի այդ, դերասանները հանդես էին գալիս այսպես կոչված կոստյումներով բարձրակրունկ կոշիկներով, կամ նույնիսկ փոքրիկ պատվանդաններով, որպեսզի բոլոր դիտողները կարողանան տեսնել դերասաններին:

Թատրոնը Հունաստանում մեծ դեր էր խաղում և հաճախ գտնում քաղաքական տրիբունա: Թատրոնում բեմադրում էին բազմազան բնույթի, երբեմն էլ հրատապ հարցերի քաղաքական-փիլիսոփայական, առասպելաբանական, դեմոկրատիայի և արիստոկրատիայի պայքարի դեպքեր արտացոլող ներկայացումներ: Կային քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին, պետական կառուցվածքի թերությունների և նույնիսկ առանձին մարդկանց պակասությունների մասին բեմադրություններ: Թատրոնը ժողովրդին գրավում էր դեպի հասարակական կյանքը և մեծ դաստիարակչական նշանակություն ուներ:

Բոլոր բեմադրությունները պատվում էին ողբերգությամբ կատաղեզությամբ շուրջը: Հունական ողբերգությունները կառուցված էին աստվածների, հերոսների և նույնիսկ պատմական կա-

պեաների որևէ առասպելաբանական սյուժեներով: Պատմա-փիլիսոփայական սյուժեներով ողբերգությունները, սովորաբար, արտահայտում էին մարդու անձնական խորը հոգեբանական ասպրումները. օրինակ, ազատ պայքար ընդդեմ կույր ճակատագրի, ճակատագրի խաբուսիկությունը, հասարակության և անհատի ընդհարումները, երջանկությունը դժբախտության հետ, հպարտությունը, նվաստացման հետ ընդհարվելու մոտիվները և այլն: Որքան էլ որ հին հույները թատերական ներկայացումների համար ընտրեին առասպելաբանական սյուժեներ, այնուամենայնիվ դրանց մեջ միշտ հիմը, անցյալը և առասպելաբանականը զուգակցվում էին նորի, ժամանակակիցի և արդիականի հետ: Հենց այդ հին և նորի զուգակցելու կարողությունը, որը հասկանալի էր դառնում ժամանակակից հույներին, թատերական գործողության ընթացքում իրենց վրա էին բեռնում դիտողների ուշադրությունը: Հունական պետությունը հսկայական միջոցներ էր վատնում թատրոնների կառուցմանը, դրամատիկական երկերի բեմադրությանը, ինչպես և Պերիկլեսի մտցրած օրենքի համաձայն աղքատներին դրամ բաց թողնելու վրա՝ թատրոն հաճախելու համար («թեորիկոն»):

Հունական 3 ողբերգուներ՝ էսփիլոսը, Սոփոկլեսը և էվրիպիդեսն են անտիկ դրամայի հիմնադիրները, և ժամանակակից դրամատիկական արվեստի սկիզբները հասնում են նրանց: Էսփիլոսը (525—456 թվ. մ. թ. ա.) գրել է մոտ 70 դրամա, սակայն նրանցից մի քանիսն են միայն մեզ հասել: Հունական ողբերգուներից ամենից շատ էսփիլոսն է մոտ եղել ժողովրդական տոնահանդեսներին, որոնցից սկիզբ է առել թատրոնը: Էսփիլոսն իր ստեղծագործություններում վեր է հանել ուժեղ կամքի տեր հերոսներ: Նրա հերոսները գլխավորապես աստվածներ ու տիտաններ են: Նրա ողբերգությունների ֆաբուլան հանդիսանում է հերոսների ձգտումների և կույր ճակատագրի միջև եղած ընդհարումները, որին հույներն անվանում էին մոլոր: Էսփիլոսի որ երկն էլ որ վերցնենք, նրա լեյտամոտիվն է անհատի ազատ կամքի կոնֆլիկտը հույների համար անհաղթահարելի գրոծոնի՝ ճակատագրի, վրիժառության միջամտության հետ: Էսփիլոսի ժամանակվա հույները շատ բան էին ըմբռնում, նրանց կյանքի փորձը սահմանափակ էր, նախող պարաշրջանների կրոնական միստակական տրագիցիաներն ուժեղ էին: Այդ բոլորը որոշ միստիկայի և նախապաշարմունքի կնիք են դրել Էսփիլոսի բոլոր ստեղծագործությունների վրա: Վրիժառության գաղափարը և ճակատագրի գրոծոնը ամենից հաջող տրված է Էսփիլոսի «Օրեստես» տրիլոգիայում:

«Օրեստեսի» սյուժեն հանդիսատեսների առաջ բացահայտում է հրեշավոր հանցագործությունների մի ամբողջ շարք: Արդար թագավոր Ատրևսը կատարել է պիղծ հանցագործություն: Եզրորդ Ֆինեստին, իր Ատրևսի կնոջը գայթակղեցնելու համար նրան կերակրում է հարազատ զավակների մտով: Եվ ահա հետագա շարքը ցույց է տալիս, որ զարգանում են այն ուղղություններ, թե ինչպես այդ հանցագործությունն իր հետևից բերում նոր նման քստմենտի հանցագործությունների մի ամբողջ սերիա: Ազամեմնոնի (Ատրևսի որդու) կինը՝ Կլիտեմնեստրան հանցավոր կապ է հաստատում Ֆինեստի որդու հզիստի հետ: Երբ Ազամեմնոնը Տրոյացից տուն է վերադառնում՝ նրան սպանում է Կլիտեմնեստրան, վրեժ լուծելով իր աղջկա Իֆիգենիայի սպանության համար: Ազամեմնոնի որդի Օրեստը սպանում է իր մորը՝ Կլիտեմնեստրային և լուծում հոր սպանության վրեժը: Այսպիսով Կլիտեմնեստրային և իր սիրելիան Էգիստին պատուհասում է ճակատագրի արդարացի վրեժը: Տրիլոգիայի վերջին մասը՝ «Էլմենիդներ»-ում էսքիլոսը հանգես է բերում վրեժառուցյալ աստվածներին, որոնք հետապնդում են Օրեստին՝ օձերի կերպարանքով, վրեժի ծարավով փաթաթվում են նրա մարմնին: Արեոպագոսը փրկում է Օրեստին: Այսպիսի էպիլոգ մեջ էնգելսը տեսնում է մահացող մայրական իրավունքը և հայր իշխանության հաղթանակի գաղափարը:

Էսքիլոսին վերագրվող «Պրոմեթևս» տրիլոգիայի հիմքում ներգրված է վրեժառուցյալ գաղափարը և անհաշտելիության կամ հողու կայունության գաղափարը:

«Պրոմեթևս» տրիլոգիայի սյուժեն պարունակում է երեք մոմենտ: Պրոմեթևսը հափշտակում է կրակը: Պրոմեթևսը Զևսի կողմից շղթաթափված է պատժվելու համար, և վերջին մասը՝ ազատագրված Պրոմեթևսը: Դժբախտաբար, մեզ հասել է տրիլոգիայի միայն երկրորդ մասը: Հեղինակի կողմից այդ երկի մեջ ներդրված գաղափարն ունի խորը փիլիսոփայական և կենսական նշանակություն: Հին հույնը ազատության ձգտող մարդ էր, նրա ստեղծագործական ծարավը մարմնացած է Պրոմեթևսի հիանալի կերպարի մեջ, բայց միաժամանակ հին հույնը պատկերել է նաև այն արգելքները, որոնք կանգնած են նրա կյանքի ճանապարհի վրա և ազատության համար նրա պայքարում: Այս երկու մոտիվների մեջ եղած կոնֆլիկտը հանդիսացել է էսքիլոսի «Պրոմեթևս» տրիլոգիայի գեղարվեստականորեն մշակված հիմնական թեման:

Մարդկության ազատության համար մարքսողի՝ հերոս Պրո

մեթևսի կերպարը հրապարակ է ոչ միայն հին հույներին, այլև հետագա սերունդներին: Էսքիլոսի կողմից մշակված Պրոմեթևսի կերպարը հետաքրքրել է նաև Մարքսին, որը բարձր գնահատական է տվել այդ հերոսին:

«Պրոմեթևսը. — ասում է Մարքսը. — փիլիսոփայական ժամանակագրության մեջ ամենաազնիվ սուրբն ու նահատակն է: Պրոմեթևսի խոստովանությունը՝

«Միշտն ասած, ես տասն եմ բուր աստվածներին...»

մի խոստովանություն է... որն ուղղված է բոլոր երկնային և երկրային աստվածների դեմ, որոնք մարդկային ինքնագիտակցությունը չեն ճանաչում որպես գերագույն աստվածություն»:

Հունական նաշորդ ողբերգուն Մոփոկլեսն է: Մոփոկլեսն (497—406 թ. թ. մ. թ. ա.) իր երկում արտացոլել է Հունաստանի կուլտուրական ծաղիկման ժամանակաշրջանը: Մոփոկլեսի մտղգացված է աստվածների պաշտամունքից գեպի մարդկային հանձարի մեծարումը, մարդու պաշտամունքը: Հիրավի, Մոփոկլեսի երկերում ճակատագրի գաղափարը աչքի ընկնող տեղ է դրսևում: Սակայն այդ ճակատագիրը ոչ այնքան վերաբերում է աստվածներին, որքան մարդկանց: Եվ Մոփոկլեսի համակրանքը մարդու՝ կյանքի և նյութական արժեքների ստեղծողի կողմն է: Մոփոկլեսի մոտ արդեն զգացվում է աստիճանաբար աստվածների և մարդկանց միջև եղած սահմանների շնջման տենդենց: Մոփոկլեսի նշանավոր երկերն «Էդիպ-Արքա», «Էդիպը Կոլոնեսում» և «Անտիգոնե» ողբերգություններն են: Այդ երկերը նկարագրում են աստապելական հերոս էդիպի և նրա երեխաների ճակատագիրը: Մոփոկլեսի հերոսներին իրենց զործառությանն արտ ձգտում են հասնել վեհագույն նպատակների, նրանք իրենց վրա ոչ մի մեղք չունեն, բայց գոյվում են ճակատագրական հանդամանքներից: Այսպես էդիպ արքան իշխանությունից հրաժարվում է և իր աչքերը հանում, երբ իմանում է, որ իր սպանած անհայտ ճանապարհորդն իր հարազատ հայրն է եղել: Ծակատագիրը տանջում է էդիպին: Անբախտությունը հալածում է նրան: Նրա երկու տղաներն ընկնում են իշխանության համար մղված պայքարում: Նրա շերմագին սիրված դուստր՝ Անտիգոնեն մահապատժի է գատապարտվում միայն նրա համար, որ համարձակվել է թողել իր եղբոր դիակը, որ գուրս էր

1 К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. I стр. 26
2 Там же.

ձգված անարգանքի ենթարկելու համար: Սովոկլեսը ճակատագրի համ վրիժառուության այդպիսի շարադրանքում գործը չի հանգեցնում միայն աստվածութեան դերին, այլ ընդգծում է, որպես փոփոխից էակի, մարդու պատանխանաստվածությունը ևս. ընդգծելով մարդու դերը, մեծ դրամատուրգն ամենից առաջ ելույթ ունեցավ ընդդեմ ճակատագրի անխախտելիության գաղափարների:

Ճիշտ է, որ Սովոկլեսը վառ գույներով ուրվագծել է ճակատագրական, պատահական պատճառներից կործանվող մարդկանց պատկերները: Սակայն նա ցույց է տալիս նաև ազատ կամքը, որը պայքարում է կույր ճակատագրի դեմ, հանդես է գալիս այդ ճակատագրի դեմ, կրակոտ կերպով ընդվզում է հանուն մարդու ազատության: Ազնիվ զգացմունքները, գիտակցական բողոքը ընդդեմ աստվածների և ճակատագրի անարդարության դեմ՝ Սովոկլեսի մոտ զլխավորն է: Սակայն այդ դեպքում էլ Սովոկլեսը միշտ հաղթում է աստվածների կամքին, ճակատագրին: Սոֆոկլեսը չկաբողացավ ազատագրվել այդ ժամանակվա հասարակության վրա իշխող գաղափարների իշխանությունից և չկարողացավ բարձրանալ իր դարաշրջանից վեր, որին հակասող գաղափարները նա մարմնավորել էր գեղարվեստական երկերում:

Սովոկլեսի ողբերգությունների գործող անձինք շատ ավելի մոտ են իրական մարդկանց, քան էսքիլոսի հերոսները: Այդ նպատակ է թատրոնի և ողբերգության զարգացմանը, և մեկը և մյուսը մոտեցրել ժողովրդին և Սովոկլեսի երկերը դարձրել հասկանալի:

Հունական երրորդ մեծ ողբերգուն էվրիպիդեսն է (480—406 թ. թ. մ. թ. ա.): Նա էսքիլոսից և Սովոկլեսից տարբերվում է նրանով, որ հանդիսանում է հոգեբանական ռեալ դրամայի ստեղծողը: Էվրիպիդեսը մարդկանց աշխատում է ցույց տալ այնպես, ինչպես նրանք հանդիպում են իրական կյանքում: Իր երկերում նա ձգտում է ցույց տալ մարդկային տարբեր կրթերի բախումները: Այդ տեսակետից Էվրիպիդեսի ողջ ստեղծագործության մեջ հատկապես հայտնի է «Մեդեա» դրաման: Հերոսների կերպարների նուրբ հոգեբանական մշակված այդ դրաման երկար ժամանակ հրապուրել է ավելի ուշ ժամանակվա թատրոնի վարպետներին, այդ դրաման իր մեջ ունեցել է Շեքսպիրի վարպետությունը, որի ուսուցիչն ըստ արժանվույն համարում են Էվրիպիդեսին: Այդ երկում ցուցադրվում է կույր բախտի իշխանությունը՝ նրա անըմբռնելի ուղիներով, մարդկանց համար ամենաանսպասելի պատիժներով: Այդ բոլորը համապատասխանել է հույների ընդ-

հանուր կրոնական պատկերացումներին: Էվրիպիդեսի մոտ ճակատագրի անհաղթահարելիությունը զուգահեյվում է այն կրթերի անզսպելիության հետ, որոնք ավելի ուժեղ են, քան նախապաշարմունքի սարսափները և ուստի նույնպես հետապնդում են մարդուն, ինչպես ճակատագիրը: Սակայն և ճակատագրի և կրթերի դեմ, ըստ Էվրիպիդեսի, կանգնած է մարդը, նրա ազատ կամքը, բանակա-նությունը, որը պայքարում է իր հետևից հանցանքներ բերող կրթերի դեմ: Հակասությունների այս ամբողջ կոմպլեքսը, կենսական կոլլիզիաները, բանականության և կրթերի պայքարը հանդիսացել են «Մեդեա»-յի սյուժեին:

Մեդեան անզուսպ կրքոտությամբ վրեժ է լուծում իր ամուսնուց՝ Յասոնից, որը կրոնական գեղուհու պատճառով դավաճանել է Մեդեային: Նա երզվում է վրեժ լուծել ոչ միայն Յասոնից, այլև իր հարազատ երեխաներից, որոնց հայրը Յասոնն էր: Բայց մարդկային բանականությունը, մայրական ուժեղ զգացմունքները հակառակ են կանգնում նրա դիտավորություններին և ստեղծում հոգեբանական դրամա:

«Ի՞նչ անեմ ես, դժբախտս: Եթի ինձ անհրժեշտ է պատժել նրանց հորը, ապա ինչո՞ւ պատուհասել նրա դժբախտ երեխաներին և կրկնապատկել վիրտոս: Ո՛չ, ո՛չ, հեռու ինձնից, իմ դիտավորու-թյուն»:

Սակայն մտքի կարճատև պայծառումից հետո Մեդեային նորից տիրում է վրիժառուության կիրքը, որն ավելի ուժեղ է արհաճայտվում, քան բանականությունը: Մեդեան սպանում է իր երեխաներին. «Մեռեք դուք, Ես չեմ հանդուրժի, որ իմ երեխաները ենթարկվեն վիրավորանքի և բռնության: Ես որ կյանք եմ տվել դրանց, չավ է որ ես ինքս էլ սպանեմ: Նրանց ճակատագիրը վճռված է: Ձեր հայրը խլեց ձեզնից երկրային երջանակությունը՝ արտասանում է Մեդեան սեփական ձեռքով սպանելով իր երեխաներին:

Ինչպես այստեղ, նույնպես և Էվրիպիդեսի մյուս երկերում, տիպերը հանդես են գալիս որպես կենդանի մարդիկ իրենց առօրյա և վառ ապրումներով: Էվրիպիդեսը էսքիլոսի և Սովոկլեսի համեմատությամբ մի քայլ առաջ անցավ և մոտեցավ իրական կյանքին, որովհետև նա իր երկերի սյուժեին վերցրել է ոչ թե աստվածների և հերոսների մասին զրույցներից, այլ մարդկային կյանքից, ինչպես որ կա իրականում: Դրանով իսկ Էվրիպիդեսը դրամատիկական արվեստը բարձրացրեց և դրեց բարձր մակարդակի վրա և

ավելի մտայնացնել ժողովրդին: Էվրիպիդեսի թատրոնն իր գոյգոյ
փարական բովանդակությամբ առավել դեմոկրատական էր, և այդ
դեմոկրատական տեղեկանքը, անկասկած, բարեփոխել է հույների
գրամատիկական արվեստը:

Կատակերգության բնագավառում Հունաստանի գրողներին
ամենաակադամավորը կոչել է Եթեոսի Արիստոփանը (450—388 թ.
մ. թ. ա.): Նրա գրական գործունեության սկիզբը սկսվում է Պելո-
պոնեսյան պատերազմի ժամանակներից հետո: Արիստոփանից մեզ
մնացել են տասնմեկ կատակերգություններ, որոնցից հատկապես
աչքի են ընկնում «Հեծյալները», «Գորտերը», «Ամպերը», «Կանայք
ժողովրդական ժողովում»: Ոչ ոք, բացի Արիստոփանից, չի կար-
ողացել թատրոնն այնպես քաղաքականությամբ հագեցնել, նրան
հագեցնել սոցիալական պայքարի և քաղաքական կյանքի սյունի-
ներով: Աթենքի ճգնաժամի և Պելոպոնեսյան պատերազմների հե-
տևանքով առաջացած ներքին խմորումների ժամանակ, Արիստո-
փանը կյանքը ներկայացրել է առոթեր տեսանկյուններից: Երե-
լով արիստոկրատական պարտիայի՝ Սպարտայի հետ հաշտության
պարտիայի կողմնակից՝ Արիստոփանը ծաղրում է Եթեոսական դե-
մոկրատիային, որին նա պատկերում է խելքը կնքրած ծերունու
կերպարանքով: Արիստոփանը ծաղրել է նաև այդ ժամանակվա
ուսուցիչներին, փիլիսոփաներին, գրողներին: Նրա կոմեդիաների
թունոտ նետերը շին խնայում ոչ Մոկրատին, ոչ էլ միմյանց հետ
վեճի մեջ գտնվող էսքիլոսին ու Էվրիպիդեսին: Այնուամենայնիվ
նա կանգնելով էսքիլոսի կողմը, Էվրիպիդեսին վերապահում է
«ապաշնորհ և շաղակրատ» տրագիկի դեր, Արիստոփանը չի
խնայում նաև կրոնը: Գլխավոր աստծուն՝ Զևսին նա պատկերել է
զոդի և խաբեբայի կերպարանքով, Հերմեսին՝ որկրամոլի, իսկ Պո-
սեյդոնին՝ կաշառակերի: Այդ կոմեդիաները հանդիսատեսների
սրտներն ու մտքերը լցնում էին քաղաքական կրքերով և նրանց
հրապուրում էին դեպի թատրոն: Գրա համար էլ Արիստոփանի
կատակերգությունները կարելի է համարել բազմապիսի կատա-
կերգություններ, իսկ դրանց հեղինակին՝ Եթեոսական թատրոնի
շնորհալի և խորամիտ տրիբուն:

Հունական գրողները գերազանցապես ստրկատիրական դա-
սակարգի ծագում ունեն, սակայն նրանք կարողացել են քննադա-
տել նաև այդ դասակարգի պահպանությունները և ամբողջ հասար-
ակության կյանքը: Արիստոփանը, մասնավորապես, կարողացել
է նկատել մարդու, քաղաքացու, քաղաքական գործչի, գրողի ուժեղ

և թույլ կողմերը: Արիստոփանի կատակերգությունները զարթեցրել
են մարդկային միտքը, մարդկանց հարկադրել են մտածել, իրենց
գործողության ճիշտ ուղի ընտրել: Մշակելով սոպականը, հումա-
մարդկայինը, հոգու ազնիվ ավյունը, մի շարք կերպարներ, որոնք
ապրում են դարեր (օրինակ «Պրոմեթեոսը», «Անտիգոնին») և ուրիշ-
ները): Այդ ժամանակվա պատմական պայմաններում հունական
գրողներն, այդպիսով, նպաստել են ստրկատիրական շաստար-
կության, նրա կուլտուրայի, գրական ստեղծագործության և թատ-
րոնի զարգացմանը:

ՀՈՒՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Թատրոնի և ժողովրդական տոնահանդեսների կողքին հունա-
կան կուլտուրայի մեջ մեծ դեր են խաղացել այսպես կոչված
պլաստիկ և կառուցողական արվեստները: Գրանք են՝ նարտա-
րապետությունը և քանդակագործությունը: Այդ արվեստների նշա-
նակությունը հսկայական է: Այդ նախ և առաջ այն է, որ պլաս-
տիկ արվեստների արտադրանքները զարթեցրել են մարդու միտքն
ու զգացմունքները և ուղղություն են տվել նրանց ընկալելու
կատարելագործված ձևերը՝ սեմեոթիան և հարմոնիան, զեղեցիկն
ու վեմերը: Արվեստները դաստիարակում են մարդուն և զարգաց-
նում նրա ընդունակությունները մարմնավորելու կյանքի բովան-
դակությունը և հասարակության մեջ իշխող գաղափարները աստվել
կատարյալ ձևերով: Հին հույների պլաստիկ և կառուցողական ար-
վեստը ծնունդ է առել արհեստավորի ամենօրյա պրակտիկ գոր-
ծունեության հետևանքով: Միայն շատ ուշ ժամանակներում
գրանք ազատագրվել են արհեստից և դարձել զեղարվեստական
ստեղծագործության ինքնուրույն բնագավառ:

Նախ և առաջ դիմենք հունական ճարտարապետությանը: Հու-
նական ճարտարապետությունը հասել է բարձր մակարդակի և
մեզ տվել է հիանալի օրինակներ: V դարում մ. թ. ա. վերջ-
նականապես ձևակերպվեցին երեք հետիցյալ ճարտարապետական
ձևերը՝ դորական, յոնական և կորնթյան օրդերները: Հունական
ինժեներ Վիտրուվի իր «Տասը գիրք ճարտարապետության մաս-
ին» աշխատության մեջ, որտեղ բնութագրվում է հունական
ճարտարապետության փորձն ու գիտելիքները, նկարագրում է
երեք օրդերների առանձնահատկությունները: Օրդերները, որոնք
աչքի են ընկել դասավորության սխեմայով, համամասնությամբ և

շենքի մասերի ճարտարապետական ձևերով, Ծրտահայտելի հուշանկան ճարտարապետության լշխող ոճի առավել էական առանձնահատկությունները զարգացման տարբեր ժամանակաշրջաններում: Առանձին ոճերի էական առանձնահատկությունները եղել են սյունների համաչափությունները և ձևերը: Սյունի բնորոշ մասնիկը եղել է խոյակը, պսակավոր սյունը եղել է յուրաքանչյուր օրդերից տարբեր ձևով ու չափով: Կլոր բարձով և սալաբարձով պսակավորված սյունը մեզ հասկացողություն է տալիս խիստ պարզ դորական օրդերի մասին: Դորական սյուներով են զարդարված Մոսկվայի համալսարանի հին կորպուսը՝ ռուսական ճարտարապետության լավագույն ստեղծագործություններից մեկը: Սյունը, կողերից սպիտակ խոպոպիկներով և պսակավոր բարձերով, հանդիսանում է յոնական ոճի առավել դինամիկ և նրբակերտ մասը: Տոնիական ոճի սյուներով է զարդարված Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվան Կերպարվեստի թանգարանը: Սյունի խոյակը զարդարված է սաղարթով և խոպոպիկներով, կազմում է կորնթական բնորոշ, գեղեցիկ և փարթամ ոճը: Կորնթական ոճի սյուներ կարելի է տեսնել Միությունների Տան սյունազարդ դահլիճում Մոսկվայում և Մոսսոսովետի շենքի ֆասադին:

Այդ երեք ոճերի սյունների համար հույների կողմից մշակված ձևերը եղել են այնքան պարզ և միաժամանակ գեղեցիկ, իր որովազդեղությամբ որոշակի, դուրսմբռնելի և միաժամանակ վիհ, որ որպես կանոնի մտել են ճարտարապետության մեջ: Համահունկան ոճի ձևավորման ժամանակ հույներն սկսել են մի շենքի վրա կիրառել տարբեր ոճերի էլեմենտներ: Այսպես, Պարթենոնում դորական ու յոնիական ոճերի տարրերին են միակցվում: Ներկայումս ճարտարապետները միևնույն շենքի վրա օգտագործում են զանազան ոճեր, բայց նրա տարբեր մասերում:

Ճարտարապետության հետ սերտորեն կապակցված զարգացել է նաև քանդակագործությունը: Հույների մոտ քանդակագործությունը հասել է բարձր կատարելության և տվել մի շարք օրինակներ, որ այդ արվեստի հետագա զարգացման համար մեկնակետ են դարձել:

Հունական պլաստիկան ներկայացված է երեք ականավոր քանդակագործների՝ Միրոնի, Ֆիդիասի և Պոլիկլեսի գործերով: Միրոնը սկավառակ նետող (Դիակորոլ) արձանով տվել է պատանու գեղեցիկ կերպարը. Ֆիդիասին (500-431 թ. մ. թ. ա.) պատ-

կանում է Աթենա-Պազամիկուհու և Աթենա-Կույսի վսեմագույն արձանները՝ Պարթենոնի և Ակրոպոլիսի տաճարի համար և Օլիմպիոսում Զևսի տաճարի համար: Ֆիդիասի ժամանակակից Պոլիկլետոսը կարողացել է տալ մարդկային մարմնի պատկերավորման գեղեցիկ, իր համամասնություններով ներդաշնակ և ճշգրիտ օրինակներ: Նրա լավագույն գործերից են ոսկուց և փրզոսկրից քանդակված «Նիդալակիրը» (Դորիֆոր), «Լիրավորված ամազոնուհին» և «Հերայի արձանը» և այլն: Հետպերիկլեսյան կարխայում քանդակագործության սյուսետային բնույթը որոշ չափով փոփոխվում է: Այդ ժամանակ են ստեղծել իրենց աշխատանքները Պրակսիտելեսը և Սկոպասը («Հերմեսը», «Սատիրը», Նիոբեի տները խոսքը): Հունական քանդակագործների մեր նշած գործերը մտել են քանդակագործության կլասիկ օրինակների արսենալը: Դեռևս ներկայումս էլ քանդակագործության գեղարվեստական դպրոցներում նրանցով են ուսուցանում մեր երիտասարդությանը:

Նկարչությունը նույնպես առանձնացավ որպես արվեստի ինքնուրույն բնագավառ: Հունաստանի նկարչության մեծագույն ներկայացուցիչներից մեկը եղել է Պոլիգնոտեսը (V դ. մ. թ. ա.): Նա հայտնի է եղել Աթենքի «Նախտարզիտ կամարասրահում» և Դելֆյան տաճարում տեղալրված իր նկարներով, որոնք պատկերում էին Տրոյայի կործանումը: Պոլիգնոտեսի արտադրանքի հիմքում ընկած սյուսետների մասին մենք տեղեկանում ենք Պավսանիսից, որը նկարագրել է Պոլիգնոտեսի նկարները: Պոլիգնոտեսը մեծ ազդեցություն է ունեցել սկահակային նկարչության վրա: Նա մեծ համբավ է ունեցել այն վարպետների և արհեստավոր նկարիչների մեջ, որոնք սկահակները նկարազարդում էին հունական առասպելաբանությունից, ժողովրդական նիստ ու կացից, զանազան տոնահանդեսներից, մրցություններից վերցրած սյուսետների նկարներով: Ուշ ժամանակներում նկարչության մեջ մշակվեց նոր հունական նկարչությունը կատարելագործած ուղղությունը: Ապոլոնորը (V դարի երկրորդ կեսին մ. թ. ա.) հունական նկարչության այն ներկայացուցիչն էր, որը կարողացել է առավել ցցուն կերպով տեղադրել մարդկանց, լույսն ու ստվերները, հաղորդել հեռանկարը ու սահմանել վրձինների օգտագործման կանոնները:

Հունական նկարչության այդ արտադրանքները, ինչպես և դրամատիկական և կատակերգական երկերը մեզ համար ունեն ոչ միայն արվեստի հուշարձանների նշանակություն: Հույները

արվեստի զանազան սյուժեներում չէին կտրվում կյանքից և նրանց մեջ մարմնավորում էին պատմական իրադարձություններ, բնորոտ աչք հուշարձաններն ունեն պատմական աղբյուրների նշանակությունը: Հնության արվեստի հիշատակարանների, մեծ մասամբ մեզ չհասած, նկարագրություններ հանդիպում են անտիկ դրոշներ Ֆիլոստրատեսի, Պալսանիոսի և Կալիստրատի մոտ:

Հունաստանը երաժշտական արվեստի հայրենիքն էր: Հունարոսի մոտ պոետ Գեմադոկը իր բանաստեղծությունները տալիս լարային գործիքի՝ կիթառի նվագակցությամբ: Հունական բանաստեղծները, որպես կանոն, միաժամանակ երաժիշտներ են հղել: Շատ առասպելներում պատմված է լարային և փողային երաժշտության միջև տեղի ունեցած մրցությունների մասին: Լարային գործիքներին՝ քնարին, կիթառին հույները վերագրել են մարդկային բոլոր դպացմունքները ներդաշնակելու, համաձայնեցնելու և հանգստացնելու ընդունակություն: Երաժշտության դասավանդումը հունական դպրոցում մանկավարժական մեծ նշանակություն ուներ՝ «մարդկային հոգի պետք է վարժեցնել սիմֆոնի և ներդաշնակությանը, այն սոսկորեն հեղուկամբ, համաձայնության, իսկ դրա միջոցով խոսքով պարծով օգուտ բերել, որովհետև մարդկային ամբողջ կյանքը կառուցված է սիմֆոնի և ներդաշնակության» (Պլատոն. «Պրոտագորա» 326 ա.): Այլ կերպ էր փողային երաժշտությունը: Հույների մոտ այդ երաժշտությունը սիրված չէր: Ֆլեյտան և սրինդը հաշվել էր բարբարոսական մարդուն մոլուցքի հասցնելու ընդունակ երաժիշտություն: Այն նրանց կարծիքով հովիվների համար ծառայելու որպես հոտը հավաքելու, տեղից տեղ փոխադրելու և անասուններին տուն բաց թողնելու միջոց: Ստեղա-փողային գործիքների միայն երգահոնը, որը հանդես է եկել ըստ երևույթին Հունաստանում էպոսայում, իր վրա է հրավիրել հին հույների ուշադրությունը: Ուշ ժամանակներում հունական երաժշտությունը սկսել է տեսականորեն մշակվել և դարձել է ինքնուրույն արվեստ: Հույները գրադրվել են նաև ձայնի ելեկտրոնի մշակությամբ: Հայտնի է, որ փիլիսոփա մաթեմատիկոս Պյութագորասը (VI դար մ. թ. ա.) մեծ մաթեմատիկոս էվկլիդեսը (III դ. մ. թ. ա.) հատուկ շարադրանք են գրել երաժշտության մասին: Հետագայում երաժշտական ձայնի ելեկտրոնի մասին մեզ տեղեկություն է հաղորդում հռոմեական ինժեներ Վլատոպիսը, որն ապրել է Կեսարի և Օգոստոսի էպոսայում. և հունական աղբյուրներից օգտվել է իր «Մարտիա պոետիկայի մասին» տրակտատը կազմելիս: Այդ տրակտատում Վիտրուվիսը համապատասխան տեղ է հատկացնում նաև երաժշտական արվեստին, նրա տեխնիկային, պատմությանը և մարդկային կյանքում ունեցած նշանակությանը:

Այսպիսով, առասպելարանության, պոեզիայի, թատրոնի և արվեստի բնագավառում հունական կուլտուրայի զարգացման օրինակով կարելի է եզրակացնել, թե որքան շատ բան են հույները ներդրել մարդկային կուլտուրայի զանազանը: Նրանց ստեղծագործությունները հանդիսացել են ելակետ մի ամբողջ շարք արվեստների զարգացման համար, իսկ նրանց մի քանի երկեր նույնիսկ մինչև այժմ էլ մեզ համար ընդօրինակելի նշանակություն ունեն:

Մարքսիստական պատմական հետազոտության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն պրոբլեմը, թե ինչպես անտիկ աշխարհի չհասունացած հասարակական հարաբերությունները կարող էին ստեղծել ճարտարապետական, գրականության, արվեստի և մյուս բնագավառների այդպիսի օրինակներ: Այդ խնդրի լուծման զլխավոր դժվարությունը այն է՝ «սակայն դժվար ըմբռնելին այն չէ, որ հունական արվեստն ու էպոսը կապ ունեն հասարակական զարգացման որոշ ձևերի հետ: Դժվարությունն այն բանն ըմբռնելու մեջ է, որ հունական արվեստն ու էպոսը դեռ շարունակում են մեզ գեղարվեստական հաճույք պատճառել»¹:

Բացի թատրոնի, գրականության և արվեստի բնագավառում հույների ձեռք բերած նվաճումներից, նրանց կուլտուրական ժառանգության շարքին պետք է դասել նաև դիտությունների այն սաղմերը, որոնք հույները թողել են զանազան գիտությունների, մասնավորապես պատմության և փիլիսոփայության բնագավառներում: Դեռևս առաջուց մեզ վիճակվել է վկայակոչել այն, թե որքան մեծ նշանակություն է տվել էնգելսը հույների իմացություններին փիլիսոփայության բնագավառում և բնության ու հասարակության ճանաչման հիմունքների հարցերի ձևակերպման նրանց փորձերին «...հունական փիլիսոփայության բազմազան ձևերի մեջ մենք տեսնում ենք գրեթե բոլոր հետագա աշխարհայացքների սաղմերը, սկզբնավորությունը»²:

¹ Կառլ Մարքս. Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Պետհրատ, Երևան 1948 թ, էջ 271:

² Ֆ. Էնգելս. Բնությունը գիտելի է, 1936 թ, հայ. հրատ. էջ 113:

Ոչ պակաս նշանակութիւն ունեն նաև հունական պատմագրութեան նախահիմքերը, հասարակութեան զարգացման պատմական պրոցեսի ընդհանրացման փորձերը, ինչպես այդ հույներըն իրենց մէջ պատկերացնում էին հին ժամանակներում: Պատմական գիտութեան ձևավորման սկիզբը, ակունքը ընդունված հատկացնել հունական կուլտուրային, հունական պատմաբանների ստեղծագործութիւններին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԻՄՔԵՐԸ .

Ինչ վերաբերում է պատմական գիտութեանը, նրա զարգացման ուղիներին հեռավոր հնութիւնից ընդհուպ մինչև ներկայի կացութիւնը կապիտալիստական երկրներում, ապա կարելի է ասել, որ այդ գիտութեան ձևատարները ցույց է տալիս, թե որքան անձարակ կերպով է վարվում մարդը անցյալի ժառանգութեան հետ. ինչպես նա երբեմն վախենում է իրականութիւնից և խուսափում պատմական ճշմարտութիւնից:

Մինչև մարքսիստական պատմագիտութեան առաջացումը որը տվել է պատմական պրոցեսի օրեկտիվ օրինաչափութիւնները մասին միակ ճշմարիտ գիտական հասկացողութիւնը, դասակարգային հասարակութիւնների մեջ պատմական գիտութիւնների ողջ զարգացումը, հասարակութեան մասին մինչ այդ ժամանակաշրջանի գիտութեան զարգացումը ծառայութիւն է մատուցել տիրող շահագործող դասակարգերին և նրանց դասակարգային պետութեանը:

Սովետական մարքսիստ-պատմաբանը քաջ գիտե, որ հենց պատմութեան առաջացումը դեռևս խորը հնութեան մեջ կապված է եղել ոչ այնքան անցյալի նկարագիրը ճշտութեամբ տալու ցանկութեան, որքան աստվածների գործերը, թագավորների և հերոսների սխրագործութիւնները, կառավարող աստվածային սերունդաբանութիւնը, կառավարութիւնների ուժը և հարստութիւնը գովիւրդելու ձգտման հետ:

Օրինակի համար, վերցնենք հին Արևելքի երկրները: Պատմական գիտութիւնը այնտեղ գտնվել է ամենասաղմնային ձևի մեջ: Մեզ հայտնի է, որ եգիպտական «պատմութեան աստվածուհու» պարտականութեան մեջ է մտել փարավոնների ռազմական արշավի, վերցված գերիների թվի, թագավորութեան կարևորագույն իրադարձութիւնների հանդիսավոր գրանցումը: Դրա համար էլ «պատմութեան աստվածուհին»

պիտոսում որպես սերնդի խրատ և որպես մարդկային ժառանգութիւն «կտակում էր»-«լուսավոր մարդկանց» պատվին գրված զբոսորդի միայն: Եվ հին Հունաստանում Զևսի «ստեղծած» պատմութեան՝ Քլիոն, սկզբում «զբաղվել» է միայն աստվածների հրագործութիւնների, ազնվական հերոսների ամենակարող սխրագործութիւնների զովեբրութեամբ և դրա համար էլ համարվել է ժողովրդի մոլեռեկուհին, որպիսի փառքին քչերն էին արժանանում: Մարդկութեան պատմութիւնը հունա-հռոմեական աշխարհի տեսիկ ժողովուրդներին ներկայացվել է որպես աստվածային կամքի, տեսիլքի, ճակատագրի հայտնութիւն: Բայտը, կամ ճատագործը, կարծես թե նախապես որոշում են հասարակութեան անհատ մարդկանց վիճակը: Յուրաքանչյուր էակ, յուրաքանչյուր երևույթ ունեցել է իր բախտը, իր կանխագուշակ վիճակը: Այսպես, օրինակ, fata scribunda-ները (կանխագծված բախտ) էին մարդկանց պատկերացմամբ նոր ծնված երեխային, թեկ շաքաթ անցնելուց հետո, կառավարում է մարդու բախտը: Երկրային է, որ քրիստոնեական դրող Ավգուստինոսը ավելի հետզհետե և զարգացրեց նույնիսկ բախտի, կամ կանխորոշված վիճակի, գաղափարը, առանձին ժողովուրդների պատմական կյանքում:

Հիրավի, առանձին, հին նշանավոր պատմաբաններ և մտաբաններ Թուկիդիդեսը, Արիստոտելը, Պոլիբիոսը, Ապիանը և ուրիշները փորձել են իմաստավորել ընթացքը, բայց նրանք չկարողացան դուրս գալ այն սահմաններից, որոնք նրանց առաջարկել էր Ապոլլան, և դրա համար էլ նրանք անխուսափելիորեն բաժանում են այդ էպոխայի իլուզիաները: Պատմական գիտութեան մանկական վիճակի հետևանքով հին աշխարհում նրանց տվյալները անբավարար են եղել: Իսկապես, մենք իրավունք չունենք նույնիսկ խոսելու պատմական գիտութեան մասին, որպես այդպիսին: Երբեք կլինեն խոսել պատմական գիտութեան նախահիմքերի մասին: Պատմական գիտութեան այդ մակարդակի վրա, բնականաբար, չէին կարող կանգնել ոչ սոցիալական դարդացման օրինաչափութիւնների վերաբերյալ պրոբլեմները, ոչ էլ անցյալի փորձի վերաբերյալ հարցերի հաշվառումը ներկայումս գործադրելու համար: Միայն հունական պատմաբան, Պոլիբիոսը՝ III դար մ. թ. ա. նշում է իր ժամանակակից հասարակութեան համար պատմական գիտելիքների մի քանի պրոբլեմներ: Բուն գիտելիքը դեռևս գիտական չէր: Այն ժամանակվա պայմաններում լայն հետաքրքրութիւն չէր հարուցում, նա դաստիարակչական նշանակութիւն չունէր, դրա համար էլ գրեթե ամ-

բաղըստին եղել է կրօնավորների, հոետորների և պարզապես պետականների, տարբեր տեսակի դեկլամատորների և ճառասիրների իրավասության տակ:

Դրանով է բացատրվում այն փաստը, որ պատմությունը պակաս ինքնուրույն դիսցիպլին, որպես դասավանդման առանձին տարակա, մինչև XIX դարը երբեք գոյություն չի ունեցել տարրական և միջնակարգ դպրոցների սիստեմում: Անտիկ դպրոցը ունեցել պատմություն ու բնագիտություն և, բացի մաթեմատիկայից, ճարտասանությունից, գիմնաստիկայից, կրթության սիստեմում ոչինչ չէր ճանաչվում: Հին աշխարհի մեծ մտածողների գիտնականները (Գեմոկրիտ, Արիստոտել, Քեոֆրոսը, Վատսեղել են գիտության բոլոր բնագավառներն ուսումնասիրող և ցիկլոպեդիստներ: Դպրոցական կրթությունն էլ մեծապես սահմանափակ է եղել. հատկապես հումանիտար գիտությունների և մասնավորապես, պատմության բնագավառում: Հույների համար պատմությունը եղել է պերճախոսություն, պատմական իրադարձությունների դրամատիզացիայի արվեստ, ճառի, ճոռմության միջոց:

Դեպի պատմությունը այդպիսի վերաբերմունք ունենալու նպաստել են հենց իրենք՝ պատմաբանները: Այսպես, մեզ հայտնի է, որ նշանավոր «պատմահայր» Հերոդոտ Գալիկաոնասցին, որ մասին կարելի է խոսել, որպես առաջին պատմաբանի, գեոսոփ կարողացել տալ պատմական դեպքերի ճիշտ պատկերը: Նա պատմական դեպքերի իր գրանցումները այսպես է փաստարկում «ճիշտ է արդյոք այս,—ես չեմ իմանում, բայց ինչ որ ասում են, այն էլ գրում եմ»¹:

Պատմական գիտության այդ մակարդակի մասին մեծ կարծիքի չեն եղել նաև իրենք անտիկ գրողները: Այսպես, օրինակ Պլուտարքոսը խոսում է Հերոդոտի «լարաննդություն» դեպքի նկարագրության մեջ կանխակալ տենդենցիոզության մասին: Արիստոտելը Հերոդոտին ուղղակի անվանում է առասպելաբան, որը որևէ բանում դժվար է հավատալ: Այլ Գելին նրան անվանում հոմոֆալսոլոգատոր (մարդ առակ): Կտեսին ավելի հեռու գնալով՝ Հերոդոտին տալիս է ստախոսի մականուն:

Իհարկե, հին պատմաբանին տրված այսպիսի դնահատակները իրենց հին գրողների կողմից կարող են լինել շատ աշտ

և, իհարկե, մենք չենք կարող համաձայնվել Հերոդոտի նման թերազնահատմանը: Հիրավի, ժամանակակից տվյալներով Հերոդոտի մի քանի «նույնիներին» տրվում է արժանահավատություն, որոնք պարզապես առաջ համարվել են մտացածին: Մենք նկատի ունենք Բաբելոնի պարիսպները, որոնց մնացորդները հայտնաբերվել են, և դեպի Առաջավոր Ասիա սկոթագիների կատարած արշավանքի մասին ասույթը, որը հաստատվում է հնագիտությամբ:

Թե ինչ կարծիքներ են եղել հին ժամանակներում պատմության վերաբերյալ, որպես գիտություն, կարելի է դատել նրա մասին հին աշխարհի մի շարք գրողների ասույթներով ևս: Այսպես, օրինակ՝ Լուկիանոսը, որը պատրաստ էր Հերոդոտին ստախոսություն համար հրել անդունդը, ինքը հանձնարարում էր հետազոտության համար հրել անդունդը, ինքը հանձնարարում էր հետազոտել պատմաբանների մոտ ոչ թե այն, ինչ նրանք են ասում, այլ միայն այն, ինչպես են նրանք խոսում, նրանց ճարտասանությունը: Կարող է պատահել, որ ավելի ինքնաքննադատ է եղել Սենեկան, որը իրեն և ուրիշներին հանձնարարել է վարվել պարզ կերպով, ինչպես ամեն մի «պատմաբան», «որը շատ է ստեղծագործում իր սիսկով, բայց չի ցանկանում որևէ բան ապացուցել»:

Հետևապես պատմության վրա ոչ թե որպես գիտության վրա են նայել, այլ որպես ճարտասանական վարժությունների:

Կիկերոնն իդուր չէ ասել «historia est opus maxime oratorum» (պատմությունը դա գլխավորապես հոետորական գործ է): Պատմական գիտության նկատմամբ նման հայացքների տեսակետից էլ մենք պետք է մոտենանք այդ գիտության քննարկմանը հին հույների մոտ: Միծաղելի և միամտություն կլինեք պատմական հետազոտությունների բնագավառում հին հույներին ներկայացնել ժամանակակից պահանջներ:

Ընդհակառակը, անհրաժեշտ է կոնկրետ կերպով հետևել, թե ինչպիսի պայմաններում էին հին Հունաստանում ծնունդ առել պատմական գիտելիքները և ստեղծվել պատմական գիտության այն նախահիմքերը, որոնք հետագա զարգացմամբ դարերի ընթացքում նախապատրաստում են մարքսիստական պատմագիտությունը, որը հենվում է նախընթաց բոլոր գիտությունների նվաճումների վրա, որպիսիք կուտակված են մարդկության պատմության մեջ:

Լ Ո Վ Ո Գ Ր Ա Ֆ Ն Ե Ր Ը

Այժմ կոնկրետ կերպով գիմենք պատմական գիտության բնագավառի հունական ներկայացուցիչներին: Հունական պատմագրու-

¹ Геродот, Истории II, 132.

թյունը իր զարգացման նախնական ստադիայում սերտ կերպով կապված է էպոսի, ժողովրդական ասուլիսների և նույնիսկ առասպելաբանության հետ: Էպիկական պոեմները և հին առասպելները հույների համար ըստ էության եղել են հին պատմություն, Հույների միամտորեն հավատացել են առասպելական հերոսների գոյությանը, որոնց սխրագործությունները գովերգվել են, և այն ամենի իրականությանը, որի մասին պատմվել է ժողովրդական էպոսում: Ուստի զարմանալի չէ նաև այն, որ Հոմերոսը նրանց համար, անկասկած, եղել է պատմական անձնավորություն, երբեմնի կատարված իրադարձությունների պատմական վկա:

Հունական պատմագրության հայրենիքը գտնվում է այնտեղ, որտեղ ըստ էության և ընդհանրապես գտնվում է գիտության, փիլիսոփայության, էպոսի և լիրիկայի հայրենիքը: Դա փոքրասիական ափերի գաղութներն էին, գերազանցապես Յունիան և մոտակա կղզիները: Մինչև V դարը մ. թ. ա. այստեղ եղել է հույների քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի կենտրոնը: VIII—VI դ. դ. մ. թ. ա. հունական գաղութների տեսությունից մենք գիտենք, որ այնպիսի վաղ այստեղ, քան Հունաստանի մայրցամաքային մի այլ վայրում առաջացել են առևտրական քաղաքակտությունները, որոնք իրենց վրա են վերցրել արևելյան կուլտուրայի ազդեցությունը և որոշ չափով կամուրջ են եղել Փոքր Ասիայից արևելյան կուլտուրան բուն Հունաստանին հաղորդելու համար: Ենթահիվ արևելյան կուլտուրայի հետ անմիջական շփման, Յունիայի ժողովրդի մտահորիզոնը նշանակալից չափով լայն է եղել: Այստեղ վաղ զարգացավ առևտուրը, փոխանակությունը, ստեղծվեց հարաբերություններ արևելյան, հյուսիսային և արևմտյան առանձին-առանձին մարզերի հետ: Այս բոլորը միասին վերցրած չէին կարող պայմաններ շտեղծել ամենատարբեր բնագավառներում գիտության՝ մաթեմատիկայի, փիլիսոփայության, ինչպես և պատմական գիտելիքների ձևավորման համար:

Հունական առաջին պատմաբաններին, Հերիդոտի նախորդներին, ընդունված է անվանել «ըզոգրաֆներ»: Այդ լոգոգրաֆների, այսինքն՝ պրոզայիկ-գրողների երկերը, որոնք գրի են առել դատավարական ճառեր, զանազան իրադարձություններ, ավանդություններ և այլն, ամբողջովին մեզ չեն հասել, որը պետք է մեծ կորուստ համարել մեր գիտության համար: Դրանք մեզ հասել են, գլխավորապես, ֆրագմենտների, ուրիշների՝ ավելի ուշ ժամանակվա հեղինակների կողմից բերված ցիտատների ձևով, որոնց միշտ չէ, որ ճիշտ

կերպով վերարտադրել են մեզ բերված տեքստը, այլ մեծ մասամբ էրինց խոսքերով ավել են այդ լոգոգրաֆների ընդհանուր միտքը:

Իրենց բովանդակությամբ ինչպիսի՞ն են եղել լոգոգրաֆների այդ երկերը: Նրանց ստեղծագործությունները, պլասավորապես, սփրված են եղել պատմա-առասպելաբանական և աշխարհագրական սյուսիներին: Նրանք ամենից շատ ավել են տեղական խորհիկաներ, քաղաքների հիմնադրման, հերոսների ծննդաբանության և երկրի նկարագրության մասին ասուլիսներ: Լոգոգրաֆների պատմությունների ծանրության կենտրոնը համընկնում է առասպելական ժամանակների հետ: Լոգոգրաֆները ունեւ պատմությունը առասպելաբանական պատմությունից շեն տարբերել: Եվ մեկը և մյուսը նրանք համարել են հավասարաթեք և միասնուսել են իրենց շարագրանքում:

Հույների վկայությամբ առաջին լոգոգրաֆը եղել է միլետացի Կադմասը (VI դարի II կես մ. թ. ա.): Նա գրել է երկ Միլետի հիմնադրման վերաբերյալ: Բայց զժրախատար Կադմասից ոչինչ չի պահպանվել, բացի նրա մասին ուրիշ պատմաբանների իշատակություններից:

Մյուս լոգոգրաֆը, ի զեպ, Հերոդոտի բոլոր նախորդներից ամենանշանավորը, եղել է Հեկատեյը: Սա էլ, ինչպես Կադմասը, միլետացի էր և ժամանակակից էր պարսկական տիրակալության դեմ յոնական ապստամբությանը: Մեզ հայտնի է, որ նա այդ իրադարձությունների ժամանակ մեծ դեր է խաղացել: Նա զբաղվել է ոչ միայն պատմական, այլև աշխարհագրական սյուսիներով: Նրան են վերագրվում ոչ միայն ծննդաբանության և պատմության վերաբերյալ պատմական երկերը (4 գրքում), այլև նրկրի նկարագրությունը: Վերջին աշխատության մեջ Հեկատեյը նկարագրել է Եվրոպան, Ասիան, Աֆրիկան (կիրաններ) և կցել է աշխարհագրական նոր քարտեզ, կատարելագործելով նրա կազմման տեխնիկան (Անախիմանդրի առաջին փորձի համեմատությամբ): Հեկատեյը շատ է ճանապարհորդել: Նա եղել է զանազան երկրներում: Մյուս լոգոգրաֆներից նա տարբերվում է նրանով, որ իր պատմական հրկասիրությունների մեջ աշխատում է խուսափել կասկածելի նյութեր հաղորդելու մեթոդից: Նա աշխատել է առ նյութն ստուգել և տալ իրադարձությունների ճշմարտացի պատկերը: «Մն գրում եմ ինչ որ համարում եմ իրական, որովհետև հելլենների մոտ գոյություն ունեն շատ, ինչպես թվում է ինձ, խիստ ծիծաղելի պատմվածքներ»:

Վերջապես, լոգոգրաֆներից անհրաժեշտ է նշել Հետևյալը՝ նախան նախնական պատմագրության ոչ պակաս նշանակությունն ունեցող ներկայացուցչին՝ Հելլանիկին: Նա եղել է Հերոդոտի կրտսեր ժամանակակիցը: Նրան վերագրում են զանազան աշխատություններ, սակայն նրա գլխավոր աշխատությունը նվիրված է հերոսների ծննդաբանությանը: Հելլանիկի կողմից այն պատմություն է առասպելների հիման վրա, որոնք խնամքով հավաքվել, և անմի են բերվել և հանգամանորեն պատմվել լոգոգրաֆի կողմից:

Թեպետ մի քանի լոգոգրաֆների, ինչպես Հեզախի նկատմամբ է տեղական առասպելական պատմությունից անհրաժեշտ դեպի ընդհանուրին և առավելապես ուսուցիչ, այնուամենայնիվ լոգոգրաֆներից ոչ մեկը չի արժանացել պատմության հարուստ կուլտուրայի: Այդ անունը մնացել է և մինչև այժմ էլ դեռ մնում է Հերոդոտի համար. նրան «պատմության հայր» անվանել է գերմանացի հիկերոնը: Ծիշտ է, Հերոդոտի և լոգոգրաֆների միջև ըստ էության չկա անացնելի անդունդ, այնուամենայնիվ Հերոդոտը էականապես տարբերվում է լոգոգրաֆներից և իրավացիորեն կրում է պատմության հայր» պատվավոր տիտղոսը:

ՀԵՐՈԴՈՏ, ԹՈՒԿՆՈՒՄԵՍ ԵՎ ՔՍԵՆՈՓՈՆ ՊԱՏՄԱՐԱՆՆԵՐԸ

Ո՞րն է Հերոդոտի աշխատությունների արժեքը: Նախ, իրական դեպքերի, գլխավորապես, հունա-պարսկական պատերազմի պատմության պատմականությունը. երկրորդ, գլխավոր թեմայի միասնությունը և հոյակապությունը, որպիսին չի եղել լոգոգրաֆների մոտ, որոնց զբաղեցրել են միայն առանձին այն իրադրությունները, առանձին քաղաքները, և ոչ թե ժողովուրդները: Հունական պատկերացման մեջ այն ժամանակ գոյություն չուներ այդ ամբողջ աշխարհը:

Հերոդոտը Փոքր Ասիայի կարեական ափի դորիական կառնաս քաղաքից էր: Այսպիսով, Հերոդոտի հայրենիքը, ինչպես և հունական գիտության մյուս շատ ներկայացուցիչների հայրենիքը եղել է Փոքր Ասիան: Հերոդոտի կյանքը (485—425 մ. թ. ա. թ.) անցել է ճանապարհորդությունների մեջ: Այդ ժամանակվա հայրենի ամբողջ աշխարհը շրջել է Հերոդոտը: Նա եղել է Պարսկաստանում, այցելել է պարսկական թագավորության գլխավոր քաղաքները, ճանապարհորդել է Սև ծովի հեռավոր ափերով, եղել է Եգիպտոսում, ապրել է Սամոս կղզում և իր ճանապարհորդ

ության ժամանակ հասել է նույնիսկ արևմուտք՝ Իտալիա և Սիցիլիա: Այդ բոլոր ճանապարհորդությունների ժամանակամիջոցում Հերոդոտը կարողացել է հարուստ նյութեր հավաքել թե պատմության, թե էականագրության և թե այն ժողովուրդների կենցաղի վերաբերյալ, որոնց հետ ծանոթացել է: Հերոդոտը բազմակողմանի կրթության տեր մարդ է եղել: Նա խմացել է իրենից առաջ ապրած լոգոգրաֆների պատմական աշխատությունները, ինչպես նաև իրեն ժամանակակից փիլիսոփայությունն ու գրամատիկական գրականությունը: Եր «նաստրիաներ» աշխատության մեջ նա խմել է բերել այդ բոլոր նյութերը:

Հերոդոտը առաջին պատմաբանն է, որ ավել է պատմության միտի և գեղեցիկ շարադրանք: Եր առաջին շրջա դրբերում Հերոդոտը շարադրում է գանազան ժողովուրդների, մասնավորապես ՄՄՄ-ի հարավ-արևելյան մասում նում բնակարձակ տարածությունների վրա բնակություն հաստատած սկյութների պատմությունը: Հինգերորդ գրքում Հերոդոտն անցնում է իր հիմնական նունա-պարսկական պատերազմների թեմային: Հունա-պարսկական պատերազմների պատմությունը կազմում է Հերոդոտի «նաստրիաների» հիմնական սյուժեն: Այդ սյուժեի ծավալմամբ Հերոդոտը բացառապես է իր աշխարհայացքը և բազմապիսի իր մտածականքն ու վերաբերմունքը դեպի այս կամ այն ժողովուրդը: Հերոդոտը դեմ չէ նույնիսկ հունա-պարսկական պատերազմի փորձից ելնելով անել համապատասխան, ժողովուրդների նկատմամբ պատմության համար կարևոր, եզրակացություններ, դասեր:

«Ուս ինձ պարտավոր եմ համարում այստեղ արտահայտել իմ կարծիքը վերջերս տեղի ունեցած պատերազմի մասին, թեպետ այս կարծիքը ստեղծ է հելլենների մեծամասնությանը: Ես պատմության առաջ մեղանշած չեմ լինի, եթե ստեմ, որ պարսկական շարդում Հելլադայի իսկական փրկիչները եղել են ասիականները: Նրանց վերաբերմունքն էլ հենց վճռեց կամպանիայի ժախտման: Ինքն ինքն գնահատելով ազատությունը, նրանք ստաֆի հանեցին ամբողջ հելլենական աշխարհը և ընդհանուր ուժերով հակառակում ավելին թշնամուն: Այդպիսի եռանդով կարող է պայքարել միայն ազատ ժողովուրդը:»

Հերոդոտի աշխատությունները բնութագրելիս չի կարելի ուրախանալ անել, որ Հերոդոտի մոտ շատ բան արված է անմիջապես դեպքերում նրա շարադրանքը անցել է սուբեկտիվ երանդի իսկ որ գլխավորն է ժողովուրդների պատմության մեջ տեղ է

հատկացվում աստվածությունների կամ ճակատագրի ֆակտորի
Հերոդոտի կարծիքով երկրի վրա շատ դժբախտություններ պա-
տահում են աստվածությունների նախանձոտության հետևանքով

«Աստվածությունը ասում է Հերոդոտը,—նախանձոտ է,
մարդկային դժբախտությունը աստվածներին հաճույք է պատճա-
ռում»: Աշխարհում, Հերոդոտի կարծիքով, գործում է նեմեզիդի
վրիժառության աստվածուհին: Հերոդոտի մոտ հաճախ հանդես
գալիս ցասումի աստվածությունը, որը իր ցասումն է թափում
ժողովրդի վրա, կառավարողների և նրանց սերունդների վրա: ձե-
բողոտի, որպես պատմաբանի, այդ հատկությունները շպեղ
նվաստեցնեն նրա աշխատությունների նշանակությունը և նրա ին-
արժեքը որպես «պատմահոր»: Հերոդոտը կատարել է իր ժամա-
նակվա լուրջ խնդիրը, որը առաջադրել է ինքը իր պատմական
երկրում: Սկզբից եեթ իր աշխատությունների նպատակն է հա-
մարել պրպտումները, նյութերի հավաքումը. «որպեսզի,—իր ին-
սեփական խոսքերով,—ժամանակի հիշողությունից չջնջի մարդ-
կանց հրաշագործությունները, մոռացության շտրվին ինչպես հե-
լենների, այնպես էլ բարբարոսների կատարած վսեմ և հիացմունք
պատճառող սխրագործությունները, իսկ առանձնապես այն պատ-
ճառները, որոնք նրանց խթանել են պատերազմում հանդես գալիս
իրար դեմ»:

Այսպիսով, Հերոդոտի մոտ աստվածավախությունը և թերտ
հավատությունը զուգակցվում են ռացիոնալիզմի սաղմերի հե-
փաստերը բացատրելու և նրանցից համապատասխան եզրակացու-
թյուն հանելու հետ, որքան էլ թեկուզ զրանք մեզ այժմ նախվթիվան

Մյուս առավել խոշոր պատմաբանը՝ Հերոդոտի կրտսեր ժամա-
նակակից Թուկիդիդեսն էր (455—396 թ. թ. մ. թ. ա.): Նա ազնվա-
կան ծագում է ունեցել, Թրակիայում ունեցել է հարուստ հանքեր
կղզի է ստրատեզ և մասնակցել է Պելոպոնեսյան պատերազմի
իր նշանավոր աշխատությունը Թուկիդիդեսը նվիրել է Պելոպո-
նեսյան պատերազմի պատմությանը: 8 գրքերի մեջ ամփոփվում
այդ պատմությունը նա գրել է վտարանդիության մեջ: Իր «Իս-
տորիա» աշխատության մեջ Թուկիդիդեսը իրադարձությունների
շարադրանքը հասցնում է մինչև 411 թ. մ. թ. ա.: Նրա աշխատու-
թյան և պատմական նյութի հետ վերաբերվելու մեթոդների բնու-
թագրման համար չի կարելի չբերել իրեն իսկ Թուկիդիդեսի խոս-
քերը, որպիսի խոսքերով նա իր աշխատությունների առաջի-
գրքում դիմում է ընթերցողներին:

«Ինչ վերաբերում է պատերազմի ընթացքում տեղի ունեցած
իրադարձություններին, ապա ես համաձայն չեի համարում իմ
առաջ գրված խնդրին գրի առնել այն, ինչ որ իմանում
էի առաջին հանդիպողից, կամ այն, ինչ ես կարող էի
ենթադրել, բայց գրի եմ առել այն իրադարձությունները, որոնց
ականատես եմ եղել ինքս, և այն, ինչ ես ուրիշներից եմ լսել՝
յուրաքանչյուր առանձին վերցրած փաստի վերաբերյալ որքան
հնարավոր է ճիշտ հետազոտություններ կատարելուց հետո:
Պրպտումները դժվար էին, որովհետև առանձին փաստերի տկա-
նատեսները զրանք հաղորդում էին ոչ թե միատեսակ, այլ այնպես,
ինչպես ամեն մեկը կարող էր հաղորդել՝ ղեկավարվելով պատե-
րազմող կողմերից մեկին ու մեկին տաժաժ իր համակրանքով կամ
հիմնվելով իր հիշողության վրա: Կարող է պատահել, որ իմ շա-
րադրանքը, համով հոտով առակ չէ, ավելի պակաս բարեհնչյուն
լինի, սակայն այն բավականաչափ օգտակար կհամարեն բոլոր
նրանք, որոնք կցանկանան պարզ պատկերացում ունենալ անցած
գնացածի մասին, որը կարող է մարդկային բնավորության հատ-
կություններով ապագայում երբեք կրկնվել, միևնույն կամ համա-
նման ձևով: Իմ աշխատանքը նկատի է ունեցել ոչ այնքան այն, որ
տվյալ պահին ծառայի որպես բանահյուսության մրցակցություն,
որքան այն, որ դառնա հավիտենական սեփականություն»:

Հիրավի, Թուկիդիդեսն օգտագործում է մեծ քանակությամբ
փաստաթղթեր, պայմանագրերի տեքստեր, մակագրություններ և
իրեղեն հուշարձաններ, պոետների և քաղաքական գործիչների
վկայություններ: Եթե Հերոդոտն իր «Իստորիաները» գրելուց հետո
ասել է իր նկարագրած իրադարձությունների մասին հետևյալը՝
«Ճշմարիտ է արդյոք այդ,—ես չգիտեմ, բայց ինչ որ ասում են, ես
էլ գրում եմ»,—ապա Թուկիդիդեսը իրեն առաջ խնդիր է դնում
պրպտել ճշմարտությունը, այն մաքրել անեկզոտներից, մտացա-
ծին ու բանաստեղծական երանգավորումներից: Իրա համար էլ
նա չի ձգտում դեպի արտաքին էֆեկտը և դրավլությունը: Նա ձրգ-
տում է, ըստ հնարավորություն, տալ գեպերի օբեկտիվ շարադրան-
քը: Այսպես, օրինակ, «Պելոպոնեսյան պատերազմի պատմության»
մեջ նա նկարագրում է իր ժամանակի սոցիալական սուր պայքա-
յրը, տալիս է առանձին գործիչների քաղաքական բնութագիրը և
գրանով իսկ բացահայտում է տարբեր ուղղությունները, հոսանք-
ները և տեղի ունեցող պայքարի սոցիալական երանգները: Հե-

տաքրքրական է այդ պատմարանի՝ գործող տնձանց իրենց կրոյթ ներքով, ճառերով պատկերելու եղանակը: Կորնթական պատմիրոսկ ներքի ճառը Սպարտայի Պելոպոնեսյան առաջին համագումարում աթենական ֆելոլոյացուցիչների պատասխան ճառը, սպարտական թագավոր Արքիդամոսի ճառը, որը հայտնի է Ատտիկա կասարտի իր ներխուժմամբ, Պերիկլեսի հայտնի ճառը զոհված սազմիկների դերեզմանի վրա, Կլեոնի և քաղաքական մյուս գործիչների ճառերը կարծես թե կենդանի կերպով պատկերում են այդ ժամանակ վա սոցիալական պայքարի ներկայացուցիչներին և, որը դյուս վորն է, տալիս են ուղղություն նրանց քաղաքական շահերի, ծրագիր նրանց քաղաքական գործողությունների համար զանազան հարցերի վերաբերյալ, այն է՝ պատերազմը վարելու, պետության ներքին կյանքի, հելլենների միջև միջադպարն խոստովաթյա վերաբերյալ:

Որպես արիստոկրատիայի ներկայացուցիչ, իր քաղաքական համակրանքով Թուկիդիդեսը դեմոկրատիայից հեռու է եղել Քայց Թուկիդիդեսի ուժը որպես պատմաբանի հենց այն է որ նա շանացել է իր նեղ դասակարգային շահերից ավելի վեր բարձրանալու: Թուկիդիդեսը դեպի ստրկատիրակազմ դեմոկրատիան աշխատել է վերաբերվել օրեկտիվորեն և զիջողաբար, լվում է թե նա հասկացել է պատմության մեջ նկարագրվող ամբողջ օրինաչափությունը, կարծես թե նա գնահատել է դարերի մեջ վաղուց խորասուզված դեպքերը: Աթենական դեմոկրատիայի առաջնորդ Պերիկլեսի մասին Թուկիդիդեսը պետք է ասեր հետևյալ խոսքերը՝ «Պերիկլեսը հենվելով իր հեղինակության և խելքի վրա, լինելով քաղաքացիներից ամենից անկաշառելին, սզատ կերպով զսպել է ժողովրդական մասսաները և կարողացել է զեկավարել Աթենական պետության ժողովրդական մասսաներին»:

Իր քաղաքական համակրանքով այլ է եղել Նունական լեռնայալ խոշոր պատմաբան Քսենոփոնը (430—355 թ.թ. մ.թ. ա. յ) Այս պատմաբանը եղել է աթենական օլիգարխիների դադափարախոսը, հին ազնվազարմ արիստոկրատիայի շահերի ներկայացուցիչը և, այսպիսով, հարել է սպարտական օրենստեսիային: Քսենոփոնը երկար ժամանակ ծառայության մեջ է եղել սպարտական թագավորության Կյուրոս կրտսերի մոտ Սարգախ քաղաքում: Կյուրոսի մահից հետո, վարձու սազմիկների հետ Բարեչոնից վերադառնում է հայրենիք: Այդ երթը նա նկարագրիչ է «Անարազիս» երկասիրության մեջ: Քսենոփոնը Սպարտային է նվիրել իր

լակեդեմոնական պետության մասին: Նույնպես մեծ աշխատությունը Այդ աշխատությունում Քսենոփոնը փաստարձանում է հին Սպարտայի կյանքը, և ամբողջ գորականի երկրպագու էր: Քսենոփոնի կարծիքով Պելոպոնեսյան պատերազմում Սպարտայի հաղթանակը բացատրվում է Սպարտայի կարգերով, նրա սազմակազմ կազմակերպությամբ և հիմնալի հետևակով:

Քսենոփոնը մի շարք ուրիշ աշխատություններ է թողել: Մյուսրք գիտնականներ Քսենոփոնին են վերագրում «Աթենական պոլիտիան», սակայն գիտության մեջ հարցը դեռևս չի վճռված: «Աթենական պոլիտիան» պամֆլետի մի տեսակն է, որը ծագում է աթենքի դեմոկրատական կարգերը:

Այդ փաստաթղթի նշանակությունը Արիստոտելի «Աթենական պոլիտիայի» հետ միասին վերցրած մեզ համար չափազանց մեծ է: Միևնույն թեմային նվիրված երկու այդ աշխատություններն է: աթենական կարգերը նկարագրում են տարեր տեսանկյունների: Վրանով իսկ օգնում են մեզ պարզապես կերականությունը: Եվ սինքն՝ Աթենքի ստրկատիրական դեմոկրատիայի գործողում տեսլ պայմանները:

Քսենոփոնը կարծես թե ամփոփում է Նունական պատմության վրայ զարգացման կլասիկ ժամանակաշրջանը:

Հետագայի Նունական գրողները, ավելի ուշ ժամանակներում հելլենական էպոխայում կամ նույնիսկ Նունական ժամանակաշրջանում, նշանակալից չափով օգտագործում են Հերոդոտի, Թուկիդիդեսի, Քսենոփոնի աշխատությունները որպես օրինակներ և ձգտում են իրենց պատմական աշխատություններում նույն նրանց:

ՀՈՒՆԱԿԱՆ ԸՆԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(Յոնիական շխլան)

Հունական փիլիսոփայության սկիզբները ես ելնում է Եոնիայից: Յոնիական քաղաքների առևտրական նշանակությունը նրանց կապերը արևելյան կուլտուրայի հին կենտրոնների հետ փիլիսոփայական մտքի սաղմնավորման և զարգացման նախադրյալներ են եղել: Յոնիայից են գուրս եկել ոչ միայն պատմաները, այլև առաջին իմաստունները: Հունական փիլիսոփաները կատարեցին առաջին փորձերը մի ամբողջական աշխարհայայտ կազմելու երկրազնդի մասին:

Հին հուշերի փխտոփայական սխտմաները զարգացել են երկու՝ մատերիալիզմի և իդեալիզմի ուղղությամբ: Քանի որ փխտոփայությունն ու բնագիտությունը հուշերը պատկերացրել են որպես մի Պամբողջություն, ապա և փխտոփայության զարգացումն առաջին շրջանում ընթացել է բնափխտոփայական սխտման մի զարգացման գծով: Յոնիական շկոլայի բնափխտոփայությունը մատերիալիզմի գաղափարներ է զարգացրել: Բնափխտոփայությունը Հունաստանում եղել են գլխավորապես աստղաբաշխներն և մասնամատիկոսները: Նրանք դիտել են բնության երևույթները նրանց զարգացումը, ընդհանրացրել են այդ դիտողությունները որոշ սխտման են բերել և փորձել են իմաստավորել բնությունը և նրա օրինաչափությունները: Յոնիական փխտոփայության հիմնադիրը համարվում է միլետացի նշանավոր Քալեսը VI դ. թ. ա.): Նա ձեռք բերեց համահունկան, իսկ այժմ, կարելի է ասել համաշխարհային հուշի նրանով, որ փորձում էր միասնական սկզբունքով բացատրել ամբողջ աշխարհատեղծության ծագումը: Ծանապարհորդելով զանազան քաղաքներ, դիտելով կյանքի փոփոխականությունը, մարդկանց ճակատագրի, քաղաքների պտույթությունների և ամբողջ ժողովուրդների փոփոխականությունը, նա եկավ այն համոզման, որ ամենուրեք թագավորում է շարժումը:

Աշխարհատեղծման առաջնասկզբը Քալեսը համարեց շարժումը՝ բնության հավերժական և գլխավորապես տարրը: Փիլիսոփան բուն երկրագունդը պատկերացնում էր որպես հսկայական ջրային հոսանքի մեջ լողացող մի բան, որը շարժվում էր լցված ջրով: Ամեն ինչ կարծես թե առաջանում են ջրից և վերջին համարում կրկին ջուր դառնում: Այսպիսիքն են հիմնականում Քալեսի փխտոփայական դրույթները: Քալեսն իր փխտոփայական հայացքները ձևակերպեց ոչ միայն գույն բնության երևույթները, դիտումների ճանապարհով, այլև ֆիլիսոփայով և մասնամատիկայով գրողվելով: Բնության բոլոր անվերջ և բազմազան երևույթները միասնական սկզբնավորության հանգեցնելը, բնության մասին մի պատկերացումների մեջ մոնիզմ մտցնելը, անկասկած հանդիսանում է Քալեսի՝ իր ժամանակվա համար հանճարեղ փորձը:

Քալեսի ընկերն ու աշակերտն է եղել Անաքսիմանդը, որ տվել է աշխարհատեղծման ծագման ու զարգացման մի փոքր տեսություն, որը նույնպես կառուցված է միասնական մոնիստական սկզբունքի վրա: Մատերիան զոյացնող առաջին տարրը:

Ըստ Անաքսիմանդի մատողություն, եղել է սեպեղանք, այն է՝ սկզբնական տարրը իր երկու հակադիր սկզբնավորություններով՝ կարծր և հեղուկ, ցուրտ և տաք: Այդ սկզբնական տարրը՝ մատերիան («սպեյրոն») գտնվում է անընդհատ պոմման մեջ. նա անվերջ է ու անվախճան: Անաքսիմանդը ասել է, որ սկիզբը և տարրը (տարերբը) անստճման է, այն շարժելով որպես օդ, ոչ որպես ջուր և ոչ էլ որևէ այլ բան: Նա սովորեցնում էր, որ մասնիկները փոխվում են, իսկ ամբողջը մնում է անփոփոխ: Եթե մատերիայի («մասնիկի») զանազան կադույթությունները մեկը մյուսին են փոխվում, ապա ամբողջը՝ ողջ մատերիան իրասին վերցրած՝ չի կարող փոխանցվել որևէ այլ նախասկզբնականի: Բոլոր անասունը, առարկաները, երկրագունդը վրայի բոլոր փուլայինները, Անաքսիմանդի տեսակետով, բացատրվում են «սպեյրոնի», մատերիայի ուղի հիմքի, կամ սկզբնատարրի սկզբնավորությունների զանազան կոմբինացիաներով: Հունական փխտոփայության մեջ Անաքսիմանդը առաջին անգամ հունական փխտոփայության մեջ տվեց մատերիայի, այսինքն մատերիայի որպես սպեյրոնի, ճիշտ է, բավականաչափ նախիկ կերպով, փխտոփայական որոշումը:

Այսպիսով՝ այդ սխտմանը նույնպես կառուցվում է սեպեղանքատեղծման մատերիալիստական ըմբռնման սկզբունքի վրա:

Անաքսիմանդի է վերաբերվում աշխարհի առաջին քարտեղի կազմման փորձը ևս, ըստ որում նրա մոտ էլ գտնում ենք երկրագունդի վնասվածության վերաբերյալ առաջին զուշակությունը:

Հետևյալ ականավոր բնափխտոփայան եղել է Անաքսիմանդի աշակերտ Անաքսիմենոսը, որը շարունակում է միլետական շկոլայի տրագիցիաները: Նա ևս փորձ է անում գտնել բնության զարգացման ամենամիավորիչ սկիզբը: Այդպիսի սկզբնավորությունը Անաքսիմենոսը համարում է օդը («աերը»): Անաքսիմենոսի տեսակետով աշխարհում առաջացող բնական բոլոր երևույթները պայմանավորված են օդի խտացման և պարպման զանազան կոմբինացիաներով: Ամեն ինչ առաջանում է օդից, — ասում էր Անաքսիմենոսը. — և ամեն ինչ նորից օդի վերածվում: Այսպիսով, վաղ հունական փխտոփայաները նյութական սկզբնավորությունը (ջուր, «սպեյրոն», «աեր») նյութատային մոմենտ են բնորոշել ողջ փխտոփայության ունեցողի և նրա զարգացման:

VI դ. մ. թ. ա. յննիական բնագիրխոստիաները մեծ ազդե-
թյուն են ունեցել մայրցամաքային Հունաստանի և հզեյան
կղզիների փրիլիստիաչական մտքի զարգացման վրա: Հայտնի է,
փրիլիստիա Պյութագորասը (մոտավորապես 571—447 թ. թ. մ.
ա.), որը ծնվել է Սամոս կղզում, ևս գնացել է աշխարհի սկզբնա-
պատճառի հետազոտության այն գծով և բնության երևույթները
ցատրել է մաթեմատիկական մեծությունների կոմբինացիաներով:
Պյութագորասի տեսակետով, թիվը ֆերմենտ է, որն առաջա-
նում է բոլոր տեսանելի առարկաները, բնության բոլոր դիտ-
երևույթները: Բնության մեջ և կյանքում առկա ինչ փոխվում
բայց անփոփոխ է մնում միայն թիվը: Իրա խմբար էլ թիվն է գ-
կազարում աշխարհը:

Աշխարհաստեղծման ծագման և զարգացման պրոբլեմի ալյուր-
սի դրվածքով Պյութագորասը արտարակցիայի է ենթարկել միտո-
սմբողջ սուրբկաթիվայինից և զբաղականից: Այդպես ալյուրն տե-
ն են գտել իգեալիստական գրույթների համար հնարավորություն-
ներ: Իրենց ուսմունքի հետագա զարգացման ընթացքում պյութա-
գորականները քարոզում էին հավատ դեպի աստվածությունը
և գեները, հոգու անմահությունը, հոգու տեղափոխվելը և մարդու
վերջ:

Այսպիսով, պյութագորականների կուլյթներն իրենց զազա-
փարներով վկայում են փրիլիստիաչական մեջ իգեալիզմի ծնունդ
առնելու մասին: Պյութագորասի փրիլիստիաչությունը, սակայն
ունի դրական նշանակություն: Պյութագորասի մ.տ. արժեքավոր է
այն, որ նա ամեն ինչին մոտենում է հաստատուն և հետևողա-
կան օրինաչափությամբ, որը նա ցանկանում է բնության մեջ
գտնել նույնպես, ինչպես այն գոյություն ունի իվական կոմբին-
նացիաներում:

Իզուր չէ էնգելսը այս անշուրթյամբ նկատել, որ մեզ զար-
մացնում է «համանման գաղափարի համարձակությունը»: «Ինչպե՞ս
թիվը ենթարկված է սրտ օրենքների, այնպես էլ տիեզերքը: Տիեզ-
երքի օրինաչափությունը հա նրանով արտահայտում է առաջին
անգամ»¹:

Հունական խոշորագույն փրիլիստիան, Պյութագորասի կրթակ-
ժամանակակիցը, եղել է Հերակլիտ էփեսոսցին (535.—475 թ. թ.)

¹ Ֆ. էնգելս, Բնության դիալեկտիկա, 24(ր) ԿՆ հրատարակչություն
Երևան, էջ 183, 1936 թ.:

մ. թ. ա.): Հերակլիտի մասին պահպանվել է լեգենդ, ըստ որի
որան պատկերացրել են նման Բուդային: Հերակլիտը հասարա-
կական կյանքին չի մասնակցել, հրամարմել է պետական պաշ-
տոններից, մեղծել է այդ առթիվ բոլոր նրավերները և նվիրվել
է միայն գիտությանը: Հերակլիտը հիմնավորի պես տոտանծնուցել
և խորասուզվել է իր մաթեմատիկ նրա դիտած կյանքը, համարակի-
փոփոխությունները, հեղաշրջումները, սոցիալական պայքարը,
պատերազմները իրենց հետքն են թողել նրա մասնակցակերպի վրա
և նրա մոտ ստեղծել են պատերազմը, որպես բոլոր իրե-
րի հայր՝ պատկերացումը: Հերակլիտի մասնակցությամբ ինչ-
պես բնության, նույնպես և հասարակության մեջ տեղի է
անկնում անվերջ շարժում, մշտական պայքար: Իրա խմբար էլ
նա ձևակերպեց այսպիսի թեզիս, որ «...ամեն ինչ շարժվում, ամեն
ինչ փոփոխվում է» կամ «...միևնույն գետի մեջ չի կարելի երկու ան-
գամ մտնել»: Կեցությունը մշտական շարժման ընթացքում անդադար
փոփոխվում է: Մատերիայի առաջահիմքը Հերակլիտը խմա-
րում էր կրակը, որը որպես բնության հիմնական ֆերմենտ, մա-
տերիայի բոլոր տեսակները միավորում է մի ամբողջության մեջ:
Հերակլիտի փրիլիստիաչական մեծ նվաճումը եղել է նրա գրույթ-
ները մատերիայի շարժման և այդ պրոցեսում հակասությունների
կրականացվող պայքարի մասին: Մարքսիզմի-լենինիզմի կրակի-
ների մոտ Հերակլիտը մեծ դեմահատականի է արժանացել:

«Համկ(ր)Պ պատմության համառոտ դասընթաց» մեջ ընկեր
Սաալինը բերում է Հերակլիտի հետևյալ շատ կարևոր գրույթը.
«...աշխարհը, ամեն ինչի միասնականը, ստեղծված չէ աստված-
ներից ոչ մեկի և մարդկանցից ոչ մեկի կողմից, այլ եղել է, հան-
դիսանում է, և կլինի օրինաչափորեն բոցավառվող և օրինաչափու-
րեն մարող հաժիտեհնապես կենդանի մի կրակ»²:

Հերակլիտի այդ շրույթի կապակցությամբ Լենինն իր ֆիլի-
ստիաչական տետրակներում» նկատել է՝ «Թիալեկաթիչական մա-
տերիալիզմի հիմունքների շատ լավ շարադրանք է»³:

Հերակլիտը մեծ նշանակություն է տվել մարդկային բուն-
դանության կարողությանը՝ ընդհանրացնելու մարդու կյանքի և
բնության զարգացման մեջ էմպիրիկ երևույթները: Մասնավորից
ընդհանրացումներ, եղրակացություններ հանելու մարդու ընդու-

² Համկ(ր)Պ պատմությունը համառոտ դասընթաց. Հայպետհրատ., Երևան,
1946 թ., էջ 183:

³ Ленин, Философские тетради, стр. 818.

նակութեան մեջ Հերակլիտը տեսնում էր նաև խելացի և հիմար մարդկանց միջև եղած տարբերությունը: Ենչայնքան, Հերակլիտը կարծիքով բարձրանում են մինչև ընդհանուրի իմացությունը, իսկ հիմարները բավարարվում են առանձին մտմանտներով, մասնա մասներով, մասնավորություններով ընդհանուրի կապակցութեանից զուգու: Հերակլիտը գեմ էր մասնավորի կամ առանձին փաստերի դիտելիքին, սակայն նրանց ամբողջ բաղմամբությունը իմացությունը հնարավոր էր համարում առանց ընդհանրացման, առանց մտքի ստեղծագործ աշխատանքի:

Հունական բնափիլիսոփայության հետագա զարգացման մեջ պետք է առանձնացնել Պերկլիդեսի բարեկամ ու ուսուցիչ Աեակ-սագորասին, որը ծնվել է Փոքր Ասիայի Կլազոմեն քաղաքում: Նա նույնպես զարգացրեց մատերիալիզմի գաղափարները, ըստ որում մատերիալի հիմքում նա դրեց ոչ թե մեկ, այլ բազմաթիվ տար-րերը: Մատերիալիստական աշխարհայացքի հիմնավորման համար քիչ բան չին արել նաև էլեատների, փիլիսոփաների, դարոցը: Դրանք զարգացրին էլիացի Պարմենիդասի իդեաները բնության կեցության օրեկտիվության վերաբերյալ ամբողջությամբ առած:

Բժշկության զարգացման բնագավառում մեզ հասած իր իմացություններով և արակատաներով աչքի է ընկել V դարի (մ. թ. ա.) գիտնական Հիպոկրատը: Բիուոգիական դիտությունների բնագավառում անհրաժեշտ է նշել էմպիրիկին, որն զբաղվել է օրգանական աշխարհի զարգացման ուսումնասիրությամբ: Եվ վերջապես, խոշորագույն գիտնական՝ արգիթացի Դեմոկրիտը (460—370 թ. թ. մ. թ. ա.), որի գործունեության հետ է կապված հունական մատերիալիստական մտքի ծաղկման ժամանակաշրջանը:

Դեմոկրիտին անվանում են կլասիկ Հունաստանի խոշորագույն մատերիալիստ: Նա ունեցել է բազմակողմանի կրթություն: Հիանալի կերպով իմացել է իր ժամանակակից մաթեմատիկան, ֆիզիկան, բժշկությունը, աստղաբաշխությունը, երաժշտությունը, փիլիսոփայությունը և պատմությունը: Հակառակ փիլիսոփա Աեագ-սագորասին, Դեմոկրիտը գտնում էր, որ մատերիալի հիմքում ընկած է ոչ թե բազմաթիվ սկզբնական տարրերը, այլ մատերիան որպես միասնական սուբստանց: Այդ մատերիալի էլեմենտների այսինքն՝ ատոմների ձգողության և վանողության մեխանիկական օրենքների ուժով, տեղի է ունենում բնության կյանքում փոփոխության պրոցես: Դեմոկրիտի գաղափարությամբ գաղափարվում էր

ատոմը անեզերքի զարգացման պատուհաններն են: «Տիեզերքը սկիզբը ատոմն է ու գաղափարվածը»¹, — ասում է Դեմոկրիտը: Ատոմները, որոնցից կազմված է բնությունը, անփոփոխ են և մշտնջենական: Նրանք մշտապես փոխում են իրենց պրոբյունը անվերջ շարժման մեջ են, դրանով իսկ պայմանավորում է բնության զարգացման պրոցեսը, որը մատերիալի մշտնջենական շարժման արտահայտությունն է: Ատոմը նյութի մասնիկն է: Այսպիսով, բնության երևույթների հիմքում դնելով նյութականը, Դեմոկրիտը բուն բնությունը դարձնում է աշխարհաստեղծման զարգացման հիմք: Դեմոկրիտի փիլիսոփայությունը հարված հասցրեց բնության և հասարակության կյանքի իդեալիստական մեկնաբանման բոլոր փորձերին, իսկ որը պլատոնը է, կործանել հարված հասցրեց կլոնական նախապաշարումներին դեռևս մարդկության զարգացման մանկական էպոխայում: Դեմոկրիտի ատոմաբանությունը հույների բնագիտական մտքի մեծ նվաճումն էր: Ատոմի՝ որպես բնության սկզբնական էլեմենտի, նրա կառուցվածքի, բնության շարժման մեջ ատոմների զուգակցության վերաբերյալ Դեմոկրիտի դրույթները իրենց մեջ թաքցրել են ֆիզիկալի պրոբլեմի ապագա մշակումը և անկասկած կոչել են մի հետաետեսություն: Փիլիսոփայության (էպիկուր, Լուկրեցիա) և բնագիտության զարգացումը նոր ժամանակներում հաստատեցին հունական մատերիալիստ դիալեկտիկի հանձարեղ նախազուգակցությունները:

Այն բոլորից, ինչ որ մենք սասցինք յոնիական և մյուս ուղղությունների բնափիլիսոփայության զարգացման մասին, երևում է, թե որքան հարուստ է եղել հունական փիլիսոփայությունը բնության մեկնաբանման զանազան փորձերով: Բայց հունական փիլիսոփայության մեջ հատկապես արժեքավորն այն է, որ բնության բացատրման այդ բոլոր փորձերի հիմքում ընկած է մատերիալիստականը: Հիշատակության արժանի է նաև այն, որ այստեղ առկա են հին հույների դիալեկտիկական մտածողության սաղմերը, թեպետև դեռ իր ամբողջ նախնական պարզությամբ:

Էնգելսը, գնահատելով հունական փիլիսոփայության գաղափարների զարգացման մեջ եղած բոլոր դրականը, միաժամանակ նկատում է, որ այն համընդհանուր կապը, որը հույները կոահել են բնության և կյանքի երևույթների մեջ, հանգիսացել է ոչ թե առանձին գիտական ուսումնասիրության արդյունք, այլ միայն

¹ Демокрит. Фрагменты 67.

աշխարհի երևույթների անմիջական դիտողականության և նախնականութեան արդյունք:

• ՍՈՒՐԱՏ, ՊԱՏՈՆ ԵՎ ԱՐԻՍՏՈՏԵՆ

Հունների փիլիսոփայությունը զարգացել է հակասականորեն. մատերիալիստ-փիլիսոփաների կողքին հանդես են եկել նաև բզեխիստ փիլիսոփաները: Հունական իդեոլոգիական զարգացման պարտում պարզ կերպով արտահայտվել է մատերիալիզմի և իդեալիզմի պայքարը: Հունական փիլիսոփայությունն ունեցել է իդեալիստական ուղղության խոշորագույն ներկայացուցիչներ, որոնք մեծ մասամբ ուշադրություն են դարձրել սոցիալական, ինչպես, քրիստոսական, պետության, հասարակության, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների հարցերի շարադրմանը: Այդ ուղղության ներկայացուցիչներն են եղել սոփիստները: Դրանք թատաղարչիկ իմաստուններ էին, որոնք ուսուցանում էին հետադիմ և զիջելի տիպի՝ այն է՝ զեղեցիկ խառնուրդ, որամիտ կերպով վիճաբանելու կարողություն, հենց և դրանով իսկ պատվաստում էին հասարակության քաղաքացիական կյանքով ակտիվորեն մասնակցելու օգտավետ ունակությունները: Սոփիստները նույնպես իրենց աշակերտներին բացատրում էին, թե որն է հասարակական կյանքը և ինչպիսին պիտի լինի քաղաքացիների կյանքը: Ստրիանիական դեմոկրատիայի պայմաններում այդպիսի կրթությունն անանախուս մեջ շահագրգռված էին շատերը: Գտնում էին, որ առանց այդ գիտելիքների չի կարելի ելույթ ունենալ դատարանում, խոսել և վիճաբանել ժողովրդական ժողովում, գորահրամանատար լինել և այլն: Դրանով է պայմանավորված եղել բնության զարգացման հարցերով զբաղվելուց դեպի մարդու ճիշտ վարքի՝ հասարակական հարցերին՝ էտիկային անցնելը:

Սոփիստները պնդում էին, որ երկրի վրա բոլոր մարդկանց առաքինությունների համար ընդհանուր կանոններ, միատեսակ օրենքներ ու ճշմարտություններ չկան: Ցուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր տոանձին ժողովուրդ ունի առաքինությունը վերաբերող օրենքներ, կյանքի իր կանոնները: Ուտի,—ասում էին սոփիստները,—որ Աթենքում մի տեսակ հասարակական կարգ է, Սպարտայում մի ուրիշ, իսկ Պարսկաստանում այլ տեսակ:

Սոփիստներից աչքի են ընկել Պրոտագորասը և Կարգիասը: Հունական պետության կուլտուրական կյանքում սոփիստները մեծ

դեր են խաղացել: Երանք լուսավորող դասակարգների շրջիկ առաջնորդներ են եղել, բնակչության լայն խավերի միջև լուսավորություն արձատարողները: Ժողովուրդը, բառիս լայն հասկացողությամբ անխուսափելիորեն հրապուրվեց սոփիստության բոլոր այն հարցերով, որպիսիք գնում էին այդ շրջիկ ուսուցիչները:

Այդ սոփիստներից էր նաև աթենական քանդակագործի սրբի Սոկրատը (469—399 թ. թ. մ. թ. ա.): Սակայն Սոկրատն իր փիլիսոփայությամբ տարբերվում էր սոփիստներից: Փիլիսոփայության գլխավոր խնդիրը Սոկրատը համարել է բոլոր մարդկանց համար ճշմարիտ և պարտադիր գիտելիքների ըմբռնումը: Դրանով է բացատրվում Սոկրատի գնոսեոլոգիական հայրերում խորասուղվելը: Այդ հարցերը նա շատ բարդ էր համարում: Սոկրատն ինքն իրեն մասին ասել է՝ «գիտեմ միայն այն, որ ոչինչ չգիտեմ»: Սոկրատի կյանքի կանոնը եղել է Դելֆյան տաճարի մակագրությունը՝ «Ճանաչիր ինքդ քեզ»: Սոկրատյան այդ լուրջագի մեջ դրված էր այն նշանակությունը, որը Սոկրատը տալիս էր իմացության պրոցեսին, որը սկսում է հենց մարդուն ճանաչելուց: Իր փիլիսոփայական հայացքները շարադրելիս, Սոկրատը հանդես է գալիս որպես իդեալիստական, կրոնա-բարոյական հայացքների ներկայացուցիչ:

Սոկրատն ունեցել է կուլմնակիցներ և սանդձել է իր փիլիսոփայական շկուան: Այնտեղ նա դրել է մի շարք հարցեր, վիճարկել է դրանք, ձգտել է զրույցակիցներին հանգեցնել ճիշտ որոշման: Հատկապես պետք է նշել Սոկրատի «գիտելիտիկական» մեթոդը, այն է՝ հարց ու պատասխանի մեթոդը, ինչպես այդ հասկացվել է հին հունների կողմից: Սոկրատն ինքը երբեք պատրաստի պատասխաններ չէր տալիս: Նրա նպատակը ոչ այնքան գիտենալը, որքան դեպի գիտությունը սեր առաջացնելն էր: Իր հարցերով և ասարկություններով նա ձգտել է զրույցակիցին հանգեցնել այս կամ այն վճռին: Սոկրատը ձգտել է, որ զրույցակիցը զրույցի ընթացքում համոզվի իր սկզբնական գրույթների սխալականության մեջ: Հենց դրանում էլ եղել է զրույցի սոկրատյան «գիտելիտիկական» մեթոդի էությունը:

Մերժելով սոփիստների ճանաչողական սկեպտիսը՝ կասկածանքը, Սոկրատը պնդում էր, որ գոյություն ունեն բացարձակ ճշմարտություններ, բացարձակ էտիկական արժեքներ, բայց նրանցով օժտված է միայն աստվածը: Լինելով քաղաքացիական, Սոկրատը բանականությունը համարում էր որպես մարդկային գոյու-

թյան և մարդկության գիտելիքների զարգացման հիմքը: Այսպիսով, նա կանգնած էր իդեալիստական սկզբունքների վրա, որոնց զարգացումը նրա աշակերտ Պլատոնը հանգեցրեց բնության և հասարակության ճանաչման իդեալիստական ավարտված կառույցի ման ստեղծմանը:

Մեզ քիչ բան է հայտնի Սոկրատի կյանքի վախճանի մասին: Անտիկ բանահյուսությունը հաստատում է, որ Սոկրատի թշնամիները նրան ամբաստանել են, մեղադրելով այն բանում, որ իբր թե նա նոր պատվածություն է սերմանում, այլասերում պատանեկությունը, նրանց ուսուցանելով շեմարկվել իշխանություններին: Գործը քննության առարկա է դառնում, որտեղ Սոկրատն իրեն պահում է հանգիստ և արժանավայել: Իբր թե Սոկրատը հպարտորեն հայտարարել է դատավարներին, թե նրան ոչ թե պետք է դատել, այլ պարգևատրել այն բանի համար, որ նա շատ քաղաքացիների սովորեցրել է առաքինություն և դարձրել բարեկիրթ: Իատավորները նրան ենթարկում են մահապատժի: Նրա աշակերտներն ու ազգականները զալիս են բանտ Սոկրատին հրաժեշտ տալու: Նրան առաջարկում են կազմակերպել բանտից փախուստը կամ թե չէ առերևույթ հրաժարվել իր հանցանքներից: Սոկրատը չի համաձայնվում: Նա նման քայլը նվաստացուցիչ է համարում մի մարդու համար, որն իրեն արդար է զգում: Սոկրատը նախապատվություն տվեց մինչև վերջը մնալ հետևողական և հանգիստ կերպով դիմավորել մահվանը: Նա խմեց իր համար պատրաստված թույնը:

Քաղաքացիների առաքինությունների և գիտելիքների վերաբերյալ Սոկրատի ուսմունքը, որին պետք է ձգտի մարդը շարունակեց զարգացնել նրա աշակերտ Պլատոնը (429—348 թ. մ. թ. ա.): Պլատոնը դեռևս 12 տարեկան հասակից սկսեց լսել Սոկրատին և 10 տարի սովորեց նրա մոտ: Իր ուսուցչի մահից հետո Պլատոնն ինքն սկսեց դասավանդել փիլիսոփայություն: Մեծ այգում զով ծառուղիներում, որտեղ գտնվում էր մարման մարզական վարժությունների շենքը, որոշ ժամերին հավաքվում էին Պլատոնի ունկնդիրները: Այդ հայտնի պլատոնյան ճեմարանն էր:

Սոկրատը գտնում էր, որ իրեն համար իրական ճանաչողություն կարելի է կազմել միայն առաքինության միջոցով: Պլատոնն էլ ավելի առաջ գնաց: Նա սովորեցնում էր, որ իրական գիտելի կարելի է կազմել ոչ միայն այն մասին, թե ինչ է կատարվում պետության մեջ, այլև այն մասին, թե ինչ է տեղի ունենում բնու-

թյան մեջ և այդ գիտելիքը ամեն մարդու համար առանձնահատուկ չէ, ինչպես ասում էին սոփիստները, այլ միանական է և ընդհանուր բոլոր մարդկանց համար: Կա միայն մեկ և մշտնջենական գիտելիք: Ըստ Պլատոնի ուսմունքի, գոյություն ունեցող ողջ բնությունը, բոլոր տեսանելի առարկաները հանդիսանում են պաշտպանների աշխարհի, այսինքն՝ այն անտեսանելի աշխարհի պատճենները կամ արտացոլումները, որն իբր գոյություն ունի ինչ որ անդրաստեղյան տարածության մեջ: Իսկական աշխարհը կարծես թե այդ իրական զգալի արևների աշխարհի՝ ազդավազված նկարահանումը լինի: Փիլիսոփան պետք է խորասուզվի այդ հանդերձյալ կյանքի աշխարհի գննության մեջ, օրպեսզի ճանաչի այն:

Պլատոնը եղել է առաջին խոշոր կատարյալ իդեալիստ: Ըստ էություն, Պլատոնից են սկիզբ առնում ուշ ժամանակվա իդեալիստական սիստեմները:

Պլատոնի երիտասարդությունը համընկել է Պելոպոնեսյան պատերազմի հետ: Հետևելով պատերազմին, պատերազմից հետո տեղի ունեցող դեպքերին և հատկապես արիստոկրատիայի և դեմոկրատիայի միջև տեղի ունեցող պայքարին, Պլատոնը ձգտել է հասկանալ այդ իրադարձությունները: Ունենալով արիստոկրատական ծագում, կողմնակից լինելով ստրկատիրական կարգին, ընդ որում այն ձևով ինչպիսին այդ կարգերն իշխում էին Սպարտայում, նա, ինչպես և Սոկրատը, հասարակության լիակատար վերակառուցումը չէր ցանկանում: Պլատոնը առաջարկում էր սոցիալական հարցերը լուծել գննության միջոցով: Նշարտության հասնելու ճանապարհով, Պլատոնը հասարակական հարցերին տալիս է փիլիսոփայական, միանգամայն կյանքից կտրված լուծում: Պլատոնյան փիլիսոփայության աշխատություններից մեկ հայտնի է երեք ուտոպիաներ, առաջինը՝ «Ատլանտիտա», որը անբավարար է մշակված եղել, երկրորդը՝ «Պալիտիա», որում Պլատոնը հանդես էր գրեցնում մշակում է ուտոպիական այն պետության հիմքերը, որը նա անվանել է «Իդեալական», վերջապես, երրորդը՝ ուտոպիական «Օրենքներ»-ի անվամբ պլանը, ուր ըստ էության ևս տրվում է ուտոպիական պետության տեսությունը, իր գլխավորությունները երկրորդը համաձայն պլատոնյան նոմենկլատուրայի:

«Պոլիտիա»-յում, կամ, այլ կերպ ասած «Իսպուրիկա» տրակտատում, Պլատոնը պատկերում է իդեալական պետությունը, որի գլուխն են կանգնած փիլիսոփաները: Որպես կառավարողներ կրակի պետության մեջ կարգերը բարեկամում են այն շտաբով, որ

չափով օժտված են բանականությամբ, ընդունակ բարձրանալ մինչև պաշտփարների թագավորությունը, մինչև իրական դիտելիքը: Պլատոնի տեսակետով միայն փիլիսոփաները կարող են մտնենալ ճշմարտությանը, իսկ աշխատավորները, այն է՝ գյուղացիները, արհեստավորները, մանավանդ ստրուկները համարվում են անտաշ, խավար մարդիկ, որոնք ընդունակ են միմիայն ֆիզիկական աշխատանքի: Փիլիսոփաներից հետո գալիս է պետության մեջ մյուս խավը՝ ուղմիկները: Նրանց ֆունկցիաներն էին պետության արտաքին թշնամիներից պաշտպանելը, կարգ ու կանոնի հաստատումը, քաջություն ցուցաբերելը: Փիլիսոփաները կառավարում են պետությունը, ուղմիկները պաշտպանում, իսկ երրորդ դասը՝ աշխատավորությունը աշխատում, ըստ որում աշխատում են փիլիսոփաների և ուղմիկների համար: Պլատոնը փիլիսոփաների և ուղմիկների համար վերացնում էր մասնավոր սեփականությունը և ամեն ինչ դարձնում ընդհանուր: Դրանով իսկ նույնացնել է կանխել սրկել վիճարանությունների, պայքարի, նախանձի և ընչասիրության ամեն տեսակի հիմքեր: Աշխատավորության համար ամեն ինչ մնում է առաջվա պես: Աշխատավորների շահեր է միջամտեն պետության կառավարման գործերին: Նրանք քաղաքացիական իրավունքներ չունեն և ստրուկների վիճակում են: Պլատոնն աշխատանքը համարում էր նվաստացուցիչ, որի համար կանխորոշում էր այն մարդկանց, որոնք գիտելիքի նկատմամբ քաղաքականության մեջ մասնակցելու ընդունակ չեն, այն է՝ գյուղացիներին, արհեստավորներին և ստրուկներին:

Հետագայում Պլատոնն ինքը համոզվեց, որ այդ աշխատության մեջ իր կողմից նկարագրված սոցիալական կարգը ունի չէ, կյանքում անիրագործելի և հանգիստնում է ոչ այլ ինչ, քան ստոպիական վեպ, որը չի կարող տալ ոչ մի դեղատոմս լուծելու այն սոցիալական հակասությունները, որը Պլատոնը դիտել էր Աթենքում: Այդ ժամանակ Պլատոնը հասարակության վերակառուցման ծրագրի մշակման մեջ ավելի հեռու գնաց: Նա ստեղծեց ուտոպիական ուրիշ պլան՝ «Օրենքներ», որտեղ ջանում էր ցած իջնել մեղսալի երկրի վրա, հաշվի առնել ունի պայմանները: Այդ ուտոպիայի մեջ նա իրեալականացնում է և Սպարտայի և կյանքի նկատմամբ սպարտական վերաբերմունքը, հանձնարարում է արհեստական պետության մեջ իրականացնել սպարտական հաստատությունները: Այդ պետությունը, Պլատոնի կարծիքով, պետք է լինի հողագործական: «Մեր պետության մեջ հանգուրծելի են միայն

հողագործությամբ ձեռք բերված եկամուտները», — ասել է Պլատոնը: Այսպիսով, Պլատոնը այսպես կոչված իդեալական պետության իր իրեալական մշակումներում աշխատում է գոգիերգի չին արիստոկրատական համայնքը, այսինքն այն, ինչ Հունաստանի համար վաղուց արդեն անցած էտապ էր: Հենց այդ ոչ թե դեպի առաջ, այլ դեպի ետ ձգտումների մեջ է կայանում Պլատոնի ուտոպիական կառուցման անակցիոն կողմը:

Պլատոնի աշակերտներից է մեծագույն փիլիսոփա Արիստոտելը: Հունական փիլիսոփաների մեջ Արիստոտելը անտիկ աշխարհի մարի տիտան է եղել: Արիստոտելը (384—322 թ.թ. մ. թ. ա.) Քաղցեդոն թերակղզու Ստագիրա քաղաքից էր: Արիստոտելի հայրը՝ Մակեդոնիայի թագավորի պալատական բժիշկն էր: Պատանի Արիստոտելը գալիս է Աթենք և մտնում Պլատոնի ձևաբանը, որպես ունկնդիր: Այնուհետև հրավիրվում է Մակեդոնիայի թագավոր Ալեքսանդրի մոտ որպես դաստիարակ, և մի քանի տարի դաստիարակել է նրան: Արիստոտելին ամբաստանում են անասնաբանության մեջ, որի հետևանքով նա պետք է որ հետո իր կյանքի մայրամուտին թողներ Աթենքը: Արիստոտելն իր կյանքի վերջին օրերն անց է կացրել վատբանակության մեջ եմբիտ կղզում:

Արիստոտելն իրավացիորեն կոչվում է էնցիկլոպեդիստ, որովհետև այդ փիլիսոփան լավ տեղյակ է եղել իր ժամանակի դիտությունների ամենատարբեր բնագավառներին՝ ֆիզիկային, կենդանաբանության, ֆիզիոլոգիային և այլն: Արիստոտելը վրա մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն Պլատոնը, այլև բնափիլիսոփաները, հատկապես Դեմոկրիտը: Արիստոտելը կարողացավ քննադատորեն հաղթահարել, վերամշակել և որոշ շափով խորացնել նախկին փիլիսոփայության նվաճումները և բոլոր այդ նվաճումները համակարգել իր սեփական փիլիսոփայական սիտեմի մեջ: Արիստոտելի մեղ հասած աշխատությունները նվիրված են ամենատարբեր գիտություններին՝ քաղաքականությանը, բիոլոգիային, ֆիզիկային, մեխանիկային, բուսաբանությանը, մաթեմատիկային և այլն: Արիստոտելի ուսմունքի մեջ շատ կարևոր մոմենտ է եղել մատերիայի և ձևի փոխհարաբերությունը: Զարգացման սրբոցնար արտահայտվում է մատերիայի լինելությանը, ձևավորմանը ձգտող մեջ: Արիստոտելի տեսակետով պրիմատը ձևին է պատկանում, նա այն նախնականն է, որը մեռյալ և անձև մատերիային որոշակիություն է տալիս: Զեղ զա ակտիվ ուժ է, որը մատերիա-

չին տալիս է որոշ ամփոփում, բացի այդ, այն էությունից անբաժան է: Ձևը դրված է յուրաքանչյուր էակի մեջ և կանխորոշում է այդ էակի զարգացումը: Բույսի սերմի մեջ և յուրաքանչյուր օրգանիզմի սերմի մեջ, ըստ Արիստոտելի, ամենահնարավոր կերպով կան այդ բույսի կամ թե չէ կենդանի օրգանիզմի զարգացման որոշակի ձևեր: Սակայն, մյուս կողմից էլ, Արիստոտելը ձգտում է մատերիալի և ձևի միջև սահմանել միասնություն և հենց այդ տեսակետից էլ նա կանգնած է ուսուցիչի ուղու վրա և տարբերվում է Պլատոնից: Սակայն ձևի պրիմատի մասին դրույթը նրա ուսմունքին տալիս է իդեալիստական բնույթ: Արիստոտելն ստեղծել է բնության ճանաչման, առարկաների հետ ունեցած նրա կապի, մտածողության մեթոդների և տրամաբանության մասին ուսմունքը: Նա մշակում էր սիլոգիզմի սկզբունքները կամ կանոնները, նրա համար, որպեսզի ստացվեն ճիշտ դատողություններ, ելնելով նախադրյալից և զարգացնելով համաձայն մտածողության օրենքների: Եթե Ա-ն հավասար է Ե-ի, իսկ Ե-ն հավասար է Շ-ի, ապա Ա-ն հավասար է Շ-ի, դա տրամաբանության օրենքն է, և այդպիսի մի շարք օրենքներ է տալիս Արիստոտելը: Այսպիսով մտափությունը, նրա օրենքները Արիստոտելի մոտ դասնում են հետազոտության հատուկ բնագավառ: Այնուամենայնիվ և այստեղ հասկացողությունների ձևափոխման ուսմունքում ևս Արիստոտելը դրսևորեց անհետևողականություն: Միջնադարյան սխոլաստիկական օգտվում էր դրանից և կառուցում Արիստոտելի «սուբեկտիվ լոգիկայից»: Վեճը ձևի, և ոչ թե էության մասին և ձևը էությունից կտրելու վերաբերյալ բնորոշում էր միջնադարյան սխոլաստիկական, որը ձգտում էր կիրառել Արիստոտելի սկզբունքները, գլխավորապես, աստվածաբանական դիսկուսիաներում: Իզուր չէ, որ սխոլաստիկների և աստվածաբանների մոտ Արիստոտելը միջին դարերում այդքան խոշոր շափով մեծարվում էր:

Արիստոտելը մեծ ուշադրություն է դարձրել նաև քաղաքական հարցերին, և նրա «Պոլիտիկա» տրակտատը (հինգ գրքերում) մի աշխատություն է, որը հետաքրքրական պատկեր է տալիս, սոցիալական պայքարի պրոբլեմներին, քաղաքական կարգերի ձևերի վերաբերմամբ փիլիսոփայի վերաբերմունքի մասին և դրա հետ միասին պետության և հասարակության ընդարձակ ուսմունքի մասին: Բացի այդ, Արիստոտելը գիտության համար, համեմատաբար ոչ հեռու անցյալում հայտարարված «Աթենական քաղաքականության» տրակտատում շարադրում է Աթենական պետության կոն-

ստիտուցիան և ձևակերպում է իր հայացքները հունական առավել բարդացած պետության քաղաքական կարգերի նկատմամբ:

Որպես փիլիսոփայի և դիտնականի, Արիստոտելի ուժն ու կրանակությունը կայանում է բնության և հասարակության երկույթներին պատմական և դիալեկտիկական տեսակետից մոտեցալու նրա փորձերի մեջ: Ճատ բնորոշ է ընդհանրապես ամենուրեք, ամբողջ գրքում դիալեկտիկայի կենդանի սաղմերն ու հարցադրումները... Անտարակուսելի է իմացության օրեկտիվությունը: Նախվ հավատը դեպի բանականության ուժը, դեպի իմացության ուժը, կարողությունը, օրեկտիվ ճշմարտությունը»¹:

Իզուր չէ որ էնդելսը «Բնության դիալեկտիկայի» մեջ տանել է մոսկ դիալեկտիկական միջև այսօր դեռ երկու մտածողներ են միայն հղբրիտ ուսումնասիրել Արիստոտելը ու Հեգելը»²:

Բարձր գնահատելով Արիստոտելին, Լենինը մատնանշել է նաև նրա փիլիսոփայության թույլ կողմերը: Փիլիսոփայության հետազոտող զարգացման մեջ Արիստոտելի նշանակությունը բացասել է Միջին դարերում շատ են զբաղվել Արիստոտելով: Հունարեն լեզվով գրած նրա աշխատությունները թարգմանվել են լատիներեն և արաբերեն: Արիստոտելի աշխատությունների հետ ծանոթանալու միջոցով միջին դարերում ծանոթացել են հին աշխարհի փիլիսոփայական մտքի հետ: Հունական մեծ փիլիսոփայի վերահասած հարցերի մշակումը մտքեր է զբաղեցրել նաև հասարակական մտքի հետագա զարգացողության մեջ: Թնափիլիսոփաներ Պլատոնով և Արիստոտելով զբաղվել են Կանտը, Հեգելը և, վերջապես, հունական փիլիսոփայության մեծ նվաճումներին առավել ճիշտ գնահատական են տվել մարքսիզմի-լենինիզմի կլասիկները:

Արիստոտելի փիլիսոփայական ժառանգության մշակումը մարքսիստական տեսակետից իր սրտահայտությունը գտավ սովետական պատմագրության մեջ:

Անտիկ փիլիսոփայության պատմությունը յուրյ է տալիս, որ հնության իդեալիստական սխտեմները եղել են անպատու, բայց անպատու, որ սենել է, Լենինի արտահայտությամբ. «...մարդկային

¹ Ленин, «Философские тетради», стр. 332.

² Э. Ленгис, «Бнության դիալեկտիկա», հայ. հրատ. էջ 110, 1938 թ.

կենդանի, արտասովոր, օրեկտիվ, բացարձակ իմացության դասն ծառի վրա...»¹:

Անտիկ «նախնական բնական մատերիալիզմը» շարժառայություն է բացատրել Վիմացության վերաբերմունքը դեպի մատերիան: Այն խնդիրը փորձեց լուծել իդեալիզմը, որն ի վիճակի չեղավ, բայց աշխուժանալով պատմական անհրաժեշտ օգակ եղավ փիլիսոփայության զարգացման մեջ դեպի ժամանակակից մատերիալիզմը: «Ժամանակակից մատերիալիզմը, բացասման բացասումը, թե չէ հին մատերիալիզմի լուկ վերականգնումն է, այլև վերջինից մնացած հիմունքներին նա ավելացնում է նաև փիլիսոփայության և բնագիտության երկու հազարամյա զարգացման, ինչպես և այլ երկուհազարամյա պատմության ամբողջ զաղափարական բովանդակությունը»²:

Բնագիտության և փիլիսոփայության երկու հազարամյա զարգացման այդ առաջին էտապում հունական մտածողների գիրք արտասովոր շարժում մեծ է եղել: Գնահատելով հույների այդ դերը, էնգելսը լիակատար իրավունք ունի ասելու հետևյալը՝ «...մենք հարկադրված ենք փիլիսոփայության, ինչպես և շատ ուրիշ բնագավառներում միշտ նորից վերադառնալ այդ փոքր ժողովրդի նվաճումներին, որի բազմակողմանի՝ ձիրքն ու գործունեությունը նրա համար այլալիսի մի տեղ են ապահովում մարդկության զարգացման պատմության մեջ, որպեսին ոչ մի ուրիշ ժողովուրդ չի կարող երբեք պահանջել»³:

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԱԼԵԲՍԱՆԴՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ՊԱՅԲԱՐ ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՄՄԱՆ ՀԱՄԱՐ

Պելոպոնեսյան պատերազմն սվարտից Աթենքի պարտության մար: Սպարտացիներն իրենց գերիշխանությունը հաստատեցին ամբողջ Հունաստանի վրա: Բուր տեղերում, ուր կար դեմոկրատական կարգ, սպարտացիները տապալեցին դեմոկրատային և հաստատեցին օլիգարխների իշխանություն: Աթենքի վրա տարած իրենց հաղթությունից օգտվելով, սպարտացիները այժմ դոժան դատաստան էին տեսնում ժողովրդի հետ: Սպարտացիների հաղթանակը՝ արիստոկրատական կարգերի հաղթանակն էր դեմոկրատային հանդեպ: Պելոպոնեսյան պատերազմից հետո Հունաստանի հետագա պատմությունը մեզ ցույց է տալիս, թե ինչպես հունական պետությունները, ճնշվելով Սպարտայի գերիշխանությունից, պայքարել են նրա տիրապետության դեմ, սպասելով հարձակո՞ւմի առիթի, որպեսզի իրենց վրայից թո՞ժափեն այդ լուծը:

Հունաստանի ամբողջ ներքին պատմությունը այդ ժամանակ նախ միահյուսվում է սպարտական տիրակալության դեմ մղվող պայքարի հետ, իսկ ավելի ուշ՝ մակեդոնական նվաճումների դեմ: Չգաղվելով Սպարտայի դժվարին կացությունից, սրը IV դարի սկզբին մ. թ. ա. պատերազմի մեջ էր Պարսկաստանի հետ: Աթենացիները փորձ արեցին սղատադրվել սպարտական տիրակալությունից: Աթենացիները հավաքեցին վարձու մեծ բանակ: Հունաստանում այդ ժամանակ քաղաքացիների ողբատայածան, այժմ ուղղմական պարտականություններ կրելու, իրենց սպառազինությամբ հանդես գալու անունակալության հետևանքով պրե՞ն առնալու սկսեցին պահել վարձու զորք հին քաղաքացիական աշխարհագրորի փոխարեն: Կորնթոսյան պատերազմի մասնակ

¹ Էնգել, Օրգեր, հատոր XIII, էջ 186, Երևան, 1933 թ.:

² Էնգել, Անտի-Դյուրինգ, հայ. հրատ. էջ 170—180, 1933 թ.:

³ Էնգել, Բնության գիտելիքիկա, հայ. հրատ. էջ 113, 1936 թ.:

(395—387 թ. թ. մ. թ. ա.) Սպարտան մի շարք պարտություններից (հատկապես Կնիդի տակ ծովային ճակատամարտում) նախան ստրատեգ Կոնոնի տարած հաղթությունները, որն այդ ժամանակ-դրությամբ էր պարսկական էսկադրան, կենդանացրին Աթենքին: Այսպիսով, Սպարտայի դեմ աթենա-պարսկական զանազան ճակատմանը հանդեպ Սպարտայի ծովային տիրակալությունը ոչնչացմանը: 390 թ. մ. թ. ա. Իթիկրատին՝ աթենական մյուստրատեգին հաջողվեց Կորնթոսի տակ կանգնած սպարտական հեռակային զորամասերին ջախջախել:

Պարսկաստանի միջոցներով աթենացիները վերականգնեցին իրենց մայրաքաղաքի ամրությունները («Ծրկայն պատերը») և հառուցեցին նոր նավատորմ: Միջազգային սխտուացիան նպաստեց աթենական պետության վերելքին: Վերջին տարիների պայքարը Աթենական պետության լավ նախապատրաստություն հանդիսացավ սպարտական տիրակալության հետ վերջնականապես հաշիվը մաքրելու, նրա փորձերին վերջնականապես վերջ դնելու համար, սակայն այդ բանը աթենացիներին դեռևս չհասցրեց իրականացնելու: Դրանում քիչ դեր չխաղաց պարսից թագավոր Արտաքսերքսեսը, որը սկզբում պաշտպանում էր Աթենքին ընդդեմ Սպարտայի, իսկ հետո սկսեց մտնենալ Սպարտայի ընդդեմ վերածնվող Աթենքի: Պարսիկների, նման քաղաքականությունը նպատակ ունեւր բորբոքելու պարսկական արքայի տրամադրությունը դեպի իրենց կողմը շահելու համար սպարտական և աթենական դիվանագիտությունների միջև մղվող պայքարը հնորհիվ սպարտական դիվանագետ Անտալկիդեսի ճարպիկության Սպարտային հաջողվեց համաձայնության գալ պարսկական արքա Արտաքսերքսեսի հետ և դաշն կնքել նրա հետ (387 թ. մ. թ. ա.): Ըստ այդ դաշնագրի, որը պատմության մեջ հայտնի է «Անտալկիդյան» անվան տակ, արգելվում էր Հունաստանում որևէ նոր միություններ ստեղծել: Այդ բանը խախտեց աթենացիների ծրագիրը, որոնք ցանկանում էին Սպարտայի դեմ նոր միություն ստեղծել:

Սպարտայի տիրապետությունից ազատագրվելու երկրորդ փորձն արեցին Թերեի ղեմավարտները, որտեղ նույնպես սպարտացիները հաստատել էին օլիգարխիական կառավարություն: Թերեական վտարանդի ղեմավարտները իրենց ապաստարանը գտան Աթենքում: 379 թ. մ. թ. ա. նրանց մի փոքր ջոկատ, առաջնորդը Պելոպոնեսի գլխավորությամբ պուլպոսիական ջորեր Պա-

լոս, թափանցեցին Թերե: Այստեղ այդ ջոկատը միացավ իրենց համախոհ-ղեմավարտներին հետ և ջախջախեց օլիգարխներին: Պալոսի ղեմավարտի անհաջողակ ջանքերը ստիպված եղավ հեռանալ քաղաքից:

Այժմ Թերեի ղեմավարտայի վերականգնումով մեծ դերակցեց իսաղալ Հունաստանում և առաջնաբար դարձավ ամբողջ Հունաստանի ղեմավարտական տարրերի համար ձգողական կենտրոն: Հունական շատ քաղաքներ երազում էին Թերեի անհաջողությամբ ազատագրվել սպարտական կախվածությունից: Բարձրացող Թերեական պետության այդպիսի քաղաքականությունը նրան հետեցրեց Աթենքին, որը առիթի էր սպասում նորից Սպարտայի դեմ դուրս գալու համար: Բայց գործը շահմանափակվեց միայն Սպարտայի դեմ այդ երկու պետությունների միությունը: Աթենացիներն արեցին վերջին փորձը իրենց երբեմն: Իզորությունը, հին ծովային միությունը վերականգնելու համար, որչափով այդ հնարավոր էր նոր իրադրության պայմաններում, որն ստեղծվել էր Անտալկիդեսյան հաշտությունից հետո: 378 թ. մ. թ. ա. աթենացիները իրենց կողմը գրավեցին նախկին դաշնակիցներից շատերին և վերականգնեցին Աթենական միությունը: Պատմության մեջ այն հայտնի է «Աթենական երկրորդ միություն» անունով: Ի տարբերություն առաջին միության, այդ նոր միությունը կառուցվում է այն բոլոր քաղաքապետությունների ազատության և անկախության ճանաչման սկզբունքների հիման վրա, որոնք Աթենքի հետ միություն էին կնքել և մտել նրա մեջ:

Ուժերի միավորման հետևանքով Աթենական պետության վաղնայի թշնամի Սպարտային հասցվում է հարվածը հարվածի հետևից: Այդ ժամանակ հանդես եկավ տաղանդավոր առաջնորդ Էպամիլոնդեսը: Նրա ղեկավարությամբ հաջողվեց սպարտացիների դեմ պայքարում ձեռք բերել մի շարք հաջողություններ: Գանդեսիով թերեական բանակի դուրս, Էպամիլոնդեսը իրեն ցույց տվեց որպես ականավոր զորավար: Նա մտցրեց պայքարի նոր ստրատեգիա, այն իրականացրեց ռեզոլյուտիվ (ձախ թևի ամրապնդում) տակտիկայի կիրառմամբ և սպարտացիներին հասցրեց մի պարտություն մյուսի հետևից: Ամբողջ Թեոպոլիան սպարտացիներից մաքրելուց հետո, Էպամիլոնդեսը շարժվեց դեպի Պելոպոնես: Նրա ամբողջ արշավանքը ընթացավ մի շարք ազատական հաջողություններով: Էպամիլոնդեսին հաջողվեց մտնենալ նույնիսկ հենց Սպարտա քաղաքին: Սպարտայի պատմության մեջ

այդ առաջին դեպքն էր, երբ թշնամին կանգնած էր հենց քաղաքի պատերի տակ: Բայց քաղաքը վերցնել չհաջողվեց, որովհետև թե՛ բնական զորքերի ուժերը անբավարար էին: Սպարտայի դեմ մղվող պայքարում՝ աթենացիները շարժողացան հարկ եղած շահով օգտագործել իրենց համար ստեղծված բարենպաստ սիտուացիան:

Քաղաքական նոր իրավություն մեջ աթենացիները թույլ ավելի խոշոր սխալ, նրանք վախեցան թեթևացիների բարձրացումից և դավաճանեցին նրանց: Թեթևական միություն նշանակության հետագա աճումից երկյուղ կրելով, բոլորովին անսպասելի կերպով նրանք կանգնեցին Սպարտայի կողմը: Այն ժամանակ Աթենական միությունը ցրվեց և Սպարտայի դեմ համատեղ պայքարի փոխարեն դաշնակիցների միջև սկսեցին դժգոհություններ: Երկար պայքարի հետևանքով՝ Թեթևան, և՛ Աթենքը և՛ Սպարտան այնքան հյուժնեցին, որ անընդունակ դարձան այլևս հունական քաղաքները ղեկավարելու և նրանց միավորելու իրենց արտաքին թշնամի ուժերի դեմ: Սպարտան ծայրահեղորեն քայքայվեց և ակտիվ քաղաքականություն վարելու անընդունակ դարձավ: Եպամոնոնիդեսի մահից հետո քաղաքների Թեթևական միությունը ցրվեց: Աթենքի ձգտումը դեպի իր գերիշխանության վերածնունդը առաջ բերեց «դաշնակցային պատերազմ», որի հետևանքով 355 թ. մ. թ. ա. Աթենական երկրորդ միությունը քայքայվեց: Այսպիսի սիտուացիայում բարձրանում է նոր պետություն, որը գերիշխանության է ձգտում և պատրաստվում ամբողջ Հունաստանի պետությունները հպատակեցնելու: Դա Մակեդոնիան էր:

ՄԱԿԵՏՈՆԻԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ՓԻԼԻՊՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Մակեդոնիան բռնում է Հունաստանի հյուսիսի մի, զգալի տերիտորիան: IV դարի երկրորդ կեսին Մակեդոնիան ձեռք բերում հարաճուն քաղաքական նշանակություն, իսկ հետո երկար ժամանակ մեծ դեր է խաղում Հունաստանի պատմության մեջ:

Այդ պետությունը կազմավորվեց և զարգացավ Հյուսիսային Հունաստանի պատմական և աշխարհագրական անբարենպաստ պայմաններում: Մակեդոնիայի բնությունը աչքի է ընկնում իր դաժանությամբ: Մակեդոնիայում կան շատ բարձր իջվածքային լեռներ, որոնք ծածկված են խիտ անտառներով, կան շատ լիճիկ և մռայլ ժայռեր, որոնք երկիրը դարձնում են անառիկ: Լեռներում հաճախ փչում են ցուրտ քամիներ: Գետերը ծածկվում են սառցաշերտերով: Այդ դաժան բնությունն իր կնիքն է դրել այստեղ

ստեղծված պետության բնույթի և ժողովրդի վրա: Նա բնակչությանը վարժեցրել է ճարպկության, տոկունության և բոլոր տեսակի պատահարների դեմ պայքարելու կարողության:

Մակեդոնացիները պնդում էին, որ իրենք ծագել են հունական աստվածներից և հերոսներից: Ըստ գիտական տվյալների, տնիկականորեն մակեդոնացիները ավելի մոտ են եղել թրակիական ցեղերին, քան հույներին: Պատմականորեն մակեդոնացիները ընկել են Հունաստանի ծայրամասում, նրա կուլտուրական կենտրոններից հեռու և հին աշխարհի մյուս կենտրոնների հետ քիչ են յուսված եղել: Երկրի նախնազարյան քնից արվեստանալը այստեղ ավականաշափ ուշ է վրձ հասել և, անկասկած, տեղի է ունեցել հունական կուլտուրայի ազդեցությամբ:

Հին ժամանակներում Մակեդոնիայում, ինչպես նաև մյուս ժողովուրդների մոտ եղել են տոհմատիրական կարգեր, բայց տվյալ կարաշրջանում նա արդեն քայքայված էր: Վերջին տասնամյակում Մայանաբերված է հին Մակեդոնիայի պատմության վերաբերյալ նազիտական հետաքրքիր մատերիալներ: Անգլիական գիտնականների հրատարակած մի շարք հետազոտություններում այդ մատերիալները հնարավորություն են տալիս դատել այն մասին, թե ինչպես է Մակեդոնիան մտել իր քաղաքացիական պատմության մեջ: Ծնորհիվ տոհմի ներսում ունեցվածքի անհավասարության, մակեդոնական համայնքի մեջ տեղի է ունեցել դասակարգային ընդհանրություն: Մագած պատերազմներն ու պայքարը հասցրել են այն բանին, որ մի համայնքը հաղթել է մյուսին, որի հետևանքով սկսել են դրանց միավորումը հարուստ և ուժեղ առաջնորդների իշխանության ներքո: Դրա հետ միասին պատերազմներում վերցված դերիների և ստրուկների գնման հետևանքով աճեց ստրկությունը, տոհմի ներսում տեղի ունեցավ սոցիալական շերտավորում: Այգլիսի պայմաններում հետզհետե ձևավորվեց Մակեդոնյան պետությունը:

Մակեդոնական միասնական ուժեղ պետության հիմնադիրը եղել է Փիլիպոս Թագավորը (359—336): Պատմական գիտության ժամար պետք է շատ հետաքրքիր համարել Մակեդոնական պետության առաջացումը և նրա ամրապնդման պրոցեսում Փիլիպոսի դերը: Փիլիպոսը պետության կառուցման համար անցկացրեց մի շարք կարևորագույն սեփորմներ: Իր սեփորմներով նա վճռական կարված հասցրեց անցյալի պահպանողական հիմքերին: Մակեդոնիան պիսից աճել և ուժեղորեն բարձրանալու Փիլիպոսը շատ

բան ընդօրինակեց հուլյներից և Մակեդոնիա մուծեց մի շարք վե-
րափոխումներ. նա մեծացրեց և բարելավեց բանակը: Մակեդո-
նական բանակի սպառազինումը և կազմակերպումն այժմ շատ
բանով հիշեցնում էր հունականին: Բայց Փիլիպոսը կատարելա-
գործեց հունական ֆալանգը: Նա հետևակը կառուցեց առավել փոս-
և խորացված շարքերով, խորությունը 16 շարք: Հետևակը պաշտ-
պանված էր մեծ զրահներով և սպառազինված էր մինչև հինգ
մետր երկարություն ունեցող նիզակներով: Այդ շարքը ստացավ
մակեդոնական ֆալանգ անունը, որը, ինչպես մենք գիտենք Մա-
կեդոնիայի հետագա պատմությունից, ազդական գործում փոխ-
չի խաղացել: Այնուհետև Փիլիպոսն ստեղծեց նախատորմ և կա-
տարելագործեց դրամախիշների գործը: Մակեդոնական թաղավոր-
ների հին ռեզիդենցիաների կողքին առաջացավ թաղավորի նոր
մայրաքաղաքը՝ Պելլան: Կարճ ժամանակում Փիլիպոսը իրեն հպո-
սակեցրեց ամբողջ մակեդոնա-թրակիական ափն իր խոշոր քա-
ղաքներ Ամփիպոլիսի, Օլինթոսի, Պիդնոսի հետ: Օգտվելով հուլ-
յների գծտուկությունից, Փիլիպոսը մտահույսացավ հասնել ամբողջ Հու-
նաստանի գերիշխանությանը: Այդ նպատակով ձգտեց միջամտել
Հունաստանի գործերին և դրա համար առիթ էր փնտրում:

Այդպիսի առիթ եղավ այսպես կոչված ճարքաղան պատե-
րազմը» (355—346 թ.թ. մ. թ. ա.): Այն ծագեց հետևյալ կերպ
Փոկիդի բնակիչները գրավեցին հուլյների կողմից սրբազան և ան-
ձեռնամխելի Դելֆին և կողոպտեցին Դելֆյան տաճարի դանձա-
բանը: Դրա համար թեքեացիները թեսալացիների հետ միասին
որոշեցին պատժել Փոկիդային, բայց թեսալական զորքերը պար-
տություն կրեցին: Թեսալացիները դիմեցին Մակեդոնիայի օգնու-
թյանը: Փիլիպոսն էլ հենց այդպիսի մի առիթի էր սպասում: Նա
անմիջապես իր բանակը շարժեց դեպի Թեսալիա և երկար պայ-
քարից հետո ջախջախեց թոկիդական վարձու բանակը: Դրանից
հետո Փիլիպոսը արշավեց դեպի Թերմոպոլյան լեռնանցքը:
որպեսզի գրավի այն և թափանցի Հյուսիսային Հունաստան: Սա-
կայն այս անգամ Փիլիպոսը պետք է ձեռնպահ մնար հարձակումից:
Դեպի Թերմոպոլ շարժվեցին աթենացիների և մյուս հուլյների զոր-
քերը, որպեսզի հետ մղեն մակեդոնացիներին:

Բուն Աթենքում այդ ժամանակ տեղի էր ունենում սուր պայ-
քար սրոմակեդոնական և հակամակեդոնական պարտիաների
միջև: Դեմոկրատական՝ հակամակեդոնական պարտիան, որը սպ-
հանջում էր պայքար Մակեդոնիայի դեմ, գլխավորում էր հունա-

յան տաղանդավոր հեռուոր Դեմոսթենեսը: Իսկ արիստոկրատական՝
սրոմակեդոնական պարտիան, որ Հունաստանին հրում էր դեպի
մակեդոնական հպատակությունը գլխավորում էր մյուս հեռուոր՝
Կալիմեդը:

Դեմոսթենեսը երևելի հեռուոր էր, խորամիտ քաղաքագետ,
կրքոտ քաղաքական գործիչ: Դեռևս երիտասարդ հասակից նա
կրազել էր դառնալ հեռուոր, դրա համար էլ նա ուսումնասիրել էր
նարտասանությունը (գիտություն պերճախոսության մասին) և
վարժվել էր ճառեր արտասանելուն: Հիրավի, ինչպես մեզ պատ-
մում է ավանդությունը, շնորհիվ իր վրա համառ աշխատելուն,
Դեմոսթենեսը դարձավ նշանավոր հեռուոր: Իր ձեռերում նա ելույթ
էր ունենում ընդդեմ Մակեդոնիայի Դեմոսթենեսը Փիլիպոս թա-
ղավորին համարում էր Հունաստանի ամենավտանգավոր թշնամին:
Նա Փիլիպոս թաղավորի դեմ կրակոտ ճառեր էր արտասանում,
որոնք հետագայում սկսեցին կոչվել «փիլիպոսյաններ»: Այդ ժամա-
կակվանից բոլոր լավ կառուցված ճառերը, որոնք արտասանվում
էին ընդդեմ որևէ մեկի նրան մերկացնելու նպատակով, ստացան
փիլիպոսյան պախարակիչ անունը: Դեմոսթենեսը Աթենքին կոչ
էր անում զինվել և հակահարված տալ մակեդոնացիներին: Նա
կրազում էր վերականգնել Աթենքի դեմոկրատական կոնստիտու-
ցիան:

«Մակեդոնացու խարդախ մտքերում,—ասել է Դեմոսթենեսը,—
դ մի կասկած չի կարող լինել: Միակ նպատակը, որի իրականաց-
մանը ձգտում է Փիլիպոսը, դա Հելլադան կողոպտելն է, նրա
բնական հարստությունների, առևտրական և ստրատեգիական կե-
տերի խլելը: Իր ստոր նպատակներին հասնելու համար Փիլիպոսն
սպտում է հելենների միջև եղած տարաձայնություններից և դժ-
տություններից: Չխոսելով դեռ Օլինթոսի, Մեթոնի և Թրակիայի
33 քաղաքների մասին, որոնց բնաջնջել է նա շուրջ գազանու-
կամբ, շխոսելով թոկիդացիների բնաջնջման մասին,—նա հուլյնե-
րից հափշտակեց Թեսալիան, նրանց ազատությունն ու պետու-
թյունը էվրեալում, Աթենքից այդքան մոտիկ տարածության վրա
որից իր գործակալներին որպես տիրաններ¹: Մակեդոնիայի վրա
պայքարը եղել է Դեմոսթենեսի հիմնական ծրագիրը և հակամա-
կեդոնյան պարտիայի գործունեության ելակետը: Դեմոսթենեսի
կոչմը, ընդդեմ Փիլիպոսի կանգնեցին հունական բնակչության դե-
մոկրատական խավերը:

¹ Демосфен, Речь III против Филиппа.

Բոլորովին այլ՝ մակեդոնասիրական քաղաքական ծրագրի էին զարգացնում մակեդոնասիրական պարտիայի առաջնորդներ Էսքինեսը, Իսկիրատեսը և Թոկիտեսը: Փիլիպոսի կողմը կանգնեցին հարուստ ստրկատերերը և արիստոկրատները: Վերջիններս հույս ունեին Փիլիպոսի օգնությամբ խեղդել այդ ժամանակ տեղի ունեցող ազատ շքավորների և ստրուկների հուզումները: Մակեդոնասիրական պարտիայի առաջնորդներից մի քանիսը կաշառված էին: Այսպես, հայտնի է, որ հունական հեռորդ էսքինեսը կաշառված է եղել Փիլիպոսի կողմից: Իր ճառերում էսքինեսը, հակառակ Դեմոսթենեսի, ավենացիներին կոչ էր անում ճանաչել Մակեդոնիայի իշխանությունը:

Մակեդոնասիրական այդպիսի ճառերով հանդես էր գալիս նաև Մակեդոնիայի մյուս կողմնակիցը՝ հեռորդ Իսկիրատեսը: «Մեր հայրենիքը,—ասել է Իսկիրատեսը,—այժմ անապատ է դարձել: Ոմանք ընկան բռնություններից, մյուսները օտարություն մեջ իրենց ընտանիքի հետ թափառական կյանք են վարում և ահիս ստիպված են կովել իրենց իսկ եզրայրների՝ հույների դեմ»:

Մակեդոնական թագավոր Փիլիպոսին ուղղված իր ուղերձներից մեկում Իսկիրատեսը ուղղակի կոչ է անում նրան զալ Հունաստան, զրավել Աթենքը և սահմանել իր գերիշխանությունը: «Եթե դու իսկապես Հերակլիտեսի արժանավոր սերունդն ես,—դրե՛լ է Իսկիրատեսը Փիլիպոս թագավորին, ապա արա այդ բոլորը և այն ժամանակ բոլորն երախտապարտ կլինեն քեզ և կհայտնեն մեծագույն շնորհակալություն. հույները կողմնակից են, որ դու կինես նրանց վրա օրինական թագավոր և ոչ ինքնակալ, իսկ ամբողջ մարդկության մնացած տոհմը նույնպես կողմնակից է, որ դու կազատես հելլեններին բարբարոսական դեսպոտիզմից, որից հետո ամբողջ մարդկությանը կերջանկացնես հելլենական կուլտուրայով»:

Հետաքրքրական է այն, որ Իսկիրատեսը Փիլիպոսին ասել է, որ այն դեպքում, եթե հրաժարվի Հունաստանի վրա տիրակալություն հաստատելու պատմական միսիայից, ապա «Հունաստանին անխուսափելիորեն կսպառնան ներքին կոնֆլիկտները: Նա կկործանվի թափառաշրջիկ էլեմենտներից, սիկոֆանտներից (մատուցիչներից) և այլ ստոր հոնտորներից և դեմագոգներից»: Իսկիրատեսը ըստ երևույթին, իրեն լավ հաշիվ էր տալիս սոցիալական այն պայքարի մասին, որում «թափառաշրջիկ տարրերը» շատ ակտիվ են եղել և բացարձակ կերպով հարձակվել են ստրկատիրական

դրական դասակարգի վրա: Այդ նույն Իսկիրատեսի ելույթներից երևում է, թե որքան լարված է եղել իրադրությունն այդ ժամանակվա հունական համայնքների միջև:

«Սեփական համաքաղաքացիներից ավելի շատ էին վախենում, քան թշնամիներից,—ասում է Իսկիրատեսը IV դարի հունական համայնքի մասին,—հարուստները ավելի շուտ պատրաստ էին իրենց ունեցվածքը ծովը նետել, քան շքավորներին տալ, իսկ աղքատները ոչ մի ցանկություն չունեին բացի հարուստներին կողոպտելուց: Այլևս զոհաբերություններ չեն անում, այլ զոհասեղանի մոտ մարդիկ սպանում են մեկը մյուսին: Շատ քաղաքներ այժմ ավելի շատ վտարանդի ունեն, քան ամբողջ Պելոպոնեսը»:

Այսպիսով Իսկիրատեսի ազդեցությունը ելույթներից, ինչպես և րնդհանրապես մակեդոնասիրական ողջ պարտիայի ելույթներից, որի ներկայացուցիչը հանդիսանում էր Իսկիրատեսը, մենք տեսնում ենք, որ այդ պարտիան եղել է ռազմական դիկտատուրայի կողմնակից և պատրաստ Հունաստանը «թափառաշրջիկ տարրերից» փրկել, իր հայրենիքի անկախությունը զոհաբերել, այն հանձնել Մակեդոնիայի իշխանությանը: Պարտիայի եռուն քաղաքական պայքարը Աթենքում տապալակից դրություն ստեղծեց, պայքարի լարված մթնոլորտում իշխանության օրգանները չկարողացան միանգամից վճռել, թե ինչպես հակադրել Փիլիպոս II-ի հարձակմանը, որը և վկայում է ստրկատիրական Մակեդոնիայի սոցիալական ճգնաժամի մասին: Չողովրդական ժողովը երկար ժամանակ տատանվում էր: Եթա մերթ լսում էր հակամակեդոնական պարտիայի ներկայացուցիչներին, հատկապես Դեմոսթենեսին, մերթ մակեդոնասիրական պարտիայի ներկայացուցիչներին, հատկապես էսքինեսին: Ընդհակառակը, Փիլիպոսը դործելով վճռականորեն, օգտագործեց դրությունը: Մինչ տեղի էին ունենում այդ տատանումները, Փիլիպոսը, երկար ու բարակ շմտածելով, հպատակեցրեց ամբողջ Հյուսիսային Հունաստանը և վերջ ի վերջո ներխուժեց Փոկիդա:

Փիլիպոսի հաջողությունները վախեցրին ավենացիներին: Վերջիններս դաշն կնքեցին փոկիդացիների հետ և շարժվեցին ընդդեմ Փիլիպոսի: Սկզբում ավենացիները որոշ հաջողություն ունեցան, բայց Փոկիսի և Բեոլիթիայի սահմանի միջև Քերոնեի տակ (338 թ. մ. թ. ա.) ճակատամարտում Փիլիպոսը ջախջախեց դաշնակիցների զորքերին: Հակամակեդոնական դեմոկրատական կռաւիցիան պարտություն կրեց, Հունաստանի հին քաղաքական

հիմքերը ոչնչացվեցին: Դեմոսթենեսի գործը քաղաքականորեն տարված էր, որովհետև նա շնենվեց հունական պետության քաղաքական նոր պայմանների վրա, որոնց համար սլոլիսի սահմանափակ ձևը Ծրդեն վերացված էր: Փիլիպոսը Ատտիկա ներխուժելուց ժամանակավորապես ձեռնապահ մնաց և աթենացիներին հետ հաշտություն կնքեց: Մակաչն այդ ժամանակվանից արդեն Հունաստանի վրա գերիշխանությունը որոշակիորեն անցավ Մակեդոնիային: Շուտով, ներոնեի ճակատամարտից հետո, իր գերիշխանությունը հաստատելու համար Փիլիպոսը Կորնթոսում գումարեց համահունական համագումար: Այնտեղ հուշակվեց հաշտություն ամրույց հունական պետությունների միջև: Այնուհետև հունական ստրկատերերը կոռնթական համագումարում ազդարարեցին, որ իրենց սեփականությունը պետք է մնա անձեռնմխելի, որ ստրուկների ազատագրումը պետական հեղաշրջման նպատակով արգելվում է: Վերջապես, ստեղծվեց համահունական ֆեդերացիա՝ նրա մեջ մտցնելով Մակեդոնիան, մակեդոնական թագավորի նախագահությունը: Վերջում համագումարը պատերազմ հայտարարեց Պարսկաստանին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Փիլիպոսը շկարողացավ իրագործել զեպի Պարսկաստան արշավանքի իր վիթխարի պլանը: Այդ արշավանքի նախապատրաստության ամենահեռու պահին մակեդոնական թագավորն սպանվեց: Մակեդոնական հին արիստոկրատիան հականերգործում էր պետության ընդարձակման այդպիսի ձգտումներին, որը կապված էր պատերազմների հետ և, հետևապես, զորահրամանատարների իշխանության աճման հետ, հին արիստոկրատիային իշխանությունից աստիճանաբար դուրս մղելու հետ: Օպուզիցիան բռնեց Փիլիպոսի սպանության ուղին: Փիլիպոսի մահից հետո Մակեդոնիայի թագավորը և հույների գերիշխանը դարձավ նրա որդի Ալեխանդրը: Նա ծնվել է 356 թվին մ. թ. ա.: Փիլիպոսն իր որդուն տվեց հիանալի կրթություն: Ալեքսանդրի դասատուն եղել է Հունաստանի հուշակավոր փիլիսոփա Արիստոտելը: Ալեքսանդրը գիտեր և սիրում էր հունական գրականությունը: Բանաստեղծական ստեղծագործություններից Ալեքսանդրը հատկապես գնահատում էր Եվրիպիկանը: Նրա սիրած հերոսը եղել է Աքիլաը, որին նա ձգտել է

ամենաչնի ընդօրինակել: Ալեքսանդրը շատ էր տարվում սպանական գործով և 16 տարեկան հասակից սկսեց մասնակցել իր նոր արշավանքներին: Նա պաշտպանում էր իր հոր գաղափարները: Համամիտ էր Պարսկաստանը նվաճելու նրա պլաններին:

Նրա Ալեքսանդրը դարձավ Մակեդոնիայի թագավոր (336 թ. ա. թ. ա.) նա միայն 20 տարեկան էր, բայց նա հարավային հունարեց սկսել հոր պլանների իրագործումը: Գլխավոր խնդիրը նույնն էր Պարսկաստանի վրա արշավելը, Հունաստանի այդ վերին Քշնամուն ջոխջախելը և իր երկրի ամրապնդման նպատակով արևելքի հարստությունները խլելը: Նախ և առաջ Ալեքսանդրը ձեռնեց հունական մի շարք պետությունների ապստամբությունները, որովհետև Աթենքում, Թեբեում և մյուս քաղաքներում հույները շարունակում էին պայքարը Մակեդոնիայի դեմ: Նրանք ձգտում էին ազատագրվել դիկտատորի գերիշխանությունից և վերագործել իրենց ազատությունը: Ալեքսանդրը զեպի Հունաստան երկու արշավանք կատարեց և հույներին ստիպեց նպատակվել: Ամրապնդելով իր թիկունքը, Ալեքսանդրը 334 թվին գարնանը իր զորքերով կարող էր ուղղվել զեպի Ասիա, սրբազան իրագործել իր վիթխարի պլանը՝ Միդիայի (Ատտրիքի), Ագիպտոսի Թարսիլոնի, Միջին Ասիայի վրայով ընդհուպ մինչև Հնդկաստան: Դրանից զետի մտ շախչախելով պարսիկներին, Ալեքսանդրը շարունակեց առաջ անցնել Փոքր Ասիայի ավերումը: Նա մեկը մյուսի հետևից իրեն էր հպատակեցնում հունական քաղաքները. նրանց խոստանալով պարսկական լծից լիակատար ազատություն: Փոքր Ասիայի հույներն անցան Ալեքսանդրի կողմը և միայն Միդիայում և Գալլիկոնաստում մակեդոնական զորքերին դիմադրություն ցույց տրվեց:

Կիրելով Փոքր Ասիային, Ալեքսանդրը շարժվեց զեպի Միդիայ, Ալյատոնը, Իսսայի տակ ճակատամարտում պարսկական զորքերը պարտություն կրեցին: Այդ պարսիկների երկրորդ խոշոր պարտությունն էր: Նրանց թագավոր Դարեհ III Կոզոմանը փախուստով փրկվեց՝ բախտի քմահաճույթին թողնելով իր ընտանիքը և ամբողջ հարուստ դոմակը: Դարեհի հարստությունն ու ընտանիքը բնկավ Ալեքսանդրի ձեռքը: Մակեդոնացիները կարող էին վերջնականապես շախչախել պարսկական զորքը և իրեն իսկ Դարեհին: Բայց Ալեքսանդրը Իսսայի զեպի մտ հաղթանակից հետո ուղղվեց զեպի հարավ, պաշարեց և գրավեց Փյունիկիայի գլխավոր քաղաքը՝ Տիրոսը:

Վ Փյունիկիայից Ալեքսանդրը շարժվեց դեպի Պաղեստին և ապա Եգիպտոս, որը գրավեց առանց դժվարութեան: Իրավիւրով Եգիպտոսը նա շխախտեց տեղական կարգ ու կանոնը և ձեռք շտվեց տաճարներին՝ Եգիպտական քորմերը շատ երախտապարտ էին նրան, դրա համար էլ Ալեքսանդրին հայտարարեցին արևի աստծո՝ Ամոնի որդի՝ Եգիպտոսում եղած ժամանակ Ալեքսանդրը նեղոսի դելտայի արևմտյան մասում հիմնադրեց Ալեքսանդրիա քաղաքը (332 թվին մ. թ. ա.) Արևելյան Միջերկրական ծովի երկրների հետագայի կուլտուրական կենտրոնը:

Վ Դարեհն իրեն զգում էր ծայրահեղ դժվարին կացութեան մեջ: Նա փորձեց Ալեքսանդրի հետ հաշտութեան բանակցութուններ վարել: Իր ընտանիքի փոխանակման համար Դարեհն առաջարկում է Ալեքսանդրին Փոքր Ասիան, վճարել հսկայական գումար փող և նրան կնութեան տալ իր աղջիկներից մեկին, բայց Ալեքսանդրը հրաժարվեց նրա այդ առաջարկներն ընդունել: Նա մնաց աներեր և պարսկական թագավորից պահանջեց անվերապահորեն անձնատուր լինել: Իրա համար էլ կռիվը շարունակվեց:

Վ Պարսկական թագավորության ամբողջ արևմտյան մասը (Փոքր Ասիա, Փյունիկիա, Պաղեստին, Եգիպտոս) այժմ Մակեդոնիայի իշխանության տակ էր գտնվում: Որպեսզի վերջնականապես կործանել պարսկական թագավորությունը, մնում էր գրավել նրա արևելյան մասը ևս: Պարսկաստանի դեմ Ալեքսանդրի վիթխարի արշավանքի հետևյալ ուղղմական դեպքերը տեղի ունեցան այդ պետության արևելյան մասում: 331 թ. մ. թ. ա. Ալեքսանդր իրագործեց մի նոր վիթխարի արշավանք: Այդ տարվա գարնանը նա դուրս եկավ Եգիպտոսից և Միդիայի, Պաղեստինի և Փյունիկիայի միջով ուղղվեց դեպի Միջագետքի հովիտը: Ալեքսանդրին հաջողվեց անարգել կերպով անցնել Տիգրիս և Եփրատ գետերը և ասորական Գավգամելա գյուղի մոտ վերջնական պարտություն հասցնել պարսկական զորքերին (331 թ. մ. թ. ա.):

Վ Գավգամելայի ճակատամարտից հետո մակեդոնական բանակը գրեթե առանց դիմադրության դրավեց Պարսկաստանի գլխավոր քաղաքներ Պերսպոլիսը և Էկբատանը: Պարսից թագավորն իր զորքերի մնացորդներով փախավ: Ալեքսանդրին հաջողվեց գերի վերցնել Դարեհին: Պարսից գահին տիրանալ տենչած սատրապ Բեսի գլխավորությամբ գավազիները սպանեցին Դարեհին, չջանկանալով նրան Ալեքսանդրի ձեռքը հանձնել: Դարեհի վերջին Աքեմենիականի սպանությունից հետո իրագործ

վյունը խիստ փոփոխվեց: Շատ սատրապներ անցան Ալեքսանդրի կողմը: Իրա հետ մեկտեղ աճեց հին մակեդոնական ազգաբնույթի ժողովրդի ընդգեմ Ալեքսանդրի: Չնայած դավադրություններին ու դժգոհություններին մակեդոնական թագավորը վճռեց շարունակել իր հետագա արշավանքը դեպի նոր երկրներ:

Ալեքսանդրն ավելի առաջ շարժվեց դեպի արևելք՝ նա ցանկանում էր իր իշխանությունը հաստատել այդ ժամանակ հայտնի արշարհի ամենահեռավոր սահմաններում: Նա նվաճեց Միջին Ասիայի երկրները՝ Արիանան, Սոգդիանան, Բակտրիան և այլն: Հույների մեջ շատ հրաշալի հեթախներ էին պատվում Հնդկաստանի մասին: Ալեքսանդրը գիտեր Հնդկական պետության հարստությունների մասին: Հին ժամանակներից իր գաղտնիքներով հռչակված այդ հրաշալի երկիրը նա ցանկացավ մտցնել իր ընդարձակ միապետության տիրակալության մեջ:

Շարժվելով Գասպից ծովի հարավային ափերով, Մակեդոնական բանակը գրեթե չհանդիպեց կազմակերպված դիմադրության: Նա մտավ այդ ժամանակվա Պարթևստանը և ալլտեղից իջավ դեպի հացավ այժմյան Աֆղանստանը, այնուհետև սրբնթաց մուտք գործեց Ամու-Դարիա և Սիր-Դարիա գետերի հովիտները: Միջին Ասիայում Ալեքսանդրը հիմք դրեց մի շարք քաղաքների (Մալաբադուն Ալեքսանդրիա, Ալեքսանդրիա Արաքոնյան և այլ քաղաքներ):

